

**«Իրավական իրազեկման դպրոցական ակումբներ» ծրագիր  
Ուսումնական ձեռնարկ**

**Բաժին I. Իրավագիտական նյութերի ուղեցույց**

**Հեղինակներ՝** Առաքել Գյուլբուդաղյան  
Կարինե Հարությունյան  
Տիգրան Թովմասյան

**Բաժին II. Բանավեճի հիմունքներ**

**Հեղինակներ՝** Ռեբեկա Հակոբյան  
Սոնա Մանուչարյան  
Վարյա Մերուժանյան

**ԵՐԵՎԱՆ 2013**

# Բովանդակություն

Նախաբան .....	5
<b>Բաժին I. Իրավագիտական նյութերի ուղեցույց</b>	
Գլուխ 1. Սահմանադրականություն: Սահմանադրությունը որպես մարդու իրավունքների և ազատությունների երաշխավոր .....	6
Գլուխ 2. Օրենքի և իրավունքի գերակայությունը .....	24
Գլուխ 3. ՄԱԿ-ի և միջազգային այլ կազմակերպությունների դերը ժողովրդավարության կայացման գործում .....	
ՄԱԿ .....	29
Եվրոպական միություն .....	39
ԵԱՀԿ .....	44
Եվրոպայի խորհուրդ .....	48
Գլուխ 4. Հանրային քաղաքականություն. հասկացությունը և մասնակիցները.....	55
Գլուխ 5. Քաղաքացիական հասարակություն: Հասարակական կազմակերպություններ .....	
Քաղաքացիական հասարակություն հասկացությունը .....	69
Զանգվածային լրատվության միջոցները և մարդու իրավունքները.....	73
Գլուխ 6. Սպառողների շահերի պաշտպանություն .....	78
Գլուխ 7. Քաղաքացիական իրավունքներ .....	84
Պայմանագրեր, հողային իրավունք, ժառանգական իրավունք	
Գլուխ 8. Ընտրական իրավունք .....	99
Գլուխ 9. Ընտանեկան իրավունք .....	107
Գլուխ 10. Քրեական գործով վարույթը. ձերբակալումը, կալանավորումը, բերման ենթարկելը .....	113
Գլուխ 11. Ի՞նչ է կոռուպցիան .....	121
<b>Բաժին II. Բանավեճի հիմունքներ</b>	
Գլուխ 1. Բանավեճի էությունը .....	175
Գլուխ 2. Ուսուցողական բանավեճի արմատները.....	179
Գլուխ 3. Վերլուծական հմտություններ.....	187
Գլուխ 4. Առանցքային արժեքներ.....	192
Գլուխ 5. Դիրքորոշման մշակում.....	196
Գլուխ 6. Նյութերի հավաքագրման հմտություններ.....	199

Գլուխ 7. Փաստարկման հմտություններ.....	207
Գլուխ 8. Դիրքորոշման մշակում.....	216
Գլուխ 9. Հաջող բանավեճ անցկացնելու անհրաժեշտ նախապայմանները.....	223
Գլուխ 10. «Կողմ» դիրքորոշում.....	227
Գլուխ 11. «Դեմ» դիրքորոշում.....	231
Գլուխ 12. Հարցաքննություն.....	234
Գլուխ 13. Բանավեճի գնահատում.....	238
Հավելվածներ.....	243

ԲԱԺԻՆ |  
ԻՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ  
ՆՅՈՒԹԵՐԻ  
ՈՒՂԵՑՈՒՅՑ

## Նախաբան

Սիրելի սովորողնե՞ր.

Սույն ձեռնարկում բերվող ուսումնական նյութերը, հարցերն ու գործնական առաջադրանքները նպատակ ունեն, ի թիվս դպրոցական դասագրքերի և այլ ձեռնարկների, օգնելու Ձեզ ձեռք բերել ոչ միայն համապատասխան գիտելիքներ, այլև գործնական փորձ՝ իրական կյանքում Ձեր իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու համար:

Ձեռնարկում բերված տեղեկությունները, նկարագրություններն ու մեկնաբանությունները, առավել ևս՝ նորմատիվ իրավական փաստաթղթերից բերված հատվածները ամենսին չեն կարող պարտադիր յուրացման նյութ դառնալ: Դրանք առաջին հերթին նպատակ ունեն օժանդակելու Ձեր կողմից բանավեճի տարբեր թեմաների ուսումնասիրությանը, անցյալ դարաշրջանների և մերօրյա իրավական ակտերից օգտվելու, անհրաժեշտ հղումներ անելու, այս կամ այն թեզը հիմնավորելու և դրանով իսկ՝ բարեկիրթ բանավեճ վարելու կարողությունների ու հմտությունների զարգացմանը\*:

Եվ որ հատկապես կարևոր է՝ այդ ամենն ուղղված է ոչ թե <<պատանի իրավագետների>> պատրաստմանը, այլ իրավունքն ու օրենքը արժևորող, իրավագիտակից և օրինապաշտ քաղաքացիների դաստիարակությանը:

\* Ձեռնարկում առկա ուսումնական նյութերի (գլուխների) հերթականությունը որևէ կերպ չի մատնանշում դրանց առավել կամ պակաս կարևորությունը: Կազմողները պարզապես հիմք են ընդունել հանրակրթական դպրոցի հասարակագիտության չափորոշիչների և ծրագրերի բովանդակային, թեմատիկ կառուցվածքը:

## Գլուխ 1

### Սահմանադրականություն: Սահմանադրությունը որպես մարդու իրավունքների և ազատությունների երաշխավոր



Ձեռնարկի առաջին ուսումնական նյութը նվիրված է սահմանադրականությանը՝ նպատակ ունենալով ներկայացնել սահմանադրությունը, որպես մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների երաշխավոր: Սահմանադրությունը, սակայն, ինքնին չի կարող երաշխավորել մարդու իրավունքներն ու ազատությունները, եթե մենք ինքներս դա չցանկանանք և հետևողական ջանքեր չգործադրենք այդ ուղղությամբ: Ցանկությունն ու ձգտումը դեռևս բավարար չեն, անհրաժեշտ են նաև համապատասխան գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:

Փորձենք միասին ծանոթանալ Սահմանադրության բովանդակությանը, հասկանալ, թե ինչպիսի իրավական փաստաթուղթ է այն իրենից ներկայացնում:

Մեր երկիրը, ինչպես և աշխարհի գրեթե բոլոր պետությունները, ունի իր Սահմանադրությունը: Սահմանադրությունն այնքան կարևոր է, որ շատ հաճախ այն անվանում են երկրի հիմնական օրենք, գլխավոր օրենք կամ օրենքների օրենք:

*Հայաստանի ժողովուրդը իր համընդհանուր կամքն արդահայտող քվեարկությամբ՝ հանրաքվեով, 1995 թվականի հունիսի 5-ին ընդունեց Հանրապետության Սահմանադրությունը, իսկ դրանից դասը դարի հետո՝ 2005 թ. նոյեմբերի 27-ին, դարձյալ հանրաքվեով, փոփոխություններ կարողաց Սահմանադրության մեջ:*

**Սահմանադրությունը պայմանագիր է՝ կնքված քաղաքացիների միջև:**



Հայ ժողովուրդը, իիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հոչակագրում հաստատագրված հայոց պետականության իիմնարար սկզբունքները և համազգային նպատակները, իրականացրած ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը, նվիրված հայրենիքի հզորացմանը և բարգավաճմանը, ապահովելու համար սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին, ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը:

*Հայաստանի Հանրապետության Սահմանադրության  
նախաբանը, 1995*

**Համարեղ քննարկենք << Սահմանադրության որոշ դրույթներ, որոնք մեր կարծիքով կարող են բանավեճի առարկա հանդիսանալ:**

#### **Գլուխ 1. Սահմանադրական կարգի հիմունքները**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

**Հոդված 2.** Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պարկանում է ժողովրդին:

Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է:

**Հոդված 3.** Մարդը, նրա արժանապատվությունը, իիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու իիմնական իրավունքների և ազարտությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու իիմնական իրավունքներով և ազարտություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

## **ՄԵԼՆԱԲԱՆՈՎԹՅՈՒՆՆԵՐ**

**Ինքնիշխանությունը** (սովերենովթյունը) պետության հատկություն է, որի ուժով նա անկախ է, ինքնուրույն և գերագույն իր առաքելությունն իրականացնելիս ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային հարաբերություններում:

Աշխարհում չկան և չեն կարող լինել բացարձակ ինքնիշխան պետություններ: Անդամագրվելով ՄԱԿ-ին և մյուս միջազգային կազմակերպություններին, միմյանց հետ ստեղծելով միություններ ու դաշինքներ, կնքելով փոխադարձ պարտավորություններ սահմանող պայմանագրեր, պետությունները կամովին սահմանափակում են իրենց ինքնիշխանությունը:

Մյուս կողմից, ինքնիշխանությունը պետության ոչ թե վերացական, այլ իրական հատկություն է, որի ծավալը և բովանդակությունը պայմանավորված են նրա տնտեսական ու հատկապես ռազմական հզորությամբ:

« Սահմանադրությունը, բնորոշելով Հայաստանի Հանրապետությունը որպես ինքնիշխան պետություն, պարտավորեցնում է նրա իշխանություններին միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների և նորմերի շրջանակներում սրբորեն պահպանել երկրի անկախությունն ու ինքնուրույնությունը:

**Ժողովրդավարական** պետությունում իշխանության միակ աղբյուրը և տերը ժողովուրդն է: Այդ պետության Սահմանադրությունը և օրենքները ամրագրում են ժողովրդաիշխանությունը, մարդու և քաղաքացու իմանական իրավունքներն ու ազատությունները, իմանադրում պետական կառուցակարգեր դրանց արդյունավետ կենսագործման համար:

Ժողովրդավարությունը, որպես պետության հատկանիշ, բնութագրում է ոչ միայն նրա էությունը, այլև այն եղանակների, մեթոդների և ձևերի ամբողջությունը, որոնց միջոցով պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք իրականացնում են Սահմանադրությամբ և օրենքներով իրենց վերապահված լիազորությունները: Այն արտացոլում է մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների երաշխավորվածության ու պաշտպանվածության աստիճանը:

**Սոցիալական** է այն պետությունը, որի գլխավոր առաքելություններից է իր քաղաքացիների տնտեսական և սոցիալական բարեկեցության ապահովումը: Սոցիալական պետությունը զորավիգ է նվազ եկամուտներ և սոցիալական պաշտպանության կարիք ունեցող քաղաքացիներին՝ ծերերին, հաշմանդամներին, հիվանդներին, ծնողազուրկ երեխաներին, բազմազավակ ընտանիքներին: Սոցիալական պետությունում ընտանիքը, մայրությունը և մանկությունը գտնվում են պետության ու հասարակության հովանափորության ներքո: « Սահմանադրությունը, բնորոշելով Հայաստանի Հանրապետությունը որպես սոցիալական պետություն, կան-

խորոշում է նրա իշխանությունների գործունեության ուղղվածությունը դեպի մարդը, ընդգծում սոցիալապես անպաշտպան քաղաքացիներին նեցուկ լինելու նրանց առաքելությունը:

**Իրավական** պետությունում տիրում է ժողովրդի համապետական կամքը և շահերն արտահայտող օրենքի գերակայությունը, պետական մարմինները և պաշտոնատար անձինք գործում են Սահմանադրությամբ ու օրենքներով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում, բոլորը հավասար են օրենքի առջև և առանց խորականության հավասարապես պաշտպանվում են օրենքով: Իրավական պետությունում մարդն ազատ է անել այն ամենը, ինչ արգելված չէ օրենքով, մասնավորապես, նա կարող է օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանել իր իրավունքները և ազատությունները: Նման պետությունում երաշխավորվում է մարդու՝ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված բոլոր իրավունքների և ազատությունների լիակատար ու համապարփակ դատական պաշտպանությունը:

(մեկնարանությունները իրավագիրության դոկտոր  
Վլադիմիր Նազարյանի. լրես՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը  
ծանոթագրություններով և մեկնարանություններով, Երևան, 1995)

Առաջարկում ենք Սահմանադրության վերը բերված հոդվածների դրույթները քննարկելիս նկատի ունենալ այն կարևոր հանգամանքը, որ դրանցում ներկայացվածը (օրինակ՝ իրավական, սոցիալական պետություն է...) առայժմ հեռանկարային, իրազործվելիք, հոչակված, բայց դեռևս շատ դեպքերում չիրականացված նպատակներ են:

Բանավիճող կողմերը, նշված հիմնադրույթը հաստատում կամ ժխտում են իրականությունից բերվող առանձին օրինակների հիման վրա:

Բանավիճող կողմերն իրենց դիրքորոշումը հիմնավորելու համար վկայակոչում են << Սահմանադրության 2-րդ գլխում առկա հոդվածների այս կամ այն դրույթը: Այդ նպարակով բանավեճի մասնակիցները նախապես կարող են ծանոթանալ նշված գլխից սպորտ բերվող հոդվածների բովանդակությանը: Կարծում ենք, արդյունավետ բանավեճի նյութ կարող է դառնալ **Սահմանադրության 23-րդ և 27-րդ հոդվածների բովանդակությունը:**

Սահմանադրության 23-րդ հոդվածում մասնավորապես խոսվում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի, առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ տեղեկություններ հավաքելու, պահպանելու, օգտագործելու կամ տարածելու մասին:

Բանավիճող կողմերը քննարկում են, թե՝

- պետական իշխանության մարմինների, մասնավորապես հատուկ ծառայությունների կողմից այդպիսի գործողությունները որ դեպքերում են թույլատրելի կամ օրինական, մարդու իրավունքների համընդհանուր նորմերին համապատասխանող և որ դեպքերում՝ ոչ.
- մամուլի և զանգվածային լրատվության այլ մարմինների համանման գործելակերպը որ դեպքերում կարելի է համարել օրինական, խոսքի, մամուլի ազատության սկզբունքներին համապատասխանող և որ դեպքերում՝ ոչ:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը:

Առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով:

... Յուրաքանչյուր ոք ունի իր մասին ոչ հավաստի տեղեկությունների շտկման և իր մասին ապօրինի ծեղք բերված տեղեկությունների վերացման իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ:

«Սահմանադրություն, հոդված 23»

Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է: ...

«Սահմանադրություն, հոդված 27»

## **Հավելված 1. Հարվածներ նորմատիվ փաստաթղթերից**

ՀՀ Սահմանադրություն,

**Գլուխ 2. Մարդու և քաղաքացու իիմնական իրավունքները և ազատությունները**

**Գլ. 2. Հոդված 14-17**

**Հոդված 14.** Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի իհմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից:

**Հոդված 14.1.** Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև:

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

**Հոդված 15.** Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:

**Հոդված 16.** Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում միայն հետևյալ դեպքերում՝

1) անձը դատապարտվել է հանցագործություն կատարելու համար իրավասու դատարանի կողմից.

2) անձը չի կատարել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած կարգադրությունը.

3) օրենքով սահմանված որոշակի պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով.

4) առկա է հանցագործություն կատարած լինելու իիմնավոր կասկած, կամ երբ դա անհրաժեշտ է անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով.

5) անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու այլ մարմին ներկայացնելու նպատակով.

6) վարակիչ իիվանդությունների տարածումը կանխելու նպատակով կամ հոգեկան հիվանդ, գինեմոլ, թմրամոլ կամ թափառաշրջիկ անձանցից բխող հասարակական վտանգը կանխելու նպատակով.

7) Հայաստանի Հանրապետություն անձի անօրինական մուտքը կանխելու, նրան արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով:

Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև

մեղադրանքի մասին: Ազատությունից գրկված յուրաքանչյուր անձ իրավունք ունի այդ մասին անհապաղ տեղեկացնելու իր կողմից ընտրված անձին:

Եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատությունից ապօրինի գրկման կամ ապօրինի խուզարկության դեպքում օրենքով սահմանված հիմքերով և կարգով պատճառված վնասի հատուցման: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր ազատությունից գրկման կամ խուզարկության օրինականությունն ու հիմնավորվածությունը բողոքարկելու վերադաս դատական ատյանում:

Մարդուն չի կարելի ազատությունից գրկել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիական պարտավորությունները:

Մարդուն չի կարելի խուզարկել այլ կերպ, քան օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

**Հոդված 17.** Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք:

Մարդուն չի կարելի առանց իր համաձայնության ենթարկել գիտական, բժշկական և այլ փորձերի:

## Գլ. 2. Հոդված 18-22

**Հոդված 18.** Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով ստանալու մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը:

Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին:

**Հոդված 19.** Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ,

անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով լրատվության միջոցների և հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը դատական քննության ընթացքում կամ դրա մի մասում կարող է արգելվել:

**Հոդված 20.** Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:

Յուրաքանչյուր ոք ունի ձերբակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճոի՝ օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից վերանայման իրավունք:

Յուրաքանչյուր դատապարտյալ ունի ներման կամ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունք:

Տուժողին պատճառված վնասը հատուցվում է օրենքով սահմանված կարգով:

**Հոդված 21.** Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճոուվ:

Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Զիարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի:

**Հոդված 22.** Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ: Օրենքը կարող է նախատեսել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր:

Արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը:

Արգելվում է նշանակել ավելի ծանր պատիժ, քան կարող էր կիրառվել հանցագործության կատարման պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել:

Մարդուն չի կարելի հանցագործության համար մեղավոր ճանաչել, եթե արարքի կատարման պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել:

Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ:

Պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքը հետադարձ ուժ չունի:

Ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նոյն արարքի համար:

**Հոդված 23.** Յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը:

Առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով:

Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր մասին ոչ հավաստի տեղեկությունների շտկման և իր մասին ապօրինի ձեռք բերված տեղեկությունների վերացման իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ:

**Հոդված 24.** Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք: Արգելվում է մարդու կամքին հակառակ մուտք գործել նրա բնակարան, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Բնակարանը կարող է խուզարկվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ դատարանի որոշմամբ:

**Հոդված 25.** Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետության տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք:

Յուրաքանչյուր քաղաքացի և Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետություն վերադառնալու իրավունք:

## **Գլ. 2. Հոդված 26-27.1**

**Հոդված 26.** Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզի, եկեղեցական արարողությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը:

Այս իրավունքի արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

**Հոդված 27.** Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել իրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներայալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է:

Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը:

**Հոդված 27.1.** Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

## ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՔՆԵՐԻ ՀԱՄԲՆՀԱՆՈՒՐ ՀՌԶԱԿԱԳԻՐ

### ՆԱԽԱԲԱՆ

Քանզի մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվության և հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումն աշխարհում ազատության, արդարության ու խաղաղության հիմքն է.

**քանզի** մարդու իրավունքների անտեսումն ու դրանց նկատմամբ արհամարհանքը հանգեցրել են մարդկության խիզճը վրդովող բարբարոսական գործողությունների, և որպես մարդկության վեհ նպատակ հոչակված է այնպիսի աշխարհի ստեղծումը, ուր մարդիկ կվայելեն խոսքի ու համոզմունքի ազատություն և զերծ կլինեն վախից ու կարիքից.

**քանզի**, որպեսզի մարդը, հարկադրված չլինի դիմելու ապստամբության ընդդեմ բռնակալության ու ճնշման՝ որպես վերջնական միջոցի, կարևոր է իրավական պետության կողմից մարդու իրավունքների պաշտպանությունը.

**քանզի** կարևոր է ազգերի միջև բարեկամական հարաբերությունների զարգացման խթանումը.

**քանզի** Միավորված ազգերի կազմակերպության ժողովուրդները Կանոնադրության մեջ վերահաստատել են իրենց հավատը մարդու իիմնարար իրավունքների, անձի արժանապատվության ու արժեքի և տղամարդու ու կնոջ իրավահավասարության նկատմամբ և վճռել են քաջալերել սոցիալական առաջընթացն կենսամակարդակի բարելավումն առավել ազատության պայմաններում.

**քանզի** անդամ պետությունները պարտավորվել են, Միավորված ազգերի կազմակերպության հետ համագործակցելով, հասնել մարդու իրավունքների ու իիմնարար ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանքի ու դրանց պահպանման քաջալերմանը.

**քանզի** այդ իրավունքների ու ազատությունների ընդհանուր ըմբռնումը վիթխարի նշանակություն ունի այս պարտավորության լիարժեք իրականացման համար, ուստի այժմ Գլխավոր ասամբլեան հոչակում է Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագիրը՝ որպես բոլոր ժողովուրդների ու ազգերի կողմից նվաճվելիք ընդհանուր մի չափանիշ, որպեսզի յուրաքանչյուր անհատ և հասարակության ամեն մի մարմին, մշտապես մտապահելով սույն Հռչակագիրը, ձգտի ուսման ու կրթության միջոցով քաջալերել հարգանքն այս իրավունքների ու ազատությունների նկատմամբ և ազգային ու միջազգային առաջադիմական միջոցառումներով ապահովել դրանց համընդհանուր և արդյունավետ ճանաչումն ու

պահպանումը թե՛ անդամ պետությունների ժողովուրդների և թե՛ դրանց իրավագորության ներքո գտնվող տարածքների ժողովուրդների կողմից:

### **Հոդված 1**

Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ ու իրավունքներով։ Նրանք օժտված են բանականությամբ ու խղճով և պարտավոր են միմյանց վերաբերվել եղբայրության ոգով։

### **Հոդված 2**

1. Յուրաքանչյուր ոք ունի սույն Հոչակագրում ամրագրված բոլոր իրավունքներն ու ազատությունները՝ առանց որևէ տարբերակման, այնպիսի հիմքերով, ինչպիսին են ռասան, մաշկի գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ համոզմունքը, ազգային կամ սոցիալական ծագումը, գույքային դրությունը, ծնունդը կամ այլ կարգավիճակ։

2. Ավելին, չպետք է կատարվի որևէ տարբերակում՝ ելնելով այն երկրի կամ տարածքի քաղաքական, իրավական կամ միջազգային կարգավիճակից, որին պատկանում է անձը, լինի այն անկախ, խնամարկյալ, ոչ ինքնավար կամ ինքնիշխանության որևէ այլ սահմանափակումով։

### **Հոդված 3**

Յուրաքանչյուր ոք ունի կյանքի, ազատության և անձի անձեռնմխելիության իրավունք։

### **Հոդված 4**

Ոչ ոք չպետք է պահպի ստրկության կամ կախյալ վիճակում, ստրկությունը և ստրկավաճառությունը, իրենց բոլոր դրսնորումներով, արգելվում են։

### **Հոդված 5**

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի։

### **Հոդված 6**

Յուրաքանչյուր ոք ամենուր իրավունք ունի ճանաչվել որպես իրավասուրյեկտ։

## **Հոդված 7**

Բոլորը հավասար են օրենքի առջև և, առանց որևէ խտրականության, ունեն օրենքով հավասար պաշտպանվածության իրավունք: Բոլորն ունեն սույն Հռչակագիրը խախտող ցանկացած խտրականությունից և նման խտրականության ցանկացած իրահրումից հավասար պաշտպանության իրավունք:

## **Հոդված 8**

Յուրաքանչյուր ոք, սահմանադրությամբ կամ օրենքով իրեն վերապահված հիմնարար իրավունքների խախտման դեպքում, ունի ներպետական իրավասու ատյանների կողմից արդյունավետ պաշտպանության իրավունք:

## **Հոդված 9**

Ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական ձերբակալման, կալանքի կամ արտաքսման:

## **Հոդված 10**

Յուրաքանչյուր ոք, իր իրավունքների ու պարտականությունների սահմանման և իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի դեպքում, ունի լիակատար հավասարության պայմաններում անկախ և անկողմնակալ դատարանի կողմից արդարացի ու հրապարակային դատաքննության իրավունք:

## **Հոդված 11**

1. Քրեական հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր մարդ իրավունք ունի համարվելու անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ըստ օրենքի, իրապարակային դատաքննությամբ, որի ժամանակ նա ունեցել է իր պաշտպանության համար անհրաժեշտ բոլոր երաշխիքները:
2. Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ քրեական հանցագործության համար՝ կապված ցանկացած գործողության կամ անգործության հետ, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Զի կարող նաև կիրառվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին:

## **Հոդված 12**

Ոչ ոք չպետք է ենթարկվի իր անձնական կյանքի, ընտանիքի, բնակարանի կամ նամակագրության նկատմամբ կամայական միջամտության, ինչպես նաև որևէ

ոտնձգության իր պատվի ու հեղինակության նկատմամբ: Յուրաքանչյուր ոք ունի նման միջամտությունից կամ ոտնձգությունից օրենքով պաշտպանվելու իրավունք:

### **Հոդված 13**

1. Յուրաքանչյուր ոք ունի տվյալ պետության սահմաններում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք:
2. Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած, այդ թվում սեփական երկրից, մեկնելու և իր երկիրը վերադառնալու իրավունք:

### **Հոդված 14**

1. Յուրաքանչյուր ոք ունի հետապնդումից այլ երկրներում ապաստան հայցելու և դրանից օգտվելու իրավունք:
2. Այս իրավունքը չի կարող վկայակոչվել ոչ քաղաքական հանցագործությունների կամ Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին ու սկզբունքներին հակասող արարքների կապակցությամբ հետապնդման դեպքում:

### **Հոդված 15**

1. Յուրաքանչյուր ոք ունի քաղաքացիության իրավունք:
2. Ոչ ոք չպետք է կամայականորեն գրկվի իր քաղաքացիությունից կամ քաղաքացիությունը փոխելու իրավունքից:

### **Հոդված 16**

1. Զափահաս տղամարդիկ ու կանայք, առանց ռասայական, ազգային կամ կրոնական որևէ սահմանափակման, իրավունք ունեն ամուսնանալ և ընտանիք կազմել: Նրանք հավասար իրավունքներ ունեն ամուսնանալիս, ամուսնության ընթացքում և ամուսնալուծության ժամանակ:
2. Ամուսնությունը կարող է կայանալ միայն ամուսնացողների ազատ ու լիակատար համաձայնության դեպքում:
3. Ընտանիքը հասարակության բնական ու հիմնարար խմբային միավորն է և ունի հասարակության ու պետության կողմից պաշտպանության իրավունք:

### **Հոդված 17**

1. Յուրաքանչյուր ոք ունի ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ համատեղ սեփականություն ունենալու իրավունք,:  
2. Ոչ ոք չպետք է կամայականորեն գրկվի իր սեփականությունից:

## **Հոդված 18**

Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի ու կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատություն և միանձնյա կամ այլոց հետ համատեղ իրապարակավ կամ մասնավոր կարգով իր կրոնը կամ համոզմունքը քարոզելու, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն:

## **Հոդված 19**

Յուրաքանչյուր ոք ունի կարծիքի և այն արտահայտվելու ազատություն. այս իրավունքը ներառում է կարծիքներն առանց միջամտության ունենալու, անկախ պետական սահմաններից տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, լրատվության ցանկացած միջոցով ստանալու ու տարածելու ազատությունը:

## **Հոդված 20**

1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ու միավորումներ կազմելու իրավունք:
2. Ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամակցելու որևէ միավորման:

## **Հոդված 21**

1. Յուրաքանչյուր ոք ունի անմիջականորեն կամ ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով իր երկրի կառավարմանը մասնակցելու իրավունք:
2. Յուրաքանչյուր ոք ունի իր երկրում պետական ծառայության մտնելու հավասար հնարավորության իրավունք:
3. Ժողովրդի կամքը պետք է լինի կառավարության իշխանության հիմքը. այն պետք է արտահայտվի պարբերական և իրական ընտրություններում, որոնք պետք է անցկացվեն համընդհանուր և հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկության ազատությունն ապահովող այլ հավասարաթեք ընթացակարգերի միջոցով:

## **Հոդված 22**

Յուրաքանչյուր ոք, որպես հասարակության անդամ, ունի սոցիալական ապահովության իրավունք, և, ազգային ջանքերի ու միջազգային համագործակցության միջոցով, ինչպես նաև յուրաքանչյուր պետության կազմակերպմանն ու ռեսուրսներին համապատասխան օգտվում է իր արժանապատվության և իր անձի ազատ զարգացման համար անհրաժեշտ տնտեսական, սոցիալական ու մշակութային

իրավունքներից:

### **Հոդված 23**

1. Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի, աշխատանքի ազատ ընտրության, արդար ու նպաստավոր աշխատանքային պայմանների և գործազրկությունից պաշտպանվածության իրավունք:
2. Յուրաքանչյուր ոք ունի հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության իրավունք առանց որևէ խտրականության:
3. Յուրաքանչյուր աշխատող ունի իր ու իր ընտանիքի համար մարդկային արժանապատվությանը հարիր գոյություն ապահովող արդար ու նպաստավոր վարձատրության և, անհրաժեշտության դեպքում, այն սոցիալական ապավության այլ միջոցներով լրացնելու իրավունք:
4. Յուրաքանչյուր ոք ունի արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունք՝ հանուն իր շահերի պաշտպանության:

### **Հոդված 24**

Յուրաքանչյուր ոք ունի հանգստի ու ժամանցի, այդ թվում՝ աշխատանքային ժամերի ողջամիտ սահմանափակման և վճարովի պարբերական արձակուրդների իրավունք:

### **Հոդված 25**

1. Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի առողջության ու բարեկեցության համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ սննդի, հագուստի, բնակարանի և առողջապահության ու սոցիալական անհրաժեշտ ծառայությունների իրավունք, ինչպես նաև ապահովության իրավունք՝ գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիանալու, ծերության կամ իր կամքից անկախ հանգամանքներում գոյության այլ միջոցներից զրկվելու դեպքում:
2. Մայրությունն ու մանկությունը հատուկ հոգածության ու օժանդակության իրավունք ունեն Ամուսնության մեջ կամ դրանից դուրս ծնված բոլոր երեխաներն օգտվում են սոցիալական միևնույն պաշտպանությունից:

### **Հոդված 26**

1. Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Կրթությունը, առնվազն տարրական և հանրակրթական փուլերում, անվճար է: Տարրական կրթությունը պարտադիր է: Տեխնիկական և մասնագիտական կրթությունը պետք է լինի հանրամատչելի, իսկ բարձրագույն կրթությունը՝ ընդունակություններին համապատասխան հավասարա-

պես մատչելի բոլորի համար:

2. Կրթությունը պետք է նպատակառողված լինի անձի լիարժեք զարգացմանը և մարդու իրավունքների ու իմանարար ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը: Այն պետք է նպաստի բոլոր ազգերի, ուսայական կամ կրոնական խմբերի միջև փոխըմբռնմանը, հանդուժողականությանն ու բարեկամությանը, Է՛լ ավելի նպաստի Միավորված ազգերի կազմակերպության խաղաղապահ գործունեությանը:

3. Ծնողներն ունեն իրենց երեխաների համար կրթության տեսակն ընտրելու առաջնային իրավունք:

## **Հոդված 27**

1. Յուրաքանչյուր ոք ունի հասարակության մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու, արվեստներից օգտվելու և գիտական առաջընթացից ու դրա բարիքներից օգտվելու իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք ունի իր հեղինակած ցանկացած գիտական, գրական կամ գեղարվեստական ստեղծագործությունից գոյացող բարոյական և նյութական շահերի պաշտպանության իրավունք:

## **Հոդված 28**

Յուրաքանչյուր ոք ունի սոցիալական ու միջազգային այնպիսի կարգի իրավունք, որում լիովին իրագործելի են սույն Հոչակագրում շարադրված իրավունքներն ու ազատությունները:

## **Հոդված 29**

1. Յուրաքանչյուր ոք պարտականություններ ունի այն համայնքի նկատմամբ, ուր և միայն հնարավոր է իր անձի ազատ ու լիարժեք զարգացումը:

2. Իր իրավունքներն ու ազատություններն իրականացնելիս յուրաքանչյուր ոք ենթակա է միմիայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով՝ բացառապես ուրիշների իրավունքների ու ազատությունների պատշաճ ճանաչումն ու հարգանքը երաշխավորելու և ժողովրդավարական հասարակությունում բարոյականության, հասարակական կարգի և ընդհանուր բարեկեցության արդարացի պահանջներն ապահովելու համար:

3. Այս իրավունքների ու ազատությունների իրականացումը ոչ մի դեպքում չպետք է հակասի Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին ու

սկզբունքներին:

### **Հոդված 30**

Սույն Հռչակագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես որևէ պետության, մարդկանց խմբի կամ առանձին անհատների ընձեռված իրավունք՝ գրաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի արարք, որոնք նպատակառության լինեն սույն Հռչակագրում շարադրված ազատությունների ու իրավունքների ոչնչացմանը:

*Տես' Մարդու իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության  
մասնակցությամբ միջազգային պայմանագրեր,  
փաստաթղթերի ժողովածու, գիրք Ա, Երևան, 2001:*

## **Գլուխ 2**

### **Օրենքի և իրավունքի գերակայությունը**



**Իրավացի է նա, ով ավելի շատ իրավունքներ ունի:  
Ժողովրդական**

**Ազատ լինել՝ օրենքի գերին մնալով:  
Ցիցերոն**

*Օրենքը մարդկային իմաստության բարձրագույն դրսնորումն է, որն օգտագործում է մարդկանց փորձը հասարակության բարօրության համար:*

***Ս. Զոնսոն***

*Օրենքը սարդոսպայն չէ, որի միջից խոշոր ճանճերը ճեղքում դուրս են գալիս,  
իսկ մանրերը լովում մնում են:*

***Օ. Բալզակ***

*Օրենքն իզուր է նրանց համար, ովքեր այն պաշտպանելու ոչ քաջություն ունեն,  
ոչ էլ միջոցներ:*

***Թ.Մաքոլեյ***

Մտածողներից շատերը հաստատում են, որ գոյություն ունեն բարձրագույն, պետությունից անկախ նորմեր և սկզբունքներ, որոնք մարմնավորում են բանականությունը, արդարությունը, օբյեկտիվ կարգը:



Իրավունքը սոցիալական նորմերի այն մասն է, որն արտահայտված է պաշտոնական փաստաթղթերում, բխում է պետությունից և երաշխավորվում պետության կողմից: Իսկ որպես դրական իրավունքի աղբյուր են հանդես գալիս Սահմանադրությունը, օրենքները, Նախագահի հրամանագրերը,

Ազգային ժողովի և կառավարության որոշումները, տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերը և այլն:

Իրավական է այն պետությունը, որտեղ օրենքներն ընդունվում և փոփոխվում են միայն օրինական ճանապարհով: Իրավական պետությունը քաղաքացուն տալիս է պաշտպանվածություն և բացառում կամայականությունները:

*Օրենքի և իրավունքի գերակայությունն ապահովում է վսկահություն:* Այն դառնում է ամուր հենարան, հիմք և հասարակության յուրաքանչյուր անդամ պաշտպանված է լինում իր երկրում:

Իրավունքի գերակայության՝ որպես սահմանադրականության կարևորություն, պետության համար պետք է համարել նախ այն, որ դրա ապահովմամբ երաշխավորվում և պաշտպանվում են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները, երկրորդ՝ իրացվում է իրավական և ժողովրդավարական

պետության հատկանիշներից մեկը՝ իրավունքի գերակայության ապահովումը և վերջապես՝ երաշխավորվում է Սահմանադրության՝ որպես երկրի հիմնական օրենքի դրույթների կենսագործումը, այսինքն՝ Սահմանադրության տեքստը դառնում է ապրող իրականություն:



**Սահմանադրությունը համարվում է երկրի Հիմնական օրենքը,**  
որը պետության ներսում կանգնած է մյուս իրավական ակտերի  
«բուրգի» գագաթին: Որպեսզի Սահմանադրությունն իր հերթին  
համապատասխանի բնական իրավունքի պահանջներին, նրանում  
պետք է արտացոլված լինեն մարդու արժանապատվության,  
իրավունքների և ազատությունների մասին ժամանակակից  
հայացքները և միջազգային փաստաթղթերի դրույթները:

*Օրենքի և իրավունքի գերակայության դեպքում բոլոր պետական մարմինները, կազմակերպությունները, պետական պաշտոնյանները և քաղաքացիները՝ անկախ սեռից, քաղաքական հայացքներից, հասարակության մեջ զբաղեցրած դիրքից և սոցիալական վիճակից, պետք է հարգեն երկրի Սահմանադրությունն ու օրենքները, հավասար պատասխանատվություն կրեն օրենքի առաջ: Օրենքներն են սահմանում մարդկանց իրավունքները և նախատեսում նրանց պարտականությունները: Օրենքները կոչված են հաստատելու կարգուկանոն, պաշտպանելու քաղաքացիների ազատությունը, անվտանգությունը, իրավունքները և պայմաններ ստեղծելու բարեկեցիկ կյանքի համար:*

*Բանավեճի թեմա - **Ձեր կարծիքով ինչպե՞ս են մեր երկրի քաղաքացիները վերաբերվում օրենքին: Օրինապահ ենք մենք, արդյոք: Եթե ոչ, ապա ի՞նչ պատճառներ կարող եք նշել: Ինչո՞ւ ենք մենք անվստահությամբ վերաբերվում օրենքին:***

## **Իրավիճակ**

*Մասնագետներից շակերը, վերլուծելով հանքարդյունաբերության պարբառած վնասները, գալիս են այն համոզման, որ հանքարդյունաբերությունը վերածվեց <<հանքարթալանության>>, քանի որ նշված դաշտում առկա են օրենսդրական լուրջ բացթողումներ:*

## **Կարծիք**

Բոլոր խնդիրները կապված են Կառավարության ընդունած որոշումների հետ, որոնք հենվում են Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքների վրա: Խնդիրը հենց <<օրենսդրության մեջ է, որի համաձայն՝ հանքարդյունաբերությունից ստացված եկամուտների միայն 20%-ն է անցնում պետքութե, իսկ 80%-ը մտնում է մասնավոր ընկերությունների գրավանը: Այդ մասնավոր ընկերությունները գրաված են օվշորային (ազատ տնտեսական) գոտիներում, որպեսզի թաքցնեն կազմակերպության տիրոջ ով լինելը: Օրինակ՝ <<Ճատրակ գրուա>>-ը գրանցված է Լիխտենշտեյնում: Բացի այդ, օվշորային գոտիներում գրանցված կազմակերպությունների ֆինանսական հոսքերը օրենքով վերահսկելի չեն: Մեր օրենսդրության համաձայն հանքարդյունաբերական թափոնները չեն հարկվում, չի պարտադրվում հանքարդյունաբերության հետևանքով էկոլոգիական վնասի փոխհատուցում և այլն: Օրինակ՝ Հայաստանի մարզերից մեկի Կեչուտ բնակավայրում անտառահատման համար վնասը պետք է փոխհատուցվի, որովհետև ոչնչացվում է երկրի ազգային հարստությունը: Եթե վճարներ լինեն, գուցե և մարդկանց ձեռնտու չլինի այդ հումքը հանել: Բայց, քանի որ օրենքը չի պարտադրում շրջակա միջավայրը ոչնչացնելու համար լուրջ պատիժներ, պարզ է, որ ձեռնտու է առկա հումքը հանելը:

*Բացի Սահմանադրությունից, կա՞ն այլ հանգամանքներ:*

- Մեկ այլ խնդիր է այն, որ այսօր մեր հանրությունը գործնականում մեկուսացած է որոշումների կայացման գործընթացից: Պատճառն այն է, որ եթե հասարակությունը գործնական մասնակցություն ունենա, նա թույլ չի տա Զերմուկի, Հանքավանի, համանման հանքերի շահագործումը, որոնք զգալի վնասներ են հասցնում շրջակա միջավայրին:

*Իսկ ինչպես պետք է պահանջի հասարակությունը:*

- Իրավունքի գերակայության հիմնարար պահանջը նշանակում է, որ օրենքներն ու օրենսդրական այլ փաստաթղթերը չպետք է խախտեն մարդու հիմնարար իրավունքները: Օրինակ՝ Մաշտոցի պուրակում Երևանի քաղաքապետարանը թույլ է տվել իրականացնել շինարարություն: Իրավական ուժ ունեցող այդ որոշումը փաստորեն խախտում է մարդու հիմնարար իրավունքները, հետևաբար այդ փաստաթղթը պետք է չեղյալ հայտարարվի: Այդ դեպքում դա կլինի իրավունքի գերակայության դոկտրինի կիրառում:

*Բոլորը խոսում են, որ օրենսդրական դաշտը անկարար է, պետք են լուրջ օրենսդրական փոփոխություններ, սակայն ո՞վ պետք է կարարի այդ փոփոխությունները:*

- Օրենքը պետք է փոխվի հանրային ճնշման արդյունքում՝ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված կարգով:
- Չէ՞ որ մեր << Սահմանադրության 33.2. հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը եւ բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, իսկ պաշտոնակար անձինք պարասիստականարվություն են կրում քնապահանական գրեթեկարգությունը թաքցնելու կամ դրա գրամադրումը մերժելու համար: Արդյո՞ք դպվալ դեպքում ամեն ինչ սահմանադրական պահանջին համաձայն է:

Ենթադրենք՝ Կեչուտի վերաբերյալ անհեթեթ որոշում է կայացվել, մարդիկ իրավունք չունե՞ն բողոքարկելու: Օրենքը թույլ է տալիս դիմել դատարան միայն այն դեպքում, եթե շոշափվել են մարդու անձնական իրավունքները: Մինչդեռ հանրային շահերի պաշտպանության խնդրով հանդես եկող անձը փաստորեն իրավունք չունի դիմել դատարան և վիճարկել կայացված որոշումը: Նաև դա է պատճառը, որ Կեչուտի գործով այդպիսի որոշում է կայացվել:

### **Քննարկում**

1. Ի՞նչ ասել է «օրենքի» և «իրավունքի գերակայություն», արդյո՞ք իրավունքի գերակայությունը չի նշանակում նաև օրենքի գերակայություն:
2. Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկել, որպեսզի իրավունքի գերակայությունը գերիշխի պետության ներսում:

Փարիզում կանանց տարատ կրելն արգելող 200-ամյա օրենքը վերջապես չեղյալ է հայտարարվել Ֆրանսիայի կանանց իրավունքների հարցերով նախարար Նաջաթ Վալաուդ Բելկասեմի շնորհիվ, հայտնում է The Telegraph-ը:

1892թ. Փարիզի իշխանությունների կողմից ընդունված օրենքի համաձայն՝ կանանց արգելվում էր տարատ կրել, հակառակ դեպքում իրավապահ մարմիններն իրավասու են եղել նրանց ծերբականել՝ «տղամարդու պես» հագնված լինելու համար: 1909 թ. օրենքը որոշակի փոփոխությունների է ենթարկվել. մասնավորապես՝ կանանց թույլատրվել է տարատ կրել 2 դեպքում՝ եթե նրանք հեծանիվ են վարել կամ ծի են հեծնել:

21-րդ դարի համար արդեն հնացած այս օրենքը դեռևս մի քանի օր առաջ ուժի մեջ է եղել, սակայն անցած տարվա հունիսին Վալաուդ Բելկասեմին հասարակական նամակ է ուղղվել՝ տարատ կրելու մասին օրենքը չեղյալ հայտարարելու խնդրանքով:

### Գլուխ 3

## ՄԱԿ-ի և միջազգային այլ կազմակերպությունների դերը ժողովրդավարության կայացման գործում



### Բանավեճի ընթացքը. դերային խաղ

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը ըննարկում է Զանգիբարի Դաշնային Հանրապետության (ՀԴՀ) և Բարբառիսկանի Անկախ Պետության (ԲԱՊ)<sup>†</sup> միջև ավելի քան մեկ դասնամյակ շարունակվող գինված հակամարդությանը միջամտելու և որևէ կերպ արյունահեղությունը դադարեցնելու հարցը:

### Բանավեճի սկիզբ

Հակամարտության պատճառները պարզաբանելու համար նիստը նախագահողի առաջարկությամբ ընթերցվում են պատերազմի սկզբնական փուլում հակամարտող երկրների դեկավարների՝ երկրի բնակչությանը, զորքին ու աշխարհին ուղղված ռազմաշունչ ելույթների օրինակներ:

### Առաջին կողմ

— Հայտնի լինի մեր տերության,  
Զինվոր, բանվոր, ազնվական —  
Ամեն շարքին  
Ու աշխարհիքին,  
Որ անօրեն ու դավաճան  
Մեր դրացի ազգը դաժան,  
Երբ մենք քընած էինք սիրով,  
Մեր սահմանը մըտավ զոռով,  
Ու կոտորեց սուրը ձեռին  
Մեր սիրելի զավակներին:  
Արդ, սըրահար ու հըրակեզ  
Մեր որդիքը կանչում են մեզ,  
Եվ մենք, ընդդեմ մեր իսկ կամքին,

<sup>†</sup> Պետությունների անունները տվյալ դեպքում մտացածին են:

Պատվեր տըվինք մեր բանակին,  
Թընդանոթով մեր ավերող  
Ու աստուծով մեծակարող,  
Հանուն արդար ու սուրբ ոխի  
Մըտնի հողը մեր ոսխի:  
**Երկրորդ կողմ**

- Մարդկանց առաջ և աստղնու,  
Բողոքում ենք մեմ դըրացու  
Վարմունքի դեմ և չար, և նենգ,  
Որ ոտքելով ամեն օրենք,  
Բորբոքում է կըոհի ու վեճ  
Հին հարևան ազգերի մեջ,  
Քանդում սիրո դաշը կապած:  
Արդ՝ ակամա մենք ըստիպված,  
Հանուն պատվի, արդարության,  
Հանուն թափված անմեղ արյան,  
Հանուն ազատ մեր աշխարհի,  
Հանուն աստծու և իր փառքի —  
Բարձրացնում ենք մեր ծայնն ահա  
Ու մեր սուրը նորա վըրա:

(ըստ < Թումանյանի «Մի կաթիլ մեղող» բալլադի)

### **Բանավեճի հիմնական մասը**

Անվանգության խորհուրդը քննարկման ընթացքում փաստացի բաժանվում է երկու մասի.

**Առաջին խումբը** (Միացյալ Նահանգներ, Մեծ Բրիտանիա և Նրանց համախոհներ) գրնում է, որ արյունահեղությանը վերջ դալու համար անհրաժեշտ է ՄԱԿ-ի խաղարար ուժեր մղցնել հակամարդության գոտի.

**Երկրորդ խումբը** (Ռուսաստան, Չինաստան և Նրանց կողմնակիցներ) գրնում է, որ առայժմ սպառված չեն հակամարդության խաղաղ կարգավորման հնարավորությունները, և պետք է շարունակել ՄԱԿ-ի հովանու ներքո հակամարդող կողմերի միջև դարիներ շարունակ ընթացած ու ներկայումս ընդհադրված բանակցությունները:

Բանավեճի մասնակիցները կարող են օգտվել ստորև բերվող տեղեկատվական նյութերից: ՄԱԿ-ի կանոնադրությունից բերվող հատվածները նպատակ ունեն պատկերացում տալու Անվտանգության խորհրդի կազմի, լիազորությունների, ընթացակարգի և այլ հարցերի վերաբերյալ:

## ***Տեղեկակու***

Կանոնադրությամբ հաստատված ՄԱԿ-ի նպատակներն են՝

- պահպանել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը
- զարգացնել պետությունների բարեկամական հարաբերությունները՝ հիմնված հավասար իրավունքների և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի վրա
- նպաստել միջազգային համագործակցությանը տնտեսական, սոցիալական, մշակութային և մարդասիրական խնդիրների լուծման հարցում և խթանել մարդու իրավունքների և հիմնական ազատությունների հարգանքը
- լինել ազգերի՝ այս նպատակներին ուղղված գործողությունների համադասման կենտրոն:

ՄԱԿ-ը գործում է հետևյալ սկզբունքների համաձայն.

- այն հիմնված է բոլոր անդամների ինքնիշխան հավասարության վրա
- բոլոր անդամները պետք է բարեխորդեն կատարեն Կանոնադրությամբ իրենց ստանձնած պարտավորությունները
- նրանք պարտավոր են միջազգային վեճերը կարգավորել խաղաղ միջոցներով՝ չվտանգելով միջազգային խաղաղությունը, անվտանգությունն ու արդարությունը
- նրանք պետք է խուսափեն որևէ պետության դեմ ուժի գործադրումից կամ դրա սպառնալիքից:

ՄԱԿ-ի անդամակցությունը բաց է բոլոր խաղաղասեր ժողովուրդների համար, որոնք ընդունում են Կանոնադրությամբ հաստատված պարտավորությունները, ցանկանում են ու ի վիճակի են կատարել այդ պարտավորությունները:

ՄԱԿ-ի գործողությունների դերն ու նշանակությունը մարդու իրավունքների պաշտպանության գործում շարունակում է մեծանալ և հիմնական նպատակը մնում է նոյնը. ապահովել, որ լիովին հարգվի «Միավորված ազգերի կազմակերպության ժողովուրդների» մարդկային արժանապատվությունը, ում անունից գրվել է կանոնադրությունը: ՄԱԿ-ն ապահովում է, որ անդամ երկրներում մարդու իրավունքները ոչ միայն վերացականորեն սահմանվեն, այլև գործածության մեջ դրվեն:

**Անվտանգության խորհուրդը** իրավասու է հետաքննել ցանկացած վեճ կամ իրավիճակ, որը կարող է հանգեցնել միջազգային լարվածության կամ վեճի, որոշելու համար, թե կարող է արդյոք տվյալ վեճի կամ իրավիճակի շարունակվելը վտանգել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը (ՄԱԿ-ի Կանոնադրություն, հոդվ. 34): Խորհուրդն իրավունք ունի միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը խախտող պետությունների նկատմամբ կիրառելու հարկադրական, այդ թվում զինված ուժերի կիրառման հետ կապված, միջոցներ:

ՄԱԿ-ի Կանոնադրության 25-րդ հոդվածն ասում է՝

*Միավորված ազգերի կազմակերպության անդամները համաձայնության են գալիս Ենթարկվել Անվտանգության խորհրդի որոշումներին և կարարել դրանք:*

Այսպիսով, Անվտանգության խորհրդի որոշումները պարտադիր են ՄԱԿ-ի անդամ բոլոր պետությունների համար: ՄԱԿ-ի մնացած մարմիններն, ի դեպ, կարող են ընդունել միայն երաշխավորական որոշումներ:

Խաղաղության ու անվտանգության պահպանման ուղղությամբ Անվտանգության խորհրդի գործունեությունն ուղղված է խախտող պետությունների նկատմամբ այս կամ այն սանկցիայի ընտրությանը (ներառյալ նրանց դեմ ուղղված ռազմական գործողությունները). հակամարտության գոտի խաղաղարար ուժեր մտցնելը, հետկոնֆլիկտային կարգավորումը՝ ներառյալ հակամարտության գոտում միջազգային վարչակազմի հաստատումը:

Անվտանգության խորհրդի որոշումների (բացի ընթացակարգային որոշումներից) ընդունման համար անհրաժեշտ են 9 ծայն 15-ից (5 մշտական և 10 ոչ մշտական անդամներ): Անվտանգության խորհրդի որոշումներն ընդունվում են մշտական անդամների՝ ԱՄՆ, Ռուսաստան, Չինաստան, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, միաձայնության սկզբունքով: Դա նշանակում է, որ խորհրդի հինգ մշտական անդամներից յուրաքանչյուրն ունի վերոյի իրավունք: Ընդ որում մշտական անդամի՝ քվեարկությունից ձեռնպահ մնալը չի համարվում որոշման ընդունմանը խոչընդոտող հանգամանք:

*Steу 'Совет Безопасности ООН*  
Материал из Википедии — свободной энциклопедии

**Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրություն  
(1948թ., դեկտեմբերի 10)**

**Մենք՝ Միավորված ազգերի ժողովուրդներս, լի վճռականությամբ**

փրկել գալիք սերունդներին պատերազմի արհավիրքից, որը մեր կյանքի ընթացքում երկու անգամ անասելի վիշտ է պատճառել մարդկությանը, և վերահասպատել հավատը մարդու իհմնական իրավունքների, անհատի արժանապատվության և արժեքի, դրամարդու և կնոջ, ինչպես նաև մեծ ու փոքր ազգերի հավասար իրավունքների նկատմամբ, և սպեղծել այնպիսի պայմաններ, որոնք ապահովեն արդարությունն ու դաշինքներից և միջազգային իրավունքի այլ աղբյուրներից բխող պարտավորությունների հանդեպ հարգանքը, և ավելի մեծ ազարության պայմաններում խթանել սոցիալական առաջընթացն ու կենսամակարդակի բարելավումը.

**ԵՎ հանուն այդ նպատակների**

ցուցաբերել հանդուրժողություն ու միմյանց հետ ապրել խաղաղությամբ, որպես բարի դրացիներ, և միավորել մեր ուժերը միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու համար, և համապատասխան սկզբունքների ընդունման և մեթոդների սահմանման միջոցով երաշխավորել զինուժի գործադրումը բացառապես ընդհանուր շահերին համապատասխան, և միջազգային լծակները գործադրել բոլոր ժողովուրդների գնդեսական ու սոցիալական առաջընթացը խթանելու համար,

**Որոշել ենք միավորել մեր ջանքերն այդ նպատակներին հասնելու համար**

ըստ այդմ, մեր համապատասխան կառավարությունները, ժողոված Սան Ֆրանցիսկոյում, բավարար ու պարզած կերպով իրենց լիազորությունները փաստած ներկայացուցիչների միջոցով համաձայնել են ընդունել Միավորված ազգերի կազմակերպության սույն Կանոնադրությունը և իհմնում են Միավորված ազգեր անվանումով միջազգային կազմակերպությունը:

## **ԳԼՈՒԽ 5. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

### **Կազմը**

#### **Հոդված 23**

- Անվտանգության խորհուրդը բաղկացած է Միավորված ազգերի կազմակերպության տասնինգ անդամներից: Ամերիկայի Միացյալ Նահանգները, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը<sup>‡</sup>, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իոլանդիայի Միացյալ Թագավորությունը, Չինաստանի Հանրապետությունը և Ֆրանսիան Անվտանգության խորհրդի մշտական անդամներ են: Գլխավոր ասամբլեան Միավորված ազգերի կազմակերպության տասը այլ անդամների ընտրում է որպես Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամներ՝ մասնավորապես ըստ արժանվոյն ուշադրություն դարձնելով առաջին հերթին անդամի ունեցած մասնակցությանը միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման և Կազմակերպության այլ նպատակներին հասնելու գործում, ինչպես նաև աշխարհագրական արդարացի համամասնությանը:
- Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամներն ընտրվում են երկու տարի ժամկետով: Ոչ մշտական անդամների առաջին իսկ ընտրություններում, Անվտանգության խորհրդի անդամների թիվը տասնմեկից մինչև տասնինգ հասնելուց հետո, չորս լրացուցիչ անդամներից երկուսն ընտրվում են մեկական տարի ժամկետով: Անվտանգության խորհրդի ժամկետը սպառած անդամը անմիջապես վերընտրության ենթակա չէ:
- Անվտանգության խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ներկայացուցիչ:

### **Գործառույթները և լիազորությունները**

#### **Հոդված 24**

- Միացյալ ազգերի կազմակերպության արագ և արդյունավետ գործողությունները ապահովելու համար նրա անդամները միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման հիմնական պատասխանատվությունը վերապահում են Անվտանգության խորհրդին և համաձայնության են գալիս, որ այդ պատասխանատվությունից բխող իր պարտավորությունները կատարելիս Անվտանգության խորհուրդը գործում է իրենց անունից:
- Այդ պարտավորությունները կատարելիս Անվտանգության խորհուրդը գործում է Միավորված ազգերի նպատակների ու սկզբունքների համաձայն: Այդ պարտավորությունները կատարելու համար Անվտանգության խորհրդին տրված հատուկ լիազորությունները շարադրված են 6, 7, 8 և 12 գլուխներում:
- Անվտանգության խորհուրդը Գլխավոր ասամբլեային ներկայացնում է ամենամյա գեկույցներ և ըստ անհրաժեշտության՝ հատուկ գեկույցներ:

### **Քվեարկություն**

#### **Հոդված 27**

- Անվտանգության խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն:

<sup>‡</sup> ԽՍՀՄ-ի փոխարեն այժմ Անվտանգության խորհրդի մշտական անդամ է Ռուսաստանի Դաշնությունը:

2. Ընթացակարգի հարցերին վերաբերող Անվտանգության խորհրդի որոշումներն ընդունվում են ինը անդամների կողմ ձայներով:
3. Բոլոր այլ հարցերի վերաբերյալ Անվտանգության խորհրդի որոշումներն ընդունվում են ինը անդամների կողմ ձայներով, ներառյալ բոլոր մշտական անդամների համընկնող ձայները, ընդ որում 6-րդ գլուխի և 52-րդ հոդվածի 3-րդ կետի հիման վրա որոշումներն ընդունելիս վեճին մասնակցող անդամը պետք է ծեռնապահ է մնա քվեարկությունից:

## **Ընթացակարգ**

### **Հոդված 28**

1. Անվտանգության խորհուրդը կազմակերպվում է այնպես, որ կարողանա գործել անընդմեջ: Այդ նպատակով Անվտանգության խորհրդի յուրաքանչյուր անդամ պետք է մշտապես ներկայացված լինի Միավորված ազգերի կազմակերպության նստավայրում:
2. Անվտանգության խորհուրդը գումարում է պարբերական նիստեր, որոնց ժամանակ նրա յուրաքանչյուր անդամ կարող է իր հայեցողությամբ ներկայացվել կառավարության անդամի կամ հատուկ նշանակված որևէ այլ ներկայացուցչի միջոցով:
3. Անվտանգության խորհրդի նիստերը կարող են տեղի ունենալ ոչ միայն կազմակերպության նստավայրում, այլև ցանկացած այլ վայրում, որը, ըստ խորհրդի, առավել նպաստավոր է իր աշխատանքի համար:

## **ԳԼՈՒԽ 6. ՎԵՃԵՐԻ ԽԱՂԱԴ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**

### **Հոդված 33**

1. Ցանկացած վեճի մասնակցող կողմերը, որի շարունակվելը կարող է վտանգել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը, պետք է ամենից առաջ ձգտեն լուծել այն բանակցությունների, հետաքրքրությունների, միջնորդությունների, հաշտեցման, արբիտրաժի, դատավարությունների, տարածքային մարմններին կամ համաձայնություններին դիմելու և կամ իրենց ընտրությամբ այլ խաղաղ միջոցներով:
2. Անվտանգության խորհուրդը, երբ հարկ է համարում, կողմերին կոչ է անում վեճը կարգավորել նման միջոցներով:

### **Հոդված 34**

- Անվտանգության խորհուրդը իրավասու է հետաքրքրություն ունեցող վեճ կամ իրավիճակ, որը կարող է հանգեցնել միջազգային լարվածության կամ վեճի, որոշելու համար, թե կարող է արդյոք տվյալ վեճի կամ իրավիճակի շարունակվելը վտանգել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը:

\*Կանոնադրությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992թ. մարտ 2-ից (Գլխավոր ասամբլեայի 46/227 բանաձև):

*Միավորված ազգերի կազմակերպության  
Հանրային տեղեկատվության վարչության  
երևանյան գրասենյակ*

## **Միավորված ազգերի կազմակերպության կառուցվածքը**

### **Գլխավոր Ասամբլեա**

Զբաղեցնում է կենտրոնական դիրք, որպես գլխավոր խորհրդատավական, քաղաքական և ներկայացուցչական մարմին: Գլխավոր անսամբլեան ուսումնասիրում է համագործակցության սկզբունքները միջազգային խաղաղության և անվտանգության շրջանում՝ ընտրում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի, Տնտեսական և սոցիալական խորհրդի ոչ մշտական անդամներին, Անվտանգության խորհրդի առաջարկով նշանակում է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, Անվտանգության խորհրդի հետ համատեղ ընտրում են ՄԱԿ-ի միջազգային դատարանի անդամներին, կորդինացնում է տնտեսական, ցոցիալական, մ-ակութային և հումանիտար ոլորտներում միջազգային համագործակցությունը, իրականացնում է ՄԱԿ-ի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

Գլխավոր ասամբլեան ունի նստաշրջանային աշխատանքային կարգ: Այն կարող է անցկացնել հերթական (ուղղություն), հատուկ և արտակարգ հատուկ նստաշրջաններ:

Ասամբլեայի տարեկան հերթական նստաշրջանը սկսվում է սեպտեմբերի 3-րդ երեքշաբթի օրը և աշխատում Գլխավոր ասամբլեայի նախագահի (կամ 21 տեղակալներից մեկի) ղեկավարությամբ՝ լիակազմ նիստերի և գլխավոր կոմիտեների՝ մինչև օրակարգի ամբողջական սպառումը:

Գլխավոր ասամբլեան համաձայն 1993թ. դեկտեմբերի 17-ի որոշման իր կազմի մեջ ներառում է 6 կոմիտե՝ Գլխավոր կոմիտե և լիազորությունների ստուգման կոմիտե՝

- Գլխավոր կոմիտե - խերհրդատվություն է կազմում ասամբլեայի համար կապված օրակարգի հաստատման, օրակարգի կետերի բաշխման և աշխատանքի կազմակերպման հետ
- Լիազորությունների ստուգման կոմիտե - ասամբլեային գեկուցում է ներկայացուցիչների լիազորությունների մասին
- Միջազգային անվանգության և գինաթափման հարցերով գրադարձ կոմիտե (առաջին կոմիտե)
- Տնտեսական և ֆինանսական հարցերով գրադարձ կոմիտե (երկրորդ կոմիտե)
- Սոցիալական և հումանիտար հարցերով, ինչպես նաև մշակութային հարցերով գրադարձ կոմիտե (երրորդ կոմիտե)
- Հատուկ քաղաքական և ապագաղութացման հարցերով գրադարձ կոմիտեի (Չորրորդ կոմիտե)
- Վարչական և բյուջետային հարցերով գրադարձ կոմիտե (հինգերորդ կոմիտե)
- Իրավական հարցերով գրադարձ կոմիտե (վեցերորդ կոմիտե)

Գլխավոր կոմիտեի կազմի մեջ մտնում են Գլխավոր ասամբլեայի նախագահը, նախագահի ներկալիները, գլխավոր կոմիտեների նախագահները, ովքեր ընտրվում են հինգ մայրցամաքների՝ Ասիայի, Աֆրիկայի, Հատինական Ամերիկայի, Արևմտյան Եվրոպա (այդ թվում՝ Կանադան, Ավստրալիան և Նոր Զելանդիան) և

Արևելյան Եվրոպայի աշխարհագրական արդար ներկայացուցչության սկզբունքով: ՄԱԿ-ի Գլխավոր Ասսամբլեայի Հատուկ նիստերը կարող են գումարվել ցանկացած հարցի շուրջ, ազգային անվտանգության խորհրդի պահանջով, 15 օրվա ընթացքում: Մինչև 2006 թ. հրավիրվել են շուրջ 30 հատուկ նստաշրջաններ, որոնց մեծ մասը վերաբերում էին մարդու իրավունքներին, շրջակա միջավայրի պաշտպանության, թմրանյութերի դեմ պայքարի և այլ հարցերի:

Արտակարգ հատուկ նիստեր կարող է գումարվել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կամ ՄԱԿ-ի անդամ-պետությունների մեծամասնության պահանջով՝ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի պահանջով 24 ժամվա ընթացքում:

### **ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ**

Պատասխանատվություն է կրում միջազգային խաղաղություն և անվտանգության համար: Խորհրդի որոշումներին պարտավոր են Ենթարկվել ՄԱԿ-ի բոլոր անդամները: Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամները (Ռուսաստանի Դաշնություն, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Չինաստան) ունեն վետոյի ուժ: Անվտանգության խորհուրդը բաղկացած է 15 անդամներից, որից հինգը մշտական են (Ռուսաստան, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Չինաստան), մնացած տաս անդամները (կանոնադրությանը համաձայն «Մշտական չեն») ընտրվում են հատուկ կարգով՝ համաձայն կանոնադրության (հոդված 23, կետ 2):

### **ՄԱԿ-ի քարտուղարություն**

Այն միջազգային անձնակազմ է, որը աշխատում է աշխարհի բոլոր այն հաստատություններում, որոնք իրականացնում են Կազմակերպության մի շարք ամենօրյա աշխատանքը: Այն սպասարկում է Միացիալ ազգերի կազմակերպության մնացած գլխավոր մարմիններին և իրականացնում է իրենց կողմից ընդունված ծրագրերը և քաղաքական դիրքորոշումները: Քարտուղարության բաժինները գտնվում են Նյու Յորքում ՄԱԿ-ի կենտրոնական հաստատություններում և այլ տեղերում, որտեղ կան ՄԱԿ-ի կենտրոնական հաստատություններ, որոնցից ամենախոշորները տեղակայված են Ժնևում և Վիեննայում: ՄԱԿ-ի Քարտուղարությունը ապահովում է ՄԱԿ-ի մարմինների աշխատանքը, իրականացնում է ՄԱԿ-ի նյութերի հրապարակումն ու տարածումը, արխիվների պահպանումը, իրականացնում է ՄԱԿ-ի անդամ պետությունների միջազգային պայմանագրերի գրանցում ու հրատարակում: Քարտուղարությունը ղեկավարում է ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը:

## **ՄԱԿ-ը Հայաստանում**

Հայաստանի Հանրապետության (ՀՀ)՝ 1992թ. հունվարի 23-ի պաշտոնական խնդրանքին ի պատասխան՝ Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհուրդը (ԱԽ) իր 3035-րդ նիստի ընթացքում քննարկեց Հայաստանի Հանրապետության դիմումը ՄԱԿ-ին անդամակցելու վերաբերյալ և խորհուրդ տվեց Գլխավոր ասամբլեային (ԳԱ) ընդունել Հայաստանի Հանրապետությանը ՄԱԿ-ի անդամ (ԱԽ 735-րդ բանաձև, 1992թ. հունվարի 29):

Համաձայն ՀՀ 1992թ. հունվարի 23-ի Միավորված ազգերի կազմակերպությանն անդամակցելու դիմումի, ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը իր 1992թ. հունվարի 29-ի 3035-րդ նիստի ժամանակ ընդունեց 735(1992) բանաձևը (<http://www.un.am/>) և հանձնարարեց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային անդամագրել Հայաստանի Հանրապետությանը: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան իր 46-րդ նստաշրջանում 1992թ. մարտի 2-ի 46/227 որոշմամբ հաստատեց ՀՀ-ի անդամակցությունը:



## Եվրոպական միություն

Եվրոպական միություն կամ **Եվրամիություն**<sup>6</sup> (անգլ.՝ European Union, ֆր.՝ Union européenne) եզակի միջկառավարական և վերազգային կազմավորում է, որն ընդգրկում է 27 անդամ երկրներ: Եվրոպական միությունը հիմնվել է 1992թ. Եվրոպական միության մասին *Պայմանագրով* (Մասատրիխտի պայմանագիր):

<b>ԵՄ ինստիտուտների վայրերը</b>	Բրյուսել (ԵՄԽ, ԵԿ, և ԵԽ) Ֆրանկֆուրտ (ԵԿԲ) Լյուքսեմբուրգ (ԵԴ և ԱԵԴ) Ստրասբուրգ (ՀՊԴ ԵԽ)
<b>Դրամական իշխանություն</b>	Եվրոպական Կենտրոնական Բանկ (Ֆրանկֆուրտ)
<b>Վարչական կենտրոն</b>	Բրյուսել (դե ֆակտո մայրաքաղաք)
<b>Եվրոպական Միության ամենամեծ քաղաքը</b>	Լոնդոն
<b>Անդամ երկրներ</b>	27
<b>Պաշտոնական լեզուներ</b>	23 պաշտոնական լեզու
<b>Նախագահություններ</b>	
<b>Եվրոպական խորհուրդ</b>	Frank-Walter Steinmeier
<b>ԵՄ խորհուրդ</b>	Գերմանիա
<b>Եվրոպական հանձնաժողով</b>	Խոսե Մանուել Ռուիան Բառողն
<b>Եվրոպական խորհրդարան</b>	Հանս Գերի Պյոտերինգ
<b>Վիճակագրություն</b>	
<b>Տարածք</b> - Total	7րդ եթե հաշվառվի 3,976,372 կմ <sup>2</sup>
<b>Բնակչություն</b> - Ընդհանուր (2006) - Խտություն	3րդ եթե հաշվառվի 461,500,000 115.6 մարդ/կմ <sup>2</sup>
<b>Պաշտոնական կայք</b>	<a href="http://europa.eu/">http://europa.eu/</a>

<sup>6</sup> Եվրամիությունը թեև ներկայացված է ՄԱԿ-ին և այլ միջազգային կազմակերպություններին նվիրված գլխում, պեսcop է նկատի ունենալ սակայն, որ այն եվրոպական երկրների եզակի տարածաշրջանային միավորում է, և ԵՄ մասին պատմող նյութն ընդգրկված է սույն գլխում զուտ նպատակահարմարության հանգամանքից ելնելով:

## **Հայաստան և Եվրոպական միություն**

Հայաստանը Եվրոպական Միության Հարևանության քաղաքականության մասնակից է: Համապատասխան Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը ստորագրվել է 1999 թ. հունիսին, իսկ Գործողությունների ծրագիր՝ 2006-ի նոյեմբերի 13-ին:

### **Եվրոպական միությունը և Եվրոպայի խորհուրդը**

Եվրոպայի տարածքում Եվրոպական միությունից բացի, որպես համաեվրոպական երկրորդ կարևոր ինտեգրման կենտրոն, հանդես է գալիս **Եվրոպայի խորհուրդը**, որի անդամ է համարվում նաև Հայաստանի Հանրապետությունը (2001 թվականից): Եվրոպական միությունը նույնանում է Եվրոպայի խորհրդին գաղափարական խորհրդանշներով և նպատակի ընդհանուրությամբ: «Եվրոպայի խորհրդի նպատակն է հասնել իր անդամների միասնականությանը՝ հանուն նրանց ընդհանուր ձեռքբերումների ու գաղափարների և սկզբունքների պաշտպանության ու իրականացմանը և նրանց տնտեսական ու սոցիալական առաջընթացի համագործակցությանը (Եվրոպայի խորհրդի կանոնադրություն, հոդված 1):»:

1. Եվրոպական միությունը և Եվրոպայի խորհուրդը ստեղծվել և գործում են տարբեր հիմնարար փաստաթղթերի հիմքի վրա: Միության համար դրանք պայմանագրեր են՝ կազմված Եվրոպայի երեք համայնքների կողմից և Եվրոպական միության մասին պայմանագրեր: Այն իրավական աղյուրը, որի վրա հիմնված է Եվրոպայի խորհուրդը՝ նրա կանոնադրությունն է, որն իր ձևով նույնպես միջազգային պայմանագիր է:
2. Որպես Եվրոպական համայնքների և Միության գործունեության առաջնահերթություն և ուղղություն, ի սկզբանե հանդես է եկել տնտեսությունը: Ներկայումս այն ընդգրկում է հասարակական կյանքի բոլոր կարևոր ոլորտները՝ ընդհուա Միության ընդհանուր պաշտպանական քաղաքականության ծևավորման հարցերը: Եվրոպայի խորհուրդն իր գործունեությունը կենտրոնացնում է իրավունքների և ազատությունների ապահովման հարցերի վրա:
3. Իր լիազորությունների բնույթով Եվրոպական միությունը հանդես է գալիս որպես քաղաքական իշխանության կազմակերպություն, որի լիազորությունների ծավալը ժամանակի հետ ավելի է մեծանում:

Միության ինստիտուտները իրատարակում են նորմատիվային ակտեր, որոնք չեն պահանջում վավերացում և համապարտադիր են, հնարավոր է ամեն անգամ ի հեճուկս առանձին անդամ պետությունների կամքի:

Միության միասնական արժույթի՝ Եվրոյի, մուտքով անդամ պետություններից այս կազմակերպության իրավասության ներքո անցան դրամավարկային քաղաքականության վճռորոշ հարցերը՝ ներառյալ դրամական արժեթղթերի թողարկումը:

Վերջին տարիներին եռանդուն քննարկումներ են ընթանում 1950թ Եվրոպական կոնվենցիայի հետ Եվրոպական Միությունը միավորելու՝ արպես առանձին կողմի, հնարավոր է անգամ, որպես Եվրոպայի խորհրդում Եվրոպական միությունը միավորելու՝ որպես առանձին կողմի, հնարավոր է անգամ, որպես Եվրոպայի

խորհրդում Եվրոպական միության ինքնուրույն անդամի ընդունվելու հարցի շուրջ: Եվրոպայի խորհուրդը սեփական իրավաստեղծ լիազորությունների չի տիրապետում: Եվրոպայի խորհրդի ատյանները նորմատիվային ակտեր չեն իրատարակում: Նրանք պատրաստում են միջազգային կոնվենցիաների նախագծեր, որոնք առաջարկում են անդամ պետություններին՝ ստորագրման և վավերացման համար, ինչպես նաև ընդունում են որոշումներ և երաշխավորագրեր, որոնք որպես փաստաթուղթ չունեն իրավաբանական պարտադիր ուժ:

Չորրորդ՝ Եվրոպական միության ատյանները, իրենց իրավասությունների սահմաններում ընդունել են բազմաթիվ նորմատիվ ակտեր, նախադեպային բնույթի դատական և մի շարք այլ որոշումներ, որոնք հիմնարար պայմանագրերի հետ միասին կազմում են Եվրոպական միության՝ որպես ինքնուրույն իրավական համակարգի իրավունքի աղբյուրներ:

Եվրոպայի խորհրդի կողմից մշակված մնացած բոլոր կոնվենցիաները, այդ թվում և 1961թ ընդունված Եվրոպայի սոցիալական խարտիան, ստորագրել, վավերացրել և գործողության մեջ են դրել միայն անդամ պետությունների մի մասը:

Եվրոպայի խորհրդը միջազգային միջկառավարական կազմակերպություն է, որն ինտեգրման գործընթացը իրականացնում է զարգացող ինքնիշխան պետությունների կամքի միջոցով: Եվրոպայի խորհրդը միջազգային-իրավական, իսկ Եվրոպական միությունը՝ միջազգային սկզբունքների համադրության վրա հիմնված պետական կազմակերպություններ են:

### **Եվրոպական միության կազմը**

- 1950: Բելգիա, Գերմանիա, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Նիդերլանդներ, Ֆրանսիա ԵՄ անդամ մյուս երկրները.
- 1973: Դանիա, Մեծ Բրիտանիա, Իռլանդիա
- 1981: Հունաստան
- 1986: Իսպանիա, Պորտուգալիա
- 1995: Ավստրիա, Ֆինլանդիա, Շվեյցարիա
- 2004: Էստոնիա, Կիպրոս, Լատվիա, Լիտվա, Մալթա, Լեհաստան, Սլովենիա, Սլովակիա, Հունգարիա, Չեխիա
- 2007: Բուլղարիա, Ռումինիա
- 2013: Խորվաթիա

Եվրոպական միության կազմը ձևավորվել է աստիճանաբար: Առաջին մասնակիցները եղել են Արևմտյան Եվրոպայի 6 երկրները՝ Բելգիան, Իտալիան, Լյուքսեմբուրգը, Նիդերլանդները, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը, Ֆրանսիան: Այս կազմով էլ XX դարի 50-60-ական թվականներին գործում էին Եվրոպական 3 համայնքները:

Համայնքների առաջին ընդլայնումը տեղի ունեցավ 70-ական թվականներին 1973-ին նրանց միացան Մեծ Բրիտանիան, Դանիան և Իռլանդիան:

80-ական թվականներին դրանց կազմի մեջ մտան՝ 1981-ին՝ Հունաստանը, 1986-ին՝

Իսպանիան և Պորտուգալիան: Համայնքների անդամ Երկրների թիվը հասավ 12-ի: Վերը հիշատակված 12 Երկրների ներիկայացուցիչները 1992թ ստորագրեցին պայմանագիր «Եվրոպական Միության» մասին, որը գործողության մեջ մտավ հաջորդ տարի:

Մասատրիխստի պայմանագիրը երեք համայնքներին միանալու հատուկ ընթացակարգերը փոխարինեց Եվրոպական Միությանը միանալու մեկ միասնական ընթացակարգով:

Եվրոպական Միության մասին պայմանագրի 49-րդ հոդվածի համաձայն «Եվրոպական ցանկացած պետություն կարող է խնդրել դառնալ Միության անդամ: Նա իր խնդրանքը ներկայացնում է Խորհրդին, որն արտահայտվում է միաձայն Հանձնաժողովի հետ խորհրդակցելուց և Եվրոպական Խորհրդարանի համապատասխան կարծիքը ստանալուց հետո»:

Ընդունման պայմանները համաձայնեցվում են անդամ պետությունների և հայցող պետության կողմից, այնուհետև՝ վավերացվում պայմանադիր բոլոր պետությունների կողմից՝ նրանց ներպետական սահմանադրական նորմերին համապատասխան:

Միության նոր անդամ պետություն դառնալու համար գոյություն ունեն մի շարք անհրաժեշտ պայմաններ:

1. Նախ և առաջ պետությունը պետք է լինի «Եվրոպական», որը պայմանավորված է ոչ այնքան աշխարհագրական դիրքով, որքան Երկրի մշակույթով՝ ներառյալ նրա քաղաքական և իրավական ավանդույթները:
2. Երկրորդ՝ Միության անդամ դառնալ ցանկացող պետությունը պարտավոր է հարգել Եվրոպական Միության պայմանագրում ամրագրված սահմանադրական՝ «ազատության, ժողովրդավարության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, ինչպես նաև իրավական պետության սկզբունքները»:

Կան ևս Երկու կարևոր պայմաններ՝ թեկնածու պետության տնտեսական և իրավական համակարգերին: Նախ խոսքը տնտեսական զարգացման բավարար բարձր մակարդակի մասին է և ազգային օրենսդրության համապատասխանությունը Եվրոպական Միության իրավունքին, որը պետք է արվի նախապես: Իրավական աղբյուրը, որի հիման վրա իրականանում է նոր անդամ պետության մուտքը Եվրամիություն՝ Միացման մասին պայմանագիրն է: Որպեսզի Միացման մասին պայմանագիրն ուժի մեջ մտնի, այն կարիք ունի վավերացման՝ Միության բոլոր անդամ պետությունների կողմից: Այսպիսով՝ Եվրոպական Միության մեջ ընդունվելու համար, ի թիվս մի շարք տնտեսական և քաղաքական բնույթի էական պահանջների, նախ անհրաժեշտ է ստանալ դրա մեջ մտնող յուրաքանչյուր անդամ պետության համաձայնությունը, ինչպես նաև Միության ժողովուրդների անբողջությունը ներկայացնող մարմնի՝ Եվրոպական Խորհրդի համաձայնությունը: Պայմանագրի գործողությունները տարածվում են նաև Եվրոպական այնպիսի տարածքների վրա, որոնք ձևականորեն կարող են և չմտնել համապատասխան անդամ պետության պետական տարածքի մեջ, սակայն նրա արտաքին հարաբերություններն

իրականացվում են տվյալ անդամ պետության կողմից (օրինակ՝ Զիբրալթարը, որը Մեծ Բրիտանիայի կախյալ տարածքն է):

Երեք երկրներ՝ Մեծ Բրիտանիան, Դանիան և Շվեդիան, մյուսների հետ չգնացին ԵՄ-ի շրջանակներում կառուցվող արժույթի շուկայի երկրորդ փուլին, հետևաբար և կապված չեն այդ ոլորտի համապատասխան իրավական նորմերով։ Մյուս էական բացառությունը կապված է Շենգենյան համաձայնագրի և դրա վրա հիմնված շենգենյան իրավունքի վրա։ Վերջինիս կանոնները սկզբնական շրջանում տարածվում էին միայն 5 անդամ պետության վրա, սակայն 2001թ մարտի 25-ից հետո դրանց թիվը դարձավ 13։ Այդ ժամանակից ի վեր «Շենգենյան գոտին» ընդգրկում է Միության բոլոր երկրները, բացի Երկուսից՝ Մեծ Բրիտանիայից և Իռլանդիայից։

## Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն



ԵԱՀԿ - «Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն» (անգլերեն՝ OSCE, Organization for Security and Co-operation in Europe)

1973-ին հիմնված տարածաշրջանի անվտանգության խոշորագույն կազմակերպություն, որն իր մեջ ներառում է 56 պետություններ Եվրոպայից, Կենտրոնական Ասիայից և Հյուսիսային Ամերիկայից:

Կազմակերպությունը կոչված է կանխելու ծագող հակամարտությունները տարածաշրջանում:

Հակամարտությունները կանխելու և կարգավորելու հիմնական միջոցներն են.

- Զինամթերքների տարածման վերահսկում
- Դիվանագիտական ջանքեր՝ հակամարտությունները կարգավորելու համար
- Փոխվստահության և անվտանգության պայմանների ստեղծում
- Մարդու իրավունքների պաշտպանություն
- Ժողովրդավարական ինստիտուտների ստեղծում
- Ընտրությունների մոնիթորինգ
- Տնտեսական և էկոլոգիական անվտանգություն:

ԵԱԿՀ անդամ-երկրներն ունեն հավասար ստատուս:

## Մասնակից երկրներ

Երկիր	Դարձել է անդամ	Ստորագրել է Հելսինկիի եզրափակիչ ակտ	Ստորագրել է Փարիզի խարտիա
Ալբանիա	1991 Հունիսի 19	1991 Սեպտեմբերի 16	1991 Սեպտեմբերի 17
Անդորրա	1996 Ապրիլի 25	1999 Նոյեմբերի 10	1998 Փետրվարի 17
Հայաստան	1992 Հունվարի 30	1992 Հուլիսի 8	1992 Ապրիլի 17
Ավստրիա	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Ադրբեյչան	1992 Հունվարի 30	1992 Հուլիսի 8	1993 Դեկտեմբերի 20
Բելառուս	1992 Հունվարի 30	1992 Փետրվարի 26	1993 Ապրիլի 8
Բելգիա	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Բունիա և Հերցեգովինա	1992 Ապրիլի 30	1992 Հուլիսի 8	
Բուղարիա	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Կանադա	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21

Խորվաթիա	1992 Մարտի 24	1992 Հուլիսի 8	
Կիպրոս	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Չեխիա	1993 Հունվարի 1		
Դանիա	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Էստոնիա	1991 Սեպտեմբերի 10	1992 Հոկտեմբերի 14	1991 Դեկտեմբերի 6
Ֆինլանդիա	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Ֆրանսիա	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Վրաստան	1992 Մարտի 24	1992 Հուլիսի 8	1994 Հունվարի 21
Գերմանիա	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Հունաստան	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Վատիկան	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Հունգարիա	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Իսլանդիա	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Իռլանդիա	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Իտալիա	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Ղազախստան	1992 Հունվարի 30	1992 Հուլիսի 8	1992 Սեպտեմբերի 23
Ղրղզստան	1992 Հունվարի 30	1992 Հուլիսի 8	1994 Հունիսի 3
Լատվիա	1991 Սեպտեմբերի 10	1991 Հոկտեմբերի 14	1991 Դեկտեմբերի 6
Լիխտենշտայն	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Լիտվա	1991 Սեպտեմբերի 10	1991 Հոկտեմբերի 14	1991 Դեկտեմբերի 6
Լյուքսեմբուրգ	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Մակեդոնիա	1995 Հոկտեմբերի 12		
Մալթա	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Մոլդովա	1992 Հունվարի 30	1992 Փետրվարի 26	1993 Հունվարի 29
Մոնակո	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Չեռնոգորիա	2006 Հունիսի 22	2006 Սեպտեմբերի 1	
Նիդերլանդներ	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Նորվեգիա	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21

Հեհաստան	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Պորտուգալիա	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Ռումինիա	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Ռուսաստան	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Սան Մարինո	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Սերբիա	1973 Հունիսի 25		
Սլովակիա	1993 Հունվարի 1		
Սլովենիա	1992 Մարտի 24	1992 Հուլիսի 8	1993 Մարտի 8
Իսպանիա	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Շվեդիա	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Շվեյցարիա	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Տաջիկստան	1992 Հունվարի 30	1992 Փետրվարի 26	
Թուրքիա	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Թուրքմենստան	1992 Հունվարի 30	1992 Հուլիսի 8	
Ուկրաինա	1992 Հունվարի 30	1992 Փետրվարի 26	1992 Հունիսի 16
Միացյալ Թագավորություն	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
ԱՄՆ	1973 Հունիսի 25	1975 Օգոստոսի 1	1990 Նոյեմբերի 21
Ուզբեկստան	1992 Հունվարի 30	1992 Փետրվարի 26	1993 Հոկտեմբերի 27

**Եռնային Դարաբաղի** հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված ջանքերն իրականացվում են ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում, որի անդամներն են Բելառուսը, Գերմանիան, Իտալիան, Շվեդիան, Ֆինլանդիան, Թուրքիան, Հայաստանը եւ Ադրբեյչանը, ինչպես նաև ԵԱՀԿ երյակը կազմող երկրները եւ Մինսկի խմբի համանախազահները՝ ֆրանսիա, Ռուսաստան եւ ԱՄՆ:

1995թ. հիմնվել է ԵԱՀԿ Մինսկի խորհրդաժողովին վերաբերող հակամարտության հարցով ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի պաշտոնը, որը 1996թ. հուլիսից գրադարձնում է դեսպան Անջեյ Կասպրժիկը (Լեհաստան):

### **Հայաստան - ԵԱՀԿ համագործակցություն**

Հայաստանն անդամակցում է ԵԱՀԿ-ին 1992թ. հունվարի 30-ից: ԵԱՀԿ-ում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչության ղեկավարը համատեղության կարգով

Ավտորիայի Հանրապետությունում << արտակարգ եւ լիազոր դեսպան Արման Կիրակոսյանն է:

Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպության խորհրդարանական վեհաժողովում Հայաստանը ներկայացված է << ԱԺ խորհրդարանական պատվիրակությամբ:

### **Հիմնական փաստաթղթեր**

- Հելսինկի եզրափակիչ ակտ -1975թ.
- Նոր Եվրոպայի Փարիզյան խարտիա – 1990թ.
- Բուդապեշտի գագաթաժողովի փաստաթուղթ – 1994թ.:
- Լիսաբոնի գագաթաժողովի փաստաթուղթ – 1996թ.
- Եվրոպական անվտանգության խարտիա – 1999թ.
- 21-րդ դարում անվտանգությանը եւ կայունությանը սպառնացող վտանգներին ԵԱՀԿ հակազդեցության ռազմավարությունը – 2003թ.
- Աստանայի հոչակագիր – 2010թ.

### **Անհրաժեշտ կայքեջեր՝**

ԵԱՀԿ՝ <http://www.osce.org/>

ԵԱՀԿ Գործող նախագահ՝ <http://www.osce.org/cio> և <http://esbo.urm.lt/>

ԵԱՀԿ ԽՎ՝ <http://www.oscepa.org/>

ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակ՝ <http://www.osce.org/yerevan/>

## **Եվրոպայի խորհուրդ**

<http://hy.wikipedia.org/wiki/>



**Եվրոպայի խորհրդի դրոշը**

**Եվրոպայի խորհուրդը** ստեղծվել է 1949 թվականի մայիս 5-ին և եվրոպական ամենահին և ամենամեծ կազմակերպություններից մեկն է, որին անդամակցում է 47 պետություն և որը նպաստում է մարդու իրավունքների հիմնական սկզբունքների առաջխաղացմանը: Կազմակերպությունը ձգտում է խթանել այդ ոլորտում անդամ-երկրների օրենսդրությունների նույնականացումը:

### **Եվրախորհրդի ծևավորումը**

Եվրախորհրդը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ 1949 թվականին, ստեղծված առաջին միջազգային տարածաշրջանային կազմակերպությունն է: Այն ակտիվորեն համագործակցում է Եվրամիության, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության հետ:

Եւ-ի նպատակը համակարգված քաղաքականության մշակումը և անդամ երկր-ներում ընդունված օրենքների ու չափանիշների կիրառումն է: Կազմակերպության գործունեությունն ընթանում է խորհրդարանականների, նախարարների, կառավարական պաշտոնյաների, փորձագետների, տեղական և տարածաշրջանային միությունների, երիտասարդական, միջազգային կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների նիստերի, հանդիպումների, քննարկումների տեսքով: Հիմնադրումից ի վեր Եվրոպայի խորհուրդը մշակել և ընդունել է ավելի քան 160 կոնվենցիա, պետություններին և կառավարություններին ուղղված գործունեության տարրեր ոլորտների բազմաթիվ հանձնարարականներ:

Եվրոպական միասնության գաղափարը առաջինը ծևակերպել է Ուինսթոն Չերչիլ Յուլիսում՝ 1946 թվականի սեպտեմբերի 19-ի ելույթի ժամանակ. «Անհրաժեշտ է միջոց, որն ինչպես հրաշք, տարիների ընթացքում ողջ Եվրոպան կդարձնի նույնքան

ազատ ու երջանիկ, որքան այսօրվա Շվեյցարիան է: Պետք է կառուցենք Եվրոպայի Միացյալ Նահանգների նման մի բան»:

1948 թվականին Հաագայում «Հանուն Եվրոպական միասնության» միջազգային կոմիտեների շարժման հրավերով հավաքվում է Եվրոպական համաժողովը՝ 20 երկրների ներկայացուցիչներից: Համաժողովի պատվիրակները համակարծիք էին, որ ժողովրդավարությունն ու մարդու իրավունքները ճշմարիտ արժեքներ են, հանուն որոնց պաշտպանության արժե միավորվել: Որոշվում է հիմնել կազմակերպություն՝ կազմված Նախարարների խորհրդից (Եվրոպական երկրների կառավարությունների ղեկավարներից) և ազգային կառավարություններից անկախ, միաժամանակ, իշխանական լիազորություններից գուրկ խորհրդարանական վեհաժողովից:

**1949 թ մայիսի 5-ին** Արևմտյան Եվրոպայի 10 երկրներ՝ Բելգիան, Ֆրանսիան, Լյուքսեմբուրգը, Նիդերլանդները, Մեծ Բրիտանիան, Իռլանդիան, Իտալիան, Դանիան, Նորվեգիան և Շվեյցարիան Լոնդոնում ստորագրում են Եվրոպայի խորհրդի Կանոնադրությունը, որի առաջին գլուխը հոչակում է. Եվրոպայի խորհրդի խնդիրը անդամ-երկրների ընդհանուր ժառանգությունը հանդիսացող գաղափարներն ու սկզբունքները պաշտպանելու և իրագործելու, ինչպես և նրանց սոցիալ-բնույթական զարգացումը խթանելու նպատակով երկրների միջև առավել մեծ համերաշխության ձեռքբերումն է:

ԵԽ ներկայացուցիչների առաջին նստաշրջանը տեղի է ունեցել **Ստրասբուրգում**, որն այնուհետև վերածվել է կազմակերպության պաշտոնական նստավայրի: Կազմակերպության ընդունած առաջին փաստաթուղթը «**Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության» Եվրոպական կոնվենցիան է, որը ստորագրվել է 1950 թ նոյեմբերի 4-ին Հռոմում: ԵԽ անդամների միջև մինչև այդ բոլորին խորթ հավասարության սկզբունքը, անկախ պետությունների տնտեսական հզրությունից և տարածքից, նոր Եվրոպայի հիմք է դառնում:**

## **Կառուցվածքը**

Եվրոպայի խորհուրդն ունի աշխատանքային 3 հիմնական մարմին:

I. **Նախարարների կոմիտեն** գործադիր-կարգադրողական մարմին է, որի կազմում են 46 անդամ-երկրների արտգործնախարարները կամ նրանց տեղակալները: Նիստերն ընթանում են Ստրասբուրգում: Նախարարների կոմիտեն միաժամանակ և՝ կառավարական մարմին է, որի շրջանակներում իրավահավասար հիմունքներով քննարկվում են Եվրոպական հասարակության առջև ծառացած խնդիրների լուծման ազգային մոտեցումները, և՝ կոլեկտիվ համահավաք, որտեղ մշակվում են նշված խնդիրների Եվրոպական համընդհանուր լուծումները: Խորհրդարանական վեհաժողովի հետ միասին Նախարարների կոմիտեն պաշտպանում է Խորհրդի հիմնարար

արժեքները և վերահսկում անդամ պետությունների ստանձնած պարտավորությունների կատարումը: Անդամ-երկրների արտգործնախարարները հանդիպում են տարին երկու անգամ (մայիսին և նոյեմբերին) Եվրոպական համագործակցության և քաղաքական հաղցերի վերանայման նպատակով: Կազմակերպության հետ մշտական կապ ապահովելու համար յուրաքանչյուր երկիր նշանակում է մշտական ներկայացուցիչ՝ սովորաբար դեսպանի կամ գործերի հավատարմատարի աստիճան ունեցող դիվանագետի, որը բնակվում է Ստրասբուրգում:

**II. Խորհրդարանական վեհաժողովը** Եվրոպայի խորհրդի երկու գլխավոր կանոնադրական մարմիններից մեկն է և ներկայացնում է Կազմակերպության անդամ-երկրների խորհրդարանների հիմնական քաղաքական միտումները: Այն ընդգրկում է Եվրոպայի խորհրդի 46 անդամ-պետությունների խորհրդարանների կողմից ընտրված կամ նշանակված ներկայացուցիչներ: Իր գոյության ավելի քան հիսուն տարիների ընթացքում Խորհրդարանական վեհաժողովը՝ որպես միջխորհրդարանական մարմին, մեծ մասնակցություն է ունեցել Եվրոպայում ընթացող զարգացումներում և պատմական արմատական փոփոխություններում: Եխեվ շրջանակում ընդունված որոշումները ուղեցուց են Նախարարների կոմիտեի և Եվրոպայի խորհրդի միջկառավարական հատվածների գործունեության համար: Խորհրդարանական վեհաժողովն ունի 315 ներկայացուցիչ իրենց տեղականներով, որոնք ընտրվում կամ նշանակվում են ազգային խորհրդարանների կողմից: Կախված բնակչության թվից՝ յուրաքանչյուր երկիր ունի 2-18 ներկայացուցիչ: Վեհաժողովում ազգային պատվիրակությունները կազմված են այնպես, որ ապահովեն իրենց խորհրդարաններում քաղաքական կուսակցությունների կամ խմբերի արդար ներկայացուցչությունը: Եխեվ նախագահը, նրա տասնութ տեղականները և քաղաքական խմբերի կամ նրանց ներկայացուցչությունների ղեկավարները կազմում են Վեհաժողովի բյուրոն, որը նախապատրաստում է Վեհաժողովի օրակարգը, փաստաթղթերի վերաբերյալ հղումներ ուղղում հանձնաժողովներին, կազմակերպում առօրյա գործերը, ապահովում միջազգային այլ մարմինների հետ հարաբերությունները:

### **III. Մարդու իրավունքների Եվրոպական դատարան**

Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայում փոփոխությունը հնարավորություն ստեղծեց հիմնադրել Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը՝ կազմված անդամ-երկրների թվին համապատասխան դատավորներից (այժմ՝ 46), որոնք ներկայացված են որպես մասնագետներ և ոչ թե պետությունների ներկայացուցիչներ: Դատավորներին ընտրում է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը 6-ամյա ժամկետով: Լիակազմ Դատարանն ընտրում է իր

Նախագահին, երկու տեղակալներին և երկու ստորաբաժանումների Նախագահներին՝ եռամյա ժամկետով։ Դատարանն ունի չորս ստորաբաժանում, որոնց երեք տարով ամրագրված միացությունն ունի աշխարհագրական և սեռային հավասարակշռվածություն և հաշվի է առնում անդամ պետությունների տարբեր իրավական համակարգերը։ Ստորաբաժանումները ղեկավարում են նախագահները։ Յուրաքանչյուր ստորաբաժանում հիմնում է երեք դատավորից կազմված հանձնաժողով՝ մեկամյա ժամկետով։ Յուրաքանչյուր ստորաբաժանման ներքո ստեղծվում է յոթ անդամներից կազմված պալատ, հերթագայության հիմունքով, ըստ որի ստորաբաժանման նախագահը և դատավորն ընտրվում են յուրաքանչյուր գործին առնչվող պետության համապատասխան։ Ընդ որում դատավորը ստորաբաժանման անդամ չէ։ Դատարանի Մեծ պալատը կազմված է 17 դատավորից։ Նրա մեջ ընդգրկված են Նախագահը, Նախագահի տեղակալները և ստորաբաժանումների Նախագահները։ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում ամրագրված իրավունքների խախտման զոհ հանդիսացող յուրաքանչյուր երկիր կամ անհատ կարող է դիմում ներկայացնել անմիջապես Ստրասբուրգի դատարան՝ վկայակոչելով Կոնվենցիայով նախատեսված իրավունքների խախտում ԵԽ որևէ անդամի կողմից։ Անհատ դիմունները կարող են իրենց դիմումներն անձնապես հանձնել։ Եվրոպայի խորհուրդը նախատեսել է անվճար իրավաբանական աջակցության հնարավորություն այն դիմունների համար, որոնք չունեն բավարար միջոցներ։ Դատարանի պաշտոնական լեզուներն են անգլերենը և ֆրանսերենը, սակայն դիմումները կարող են հանձնվել անդամ երկրների պաշտոնական լեզուներից որևէ մեկով։ Դատարանի բոլոր վերջնական վճիռները պարտադիր են գործին առնչվող Պետությունների համար։ Դատավճորի կատարման վերահսկման համար պատասխանատու է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն։

1994 թ Եվրոպայի խորհրդը հիմնեց Եվրոպայի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը, որը գործում է Նախարարների կոմիտեի կողմից օրենքով սահմանված վճորի հիման վրա։ Կոնգրեսը, որ հավաքվում է տարին մեկ անգամ Ստրասբուրգում, կազմված է երկու պալատից՝ Տեղական իշխանությունների պալատ և Տարածքային պալատ, որոնց ընդհանուր կազմում ընդգրկված են 313 անդամներ՝ իրենց տեղակալներով։ Կոնգրեսն իր աշխատանքը կազմակերպում է չորս կանոնադրական հանձնաժողովների շրջանակներում՝ ինստիտուցիոնալ հանձնաժողով, մշակույթի և կրթության հանձնաժողով, կայուն զարգացման հանձնաժողով, սոցիալական համախմբվածության հանձնաժողով։

Կոնգրեսը Եվրոպական տարածքային և տեղական իշխանության մարմինների շահերի արտահայտողն է, ներկայացուցչական համահավաք, որի շրջանակներում

տեղական և տարածքային իշխանությունների կողմից ընտրված ներկայացուցիչները կարող են քննարկել ընդհանուր խնդիրներ, կատարել փորձի փոխանակություն և կառավարություններին ներկայացնել իրենց տեսակետները:

### **Գլխավոր քարտուղարություն**

Այս մարմինը բաղկացած է Գլխավոր քարտուղարից, Գլխավոր քարտուղարի տեղակալից և համապատասխան աշխատակազմից: Գլխավոր քարտուղարին ընտրում է Խորհրդարանական վեհաժողովը՝ Նախարարների կոմիտեի առաջարկությամբ, իինգ տարի ժամկետով: 2004 թ սեպտեմբերից Կազմակերպության Գլխավոր քարտուղարն է բրիտանացի Շերրի Դեյվիսը: Գլխավոր քարտուղարը պատասխանատու է Խորհրդի աշխատանքային ծրագրի և բյուջեի ռազմավարական ուղղվածության համար և վերահսկում է Կազմակերպության և Քարտուղարության ամենօրյա կառավարումը:

### **ԵԽ անդամ-երկրները**

ԵԽ-ի կազմում այժմ ընդգրկված է 47 պետություն:

1. Ադրբեյչան
2. Ալբանիա
3. Անդորրա
4. Ավստրիա
5. Բելգիա
6. Բունիա և Հերցեգովինա
7. Բուլղարիա
8. Գերմանիա
9. Դանիա
10. Էստոնիա
11. Ֆուլքիա
12. Իռլանդիա
13. Իսլանդիա
14. Իսպանիա
15. Իտալիա
16. Լատվիա
17. Լեհաստան
18. Լիխտենշտայն
19. Լիտվա
20. Լյուքսեմբուրգ
21. Խորվաթիա
22. Կիպրոս
23. Հայաստան
24. Հունաստան
25. Հունգարիա
26. Մալթա
27. Մակեդոնիա
28. Մեծ Բրիտանիա

29. Մոլովա
30. Մոնակո
31. Չեռնոգորիա
32. Նիդերլանդներ
33. Նորվեգիա
34. Շվեյցարիա
35. Շվեյցարիա
36. Չեխիա
37. Պորտուգալիա
38. Ռումինիա
39. Ռուսաստան
40. Սան Մարինո
41. Սերբիա
42. Սլովակիա
43. Սլովենիա
44. Վրաստան
45. Ուկրաինա
46. Ֆինլանդիա
47. Ֆրանսիա

### **ԵԽ-ին անդամակցության թեկնածու երկրները**

1. Բելառուս
2. Չեռնոգորիա

### **ԵԽ-ում դիպորդի կարգավիճակ ունեցող երկրները**

1. ԱՄՆ
2. Կանադա
3. Մեքսիկա
4. Ճապոնիա
5. Վատիկան

### **ԵԽ պետությունների և կառավարությունների դեկազրների գագաթաժողովները**

#### **Առաջին գագաթաժողովը**

Վիեննայի գագաթաժողով. 1993թ. Առաջին գագաթաժողովի ընթացքում Եվրոպայի խորհրդի անդամ 32 պետությունների քաղաքական առաջնորդները հաստատեցին և ամրագրեցին Եվրոպայի խորհրդի ընդլայնման և ընդարձակման քաղաքականությունը: Գագաթաժողովը հաստատեց Երեք առաջնահերթություններ՝ բարեփոխումներ Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի մեխանիզմում՝ այն առավել արագընթաց և արդյունավետ դարձնելու նպատակով, ազգային փոքրամասնությունների պաշտպանություն, պայքար անհանդուրժողականության դեմ:

## **Երկրորդ գագաթաժողովը**

Ստրաբուլգի գագաթաժողովը, 1997թ. անդամ 40 պետությունների առաջնորդներն ընդունեցին Գործողությունների ծրագիր հետևյալ չորս խնդիրների շուրջ՝ ժողովրդավարություն և մարդու իրավունքներ, սոցիալական համախմբվածություն, քաղաքացիների անվտանգություն, ինչպես նաև ժողովրդավարական սկզբունքների և մշակութային բազմազանության ուսուցում:

## **Երրորդ գագաթաժողովը**

Վարշավա, մայիսի 16-17-ը, 2005թ. պետությունների և կառավարությունների ղեկավարների այս գագաթաժողովի նպատակը Եվրոպայի 800 միլիոն քաղաքացիների ակնկալիքներին կառուցի համապատասխանությունն ապահովելն էր և երաշխավորել, որ կազմակերպության խնդիրները և գործառույթներն ուղղված են նոր հազարամյակում նրանց առջև ծառացող խնդիրների լուծմանը:

Գագաթաժողովի մասնակիցները վերահաստատում են եխ տարածքում մարդու իրավունքների, օրենքի գերակայությունը և ժողովրդավարությունը պաշտպանելու ու զարգացնելու պատրաստակամությունը: Ամուր հիմքերով քաղաքացիական հասարակության ձևավում և ժողովրդավարական ինստիտուտների հաստատման նպատակով որոշվում է ապագա ժողովրդավարության ձևաչափ մշակել: Մարդու իրավունքների պաշտպանության պայմաններում եխ երկրների քաղաքացիների անվտանգությունն ապահովելու նպատակով կազմակերպությունը որոշում է ակտիվութեն պայքարել ահաբեկչության դեմ:

## **ՀՀ-ն ԵԽ-ի կազմում**

2000թ. նոյեմբերին եխ Նախարարների կոմիտեի որոշմամբ Հայաստանը կազմակերպությանն անդամակցելու իրավեր ստացավ: 2001թ. հունվարի 25-ից մեր երկիրը Եվրոպայի խորհրդի լիիրավ անդամ է:

**Սույն գլխում առկա և լրացուցիչ այլ նյութերի հիման վրա լրացրեք աղյուսակը.**

	Հիմնադրման տարեթիվը	Անդամ Երկրների թիվը	Հիմնական մարմինները	Հայաստանը երբ է անդամակցել, եթե անդամ չէ, ապա ինչ չափով է ներառված
<b>ՄԱԿ</b>				
<b>Եվրամիություն</b>				
<b>ԵԱՀԿ</b>				
<b>Եվրոպայի խորհրդ</b>				

## Գլուխ 4

### **Հանրային քաղաքականություն. հասկացությունը և մասնակիցները**

*Սկզբում հեգնում են քեզ, հետո ծիծաղում են վրայ,  
փորձում են կովել հետոյ, ու դու հաղթում ես:*

**Մահաթմա Գանդի**

#### **1. Հանրային քաղաքականություն հասկացությունը**

Հանրային քաղաքականությունն առնչվում է իշխանությունների գործունեությանը և այդ գործընթացի մեջ քաղաքացիների մասնակցությանը: Այն տեղի է ունենում, երբ իշխանությունը փորձում է լուծել հանրության առջև ծառացած հիմնախնդիրները: Ուստի, հանրային քաղաքականության գործընթացի մեջ միշտ ընդգրկված են իշխանություններն ու հանրությունը: Հանրություն ասելով այստեղ նկատի ունենք բնակչության այն հատվածը, որի վրա ազդում է այս կամ այն քաղաքականությունը: Օրինակ, երբ իշխանությունը կրթական բարեփոխումների միջոցով փորձում է բարելավել կրթության մատչելիությունը և որակը, տվյալ դեպքում հանրության անմիջական անդամներ են համարվում սովորողները, նրանց ծնողները, կրթության վարչական դեկավադները, ուսուցիչները և դասախոսները:

Իշխանության մարմինները սովորաբար ընտրում են այնպիսի խնդիրներ, որոնք հետաքրքրում են հանրության բազմաթիվ անդամների կամ բարձրածայնվում մարդկանց մեծամասնության կողմից: Այդ խնդիրները կարող են առնչվել կյանքի տարբեր ոլորտների՝ սոցիալական, առողջապահական, կրթական, բնապահպանական և այլն: Օրինակ, երբ իշխանությունները փորձում են պայքարել կոռուպցիայի դեմ, նրանք ցանկանում են բարձրացնել աշխատանքի արդյունավետությունն ու թափանցիկությունը, ստեղծել հավասար հնարավորություններ հանրության բոլոր անդամների համար:

Այն բոլոր դեպքերում, երբ իշխանության մարմինները ընդգրկված չեն մարդկանց իհմնախնդիրների լուծմանը, համարվում են մասնավոր կյանքի դեպքեր: Այսպիսի դեպքերի օրինակներ են՝ ձեր մասնակցությունը ծառատունկին կամ շրջակա միջավայրի մաքրման աշխատանքներին, տարեցներին և հաշմանդամներին օգնելը, Կարմիր Խաչի կողմից առաջին

օգնության ուսուցումը, բարեգործական համերգը, կրոնական արարողությունը, ժողովրդական տոնակատարությունը: Նման միջոցառումները երբեմն անվանվում են նաև *հանրօգույր աշխարհանք*:

### **Գործնական աշխարհանք**

*Թերթերից կամ համացանցի լրաբարձրական կայք-էջերից ընդունեք ոչ մեծ ծավալով որևէ հոդված, կարդացեք և խմբում քննարկեք հերկույալ հարցերը.*

- *Ի՞նչ է հոդվածի վերնագիրը և ո՞վ է հեղինակը:*
- *Ի՞նչ հիմնախնդիր է քննարկված հոդվածում:*
- *Հոդվածում նշված է իշխանության այն մարմինը, որը գրաղվում է այդ հիմնախնդիրի լուծմամբ:*

Այժմ փորձենք ընդհանրացնել հանրային քաղաքականություն հասկացության սահմանումը: Հանրային քաղաքականությունը ձևավորվում է, երբ հանրության անդամները գիտակցում և բարձրաձայնում են հիմնախնդրի մասին: Օրինակ, 1990-ական թվականների դժվար տարիներին ծառերի համատարած հատումներից, Սևանա լճի ջրի բացթողումներից և ձկան հսկայածավալ որսից հետո, մեր հասարակությունը կանգնեց բնապահպանական լուրջ հիմնախնդիրների առջև: Արդեն երկու տասնամյակ է, ինչ հանրային ուշադրության կենտրոնում գտնվող այդ հիմնախնդիրների լուծման ուղղությամբ ջանքեր են գործադրում երկրի իշխանությունները, ինչի արդյունքում Սևանա լճի ջրի մակարդակը բարձրացել է շուրջ 6 մետրով: Անտառների վերականգնման ուղղությամբ, սակայն, դեռևս շատ անելիքներ կան:

Պետական իշխանությունների մշակած և իրականացրած գործողությունները պետք է ուղղված լինեն քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը: Դրանք սահմանված են << Սահմանադրությամբ, օրենքներով և միջազգային համաձայնագրերով:

Այդ գործողությունները պետք է նպաստեն նաև *հանրային բարիքին՝ համընդհանուր բարեկեցությանը*: Այսինքն՝ դրանք պետք է դրական փոփոխություններ առաջացնեն հանրային կյանքում, զարգացնեն այն: Օրինակ՝ կրթական բարեփոխումները մեր երկրում նախաձեռնվել են, որպեսզի մեր հասարակությունը դառնա ավելի մրցունակ աշխարհում:

**Հանրային քաղաքականությունն իշխանության մարմինների՝ հանրության հետ համաձայնեցված այն գործողություններն են, որոնցով իշխանությունն իրականացնում է իր պարտականությունները՝ պաշտպանելու քաղաքացիների իրավունքները և նպաստելու համընդիանուր բարեկեցությանը՝ հիմնախնդիրների լուծման միջոցով:**

Այդ գործողություններից են իշխանության օրենսդիր, գործադիր և դատական մարմինների կողմից օրենքների, որոշումների, կարգերի, հրամանների և այլ իրավական ակտերի ընդունումն ու դրանց իրականացումն է այն անձանց ու մարմինների կողմից, ովքեր լիազորված են և դրանց համար կրում են իրավական պատասխանատվություն: Իշխանության մարմինների կողմից ստեղծված իրավական փաստաթղթերը հնարավորություն են տալիս մեզ՝ քաղաքացիներին, հասկանալ, թե ինչ կարելի է անել, ինչը՝ ոչ, որ դեպքում մենք կստանանք պետական պաշտոնյաների իրավական աջակցությունը և որ դեպքում՝ ոչ:

Հանրային քաղաքականության առանցքային տարրերն են.

- գործողությունների նախաձեռնում և իրականացում,
- հանրային ռեսուրսների, պաշարների բաշխում, այդ թվում՝ ֆինանսական և մարդկային,
- իշխանության մարմինների կողմից գործողությունների առկայություն կամ հանրության ազդեցություն իշխանության մարմնի վրա՝ որոշակի գործողություններ, քայլեր կատարելու ուղղությամբ,
- խնդրի լուծում տվյալ ժամանակահատվածի ընթացքում,
- հանրային բարեկեցություն:

Այսիսով, հանրային քաղաքականություն իրականացնելիս պետական պաշտոնյաներն ազգում են հանրության անդամների կյանքի վրա, գործունեություն են ծավալում իրենց լիազորությունների սահմաններում և կատարում են հանրային ռեսուրսների բաշխում:

### **Գործնական աշխատանք**

*Սկզբունքը նկարագրված իրավիճակները կարդալուց հետո ներկայացրեք, թե որոնք են առնչվում հանրային քաղաքականությանը և որոնք՝ մասնավոր կյանքին: Հիմնավորեք ձեր պարասխանը:*

1. Տարիներ տևած վանդալիզմի մեղավորին բացահայտելու համար քաղաքի բնակիչները որոշեցին ստեղծել ոչ ֆորմալ խումբ:

2. Քաղաքի ավագանին որոշել է Թումանյան փողոցի վրա վճարովի ավտոկայանատեղ կառուցել՝ ստացված հասույթի միջոցով երթևեկության նշաններ պատվիրելու և տեղադրելու նպատակով:
3. Քաղաքացի Ազնիվ Ազատյանը, տեսնելով օդի աղտոտվածության աճող մակարդակը, նամակ է ուղարկել << Ազգային ժողով՝ պահանջելով միջոցներ ձեռնարկել հիմնախնդիրը լուծելու համար:
4. Ավագ դպրոցի աշակերտները մասնակցել են Եվրոտեսիլ մրցույթում իրենց նախընտրած թեկնածուի օգտին քվեարկությանը: Արդյունքում նրանց թեկնածուն հաղթել է և իրավունք ստացել մեկնելու Եվրոպա՝ մրցույթին մասնակցելու համար:
5. Միջնակարգ դպրոցի աշակերտները, օգտագործելով դպրոցի գույքը և միջոցները, հիմնել են դպրոցական թերթ, որը տպագրվելու է ամեն շաբաթ:
6. Մարզային կրթական պատասխանատուների հետ հիմնահարցի շուրջ համաձայնության չգալուց հետո հիմնական դպրոցի ուսուցիչները որոշել են դասադուլ անել:
7. Կրթության և գիտության նախարարությունը որոշել է տարեվերջին դպրոցները երկու շաբաթ շուտ արձակուրդ ուղարկել՝ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:
8. Գետակի շրջակայքում բնակվող քաղաքացիները շաբաթական երկու ժամ կամավոր մասնակցում են տարածքի մաքրման աշխատանքներին:

## **Հանրային քաղաքականության մասնակիցները**

Այսպիսով հանրային քաղաքականության միջոցով իշխանության մարմինները փորձում են լուծումներ տալ հանրության կողմից բարձրացված հարցերին: Ժողովրդավարական հասարակությունում հանրության անդամները՝ մարդիկ, իրենց հավանությունն են տալիս առաջարկվող լուծումներին: Սահմանադրական ժողովրդավարությունը, որն ամրագրված է մեր Սահմանադրությամբ, հիմնվում է այն կարևոր գաղափարի վրա, որ ժողովուրդն է լիազորում իշխանություններին կառավարման գործառույթը:


Հանրային քաղաքականության վարման գործում կենտրոնական դեր է վերապահված իշխանության երեք ճյուղերին՝ օրենսդիր, գործադիր և դատական:

Օրինաստեղծ գործունեությունը մեր երկրում հիմնականում իրականացվում է քաղաքական կուսակցությունների կողմից: Հետևաբար, քաղաքական կուսակցությունները հանրային քաղաքականության գործուն մասնակիցներ են: Ժողովրդավարական հասարակությունում մարդիկ իրենց քվեն տալիս են կուսակցություններին, ելնելով հասարակական, համայնքային տարբեր հիմնախնդիրների լուծման ուղղությամբ տվյալ կուսակցության որդեգրած դիրքորոշումից:

Մարդիկ, քաղաքական կուս.

ՀԼՄ

Շահագրգիռ խմբեր /ՀԿ/



### **Հանրային քաղաքականության մասնակիցները**

Հանրային քաղաքականության մասնակիցների մյուս խումբը ներկայացնում են զանգվածային լրադպվամիջոցները (ՀԼՄ), քանի որ դրանց միջոցով իրականացվում են հանրային հարցերի քննարկումներ: ՀԼՄ-ները կարողանում են տեղեկություն հասցնել մեծաքանակ ունկնդիրների կամ ընթերցողների: Մարդիկ, իրազեկվելով ՀԼՄ-ներից քննարկվող հիմնահարցի վերաբերյալ, շատ հաճախ հետաքրքրություն են դրսնորում այս կամ այն հարցի նկատմամբ, դիրքորոշում են ձևավորում, հնարավորություն են ստանում մասնակցել հարցի քննարկմանը:

Սովորաբար հանրության մեջ ձևավորվում են որոշակի հիմնախնդրի նկատմամբ միևնույն հետաքրքրություն ունեցող մարդկանց խմբեր՝ շահագրգիռ խմբեր, ովքեր ձգտում են իշխանությանը համոզել իրենց արժեհամակարգին և հետաքրքրություններին համապատասխանող քաղաքական գործողություններ, քայլեր մշակել և իրականացնել: Օրինակ, բնապահպանները ընդդիմանում են արդյունաբերության զարգացման նպատակով անտառահատումների իրականացմանը, ոռոգման նպատակով Սևանա լճից ջրի լրացուցիչ բացթողմանը և այդ ուղղությամբ տարբեր միջոցառումներ են կազմակերպում՝ կառավարության վրա ազդելու, իրենց կարծիքով անցանկալի գործողությունները կանխելու նպատակով:

Շահագրգիռ խմբերը լինում եմ ֆորմալ և ոչ ֆորմալ: Նրանք գործում են հանրապետական, մարզային կամ համայնքային մակարդակով: Ֆորմալ շահագրգիռ խմբի օրինակ են հասարակական կազմակերպությունները: Համացանցի զարգացմանը զուգընթաց, որի շնորհիվ ձևավորվել են մի շարք վիրոշուալ խմբեր (օրինակ՝ բնապահպանների կամ քաղաքային մշակութային հուշարձանների պահպանության

ուղղությամբ ֆեյսբուքում կամ այլ սոցիալական ցանցերում ստեղծված խմբերը), մեծացել է ոչ ֆորմալ խմբերի ազդեցությունը հանրային քաղաքականության վրա:

## 2. Հանրային քաղաքականության գործընթացը և հիմնախնդիրները

### **Հանրային քաղաքականության գործընթացի քայլերը**

Հանրային քաղաքականության գործընթացը սկսվում է հիմնախնդրի բացահայտումից, որը կատարվում է մասնակիցներից մեկի կամ մի քանիսի միջոցով։ Հիմնախնդրի բացահայտման համար կան տարբեր գործիքներ՝ մարդկանց հետ զրուցելը, մասնագետների կարծիքը, հարցազրույցների անցկացումը, իրավիճակի ուսումնասիրումը, կարիքների գնահատումը, դիտարկումը։

Հիմնախնդրի բացահայտումից հետո տեղի է ունենում հիմնախնդրի ուսումնասիրում և քննարկում։ Քաղաքական կուսակցությունները հարցը քննարկում են Ազգային ժողովում, կարծիք հարցնում կառավարությունից և անհրաժեշտության դեպքում կազմակերպում են հանրային լսմներ, որի ժամանակ շահագրգիռ կողմերը ներկայացնում են իրենց մոտեցումները։ Տվյալ ռեաքտում հանրային քաղաքականությունը ձևավորվում է օրենքի տեսքով և ընդունվում ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների մեծամասնության կողմից հավանության արժանանալու դեպքում։

ՀՀ կառավարությունը նախարարությունների և գերատեսչությունների միջոցով մշակում է օրենքի, որոշման, հայեցակարգի և այլ իրավական փաստաթղթերի նախագծեր, որոնք հավանություն արժանանալու դեպքում կյանքի են կոչվում։ Օրենքի նախագծերը ներկայացվում է ՀՀ Ազգային ժողովի քննարկմանն ու հաստատմանը։ Հարցի քննարկմանը մասնակցում են շահագրգիռ կառույցները, անհրաժեշտության դեպքում՝ հանրության տարբեր խմբեր։

Հաճախ հանրային քաղաքականության այս կամ այն ուղղության ձևավորումը նախաձեռնում են շահագրգիռ խմբերը, հասարակական կամ միջազգային կազմակերպությունները։ Նրանց հիմնական նպատակն է բարելավել համայնքային կյանքի որոշակի կողմեր, որոնք հիմնված են այդ կառույցների արժեհամակարգին։ Օրինակ, Հայաստանում շատ կազմակերպությունների (ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի և այլն) նպատակ են դրել նպաստել հաշմանդամություն ունեցող մարդկանց՝ հատկապես երեխաների բարեկեցության բարձրացմանը։ Ուստի նրանք փորձում են ազդել հանրային քաղաքականության գործընթացի վրա՝ նախաձեռնելով օրեսդրական փոփոխություններ։

Վերջապես, հանրային քաղաքականության ձևավորման գործընթացում նախաձեռնություն են հանդես բերում առանձին մարդիկ կամ մարդկանց խմբերը։

Նրանք դիմում են իշխանության տարբեր օղակներին՝ իրենց հետարքող հիմնախնդրի լուծման ուղղությամբ բարեփոխումներ իրականացնելու համար: Այսպիսի նախաձեռնությունները տեղի են ունենում իշխանության մարմիններին այցելելու կամ նամակներ հղելու, իրենց կողմից ընտրված ներկայացուցիչների՝ պատգամավորների հետ հանդիպումների, ԶԼՄ-ների միջոցով, ինչպես նաև շահագրգիռ խմբերին դիմելով: Երբեմն, մարդկանց խմբերը, քաղաքական կուսակցությունները իրենց հիմնահարցերի մասին բարձրաձայնում են հավաքների կազմակերպման միջոցով: Ժողովրդավարական երկրներում մարդիկ ազատորեն կարող են օգտվել իրենց խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքից, որը, ինչպես հայտնի է, ամրագրված է նաև <<Սահմանադրության մեջ:

Այսպիսով, հանրային քաղաքականության գործընթացի մուտքը՝ նոր գործընթացի սկիզբը կամ գործող քաղաքականության փոփոխումը, նախաձեռնվում են քաղաքական կուսակցությունների, առանձին մարդկանց և շահագրգիռ խմբերի կողմից իշխանությունների և զանգվածային լրատվամիջոցների միջոցով:

- *Նկարագրեք մեկ օրինակ, երբ դուք հանդիսացել եք հանրային քաղաքականության մասնակից:*
- *Ի՞նչ հասարակական կազմակերպություններ կամ շահագրգիռ խմբեր գիտեք, որոնք մասնակցել են որևէ հանրային քաղաքականության գործընթացին:*
- *Հերևեք զանգվածային լրատվամիջոցներում քննարկվող հանրային քաղաքականության հիմնախնդրի քննարկմանը և ներկայացրեք ձեր դասընկերներին:*

**Որոշումների կայացում:** Հանրային քաղաքականության ուղղությամբ նախաձեռնության վերաբերյալ որոշման կայացումը տեղի է ունենում իշխանության օրենսդիր, գործադիր կամ դատական մարմինների, նրանց կազմում գործող կառույցների կողմից: Օրինակ, << հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը սահմանում է ջրի, էլեկտրաէներգիայի, բնական գազի ծառայությունների մատուցման սակագները, մատակարարման և օգտագործման կանոնները << տարածքում:

- *Նշեք հանրային քաղաքականություն վարող պետական իշխանության առնվազն երեք մարմնի անվանում:*

Հանրային քաղաքականության ուղղությամբ նախաձեռնության, քննարկման և ուսումնասիրման արդյունքում իշխանության լիազոր մարմնի կողմից որոշում է կայացվում հետևյալ ձևերով.

- օրենք
- ծրագիր, հայեցակարգ
- որոշում
- հրամանագիր, հրաման, կարգադրություն
- կարգ և այլն:

Հանրակրթական դպրոցի խորհուրդը և տնօրենը ևս համարվում եմ դպրոցի կառավարման մարմիններ և նրանց կողմից ընդունված որոշումները հանրային քաղաքականության գործընթացի մաս: Օրինակ, եթե դպրոցը որոշում է կայացնում իր ներքին կարգապահական կանոնների վերաբերյալ, բոլորը պարտավոր են հետևել դրանց, քանի դեռ դրանք փոփոխության չեն ենթարկվել:

- *Փնտրեք վերջերս ընդունված որևէ օրենսդրական կամ այլ նորմատիվ իրավական փաստաթուղթ, նշեք ընդունող մարմնի անունը և նկարագրեք, թե հանրային քաղաքականության ինչ հիմնախնդրի է առնչվում դվյալ փաստաթուղթը:*

Որոշում կայացնելուց հետո պատասխանատունները պարտավոր են իրականացնել տվյալ հանրային քաղաքականությունը՝ համաձայն գործողությունների այն ծրագրի, որը իրավասու պետական մարմինը մշակել է՝ ենելով ընդունված քաղաքականությունից: Օրինակ, եթեխանների կրթության սահմանադրական իրավունքը ապահովելու նպատակով << Ազգային ժողովն ընդունել է մի շարք օրենքներ, որոնց միջոցով հոչակվում է պարտադիր ու անվճար հիմնական կրթության քաղաքականությունը մեր երկրում: Այս քաղաքականությունն իրականացնելու նպատակով << կառավարությունը, << կրթության և գիտության նախարարությունը և իշխանության այլ լիազորված մարմիններ ընդունել են բազմաթիվ ենթաօրենսդրական նորմատիվ փաստաթղթեր, որոնք կարգավորում են հանրակրթության ոլորտի պատասխանատունների, դպրոցների վարչական ղեկավարների, ուսուցչների և ծնողների աշխատանքը, որով նրանք պետք է ապահովեն երեխայի անվճար ու պարտադիր հիմնական կրթությունը:

Հանրային քաղաքականության վերաբերյալ որոշում կայացնելու պահից սկսվում է դրա իրականացումը, որին զուգահեռ տեղի է ունենում այդ գործընթացի գնահակումը, արժնորումը: Այն է՝

- արդյո՞ք առաջարկվող քաղաքականությունը լավ, արդյունավետ ձևով է իրականացվում
- արդյո՞ք այն հանգեցնում է հանրային բարեկեցության լավացմանը
- արդյո՞ք պաշտպանվում են մարդու իրավունքները և ազատությունները
- արդյո՞ք օգտագործվող միջոցները ուղղվում են նախատեսված նպատակներին
- արդյո՞ք լավ է կառավարվում այդ գործընթացը:

Գնահատումը կատարվում է քաղաքականության իրականացման գործընթացի դիտարկման, դրան մասնակցելու կամ ուսումնասիրելու միջոցով: Գնահատողի դերում կարող է լինել ցանկացածը, ով շահագրգուված է կամ առնչություն ունի այդ քաղաքականությանը, ներառյալ՝ դրա մասնակիցները: Մենք՝ ինքներս, մեր ծնողները շատ հաճախ հանդիսանում ենք քաղաքականության իրականացման այս կամ այն գործողության գնահատողներ, երբ դրանք առնչվում են մեր կյանքին: Մենք փորձում ենք հասկանալ, թե ինչ է կատարվում, հետևում ենք, թե ինչպես է այն կատարվում և մեր ունեցած տեղեկությունների հիման վրա կարծիք ենք ձևավորում:

- *Ի՞նչ հետևանքներ կառաջանան, եթե հանրային քաղաքականության գնահապում, արժևորում տեղի չունենա:*

Գնահատում կատարելուց և կարծիք ձևավորելուց հետո տեղի է ունենում տեսակետների փոխանակում, որի միջոցով իշխանության մարմինները, կազմակերպությունները կամ մարդիկ հետադարձ կապ են տրամադրում որոշակի հանրային քաղաքականություն վարողներին: Երբեմն դրանք դրական են լինում, երբեմն՝ բացասական: Շատ կարևոր է, որ հետադարձ կապը հնարավորություն տա քաղաքականություն վարողներին հասկանալ իրենց կողմից որդեգրված քաղաքականության թերություններն ու առավելությունները, որպեսզի գործի շտկման ուղղությամբ համապատասխան քայլեր արվեն:

- *Ձեր կարծիքով, ինչպես կարելի է ապահովել արդյունավետ հետադարձ կապ ձեր կողմից ընդունակ որևէ հիմնախնդրի ուղղությամբ:*

Հետադարձ կապ իրականացնելու ընթացքում տեղի է ունենում հիմնախնդրի քննարկում և դրա լուծմանն ուղղված հանրային քաղաքանության վերանայում: Այդ ընթացքում տեղի է ունենում.

ա. շարունակվում է տվյալ քաղաքականության վարումը,

- բ. կատարվում են փոփոխություններ քաղաքականության մեջ,  
գ. մշակվում է նոր քաղաքականություն,  
դ. դադարում է քաղաքականության իրագործումը՝ հիմնախնդրի լուծման  
դեպքում:

Այսուհետև, այս փոփոխությունը նորից է տեղի ունենում Գծապատկեր  
2-ում նշված եղանակով (բացառությամբ վերջին դեպքի):

## **Տեղեկությունների աղբյուրների ցանկ**

### **1. Գրադարաններ**

Դպրոցական, հանրային, համայնքային կամ ուսումնական այլ  
հաստատությունների գրադարաններն ունեն գրքեր, թերթեր, ամսագրեր և այլ  
նյութեր, որոնք կարող են տեղեկություններ պարունակել ձեր հիմնախնդրի  
վերաբերյալ։ Գրադարանավարները ձեզ կօգնեն անհրաժեշտ տեղեկատվություն  
ստանալու համար։

Հեռախոսային կամ այլ տեղեկատունները ներառում են տարբեր հիմնարկ-  
ձեռնարկությունների, գրասենյակների, այդ թվում՝ գրադարանների հասցեներ և  
հեռախոսահամարներ։ Հնարավոր է գրադարաններում հայտնաբերված  
տեղեկությունը պարունակի նաև լրացնակարներ։ Անհրաժեշտ է, որ դրանք պատճե-  
նահանվեն և ներառվեն ձեր թղթապանակում։

### **2.Լրատվամիջոցներ**

Ձեր հիմնախնդրի մասին կարող եք տեղեկություններ հավաքել՝ կապվելով  
քաղաքում (մարզում) գործող լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ։  
Լրագրողները տեղեկություններ են հավաքում կառավարության գործունեության,  
հասարակական և համայնքնային հնչեղություն ունեցող հիմնախնդիրների  
վերաբերյալ։ Ուստի, նրանք կարող են ձեզ կարևոր տեղեկություններ հաղորդել կամ  
նույնիսկ նկարներ ու այլ փաստեր տրամադրել։

### **3.Գիտամանկավարժական աշխատողներ**

Համալսարանների դասախոսները, գիտաշխատողները կարող են ձեր կողմից  
ուսումնասիրվող հիմնախնդրի փորձագետներ լինել։ Այցելելով համալսարաններ կամ  
հեռախոսով կապվելով նրանց հետ, կարող եք ավելի մանրամասն տեղեկություններ  
ստանալ։ Կարող եք նաև տեղեկություններ հավաքել դպրոցի ուսուցիչներից։

### **4.Փաստաբաններ և դատավորներ**

Շատ փաստաբաններ և դատավորներ անդամակցում են հասարակության  
տարբեր խմբերին իրավաբանական անվճար ծառայություններ մատուցող  
կազմակերպությունների։ Նրանք քաջատեղյակ են համայնքի հիմնախնդիրներին։

Կարող եք նաև դպրոցի տնօրենից տեղեկանալ այն անձանց մասին, ովքեր մասնագիտությամբ իրավաբաններ են:

### **5. Համայնքային կազմակերություններ և շահագրգիռ խմբեր**

Բազմաթիվ խմբեր իրենց հետաքրքրություններն ունեն այն հիմնախնդիրների վերաբերյալ, որոնք առկա են մեր երկրում կամ համայնքում: Այդ խմբերի մասին, որոնց կոչում են նաև շահագրգիռ խմբեր: Ձեր դասարանի աշակերտները պետք է փորձեն բացահայտել այնպիսի խմբեր, որոնք զբաղվում են ձեր հիմնախնդրով: Ուսուցիչները, ծնողները, այլ անձինք կարող են օգնել ձեզ գտնել նրանց հետ կապ հաստատելու ուղիներ:

### **6. Օրենսդիր մարմին**

Ազգային ժողովի պատգամավորները պատասխանատու են հանրային հիմնախնդիրները բացահայտելու և դրանց վերաբերյալ հանրային (պետական) քաղաքականություն մշակելու համար: << Ազգային ժողովի պատգամավորները և պատգամավորական խմբակցությունները գրասենյակներ ունեն ինչպես Ազգային ժողովում, այնպես էլ իրենց ընտրատարածքներում: Նրանց հեռախոսահամարները կարելի է գտնել տեղեկագրերում կամ համացանցում: Դուք կարող եք նաև ձեր հիմնախնդրի վերաբերյալ նրանց տեսակետներին ծանոթանալ՝ հետևելով հեռուստա-տեսությանը, ռադիոյին, տպագիր կամ էլեկտրոնային մամուլին:

### **7. Կարչական հիմնարկ-ձեռնարկություններ**

Համայնքային, մարզային, քաղաքային վարչական հիմնարկներում, կառավարական մարմիններում աշխատող անձինք հնարավոր է, որ առնչվեն ձեր կողմից ուսումնասիրվող հիմնախնդրին: Այդ պետական կառուցները կարող են տեղեկություններ հաղորդել հիմնախնդրի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկացնել իշխանությունների կողմից կատարվող գործողությունների մասին:

### **8. Համացանց (ինտերնետ)**

Վերոհիշյալ բոլոր աղբյուրների հետ շփվելու և նրանց աջակցությունը ստանալու գերազանց հնարավորություն է տալս համացանցը՝ համաշխարհային էլեկտրոնային ցանցը: Հայաստանում շատ դպրոցներ արդեն միացել են համացանցին: Եթե ձեր դպրոցը դրանց թվում չէ, ապա օգտագործեք մոտակա հնարավոր ինտերնետային կենտրոնը:

**Խորհուրդներ պեղեկության ձեռքբերման և փաստաթղթավորման վերաբերյալ**

Ձեր շրջապատում եղած հիմնախնդրին քաջատեղյակ անձանց մեծ մասը կարող է խիստ զբաղված լինել: Ներքոհիշյալ առաջարկները կօգնեն ձեզ

հաղթահարելու այն դժվարությունները, որոնց կարող եք բախվել ձեր աշխատանքի ընթացքում:

1. *Գրադարաններ կամ այլ վայրեր այցելելը և հնարավոր տեղեկությունների հայփնարերումը:* Անհատապես կամ խմբով այցելեք գրադարան, վարչական մարմիններ կամ հասարակական կազմակերպություններ, որոնք տեղեկություններ ունեն ձեր հիմնախնդրի մասին: Լրացրեք «Տեղեկության փաստաթղթավորման ձևը»:

2. *Հեռախոսազանգեր՝ իրազեկ մարդկանց:* Հեռախոսազանգերի օգնությամբ տեղեկություններ հայթայթելու համար պետք է զբաղվի սովորողներից մի խումբ: Կարևոր է նրանց ճիշտ ընտրությունը, քանի որ շատ էական է, որ այդ խումբը կարողանա ապահովել տեղեկության հավաքագրման, գրանցման և ձայնագրման հմտություն: Լրացրեք «Տեղեկության փաստաթղթավորման ձևը»:

3. *Պայմանավորվածությունների ձեռքբերում և հարցազրույցներ:* Մեկ սովորող պետք է հեռախոսով պայմանավորվածություններ ձեռք բերի: Ընդամենը մի փոքր խումբ պետք է այցելի որևէ հիմնարկ կամ անհատի հարցազրույց վարելու համար:

4. *Գրառելու և հարցման միջոցով ձեռք բերվող տեղեկություններ:* Մեկ կամ մի քանի սովորողներ կարող են նամակներ գրել՝ տեղեկություններ հայցելով որևէ անհատից կամ հիմնարկ-ձեռնարկությունների աշխատակիցներից: Ցանկալի է, որ ձեր նամակում ներառեք հետադարձ հասցեով ծրար, որը կբարձրացնի պատասխան ստանալու հավանականությունը: Լրացրեք «Տեղեկության փաստաթղթավորման ձևը»:

## Տեղեկության փաստաթղթավորման ձև (լրացնել տետրում)

Հետազոտողական թիմի անդամների անունները

---

---

Ամսաթիվը \_\_\_\_\_

Հետազոտվող հիմնախնդիրը \_\_\_\_\_

ա. Տեղեկության աղբյուրը (համաձայնության առկայության դեպքում)

Անունը \_\_\_\_\_

Կազմակերպության (գրադարանի, գրասենյակի, գործակալության, էլեկտրոնային կայքի կամ հրատարակչության) անվանումը \_\_\_\_\_ Հասցեն

Հեռախոսը \_\_\_\_\_

բ. Նամակով կամ զանգով ձեզ ներկայացրած, տեղեկացված լինելու դեպքում պատասխանեք հետևյալ հարցերին

1. Ի՞նչ կարևորություն, լրջություն ունի այս հիմնախնդիրը ձեր համայնքում

---

---

2. Ի՞նչ տարածվածություն ունի հիմնախնդիրը մեր հանրության կամ պետության մեջ.

---

---

3. Ինչո՞ւ են իշխանությունները ստանձնել է այս հիմնախնդիրի լուծումը: Արդյո՞ք որևէ մեկը նույնակա պատասխանատու է հիմնախնդիրի լուծման համար.

---

---

4. Սրանցից ո՞րն եք ճիշտ համարում.

- Հիմնախնդիրին առնչվող օրենսդրությունը բացակայում է, քաղաքականություն չի վարվում.

Այո \_\_\_\_\_ Ոչ \_\_\_\_\_

- Հիմնախնդիրին առնչվող օրենսդրությունը համարժեք չէ.

Այո \_\_\_\_\_ Ոչ \_\_\_\_\_

- Հիմնախնդիրին առնչվող օրենսդրությունը համարժեք է, բայց լավ չի իրականացվում.

Այո \_\_\_\_\_ Ոչ \_\_\_\_\_

5. Իշխանության ո՞ր օղակներն են պատասխանատու հիմնախնդրի լուծման համար: Ի՞նչ են անում նրանք այդ ուղղությամբ

---

---

---

6. Ի՞նչ անհամաձայնություն կա իշխանության մարմինների, շահագրգիռ խմբերի, մասնագետների և այլ քաղաքացիների միջև այդ քաղաքականության նկատմամբ

---

---

---

7. Ո՞վքեր են հիմնական անհատները, խմբերը կամ կազմակերպությունները, որոնք հետաքրքրություն են դրսնորում, կարծիք են արտահայտում հիմնախնդրի վերաբերյալ

ա. Ինչո՞ւ են նրանք հետաքրքրվում հիմնախնդրով

---

---

բ. Որո՞նք են նրանց դիրքորոշումների կամ կարծիքների առավելություններն ու թերությունները

---

---

գ. Ինչպե՞ս կարող ենք ավելի մանրամասն տեղեկություն ստանալ նրանց դիրքորոշումների, կարծիքների մասին

---

---

դ. Ինչպե՞ս են այդ անհատները, խմբերը կամ կազմակերպությունները փորձում ազդել իշխանության մարմինների վրա՝ հիմնախնդրի լուծմանն ուղղված հանրային քաղաքականություն մշակելու և իրականացնելու համար

---

---

ը. Եթե մենք մշակենք հիմնախնդրի լուծմանն ուղղված որևէ հանրային քաղաքականություն, ինչպե՞ս կարող ենք ազդել իշխանության վրա՝ հիմնախնդրի մեր լուծումը հաշվի առնելու համար

---

---

## Գլուխ 5

### Քաղաքացիական հասարակություն:

### Հասարակական կազմակերպություններ

#### **1. Քաղաքացիական հասարակություն հասկացությունը**

Քաղաքացիական հասարակության ձևավորումը կապված է եղել օրենքի և իրավունքի գերակայության, իրավական պետության հաստատման հետ:

Քաղաքացիական հասարակություն հասկացության, քաղաքացիական հասարակության մասին հայեցակարգի մշակումը առջին հերթին կապվում է նոր ժամանակների գերմանացի մտածողների հ. Կանտի և Գ. Հեգելի անունների հետ: Քաղաքացիական հասարակության ժամանակակից ըմբռնումը թույլ է տալիս առանձնացնել այդ հասկացությանը բնորոշ մի շարք հատկանիշներ: Համառոտակի անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Քաղաքացիական հասարակությունը **ազար անհապների** միավորում է: **Ազատությունն** այս դեպքում առնվազն երկու հիմնական ուղղություն է ենթադրում:

**Տնտեսական** առումով դա նշանակում է, որ յուրաքանչյուր անհատ կարող է սեփականատեր լինել: *Սեփականություն ունենալը* կամ *սեփականություն ունենալու իրավունքը*, հնարավորությունը քաղաքացիական հասարակության մեջ մարդու ազատության հիմնական երաշխիքներից մեկն է:

**Քաղաքական** առումով դա նշանակում է, որ երկրի քաղաքացիները կարող են անդամակցել քաղաքական կուսակցությունների և միավորումների, մասնակցել պետական իշխանության և տեղական մարմինների ընտրություններին: Քաղաքացիների ազատության ապահովման կարևոր նախապայման է նաև դատական ու վարչական գործառույթների օրենսդրական կարգավորումը:

Քաղաքացիական հասարակությունը բաց հասարակություն է: Դա նշանակում է, որ այն «երկաթե վարագույրով» չի անջրապետված մյուսներից, հակվածություն է դրսելորում դեպի համընդիհանուր, համամարդկային արժեքներն ու իդեալները:

Քաղաքացիական հասարակությունը **բազմակարծության համակարգ** է: Բազմակարծությունն այստեղ ենթադրում է հանրային ձևերի ու ինստիտուտների (կառույցների, հաստատությունների, միավորումների, կազմակերպությունների) բազմազանություն: Այդ պայմանի առկայության դեպքում ցանկացած անհատ, քաղաքացիական հասարակության յուրաքանչյուր անդամ կարող է այս կամ այն կերպ մասնակից դառնալ արհեստակացական միությունների, մասնագիտական ընկերակցությունների (ասոցիացիաների), կանանց կազմակերպությունների, բարեգործական միությունների, քաղաքացիական և բնապահպանական շարժումների,

հավատքի (դավանանքի) վրա հիմնված կազմակերպությունների, կամավորական խմբերի և այլն:

Կարևոր է, սակայն, ոչ միայն և ոչ այնքան այդ կազմակերպությունների գոյությունը, որքան այն, որ մարդը, քաղաքացին, ցանկացած անհատ անդամակցի կամ որևէ կերպ մասնակից դառնա դրանց աշխատանքին կամավոր կերպով: Պետական իշխանության մարմինները, ցանկացած անհատ, քաղաքական կամ կրոնական որևէ կազմակերպություն, տեղական կամ միջազգային որևէ կառուց չպետք է մարդուն ուղղորդի, առավել ևս՝ արգելի մասնակցելու այս կամ այն կազմակերպության աշխատանքին:

Քաղաքացիական հասարակությունը, այսպիսով, կամավոր քաղաքացիական ու հասարակական կազմակերպությունների և կառուցվածքների միասնություն է, որը ձևավորում է տվյալ հանրության գործունեության հիմքը: Այն վերաբերում է կամավոր խմբային գործառույթների ոլորտին՝ համատեղ հետաքրքրությունների, նպատակների և արժեքների շուրջ:

Եվ վերջապես, քաղաքացիական հասարակությունը իրավական ժողովրդավարական հասարակություն է, որտեղ մշտապես հարգվում են մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները: Կարելի է նույնիսկ ասել, որ իրավական պետությունն ինքը քաղաքացիական հասարակության զարգացման արդյունք է:

### Հրացուցիչ նյութ

Հասարակական կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպության՝ հասարակական միավորման տեսակ է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա, օրենքով սահմանված կարգով, միավորվել են ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք՝ իրենց ոչ կրոնական, հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու, իրենց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, հասարակությանը, նրա առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով:

Մարդու՝ միավորումներ կազմելու իրավունքը ներառում է այլոց հետ ազատորեն միավորում ստեղծելու, նրան անդամագրվելու (մասնակցելու), նրա գործունեությանը մասնակցելու և անդամությունից (մասնակցությունից) անարգել դուրս գալու իրավունքը՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից և քաղաքացիությունից: Այս իրավունքն օրենքով սահմանված դեպքերում և կարգով կարող է սահմանափակվել զինված ուժերում և իրավապահ մարմիններում ծառայողների նկատմամբ:

## **Միավորումներին անդամակցելու երեխայի իրավունքը**

Յուրաքանչյուր երեխա ունի քաղաքացիների միավորումներին, այդ թվում՝ հասարակական, մանկապատրաններին կազմակերպություններին անդամակցելու, խաղաղ հավաքներին մասնակցելու իրավունք:

**«Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 21**

### **Գործնական աշխատանք**

Սկսորեն ներկայացված օրինակի նմանությամբ կազմեք ձեր կողմից ընդունված որևէ հասարակական կազմակերպության նպատակը և խնդիրները: Աշխատանքը կարարելիս կարող եք օգտվել լրացուցիչ, այդ թվում էլեկտրոնային, աղյուրներից:

### **Հայաստանի սպառողների ազգային ասոցիացիա**

#### **Առաքելությունը**

Սպառողների ազգային ասոցիացիան առաջնորդվելով «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով և ասոցիացիայի Կանոնադրությամբ, առաքելություն ունի.

- Պաշտպանել սպառողների իրավունքները դրսեսության բոլոր ոլորդներում:
- Ներկայացնել սպառողների շահերը պետական կառուցներում:
- Մշտապես վերլուծության ենթարկել երկրում գործող օրենսդրության և սպառողի շահերին վերաբերող օրենքները, օրենսդրական ակտերն ու որոշումները և մշակել ու համապատասխան առաջարկներ ներկայացնել դրանց կարգարելագործման ուղղությամբ:
- Իրականացնել ապրանքների և ծառայությունների անկախ փորձաքննություն:
- Անկախ փորձաքննություն իրականացնել գործող գների, դարձիքների ու սրանդարների համապատասխանության վերաբերյալ:
- Իշխանություններին առաջարկներ ներկայացնել անորակ ապրանքներն ու ծառայությունները շրջանառությունից դուրս բերելուն ուղղված միջոցներ ձեռք առնելու ուղղությամբ:
- Աջակցել հայրենական արտադրողներին և որակյալ ծառայություն մակրուցողներին:
- Բարձրացնել սպառողների գիրակցությունը, կրթել նրանց սպառողական գիրտելիքներով, այդպիսով՝ հնարավորություն ընձեռելով ճիշդ կողմնորոշվել և պաշտպանել սեփական շահերը ապրանքների և ծառայությունների շուկայում:
- Պայքարել հանուն ազգաքննակչության առողջության պահպանման և ապագա առողջ սերնդի ձևավորման:
- ՀՀՄ-ների օգնությամբ սպառողներին պարբերաբար ապահովել համապատասխան դեղեկարգությամբ:

## **ՆՊԱՏԱԿԸ**

- Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի լինի օրենսդրորեն պաշտպանված և պեղյակ սեփական իրավունքներին:
- Սպառողական ինսպիրութի վերջնական կայացումը հօգուր Հայաստանի Հանրապետության բնակչության առողջության պահպանման, ապագա առողջ սերնդի ձևավորման:

### ***Հարցեր և առաջադրանքներ***

1. Սահմանեք քաղաքացիական հասարակություն հասկացությունը:
2. Ի՞նչ նախապայմաններ են անհրաժեշտ քաղաքացիական հասարակության ձևավորման համար:
3. Ձեր կարծիքով, մեր երկրում առկա՝ են արդյոք քաղաքացիական հասարակության ձևավորման համար անհրաժեշտ նախապայմանները: Եթե ոչ, ապա հանրային կյանքի ո՞ր բնագավառներում են, ձեր կարծիքով, առավել նկատելի բացթողումներն ու թերությունները:

## 2. Զանգվածային լրատվության միջոցները և մարդու իրավունքները

Տեղեկություններ մենք կարողանում ենք ստանալ հեռուստատեսությունից, ռադիոյից, թերթերից և ամսագրերից, այլ աղբյուրներից, սակայն այսօր ամենատարածված միջոցը համացանցն է:



Ինքնակենսագրականում Հարավաֆրիկյան Հանրապետության նախագահ Նելսոն Մանդելան պարմում է Արկտիկական գորու հյուսիսի Գուս Բեյ բնակավայրում իր կանգառի մասին, երբ նրան մոդերն են մի խումբ երիտասարդ ինուիթներ.

«Այս պայծառ երիտասարդների հետ գրուցելով՝ ես իմաց, որ նրանք հեռուստապետությամբ դիմում են իմ ազատ արձակումը և ծանոթ են Հարավային Աֆրիկայի իրադարձություններին: «Կեցցե՛ Աֆրիկայի ազգային կոնգրեսը», - ասաց նրանցից մեկը: Ինուիթները բնիկ ժողովուրդ են՝ պատմականորեն ենթարկված եկվոր սահմանամորթների դաժան վերաբերմունքին: Զուգահեռներ կային Հարավային Աֆրիկայի սևամորթ բնակչության և ինուիթների միջև: Ինձ հաղկապես ցնցեց այն, թե որքան էր փոքրացել երկրագունդն իմ բանտարկության դրանամյակների ընթացքում: Ասշեցրեց, որ աշխարհի դրանիքում ապրող մի երիտասարդ կարող է դեսնել Աֆրիկայի ծայր հարավում մի քաղբանվարկյալ ազար արձակումը: Հեռուստապետությունը սեղմել է աշխարհը և այդ ընթացքում դարձել անսպասարկությունն արմադախիլ անող ու ժողովրդավարությունը խթանող հզոր գենք»:

*Հարց. Ի՞նչ եք կարծում, ի՞նչ էր ուզում ասել Մանդելան «երկրագունդը փոքրացել է» արդահայկության մեջ:*

Ժամանակակից հասարակությունում լրատվամիջոցներն այնքան մեծ կարևորություն են ստացել, որ երբեմն կոչվում են «չորրորդ իշխանություն»: Ոմանք համացանցային բլոգներն անվանում են «հինգերորդ իշխանություն», քանի որ խնդիրներ բարձրաձայնելով՝ նրանք ավելի ու ավելի են մրցակցում ավանդական լրատվամիջոցների հետ: Թեև լրատվամիջոցների այս ուժգնացող ազդեցությունը կարող է նպաստել տեղեկատվության մատչելիությանը, դրան հատուկ են նաև որոշ վտանգներ: Վիրտուալ աշխարհը բոլորիս առջև բացում է հնարավորություններ, սակայն նաև՝ ծուլակներ: Այսօր լրատվամիջոցները, մասնավորապես՝ հեռուստա-

տեսությունը, ունեն բացասական կողմեր: Այդ իրավիճակը լուրջ մտահոգության առարկա է դարձել ծնողների, մանկավարժների, հանրության այլ շերտերի ներկայացուցիչների համար:

Օրինակ՝ որոշ երկրներ մանկական ծրագրերի ընթացքում արգելում են գովազդը: Սահմանվել է անգամ «պարետային ժամ», որից առաջ չեն կարող բռնության և անառակաբարո պատկերներ ցուցադրել: Կան երկրներ, որտեղ կարող են գնել «ֆիլտրեր»՝ այդպիսով կանխելով երեխաների կողմից որոշակի ծրագրերի դիտումը:

Վերջին տասնամյակներում լրատվական կրթության մեջ եղել են երեք հիմնական ուղղություններ.

- «պարզապեսպման» մոտեցում, որի նպատակն է մեծացնել երեխաների դիմադրողականությունը լրատվամիջոցների ազդեցության նկատմամբ
- քննադարսական մոտեցում, որի նպատակն է զարգացնել քննադարսական դիրքորոշում լրատվության բացասական բովանդակության նկատմամբ
- վերծանելու մոտեցում, որը փորձում է օգնել հասկանալու լուրերի արտադրության տնտեսական և սոցիալական համատեքստը, այսինքն սպառողից դառնալ մասնակցող քաղաքացի:

**Տեղեկություն ստանալու իրավունքը** մարդու հիմնարար իրավունքներից է: Այն ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագրի **19-րդ հոդվածում**, որի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքների ազարության և դրանք անկաշկանդ արդարակայտելու իրավունք, այդ իրավունքը ներառում է իր համոզմունքներին հավաքարիմ մնալու ազարությունը և ցանկացած միջոցներով ու անկախ պետական սահմաններից դեղեկություններ և գաղափարներ փնտրելու, սրանալու և դարաձելու ազարությունը»:

«Սահմանադրության **27-րդ հոդվածը** սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն:

Յուրաքանչյուր ոք ունի իսոսքի ազարության իրավունք, ներառյալ՝ դեղեկություններ և գաղափարներ փնտրելու, սրանալու, դարաձելու ազարությունը, դեղեկապվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» <<օրենքի 4-րդ հոդվածի՝ տեղեկատվության ազատության հիմնական սկզբունքը հրապարակայնության և տեղեկատվության տրամադրման մատչելիության ապահովումն է:

## **Հիշեք՝**

Պաշտոնական փաստաթղթերը հասարակական բնույթ ունեն և պետք է մարդչելի լինեն հանրությանը, եթե միայն չկա առավել կարևոր հանրային կամ պետրական շահ՝ դեղեկությունը չհրապարակելու համար։ Անգամ եթե դուք դիմեք գաղտնիք համարվող դեղեկություններ սրանալու համար, իշխանությունները պետք է նժարի վրա դնեն մի կողմից հասարակության հետաքրքրությունը, դեղեկացված լինելու իրավունքը, մյուս կողմից՝ գաղտնիքը պահպանելու անհրաժեշտությունը։

## **Լրացուցիչ նյութ**

Լրաբանական կրթության վերաբերյալ Եվրոպայի խորհուրդը կազմել է հետևյալ առաջարկները։

Գիրակցելով դեղեկաբանական և հաղորդակցման միջավայրի բովանդակության և վարքագիր վրանգը, որ կարող է, անօրինական չլինելով, վնասակար ազդեցություն ունենալ երեխաների ֆիզիկական, զգայական և հոգեբանական վիճակի վրա։

Մասնավորապես՝ առցանց անառակագրության, բոնության և ինքնավնասման ցուցադրումներն ու գովարանումը, նվաստացուցիչ խորությունը կամ ուսախսպական արդարականացությունները կամ այդպիսի վարժագիր արդարացումները, սեռական ովնաճգությունների այլ ձևերը... Եվրոպայի խորհուրդն առաջարկում է, որ անդամ երկրները մշակեն... դեղեկաբանական գրագիրության և վերապարագումների համապարփակ ուղմավարություն, որը կնպաստի, որ երեխաներն ու իրենց մանկավարժները սրանան դեղեկաբանական և հաղորդակցային ծառայություններից և դեխնոլոգիաներից լավագույնս օգրվելու հնարավորություն...»

## **Հարցեր և առաջադրանքներ**

1. Լրատվության ի՞նչ միջոցներից եք ավելի շատ օգտվում՝ հեռուստատեսությունից, ռադիոյից, թերթերից և ամսագրերից, համացանցից, այլ աղբյուրներից: Ինչո՞ւ: Ինչո՞վ է լրատվության այդ տեսակը նախընտրելի:
2. Փորձեք պարզաբանել, թե որո՞նք են համացանցում առկա լրատվության դրական և բացասական կողմերը: Հիմնավորեք ձեր տեսակետը մեկ-երկու օրինակով:
3. Ինչո՞վ եք բացատրում զանգվածային լրատվության միջոցներին «չորրորդ իշխանություն» անվանելը: Վերիիշեք, թե որո՞նք են իշխանության երեք ճյուղերը: Ինչո՞վ է տարբերվում լրատվամիջոցների՝ «իշխանություն լինելը» իշխանության մյուս ճյուղերից:
4. Ի՞նչ եք կարծում, ինարավոր է արդյոք ժողովրդավարական հասարակության բնականոն գոյությունն առանց լրատվամիջոցների: Ինչո՞ւ: Հիմնավորեք ձեր կարծիքը:

## **Գործնական աշխատանք**



Մեկ շաբաթվա ընթացքում ուսումնասիրեք զանգվածային լրատվության միջոցների կողմից հանրությանը դրամադրված գեղեկարգությունը և վերլուծեք դրանց բովանդակությունը հետևյալ առումներով՝

- քաղաքական իրադարձություններ
- հասարակական կյանքի հիմնախնդիրներ
- հայկական մարդկանց (քաղաքական գործիչների, գործարարների, շոուբիզնեսի ներկայացուցիչների և այլն) անձնական կյանքի մանրամասներ:

## **Հրացրեք սպորտ տրված աղյուսակը**

		<b>Թեման</b>		Ամսաթիվը
<b>Տեղեկատվության աղբյուրը</b>	<b>քաղաքական իրադարձություններ</b>	<b>հասարակական լյանք</b>	<b>հայրնի մարդկանց անձնական լյանք</b>	

## Գլուխ 6

### Սպառողների շահերի պաշտպանություն



- Ի՞նչ է շահերի պաշտպանությունը:
- Ո՞ւմ շահերն են պաշտպանվում: Ո՞վեր են սպառողները: Նրանց ո՞ր շահերը պետք է պաշտպանվեն:

#### Խմբային աշխաղանք. Շահերի պաշտպանության ներկայացում

Առաջադրանքի նպակակը. սովորել հասարակական որևէ խմբի իրավունքները և ներկայացնել դրանք խմբին:

Բաժանվեք երկու խմբի և իրավունքների պաշտպանության համար ընտրեք հետևյալ սոցիալական խմբերից մեկը.

- Երեխաներ
- զինծառայողներ
- կանայք
- ազատազրկվածներ
- փախստականներ
- հաշմանդամություն ունեցող անձինք
- փոքրամասնություններ

Այնուհետև, ընտրեք Ձեր հասցեատիրոջը, ում պետք է ուղղված լինի Ձեր գործունեությունը: Կատարեք որոշակի հետազոտություն: Համացանցում որոնեք ընտրած խմբի իրավունքներին առնչվող օրենսդրությունը և հետազոտական գեկույցները: Օգտվեք << Սահմանադրությունից և «2012 թ. ընթացքում << Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» տարեկան գեկույցից: Այն կարող եք ձեռք բերել << Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից կամ պաշտոնական կայքից ([www.ombuds.am](http://www.ombuds.am))\*\*:

\*\* Հայաստանում մարդու իրավունքների վիճակի մասին 2012 թվականի գեկույցը անգլերեն լեզվով հասանելի է <http://photos.state.gov/libraries/armenia/231771/PDFs/hr2012.pdf> կայքում:

*Քննարկեք և հեղազողության միջոցով մշակեք շահերի պաշտպանության Ձեր խմբի պլանը՝ պարասխանելով հետևյալ հարցերին.*

1. Ո՞րն է Ձեր ընտրած հիմնախնդիրը:
2. Ի՞նչ պետք է իմանան բոլորը այդ հիմնախնդրի մասին:
3. Ինչպե՞ս են հիմնախնդրին առնչվող գործող օրենքներն ուղղակիորեն կամ անուղակի ազդում Ձեզ վրա:
4. Ի՞նչ պետք է անեն մարդիկ, որպեսզի փոխվի իրենց վարքագիծը տվյալ հիմնախնդրի նկատմամբ:
5. Ինչպիսի՞ տարիքային, գենդերային, սոցիալական խմբի է առնչվում հիմնախնդիրը:
6. Շահերի ինչպիսի՞ պաշտպանություն է պետք իրականացնել:
7. Որոնք են շահերի պաշտպանություն անհրաժեշտությունը և պատճառները:
8. Ինչպիսի՞ տվյալներ ունեք, որոնք հաստատում են Ձեր պնդումները: Ինչ տեղեկության պակաս ունեք:
9. Շահերի պաշտպանության արշավի ժամանակ Ձեր լոգունգը:
10. Ձեր ուղերձը:
11. Ինչպիսի՞ գործողություններ կարելի է իրականացնել Ձեր ուղերձները հանրությանը և որոշում կայացնողներին հասցնելու համար:
12. Այդ գործողությունները ինչպե՞ս կարող են նպաստել սոցիալական փոփոխության տեղի ունենալուն:
13. Ինչպե՞ս կիմանաք, որ հաջողության եք հասել:
14. Ի՞նչ աղյուրներից եք օգտվել տեղեկություններ որոնելիս:

Ներկայացրեք ընտրված խմբի իրավունքների պաշտպանության Ձեր խմբի պլանը: Այն պետք է օգնի հասցեատիրոջը հասկանալ հիմնախնդրի էությունը և դրա լուծման կարևորությունը: Ներկայացման ժամանակ կարող եք օգտագործել տարբեր միջոցներ. տպագիր նյութեր կամ էլեկտրոնային տեխնիկա: Խմբի բոլոր անդամները պետք է մասնակցեն ներկայացմանը:

### **Կարդացեք այս տեքստը և բացատրեք իրավիճակը.**

Հայաստանում կա 8 հազար պաշտոնապես գրանցված հաշմանդամություն ունեցող երեխա: Նրանց մոտ 65%-ը ապրում է աղքատության կամ ծայրահեղ աղքատության մեջ:

---

ՄԱԿ-ի Մարդկային զարգացման ազգային զեկույցը: Միզրացիա և մարդկային զարգացում. Հնարավորություններ և մարտահրավերներ (2009 թ.): <http://hdr.undp.org/en/reports/national/europethecis/armenia/NHDR-2009-Armenia-ARM.pdf>

Առ այսօր Հայաստանում հաշմանդամ Երեխային տեղափոխելիս մեքենան անհամապատասխան վայրում կանգնեցնելու համար ոստիկանը տուգանում է հաշմանդամ Երեխայի ծնողին: Այս խնդրի վերաբերյալ ամիսներ առաջ Մարդու իրավունքների պաշտպանը հանդես էր եկել հայտարարությամբ և հաշվի առնելով խնդրի հրատապությունը՝ առաջարկել էր << վարչապետին լրացումներ կատարել Կառավարության որոշման համապատասխան կետերում, և համապատասխան արտոնություններ տրամադրել նաև «հաշմանդամ Երեխա» կարգավիճակ ունեցող Երեխաների ծնողներին կամ խնամակալներին:

Ընդունելով «Պաշտպանի առաջարկը՝ վարչապետը Որոշման մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու հանձնարարական էր տվել: Այդ հանձնարարականին համապատասխան << տրանսպորտի և կապի նախարարությունը սեղմ ժամկետներում պատրաստել է << կառավարության որոշման մեջ լրացում կատարելու նախագիծ, համաձայն որի՝ Կառավարության որոշմամբ հաստատված 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամների համար սահմանված արտոնությունները կտարածվեն նաև «հաշմանդամ Երեխա» կարգավիճակ ունեցող Երեխաների ծնողների կամ խնամակալների վրա: Սակայն մինչ օրս նշված որոշման նախագիծը << կառավարության անհետևողականության պատճառով չի ներկայացվել << Կառավարության նիստերի օրակարգ: Արդյունքում առ այսօր հաշմանդամ Երեխային տեղափոխելիս մեքենան անհամապատասխան վայրում կանգնեցնելու համար ոստիկանը տուգանում է հաշմանդամ Երեխայի ծնողին:

Ակնկալում ենք, որ << կառավարության աշխատակազմը, հաշվի առնելով խնդրի հրատապությունը, հնարավորինս շուտ կներառի այս առաջարկը Կառավարության նիստերի օրակարգ և Կառավարությունը կընդունի այս նախագիծը՝ լուծելով բազմաթիվ հաշմանդամ Երեխաների ազատ և մատչելի տեղաշարժման խնդիրը: Աղյուրը. <http://mardik.am>

- **Ներկայացված հոդվածում ո՞վ է պայքարում հաշմանդամություն ունեցող Երեխաների շահերի պաշտպանության համար:**
- **Ո՞ր <<շահի>> համար է նա պայքարում:**
- **Ի՞նչ եղավ արդյունքում:**
- **Արդյո՞ք դեղյակ եք այդպիսի Երեխաների այլ իրավունքների մասին, որոնք պաշտպանության կարիք ունեն:**

**Բերեք օրինակներ Ձեր կյանքից, երբ Դուք փորձել եք պաշտպանել Ձեր կամ ուրիշների իրավունքները: Հիմնավորեք, որ Ձեր պահանջը արդարացի էր:**

**Իսկ ի՞նչ է շահերի պաշտպանությունը.**

Շահերի պաշտպանության գործընթացում բարձրացվում են անհատների կամ հանրության որևէ խմբին հուզող խնդիրները. օրինակ, կենսաթոշակների բարձրացումը, ուսուցիչներին բժշկական ապահովագրությունը, հաշմանդամություն ունեցող անձանց համար հանրային վայրերի մատչելիությունը, փողոցների գիշերային լուսավորվածությունը, երեխաների իրավունքների պաշտպանությունը:

Շահերի պաշտպանությունը *հասարակական քաղաքական գործընթաց* է: Այն Ձեր կամ ուրիշների իրավունքների պաշտպանության համար հանդես գալու գործընթաց է: Շահերի հավաքական պաշտպանությունը հանրային արշավ է, որի միջոցով կարևոր հանրային հիմնախնդիրները լսելի են դառնում՝ ուղերձների տարածման միջոցով: Վերջապես, որևէ արդյունքի հասնելու համար համոզիչ պատճառաբանություն ներկայացնելով ապահովում է սոցիալական փոփոխությունների իրականացումը: Այս ամենի նպատակը քաղաքական կամք ձևավորելը կամ փոխելն է: Շահերի պաշտպանությունը ուղերձ հղելու, հաղորդակցվելու ձև է:

Շահերի պաշտպանությունը մարդկանց, կուսակցությունների, գործող օրենսդրության, ենթակառուցվածքների և համակարգերի վրա ազդելու միջոց է, որը հանգեցնում է սոցիալական փոփոխության:

Շահերի պաշտպանությունը քաղաքացիական հասարակության կարևորագույն գործոններից մեկն է: Այն անհատների կամ խմբերի կողմից կատարվող քաղաքական գործընթաց է, որի արդյունքում նրանք ազդում են հանրային (պետական) քաղաքականության և ռեսուրսների բաշխման վրա: Ինչպես գիտենք, *հանրային* (պետական) քաղաքականությունն իշխանության մարմինների՝ ժողովրդի հետ համաձայնեցված այն գործողություններն են, որոնցով իշխանությունն իրականացնում է իր պարտականությունները՝ պաշտպանելու քաղաքացիների իրավունքները և նպաստելու համընդհանուր բարեկեցությունը՝ հիմնախնդիրների լուծման միջոցով:

Շահերի պաշտպանության ժամանակ հաշվի են առնվում թիրախային խմբին կամ անհատներին հետաքրքրող բոլոր հարցերը: Այն հնարավորություն է տալիս այդ խմբերի ներկայացներին կամ անհատներին բարձրացված հարցերի մասին.

- արտահայտել իրենց տեսակետները և ցանկությունները,
- պաշտպանել իրենց իրավունքները և ներկայացնել հետաքրքրությունները,
- ստանալ տեղեկությունը և ծառայություններ,
- գտնել այլընտրանքներ:

Այսպիսով, շահերի պաշտպանության ժամանակ մենք բարձրաձայնում ենք որևէ հանրային հիմնախնդրի մասին կամ դրան լուծում ենք տալիս՝ որոշակի գործո-

դության կամ ջանքերի գործադրման միջոցով: Շահերի պաշտպանները խոսում են այն մարդկանց կամ խմբերի անունից, պաշտպանում նրանց շահերը, ում կյանքին առնչվում է հանրային հիմնախնդիրը: Գործընթացը հաջողված է, եթե փոփոխություն է տեղի ունենում հանրային քաղաքականության կամ դրա իրականացման մակարդակում: Օրինակ, հասարակական կազմակերպությունների, հանրային մարմինների քննարկման և ծնողների պահանջով Հայաստանում տարեցտարի գյուղական համայնքներում բացվում է նախադպրոցական կրթական հաստատություններ՝ երեխաներին դպրոցին պատրաստելու նպատակով:

Նմանապես մենք կարող են փոփոխություններ բերել մեր շրջապատում՝ դպրոցում, աշխատավայրում, համայնքում և, վերջապես, մարզում կամ երկրում: Սոցիալական փոփոխությունը կարող է լինել փոքր՝ ազդել մարդկանց փոքր խմբի կյանքի վրա, կամ ընդգրկել ողջ բնակչության՝ թողնելով մեծ ազդեցություն:

Շահերի պաշտպանության աշխատանքն իրականացվում է տարբեր ձևերով. կրթելու, հետազոտության, համագործակցության, ուժերի մոբիլիզացիայի, լոբբինգի և այլ միջոցներով: Կարելի է անել միայնակ, մարդկանց խմբով կամ կազմակերպությունների ցանցի միջոցով: Կարող է պատահել հանկարծակի կամ լինել լավ պլանավորված, իսկ իր տեսակով կարող է լինել մեկամգամյա գործողություն կամ շարունակական գործընթաց:

Յուրաքանչյուր ոք կարող է հանդես գալ որպես շահերի պաշտպան՝ այն միայն պրոֆեսիոնալների կամ փորձագետների գործը չէ: Դրանց թվում են նաև անարդարության զոհ դարձած անձինք կամ խմբերը: Գործում են շահերի պաշտպանության կառուցներ:

2004 թվականին Հայաստանի Հանրապետությունում հիմնվեց **«Մարդու իրավունքների պաշտպանի»** Օմբուդսմենի գրասենյակը: Մարդու իրավունքների պաշտպանն «ինքնուրովյն և անկախ պաշտոնատար անձ է, որը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների ու նորմերի համաձայն, իրականացնում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից խախտված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը»:

2012 թվականին Պաշտպանը և իր աշխատակազմն իրավական ծառայություն է մատուցել 7395 մարդու: Պաշտպանի իրավասություններին վերաբերող 999 բողոքների ուսումնասիրության արդյունքում վերականգնվել են 557 անձանց խախտված իրավունքները: 2012 թվականին պետական մարմինների կողմից մարդու իրավունքների խախտման մասին 31 որոշում է կայացվել: Պաշտպանը

հատուկ ուշադրություն է դարձնում Երեխաների, զինծառայողների, կանանց, ազատագրկվածների, փախստականների, հաշմանդամություն ունեցող անձանց և փոքրամասնությունների իրավունքներին վերաբերով հարցեր: Պաշտպանի գրասենյակի գործունեության մասին ավելի մանրամասն կարելի է ծանոթանալ պաշտոնական կայքից. <http://www.ombuds.am>:

Կան բազմաթիվ հասարակական կազմակերպություններ, որոնք մասնագիտացել են սպառողների իրավունքների և շահերի պաշտպանությամբ: Սպառողը բացառապես անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվիրման կամ ձեռքբերման մտադրություն ունեցող քաղաքացին է: Սպառողի իրավունքներից են որակյալ ապրանքների և ծառայությունների ձեռքբերումը:

Շատ կարևոր է, որ մենք, որպես սպառող, տիրապետենք մեր իրավունքներին և պարտականություններին: Մեզ օգնության է գալիս համացանցը, որտեղ տեղեկություն կա իրավական դաշտի բոլոր հարցերի վերաբերյալ: Մի քանի կայքեր, որոնք կարող են օգտակար լինել. [www.arlis.am](http://www.arlis.am), [www.esgitem.am](http://www.esgitem.am), [www.ngo.am](http://www.ngo.am), [www.hra.am](http://www.hra.am), [www.ashakert.am](http://www.ashakert.am), [www.inclusion.am](http://www.inclusion.am), [www.achill.am](http://www.achill.am), [www.armedu.am](http://www.armedu.am).



Մեր հասարակության մեջ ամենքը կարող են զբաղվել սպառողների շահերի պաշտպանության հարցերով: Շատ դեպքերում մարդիկ հենց իրենց հիմնախնդիրների համար են իրականացում պաշտպանությունը: Մյուս դեպքերում, մարդիկ դժվարանում են բարձրաձայնել իրենց խնդիրները: Այս դեպքում շահերի պաշտպաններն օգնում են այդ մարդկանց ցանկալի ծառայության հասանելիության կամ դրա փոփոխման, պատշաճ ծառայության ընտրության կամ ծառայություն մատուցողի հետ հաղորդակցման և, վեճի առկայության դեպքում, բանակցման հարցերում:

## Գլուխ 7

### Քաղաքացիական իրավունքներ

#### 1,2,3. Պայմանագրեր, հողային իրավունք, ժառանգական իրավունք

##### **Իրավիճակի նկարագրություն**



Քաղաքացի Արամ Բարեղամյանը<sup>††</sup> ինչ-ինչ հանգամանքներից ենելով իր տարիների աշխատանքի արդյունքը հանդիսացող առանձնատունը նվիրում է հարազատ մորը՝ Համասփյուռ Ռուբենի Պատուազյանին: Դրանից որոշ ժամանակ հետո տեղի է ունենում դաժան ու ողբերգական մի իրադարձություն. Արամը, իր կինը և որդին զոհվում են ավիավթարի ընթացքում: Ողջ է մնում միայն Արամի դուստրը՝ 15-ամյա Աստղիկը: Ողբերգությունից շատ չանցած, տիկին Համասփյուռը, Վկայակոչելով իր վատառողջ լինելը, իր հետ ապրելու է իրավիրում դստերը՝ Վիոլետային, որն ամուսնացած էր, ուներ իր ընտանիքը և տարիներ շարունակ լարված հարաբերությունների մեջ էր հանգույցյալ եղբոր և հատկապես նրա կնոջ հետ:

Գործը հասնում է նրան, որ Աստղիկը դառնում է օտար և անցանկալի մարդ իր հայրական տանը և նրան անթաքույց հասկացնում են, որ նա որևէ իրավունքներ չունի այդ տան սեփականության նկատմամբ և ճիշտ կլինի ուրիշ օթևան որոնելը:

##### **Քննարկման հարցեր**

1. Իրավացի են արդյո՞ք Համասփյուռ տատիկը և նրա սիրելի դուստրը՝ հորաքոյր Վիոլետան:
2. Որքանո՞վ էր իհմնավորված Արամի քայլը, առանձնատունն ամբողջությամբ մորը նվիրելու որոշումը՝ համասեփականատեր չդարձնելով իրեն և ընտանիքի մյուս անդամներին:
3. Ե՞րբ և ո՞ր դեպքում Աստղիկը կարող է օրինական իրավունքներ ունենալ իր հայրական տան նկատմամբ:

---

<sup>††</sup> Բոլոր անունները մղացածին են:

## **Տեղեկագրու նյութ**

Քաղաքացիական իրավունքի կարգավորման առարկա են հանդիսանում բազմապիսի հասարակական հարաբերություններ:

**Քաղաքացիական իրավունքի կարգավորման առարկան նախ և առաջ գույքային հարաբերություններն են:**

Գույքային հարաբերություններ պետք է համարել իրավունքի սուբյեկտների միջև նյութական բարիքների ստեղծման, ձեռքբերման, տիրապետման, օգտագործման, տնօրինման, կառավարման և փոխանցման կապակցությամբ առաջացող հասարակական բոլոր հարաբերությունները, որոնք ունեն **ապրանքադրամական** բնույթ:

Ըստ որում քաղաքացիական իրավունքով կարգավորվող գույքային հարաբերությունների ապրանքադրամական բնույթն այն հիմնական առանձնահատկությունն է, որով այդ հարաբերություններն առանձնանում են իրավունքի այլ ճյուղերով կարգավորվող գույքային հարաբերություններից: Ասվածը երբևէ չի նշանակում, թե յուրաքանչյուր քաղաքացիական իրավունքուն անպայման պետք է լինի ապրանքային և դրամական հարաբերությունների միասնություն: Բավարար է, որ այն ունենա կամ ապրանքային կամ դրամական բնույթ: Օրինակ, առուժախի հարաբերությունն ունի թե ապրանքային, թե դրամական բնույթ: Մինչդեռ նվիրատվության հարաբերությունը գուտ ապրանքային հարաբերություն է:

Քաղաքացիական իրավունքուն երի ապրանքադրամական բնույթը պայմանավորվում է նաև հիշյալ հարաբերությունների գերակշռող մասի **հատուցելիությամբ**, այսինքն հարաբերության մասնակիցներից մեկի կատարածի դիմաց տրվող հատուցմամբ: Ի դեպ հատուցման չափը, ձևը, եղանակը ոչ մի նշանակություն չունեն:

Քաղաքացիական իրավունքով կարգավորվող հարաբերությունների հիմնական մասը հատուցելի է (առուժախ, կապաև, փոխադրում և այլն):

Քաղաքացիական իրավունքով են կարգավորվում նաև ընտանեկան, աշխատանքային, բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանության ոլորտներում ծագող և քաղաքացիական կարգավորման առանձնահատկություններ պարունակող գույքային հարաբերությունները, եթե այլ բան նախատեսված չէ ընտանեկան, աշխատանքային, հողային, բնապահպանական և այլ հատուկ օրենսդրությամբ:

**Քաղաքացիական իրավունքը կարգավորում է նաև անձնական ոչ գույքային հարաբերություններ:**

Անձնական ոչ գույքային հարաբերությունները տնտեսական բովանդակություն չունեցող, սուբյեկտի անհատականությունը բնութագրող և արժանիքները հավաստող ոչ նյութական բարիքների (**անձի անվան, պատվի, արժանապատվության, հեղինակության**) կապակցությամբ առաջացող հասարակական հարաբերություններ են:

Այդ հարաբերությունները բաժանվում են երկու խմբի՝ գույքային հարաբերությունների հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերություններ և գույքային հարաբերությունների հետ չկապված անձնական ոչ գույքային հարաբերություններ:

**Գույքային հարաբերությունների հետ կապված** անձնական ոչ գույքային հարաբերությունները կարգավորվում են մտավոր սեփականության ինստիտուտների նորմերով: Ինչ վերաբերում է գույքային հարաբերությունների հետ չկապված անձնական ոչ գույքային հարաբերություններին, ապա քաղաքացիական իրավունքով կարգավորվում են դրանց իրականացման և պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

Քաղ. օր. 19 հոդվածը մասնավորապես նախատեսում է, որ քաղաքացին իրավունք ունի դատարանով պահանջել հերթելու իր պատիվն ու արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկությունները, եթե նման տեղեկություններ տարածող անձը չապացուցի, որ դրանք համապատասխանում են իրականությանը:

Գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունների կարգավորման համար կիրառվող այդ միջոցների, եղանակների, ձևերի ամբողջությունն էլ կազմում է հասարակական հարաբերությունների կարգավորման **քաղաքացիաիրավական մեթոդը**:

Քաղաքացիաիրավական կարգավորման մեթոդին բնորոշ են մի շարք առանձնահատկություններ:

- Առաջին հերթին քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտները **հավասար են**: Ասվածը նշանակում է, որ քաղաքացիական իրավահարաբերության սուբյեկտներն անկախ են միմյանցից, օգտվում են հավասար իրավունքներից:
- Քաղաքացիաիրավական կարգավորման մեթոդի մյուս առանձնահատկությունը **ինքնավար կամք դրսենորելու**, այսինքն օրենքի շրջանակներում ազատորեն և ինքնուրույնաբար սեփական կամքը դրսենորելու հնարավորությունն է:
- Իրավահարաբերության մասնակիցների **գույքային ինքնուրույնությունը**, որպես կարգավորման մեթոդի առանձնահատկություն, ենթադրում է սուբյեկտի հնարավորությունը՝ օրենքով սահմանված կարգով ինքնուրույնաբար տիրապե-

տել, օգտագործել և տնօրինել առանձնացված այն ունեցվածքը, որը գտնվում է նրա իրավասության ներքո:

- Քաղաքացիական կարգավորման մեթոդի հաջորդ առանձնահատկությունն իրավունքների պաշտպանության ինքնատիպությունն է: Իրավունքի այս ճյուղի կողմից իրավահարաբերությունների մասնակիցների խախտված իրավունքները պաշտպանվում են յուրահատուկ եղանակներով և մեծամասամբ ուղղված են իրավունքների վերականգնմանը: Այդպիսիք են՝ իրավունքի ճանաչումը, իրավունքը խախտող գործողությունների դադարեցումը և դրանց հետագա կատարումն արգելելը, իրավունքի վերականգնումը, վնասների փոխհատուցումը և այլն (Քաղ. օր. 14 հոդվ.):

Քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն առավելապես իրականացվում է հայցային կարգով՝ դատարանի միջոցով: Առանձին դեպքերում քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է նաև վարչական կարգով:

*Տեղեկագույն նյութը դրված է ըստ՝ S. Բարսեղյանի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս» (Երևան, 2000) բուհական դասագրքի (էջ 3-9):*

Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը:

**ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 8**

### **Քաղաքացիական օրենսդրության սկզբունքները**

1. Քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

2. Քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները... :

Քաղաքացիական իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար:

3. Ապրանքները, ծառայությունները և ֆինանսական միջոցները Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում տեղաշարժվում են ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար:

**ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդվ. 3**

## **Հարց ու պատասխան**

**Սեփականության իրավունք և սեփականության իրավունքի պաշտպանություն** Նկատի ունենալով, որ ներկա շուկայական հարաբերությունների պայմաններում սեփականության իրավունքը, որպես տնտեսական այլ իրավունքների շարքում վճռորոշ դեր ունեցող իրավունք, մշտապես ենթակա է խախտման ռիսկերի,



կարևորվում է այդ իրավունքը կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված հիմնական սկզբունքների իմացությունը հատկապես այն դեպքերում, երբ հարկ է առաջանում առնչվել սեփականության հետ կապված վեճերի քննարկմանը։ Փորձենք հարց ու պատասխանի ձևով ներկայացնել իրավական հարաբերությունները կարգավորող

օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված հիմնական սկզբունքները, ինչպես նաև դրանց կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ տալ որոշ պարզաբանումներ։

**Հարց 1. Ո՞րն է «սեփականության իրավունք» հասկացության իրավական բովանդակությունը, ինչո՞վ է այն դարձերվում իր կենցաղային իմաստից։**

Սեփականության իրավունքի իրավաբանական բովանդակությունը բացահայտված է <<քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածում, համաձայն որի՝ «Սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը»։

### **Սեփականության իրավունքի հասկացությունը և բովանդակությունը**

1. Սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը։

Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է։

Օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է։ Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնաճի և այլ ձևերով։

Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է։

2. Սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով։ ...

Այստեղից հետևում է, որ սեփականության իրավունքն ինքնին չի կարող առաջանալ՝ այն պետք է ճանաչված լինի օրենքով կամ այլ իրավական ակտերով: Կենցաղում հաճախ անձի սեփականություն ենք համարում գույքը, որի նկատմամբ օրենքով սահմանված կարգով իրավունքը ճանաչված չէ: Օրինակ՝ անձը գնել է գույք առանց գրավոր պայմանագրի, մինչդեռ օրենքով գրավոր պայմանագիրը պարտադիր է, գնել է անշարժ գույք՝ առանց նոտարական կարգով հաստատված պայմանագրի, իր հողամասում իրականացրել է ինքնակամ կառուց և այլն: Կենցաղային հարաբերություններում նման գույքը համարում ենք տվյալ սուբյեկտի սեփականությունը, սակայն նման գույքի տնօրինման սուբյեկտի իրավունքը չի կարող իրականացվել, քանի դեռ օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված կարգով այդ իրավունքը չի ճանաչվել: Սեփականության ճանաչված իրավունքը չի պաշտպանվում նաև դրա շուրջը վեճ առաջանալու դեպքերում:

**Հարց 2. Արդյոք սեփականության իրավունքը պետք է համարել մարդու սահմանադրական և անօդարելի իրավունք:**

«Համանադրության 8-րդ հոդվածում, ինչպես հայտնի է, ասված է.

Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունք:

Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են դնդեսական գործունեության ազատությունն ու ազատ դնդեսական մրցակցությունը:

Ինչ վերաբերում է սեփականության իրավունքի անօտարելի լինելուն, ապա այն անօտարելի է այնքանով, որքանով թույլատրելի է անձին սեփականությունից գրկելը բացառապես օրենքով դեպքերում և միայն դատական նախատեսված կարգով (պես՝ «Համանադրության 31-րդ հոդված»):

**Հարց 3. Որո՞նք են սեփականության իրավունքի պաշտպանության սահմանադրական երաշխիքները:**

«Համանադրության 31-րդ հոդվածն ամբողջովին նվիրված է սեփականության իրավունքի պաշտպանության սահմանադրական երաշխիքներին: Հոդվածում ամրագրված է.

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ դիրապետելու, օգտագործելու, դնօրինելու և կրակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պարճառի շրջակա միջավայրին, իսկապես այլ անձանց, հանրության և պետքության իրավունքներն ու շահերը:

Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դափական կարգով՝ օրենքով նախապեսված դեպքերում:

Սեփականության օրարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կարարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհարուցմամբ:

Հոյի սեփականության իրավունքից չեն օգտվում օրարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձիք, բացառությամբ օրենքով նախապեսված դեպքերի:

Մշտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով:

**Հարց 4.** Սեփականության իրավունքի իրականացմամբ այլոց իրավունքների խախտման ինչպիսի՞ դեպքեր կարող են լինել, ի՞նչ կարգով է օրենքն արգելում նման կարգով իրականացումը:

Օրինակ՝ յուրաքանչյուրն իր հողամասում շինություն իրականացնելիս, պարտավոր է պահպանել քաղաքաշինության նորմերի պահանջները, հակառակ դեպքում կարող է խաթարվել քաղաքի, բնակավայրի արտաքին տեսքը: Կամ կառույցը՝ թեկուզ և սեփականատիրոջ հողամասում է, այնուամենայնիվ կարող է փակել հարևանի միակ ճանապարհը, որի նկատմամբ ճանաչված է այդ հարևանի՝ ուրիշի հողամասից սահմանափակ օգտվելու (սերվիտուտի) իրավունքը կամ կարող է փակել հարևանի բնակարանի բնական լուսավորվածությունը: Մեկ ուրիշ դեպքում հողամասի սեփականատերն իր այգու ոռոգման ջրի առուն անցկացրել է հարևանի շինության պատի երկայնքով, որով նպաստում է շինության խարխլմանը: Վնասակար արտանետումներով արտադրության սեփականատերը միջոցներ չի ձեռնարկում շրջակա միջավայրի աղտոտումը կանխելու ուղղությամբ:

«Հաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանվում է. «Սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն»: Այստեղ դարձյալ կարևորված է «այլ անձանց իրավունքները չխախտող» ձևակերպումը, ինչը համապատասխանում է Սահմանադրության 31-րդ հոդվածով ամրագրված սկզբունքին:

Եթե սեփականատերն իր սեփականատիրական իրավունքների իրականացմամբ խախտում է այլ անձանց իրավունքները, ապա ծագում է այդ սեփականատիրոջից վնասի հատուցման, իրավունքի խախտումը վերացնելու՝ երրորդ

անձանց պահանջի իրավունքը: Այդ վնասը կարող է պատճառված լինել երրորդ անձանց սեփականությանը, առողջությանը կամ օրենքով պաշտպանվող այլ շահերին:

Պահանջը պայմանավորվում է խախտված իրավունքի և խախտման բնույթով: Օրինակ, Քաղաքացիական օրենսգրքի 227-րդ հոդվածը սահմանում է. «Սեփականատերն իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքների ամեն մի խախտում, թեկուզ և այդ խախտումները զուգորդված չեն եղել տիրապետումից գրկելու հետ»: Նման դեպք կարող է համարվել՝ ինքնակամ կամ օրինական կառուցով բնակարանի բնական լուսավորությունը փակելը, ջրատար առուն շինության պատի երկայնքով անցկացնելը, վառարանի ծովսը դեպի հարևանի բնակարանն ուղելը, 2-րդ հարկում բնակվողի կողմից 1-ին հարկի բնակչի ծխատարը փակելը և այլն: Ուրիշին վնաս պատճառելու հետևանքով պարտավորությունների առաջացման, վնասի հատուցում պահանջելու հարցերը կարգավորվում են Քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլուխ կանոններով:

#### **Հարց 5. Մեր հանրապետության օրենքներով սեփականության ինչպիսի՞ ծներ են թույլավորելի:**

«« Սահմանադրությունը սեփականության ծների սահմանափակում չի նախատեսում, ամրագրում է սեփականության իրավունքի բոլոր ծների հավասար պաշտպանությունը:

«« Քաղաքացիական օրենսգրքի 166-րդ հոդվածով որպես սեփականության իրավունքի սուբյեկտներ են՝ քաղաքացիները, իրավաբանական անձիք, Հայաստանի Հանրապետությունը և համայնքները: Այս առումով սեփականությունը դասակարգվում է երեք խմբի՝ մասնավոր, պետական և համայնքային սեփականություն: Քաղաքացիական օրենսգրքի 12-րդ գլուխ նորմերը վերաբերում են «Ընդհանուր սեփականություն» հասկացությանը՝ պարզաբանվում են «ընդհանուր բաժնային» և «ընդհանուր համատեղ» սեփականության իրավունք հասկացությունները:

#### **Հարց 6. Ինչպես է կարգավորվում կարգավորվում բնակարանի սեփականագեր չհանդիսացող անձանց կողմից բնակելի տարածության օգտագործման իրավունքը:**

Բնակելի տարածության օգտագործման իրավունքը դասվում է անձի այլ գույքային իրավունքների շարքին և կարգավորվում է «« Քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածով:

Քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածը, 2005թ. հոկտեմբերի 4-ի փոփոխություններով, սահմանում է. «Անձի բնակելի տարածության օգտագործման

իրավունքը ուրիշի սեփականությունը հանդիսացող բնակելի տարածությունում բնակվելու իրավունքն է»:

«Բնակելի տարածության օգտագործման իրավունքի ծագումը, իրականացման պայմանները և դադարումը սահմանվում են սեփականատիրոջ հետ նոտարական կարգով վավերացված գրավոր պայմանագրով։ Բնակելի տարածության օգտագործման իրավունքը ծագում է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով սահմանված կարգով այդ իրավունքի գրանցման պահից»։

Այս հոդվածում նորոյթ է 3-րդ կետի ձևակերպումը, որը վերաբերում է բնակելի տարածության նկատմամբ գրանցված անհատույց օգտագործման իրավունքի դադարեցմանը։ Նորոյթ է այն, որ խոսվում է անհատույց օգտագործման իրավունքի դադարեցման մասին։ Սահմանվում է, որ այդ իրավունքը դադարեցնելու համաձայնության բացակայության դեպքում այն կարող է դադարեցվել սեփականատիրոջ պահանջով դատական կարգով՝ սեփականատիրոջ կողմից փոխհատուցում տրամադրելու միջոցով։

Համաձայն հոդվածի 4-րդ կետի՝ փոխհատուցման չափը մեկ ամսվա համար սահմանվում է ելնելով իրավունքի դադարեցման պահին տվյալ բնակելի տարածության համար կիրառելի վարձավճարի չափից՝ բնակության իրավունք գրանցած յուրաքանչյուր անձի համար՝ բնակելի մակերեսի չափը բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունք ունեցող անձանց և սեփականատերերի ընդհանուր թվի վրա բաժանելու միջոցով։ Ստացված մակերեսը, սակայն, ոչ պակաս 5 քմ-ից և ոչ ավելի՝ 9 քմ-ից։ Փոխհատուցումը հաշվարկվում է երեք տարվա համար և տրամադրվում է միանգամից, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ։

Բնակտարածությունն իիմնականում անհատույց օգտագործում են նախկին ընտանիքի անդամները, այլ հարազատները, որոնք չեն հանդիսանում համասեփականատեր։ Ըստ 225-րդ հոդվածի, այդ իրավունքը պետք է ձևակերպված լինի սեփականատիրոջ հետ նոտարական կարգով վավերացված պայմանագրով և գրանցվի պետական ռեգիստրում։

**Հարց 7. Ինչպե՞ս է կարգավորվում հողի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչումը ձեռքբերման վաղեմության ուժով։**

ՀՀ Հողային օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված է ձեռքբերման վաղեմության ուժով պետության ու համայնքների հողամասերի օգտագործման իրավունքի ձեռքբերման իրավունք։ Հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությամբ սահմանված է՝

«Ձեռքբերման վաղեմության իրավունքն այդ անձանց նախապատվության իրավունքն է՝ իրավաբանորեն ծևակերպել այդ հողամասերի նկատմամբ իրենց օգտագործման իրավունքը՝ այդ հողամասերը նույն պայմաններով այլ անձանց տրամադրելու հնարավորության ծագման դեպքում»:

Հատկապես պետք է կարևորել հոդվածի 3-րդ պարբերությունը, ըստ որի՝ «Նման հողամասերն այլ նպատակային նշանակության համար վերցնելու դեպքում ձեռքբերման վաղեմության իրավունք ունեցող անձանց պետք է փոխարենը տրամադրվեն այլ հողամասեր, կամ պետք է հատուցվեն նրանց վնասները սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմքերով»:

Հոդվածի 4-րդ կետով ամրագրված որպես սեփականություն ձեռք բերելու նախապատվության իրավունքը ձեռքբերման վաղեմության ուժով:

Թվարկված իրավունքները կարող են տրամադրվել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումներով կամ դատական կարգով:

#### ***Հարց 8. Ի՞նչ է սեփականության իրավունքի պետական գրանցումը և ո՞րն է դրա իմաստը:***

«Հաղաքացիական օրենսգիրքը որոշակի տեսակի գույքի նկատմամբ իրավունքի ծագման պահ է համարում տվյալ իրավունքի պետական գրանցման պահը: Անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցում չունեցող իրավունքը՝ սեփականություն, վարձակալություն, գրավ և այլն, չի ճանաչվում:

Իրավունքի պետական գրանցումը տվյալ իրավունքի պաշտպանության երաշ-խիքներից մեկն է:

Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում չունեցող անձը տվյալ գույքի հետ կապված որևէ օրինական գործարք կատարել չի կարող:

#### ***Հարց 9. Ի՞նչ պետք է հասկանալ գործարք ասելով:***

Գործարքի հասկացությունը տրված է Քաղ. օր 289-րդ հոդվածում, համաձայն որի՝ «Գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանք դադարելուն»:

Իրավունքներ ձեռք բերելու և պարտականություններ ստանձնելու սահմաները որոշված են Սահմանադրությամբ և օրենքներով, որոնց համապատասխան պետք է կնքվեն գործարքները:

Քաղաքացիական օրենսգիրքը նախատեսել է քաղաքացիաիրավական գործարքների տեսակները և դրանց կնքմանն առաջադրվող պահանջները:

Քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածով սահմանված է. «Օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առողջին է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ»:

#### **Հարց 10. Որ՞նք են գործարքների կնքման ձևերը:**

Գործարքի կնքման իիմնական ձևը պայմանագիրն է: Գործարքները կնքվում են բանավոր կամ գրավոր /հասարակ կամ նոտարական ձևով/:

Բանավոր կարող են կնքվել այն գործարքները, որոնց համար գրավոր ձևն օրենքով պարտադիր չի համարված: Հասարակ գրավոր ձևով կարող են կնքվել այն գործարքները, որոնց համար նոտարական վավերացում չի պահանջվում:

Գործարքի կնքման համար պահանջվող հասարակ գրավոր կամ նոտարական կարգով կնքման ձևը չպահպանելն այն դարձնում է անվավեր:

Օրինակ, անշարժ գույքի վերաբերյալ կնքվող ցանկացած գործարքի համար պարտադիր է նոտարական վավերացումը: Դրամական պարտավորություններով գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճ առաջանալիս կողմին զրկում է վկաների ցուցմունքների վրա հենվելու իրավունքից:

#### **Հողային իրավունք**



2012 թվականի հունիսի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով քաղաքացի Ա.-ի վճռաբեկ բողոքը << վերաբնիշ քաղաքացիական դատարանի 16.02.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի քաղաքացի Ա.-ի ընդդեմ քաղաքացի Դ.-ի՝ Երևանի Վարսանդյան փողոցի թիվ 118 հասցեում գտնվող ընդհանուր գույքի նկատմամբ մասնակիցներից ընդհանուր գույքից քաղաքացի Ա.-ի բաժինը բնեղենով առանձնացնելու պահանջի մասին,

#### **ՊԱՐՁԵՑ**

##### **1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ քաղաքացի Ա.-ն պահանջել է Երևան քաղաքի Վարսանյան փողոցի թիվ 118 հասցեում գտնվող ընդհանուր գույքի նկատմամբ որոշել յուրաքանչյուրի բաժինը և բնեղենով առանձնացնել իր բաժինը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը վճռել է նշված հասցեի ծախակողմյան ցանկապատից սկսած դիմացի մասը 3 մ լայնությամբ, 13 մ երկարությամբ մինչև պատասխանողի դարպասը հատկացնել քաղաքացի Դ.-ին, իսկ տան աջակողմյան մասը թողնել հայցվոր Ա.-ին:

«Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) որոշմամբ քաղաքացի Դ.-ի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի վճիռը բեկանվել և մասնակիորեն փոփոխվել է, որոշվել է <<Երևան, Վարսանյան փողոց, թիվ 118 հասցեում գտնվող 476 քմ մակերեսով հողամասի նկատմամբ կողմերի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքում նրանց բաժինները որոշել հավասար չափերով՝ նրանցից յուրաքանչյուրի բաժինը սահմանելով հողամասի 1/2 չափ, և գործն ուղարկել նույն դատարան՝ նշված հողամասից հայցվորի բաժինն առանձնացնելու պահանջին վերաբերող մասով նոր քննության>>:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել քաղաքացի Ա.-ն:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## 2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Հաղաքացիական օրենսգրքի 199-րդ, «Հողային օրենսգրքի 118-րդ, «Հաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 219-րդ, 221-րդ հոդվածների և «Սահմանադրության 5-րդ հոդվածի պահանջները»:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման հիման վրա չի գնահատել գործում առկա բոլոր ապացույցները և հանգել է սխալ հետևողության այն մասին, որ առկա չեն ապացույցներ՝ օրենքով կամ կողմերի համաձայնությամբ ընդհանուր սեփականության իրավունքում կողմերի բաժինների անհավասարություն նախատեսված լինելու մասին: Մինչդեռ հողամասի փաստացի առանձնացված լինելու և դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիմքով նախատեսված է ընդհանուր սեփականության իրավունքում կողմերի բաժինների անհավասարություն:

Այն հանգամանքը, որ վիճելի հասցեի հողամասը եղել է փաստացի առանձնացված, և կողմերից յուրաքանչյուրն օգտագործել է իր կողմից զբաղեցրած մասը, որի վերաբերյալ առարկություն չի ներկայացրել նաև մյուս սեփականատեր Դ.-ն, հաստատվում է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով, որպիսի հանգամանքը վերաքննիչ դատարանը չի գնահատել:

Բողոք բերած անձը՝ քաղաքացի Ա.-ն պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 16.02.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 15.11.2011 թվականի վճռին:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 23.09.1987 թվականի դրությամբ Երևան, Վարսանյան փողոց, թիվ 118 բնակելի տան 1/2-ական մասերի սեփականատերեր են հանդիսացել հայցվոր Ա.-ի հայրը՝ Հ. Ք.-ն և քաղաքացի Դ.-ն, իսկ 476 քմ մակերեսով հողամասն ընդհանուր օգտագործման իրավունքով հաշվառվել է վերջիններիս անվամբ (կադաստրային գործ, գ.թ. 79, 97).

2) Երևան քաղաքի Մյասնիկյանի շրջանային ժող. դատարանի՝ 17.08.1990 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով քաղաքացի Ա.-ի հոր և Դ.-ի միջև սահմանվել է հողօգտագործման կարգ հետևյալ կերպ. <<Երևան, Վարսանյան փող. 118 տան ծախակողմյան ցանկապատից սկսած դիմացի մասը 3 մ լայնությամբ, 13,10 մ երկարությամբ մինչև պատասխանողի դարպասը, ինչպես նաև տան ծախակողմյան անկյունամասից հաշված 18,5 մ երկարությամբ դեպի բակի խորքը՝ ընդամենը 133,5 քմ, հատկացնել հայցուի Դ.-ին, իսկ տան աջակողմյան մասը թողնել պատասխանող < Ք.-ի օգտագործմանը>> (հատոր 1, գ.թ. 30)...

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Գործող << հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մինչև օրենսգիրքն ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերված հողամասի նկատմամբ իրավունքներն ունեն իրավաբանական ուժ և ենթակա չեն վերագրանցման:

29.01.1991 թվականին ընդունված << հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի 5-րդ պարբերության համաձայն՝ տնամերձ հողամասերը, ինչպես նաև այգեգործության (ամառանոցի) և բնակելի տան շինարարության ու դրա սպասարկման համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ունեցած հողամասերն անհատույց կարգով թողնվում են նրանց որպես սեփականություն:

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեցած հողամասերի նկատմամբ սեփականության իրավունք են ձեռք բերում հետևյալ հանգամանքների միաժամանակյա առկայության դեպքում, եթե՝

1) այդ հողամասերը հատկացվել են որպես տնամերձ, ինչպես նաև այգեգործության (ամառանոցի) և բնակելի տան շինարարության ու դրա սպասարկման համար և

2) դրանք տրամադրվել են մինչև 29.01.1991 թվականի << հողային օրենսգրքի ուժի մեջ մտնելը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևան քաղաքի Մյասնիկյանի շրջանային ժողովը Դատարանի՝ 17.08.1990 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով քաղաքացի Դի և <.Ք.-ի միջև սահմանվել է հողօգտագործման կարգ, համաձայն որի՝ Երևան, Վարսանդյան փող. 118 տան ձախակողմյան ցանկապատից սկսած դիմացի մասը 3 մ լայնությամբ, 13,10 մ երկարությամբ մինչև պատասխանողի դարպասը, ինչպես նաև տան ձախակողմյան անկյունամասից հաշված 18,5 մ երկարությամբ դեպի բակի խորքը՝ ընդամենը 133,5 քմ, հատկացվել է քաղաքացի Դի, իսկ տան աջակողմյան մասը թողնվել է պատասխանող <.Ք.-ի օգտագործմանը (Հայցվորի իրավանախորդին):

Նշված վճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ, որը վկայում է այն մասին, որ վիճելի հասցեի հողամասի նկատմամբ օգտագործման կարգ սահմանելու վճոյի վերաբերյալ կողմերի միջև ըստ էության անհամաձայնություն չի եղել: Այսինքն՝ նշված վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո կողմերի ունեցած հողատարածքներ համարվել են դատարանի վճռով հատկացված հողամասերը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևողությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը:

Մինչդեռ, սույն գործով Վերաքննիչ դատարանը, չանդրադառնալով և վերլուծության շենթարկելով այն հանգամանքը, որ մինչև 29.01.1991 թվականի << հողային օրենսգրքի ուժի մեջ մտնելը դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով կողմերի միջև սահմանված է եղել հողօգտագործման կարգ և կողմերի ունեցած հողատարածքները համարվել են դատարանի վճռով առանձնացված հողամասերը, հանգել է սխալ հետևողության:

Այսպիսով, վճռաբեկ բողոքում նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ << քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել << քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատարաննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ծգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի

դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով << քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-2412-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել << վերաբնիշ քաղաքացիական դատարանի 16.02.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 15.11.2011 թվականի վճռին՝ սույն որոշման պատճառաբանություններով:
2. Քաղաքացի Դ.-ից հօգուտ քաղաքացի Ա.-ի բոնագանձել 20.000 (քսան հազար) << դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում իրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

## Օգտակար հղումներ

- «<< քաղաքացիական օրենսգիրք» ընդունված 1998 թվականի մայիսի 5-ին  
<http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1556>
- «<< հողային օրենսգիրք» ընդունված 2001 թվականի մայիսի 2-ին  
<http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1361>

## Գլուխ 8

### Ընտրական իրավունք

*Մարդու արժանապատվությունն ազար ընդուրության մեջ է:*

**Մաքս Ֆրիշ**

*Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին:*

*Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազար ընդուրությունների, հանրաքենների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախադեսված պետական և գեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնադար անձանց միջոցով:*

**«Սահմանադրություն, հոդված 2»**

Ընտրությունն այն գործընթացն է, որի միջոցով տվյալ երկրի քաղաքացիներն ընտրում են իրենց ներկայացուցիչներին և ղեկավարներին՝ նրանց լիազորելով իշխանությամբ: Ընտրությունները պետք է պարբերական բնույթ կրեն, որպեսզի ընտրված պաշտոնյանները հաշվետու լինեն ժողովրդի առջև: Եթե նրանք պատշաճ կերպով չկատարեն իրենց պարտականությունները, ապա հաջորդ ընտրություններում ընտրողներն այլևս չեն քվեարկի նրանց օգտին: Ընտրությունների միջոցով ձևավորված պետական իշխանությունը համարվում է օրինական (լեզվական): Սակայն ընտրությունն ինքնին դրա երաշխիքը չի հանդիսանում: Երաշխիք կարող են լինել միայն ազար և արդար ընտրությունները:

Ընտրությունները նաև հաշվեդպողականության կարևորագույն միջոց են, քանի որ ընտրողը կարող է իր վերաբերմունքն արտահայտել ընտրված ներկայացուցչի հանդեպ՝ ընտրելով կամ չընտրելով այս կամ այն ներկայացուցչին, եթե նա պատշաճ կերպով չի կատարել իր պարտականությունները:

Այսպիսով, ընտրությունները կարևորագույն դեր ունեն ժողովրդավարական ներկայացուցչական իշխանություններ ձևավորելու համար:

*Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, գեղական ինքնակառավարման մարմինների ընդուրությունները, ինչպես նաև հանրաքեններն անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընդուրական իրավունքի հիման վրա՝ գաղփնի քվեարկությամբ:*

**«Սահմանադրություն, հոդված 4»**

*Ընդուղությունները պետք է լինեն ընդհանուր, հավասար, ուղղակի ընդրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ: Ինչ է դա նշանակում:*

### **Ընդհանուր ընտրական իրավունք**

Այն ընտրական իրավունք է տախս տվյալ երկրի չափահաս քաղաքացիներին, բացառությամբ անզործունակ ճանաչվածների ու ազատազրկման դատապարտված և քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող քաղաքացիների: Այսինքն, ընտրական իրավունք ունեցող քաղաքացիները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ունեն ընտրելու և ընտրվելու իրավունք:

### **Հավասար ընտրական իրավունք**

Ընտրողներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր ընտրող քվեարկության ժամանակ ունի մյուսներին հավասար թվով ձայն:

### **Ուղղակի ընտրական իրավունք**

Հանրապետության Նախագահը, Ազգային ժողովի պատգամավորները, տեղական ինքնակառավարման մարմինները, բացառությամբ Երևանի քաղաքապետի, ընտրվում են անմիջականորեն:

### **Գաղտնի քվեարկություն**

Քվեարկությունը գաղտնի է, և ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն: Դա նշանակում է, որ ընտրողը քվեարկելուց հետո իրավունք չունի քվեաթերթիկը ցուց տալու որևէ մեկին: Քվեարկողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ վերահսկողությունն արգելվում է: Ընտրական իրավունքի կարևոր նշանակությունը քաղաքացու մյուս իրավունքների ապահովման գլխավոր երաշխիքներից մեկն է:

*Հայաստանի Հանրապետության՝ դասնութ դարին լրացած քաղաքացիներն ունեն ընդրելու և հանրաքեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արդահայտությամբ ընդրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և դեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք:*

**«Սահմանադրություն, հոդված 30»**

## **Ընտրողները և ժողովրդավարությունը**

Բանավեճի թեմաների առաջարկ

- Ընտրությունը միաժամանակ և իրավունք է, և պարտականություն:
- Քվեարկելը իրավունք է, բայց ոչ պարտականություն:
- Իմաստ չունի քվեարկել՝ միևնույն է, ոչինչ չի փոխվի: Իմ ձայնը ոչ մի բան չի որոշում:

«Նախընտրական ելույթի» տեքստ, որը կարող է քննարկման նյութ դառնալ՝ ունենալով կողմնակիցներ և հակառակորդներ:

«Քաղաքացինե՞ր: Հարգելի ընտրողնե՞ր:

Չմասնակցելով ընտրություններին, չքվեարկելով առաջադրված թեկնածուներից որևէ մեկի օգտին, դուք թույլ են տալիս ուրիշներին՝ ձեր փոխարեն կայացնել որոշումներ: Դուք նաև իշխանության ձևավորման ձեզ տրված օրինական հնարավորությունն եք հանձնում ուրիշներին: Դրանով իսկ դուք կորցնում եք ձեր իրավունքը՝ ընտրված ներկայացուցիչներից հաշվետվություն պահանջելու իրենց արածի կամ չարածի համար»:

## **Ընտրությունների իրապարակայնությունը**

Ընտրությունները նախապատրաստվում և անցկացվում են իրապարակայնորեն:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նորմատիվ որոշումները իրապարակվում են: Դրանք տեղադրվում են կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքն է՝ [WWW.elections.am](http://WWW.elections.am):



Ընտրական տեղամասերը կազմավորվում են իերթական համարակալմամբ: Ընտրական տեղամասերի համարակալման կարգը սահմա-

նում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Ընտրական տեղամասը կազմավորման պահին չպետք է ունենա ավելի քան 2 հազար ընտրող: Ընտրական տեղամասը չի կարող ընդգրկել տարբեր բնակավայրեր:

Քվեարկությունն անցկացվում է տեղամասային կենտրոնում: Տեղամասային կենտրոնը պետք է հնարավորին չափ մոտ լինի ընտրական տեղամասում գտնվող բնակելի շենքերին և տներին:

Տեղամասային կենտրոնը չի կարող գտնվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ռազմական ուսումնական հաստատությունների, զորամիավորումների և առողջապահության հիմնարկների գրադեցրած շենքերում:

Համապետական ընտրությունների ժամանակ տեղամասային կենտրոններ կազմավորվում են նաև կալանավայրերում:



**Խմբերին պրվող հանձնարարական**

Ընթերցեք ստորև տրվող նյութերը և փորձեք լրացնել այլուսակը:

**Խմբերին պրվող նյութեր**

**1. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հանրապետության Նախագահն ընտրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից՝ հինգ տարի ժամկետով:

Հանրապետության Նախագահ կարող է ընտրվել երեսունինգ տարին լրացած, վերջին տասը տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին տասը տարում Հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Հանրապետության Նախագահի պաշտոնում:

Հանրապետության Նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որին կողմ է քվեարկել բոլոր թեկնածուներին կողմ քվեարկած ընտրողների թվի կեսից ավելին:

Եթե քվեարկվել է երկուահց ավելի թեկնածու, և նրանցից ոչ մեկին կողմ չեն քվեարկել անհրաժեշտ թվով ընտրողներ, ապա քվեարկությունից հետո՝ տասնչորս երկորդ օրը, անցկացվում է Հանրապետության Նախագահի ընտրության երկրորդ փուլ: Հանրապետության Նախագահի ընտրության երկրորդ փուլին կարող են մասնակցել այն երկու թեկնածուները, որոնց կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ: Երկրորդ փուլում Հանրապետության Նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որին կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ:

Մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում նա ընտրվում է, եթե կողմ է քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին: Եթե Հանրապետության Նախագահ չի ընտրվում, ապա նշանակվում է նոր ընտրություն:

Ռազմական և արտակարգ դրության ժամանակ Հանրապետության Նախագահի ընտրություն չի անցկացվում, իսկ Հանրապետության Նախագահը շարունակում է իր լիազորությունների իրականացումը: Այս դեպքում ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո՝ քառասուներորդ օրը, անցկացվում է Հանրապետության Նախագահի ընտրություն:

## **2. <<ԱՉԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ազգային ժողովը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն, կազմված է հարյուր երեսունմեկ պատգամավորից: Ազգային ժողովն ընտրվում է հինգ տարի ժամկետով:

Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանինգ տարին լրացած, այլ պետության քաղաքացի չհանդիսացող, վերջին հինգ տարում Հայաստանի քաղաքացի հանդիսացող, վերջին հինգ տարում Հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք:

Ազգային ժողովի ընտրություններն անցկացվում են համամասնական և մեծամասնական ընտրակարգերով: 90 պատգամավոր ընտրվում է համամասնական ընտրակարգով, Հանրապետության ողջ տարածքն ընդգրկող մեկ բազմամանդատ ընտրատարածքից՝ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակներով առաջադրված պատգամավորի թեկնածուների թվից, 41 պատգամավոր ընտրվում է մեծամասնական ընտրակարգով՝ յուրաքանչյուր ընտրատարածքից մեկ պատգամավոր:

Յուրաքանչյուր ընտրող ունի մեկ ձայնի իրավունք՝ համամասնական ընտրակարգով ընտրության, և մեկ ձայնի իրավունք՝ մեծամասնական ընտրակարգով ընտրության ժամանակ:

## **3. <<ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Համայնքի ղեկավարի ընտրության ժամանակ համայնքի տարածքում կազմավորվում է միամանդատ մեծամասնական ընտրատարածք:

Համայնքի ավագանու ընտրության ժամանակ համայնքի տարածքում կազմավորվում է մեկ բազմամանդատ մեծամասնական ընտրատարածք:

Համայնքի ավագանին բաղկացած է հինգից քսանմեկ անդամից, Երևանի ավագանին՝ 65 անդամից:

*Համայնքի ավագանին բաղկացած է՝*

- *հինգ անդամից՝ մինչև 1 000 ընդունող ունեցող համայնքում.*
- *յոթ անդամից՝ 1 000-ից մինչև 2 000 ընդունող ունեցող համայնքում.*
- *ինն անդամից՝ 2 000-ից մինչև 4 000 ընդունող ունեցող համայնքում.*
- *տասնմեկ անդամից՝ 4 000-ից մինչև 10 000 ընդունող ունեցող համայնքում.*
- *տասնհինգ անդամից՝ 10 000-ից մինչև 70 000 ընդունող ունեցող համայնքում.*
- *քսանմեկ անդամից՝ 70 000-ից ավելի ընդունող ունեցող համայնքում:*

Համայնքի ղեկավար կարող են ընտրվել 25 տարին լրացած, ընտրություն անցկացվող համայնքի բնակչության ռեգիստրում մինչև քվեարկության օրը առնվազն վերջին 6 ամիսը հաշվառված, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձինք:

Համայնքի ավագանու անդամ կարող են ընտրվել 21 տարին լրացած, ընտրություն անցկացվող համայնքի բնակչության ռեգիստրում մինչև քվեարկության օրը առնվազն վերջին վեց ամիսը հաշվառված, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձինք:

Համայնքի ղեկավարն ու ավագանին, այդ թվում՝ Երևանի ավագանին, ընտրվում են չորս տարի ժամկետով:

Համայնքի ղեկավարի և ավագանու, այդ թվում՝ Երևանի ավագանու անդամի թեկնածու չեն կարող առաջադրվել սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, դատախազները, ոստիկանությունում, ազգային անվտանգությունում, դատական ակտերի հարկադիր կատարման, փրկարարական, հարկային, մաքսային մարմիններում, քրեակատարողական հիմնարկներում ծառայողները, զինծառայողները, ընտրական հանձնաժողովի անդամները:

Իշխանության մարմինը	Ով կարող է ընտրվել	Ինչ ժամկետով է ընտրվում	Քանի անդամից է կազմված իշխանության մարմինը (Ազգային ժողովը, համայնքի ավագանին)
ՀՀ Նախագահ			
ՀՀ Ազգային ժողով			
ՀՀ տեղական ինքնակառավարման մարմին			
Համայնքի ղեկավար			
Ավագանի			

## *Բառարան*

**Լեգիտիմ** – բառացի նշանակում է *օրինական*: Տվյալ դեպքում նկատի է առնվում իշխանության ձևավորման օրինական լինելը:

**Համամասնական ընտրակարգ** – << Ազգային ժողովի 90 պատգամավոր ընտրվում է Հանրապետության ողջ տարածքն ընդգրկող մեկ բազմամանդատ ընտրատարածքց՝ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակներով առաջադրված պատգամավորի թեկնածուների թվից:

**Մեծամասնական ընտրակարգ** – Աժ 41 պատգամավոր ընտրվում է մեծամասնական ընտրակարգով, այսինքն՝ յուրաքանչյուր ընտրատարածքից մեկ պատգամավոր:

Յուրաքանչյուր ընտրող ունի մեկ ձայնի իրավունք՝ համամասնական ընտրակարգով ընտրության, և մեկ ձայնի իրավունք՝ մեծամասնական ընտրակարգով ընտրության ժամանակ, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

## Գլուխ 9

### Ընտանեկան իրավունք

#### **Դերային խաղ 1. Դափական նիստ**

**Նիստի քննության առարկան – Ամուսնալուծության հարց**

**Ամուսնական գժտության պատճառը.**

Ամուսինը դեմ է, որ կինը շարունակի աշխափանքային գործունեությունը:

Կինը կպրականապես դեմ է դրան:

**Դատավորը լրացուցիչ ժամանակ է տալիս ամուսիններին և առաջարկում.**



հաշվի առնելով անչափահաս երեխաների առկայությունն ընտանիքում, կրկին խորհել և հաշտության ուղիներ որոնել:

**Համարեղ քննարկման ընթացքում պարզաբանեք կողմերի դիրքորոշումը և փորձեք գտնել խնդրի լուծման գարբերակներ:**

#### **Դերային խաղ 2. Ընդունեկան դեսարան**

Երիտասարդ ամուսինները քննարկում են շատ կարևոր հարց. ամուսնու ծնողներին օգնելու խնդիրը:

**Կինն առաջարկում է. ապրուստը հոգալու համար ամսական որոշակի գումար ուղարկել նրանց:**

**Ամուսինն առաջարկում է. համատեղ ապրելու համար տեղափոխել նրանց քաղաք, քանի որ գյուղում նրա՝ ծերունական տարիքի հասած ծնողներն ի վիճակի չեն ինքնուրույն հոգալ իրենց ապրուստը անգամ այդ գումարն ուղարկելու պարագայում:**

**Կինն առարկում է, իմնավորելով, որ իրենց ոչ մեծ քնակարանն այդպիսի հնարավորություններ չունի և հազիվ բավարարում է իրենց ու երեխաների կարիքները:**

**Վեճը թեժանում է...**

**Քննարկման ընթացքում բացաբերեք կողմերի դիրքորոշումը և փորձեք գտնել խնդրի լուծման գարբերակներ:**

**Ձեր կողմից առաջարկվող գարբերակները իմնավորելիս օգտվեք սփորև սրված նյութից:**

**Հարց ու պատասխան**

## **Հարց 1. Հարկապես հաճախակի են գույքային վեճերն ամուսինների միջև: Դրանք ինչպես են կարգավորվում:**

Նախ նկատի պետք է ունենալ, որ օրենքով ճանաչվում է պետական գրանցում ստացած ամուսնությունը: Համաձայն Ընտանեկան օրենսգրքի 9-րդ հոդվածի՝ «Ամուսինների իրավունքները և պարտականությունները ծագում են ամուսնությունը քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում գրանցման պահից»:

2007 թ. ընդունված օրենքով ճանաչվում է նաև ամուսնության Եկեղեցական գրանցումը:

### **Ամուսնությունների գրանցումը Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու կողմից**

Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև ստորագրված համաձայնագրով սահմանված կարգին համապատասխան, Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ կանոնական ծեսով իրագործած ամուսնություններն ու հոչակած ամուսնալուծությունները:

«Օրենք <<Հայաստանի Հանրապետության եվ Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին>>  
(ընդունված է 2007 թվականի փետրվարի 22-ին), հոդված 9

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի՝

1. Ամուսնության ընթացքում ամուսինների ծեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ նրանց միջև կնքված պայմանագրով:
2. Մինչև ամուսնությունն ամուսիններից յուրաքանչյուրի գույքը, ինչպես նաև ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը նրա սեփականությունն է»:

Հոդվածով պարզաբանված են նաև անհատական օգտագործման իրերի, ինչպես նաև ամուսինների ընդհանուր գույքի հաշվին ամուսիններից մեկին պատկանող գույքի բարելավումների կատարման հետ կապված խնդիրները:

Ընտանեկան օրենսգիրքը նախատեսում է ամուսինների միջև ամուսնության պայմանագրի կնքում, որով կարող են սահմանվել միմյանց միջև ամուսնության ընթացքում

իրականցվող ծախսերի և եկամուտների բախշման առանձին կարգ: Այս դեպքում գույքի բաժանման հարց առաջանալիս գործում է պայմանագիրը:

Ամուսնության պայմանագրի բացակայության դեպքում, ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքն ամուսինների միջև ենթակա է բաժանման հավասար բաժիններով՝ անկախ տվյալ գույքի ձեռքբերմանը նրանցից յուրաքանչյուրի մասնակցության աստիճանից:

**Հարց 2. Միմյանց նկաղմամբ ինչպիսի՞ իրավունքներ և պարտականություններ ունեն չգրանցված ամուսնության մեջ գտնվող անձիք:**

Եթե գրանցված ամուսնության մեջ գտնվող ամուսինների ամուսնության ընթացքում գույքի նկատմամբ հավասար իրավունքները ծագում են օրենքի ուժով հենց միայն գրանցված ամուսնության փաստի հիման վրա, ապա չգրանցված ամուսնության մեջ գտնվող (փաստացի ամուսնական հարաբերություն) ամուսինները, միմյանց հետ գույքային վեճ ունենալիս, յուրաքանչյուրը պարտավոր է ապացուցել տվյալ գույքի ձեռքբերմանն իր մասնակցության աստիճանը: Իրավիճակը չի փոխում նաև երեխաների առկայությունը՝ երեխաներն իրենց ծնողների գույքի նկատմամբ ունեն միայն ժառանգության իրավունք, ծնողների կենդանության օրոք ծնողների գույքի նկատմամբ համասեփականատեր չեն դառնում:

«Ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված է. «Երեխան սեփականության իրավունք չունի ծնողների գույքի նկատմամբ, իսկ ծնողները սեփականության իրավունք չունեն երեխայի գույքի նկատմամբ: Համատեղ ապրող երեխաները և ծնողները կարող են օգտվել միմյանց գույքը տիրապետելու և օգտագործելու իրավունքից փոխադարձ համաձայնությամբ»: Այդ հարցերը կարգավորվում են քաղաքացիական օրենսգրքով:

**Հոդված 35.** Ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է:

Ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը իրենց կամքի ազատ արտահայտությամբ ունեն ամուսնանալու ու ընտանիք կազմելու իրավունք: Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս նրանք օգտվում են հավասար իրավունքներից:

Մայրության հետ կապված պատճառներով աշխատանքից ազատելն արգելվում է: Յուրաքանչյուր աշխատող կին հիլիության և ծննդաբերության դեպքում ունի վճարովի արձակուրդի և նոր ծնված երեխայի խնամքի կամ երեխայի որդեգրման համար արձակուրդի իրավունք:

**Հոդված 36.** Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար:

Ծնողական իրավունքներից զրկելը կամ դրանց սահմանափակումը կարող է կատարվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

Զափահաս աշխատունակ անձինք պարտավոր են հոգ տանել իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների համար:

### **Ամուսինների իրավահավասարությունն ընտանիքում**

1. Ամուսիններից յուրաքանչյուրն ազատ է աշխատանք, զբաղմունք, մասնագիտություն, բնակության վայր ընտրելու հարցում:
2. Մայրության, հայրության, երեխաների դաստիարակության և կրթության, ինչպես նաև ընտանեկան կյանքի այլ հարցեր ամուսինները համատեղ լուծում են՝ ելնելով ամուսինների իրավահավասարության սկզբունքից: ...

«Ընդանեկան օրենսգիրը, հոդվ. 24

### **Ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու երեխայի իրավունքը**

1. Երեխա է համարվում տասնութ տարին չորացած անձը:
2. Յուրաքանչյուր երեխա ունի ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու (որքան դա հնարավոր է), նրանց հետ համատեղ ապրելու իրավունք, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է հակասել երեխայի շահերին:

Երեխան ունի նաև իր ծնողներից դաստիարակություն ստանալու, նրա շահերի ապահովության, համակողմանի զարգացման, նրա մարդկային արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունք: ...

«Ընդանեկան օրենսգիրը, հոդվ. 41

### **Ծնողների ապրուստը հոգալով՝ չափահաս զավակների պարտականությունները**

1. Աշխատունակ չափահաս զավակները պարտավոր են պահել իրենց անաշխատունակ և օգնության կարիք ունեցող ծնողներին և հոգ տանել նրանց մասին:
2. Ավիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում օգնության կարիք ունեցող ծնողների համար նրանց չափահաս աշխատունակ զավակներից այմենտը բռնագանձվում է դատական կարգով: ...

«Ընդանեկան օրենսգիրը, հոդվ. 75

## **Համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը տիրապետելը, օգտագործելը և տնօրինելը**

1. Համատեղ սեփականության մասնակիցները միասին տիրապետում և օգտագործում են ընդհանուր գույքը, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ:
2. Համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինվում է բոլոր մասնակիցների համաձայնությամբ, անկախ այն բանից, թե մասնակիցներից ովք է կնքում գույքը տնօրինելու գործարքը:
3. Համատեղ սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի կնքել ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ: ...

## **Համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը բաժանելը և դրանից բաժին առանձնացնելը**

1. Համատեղ սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանվում կամ նրանցից մեկի բաժինն առանձնացվում է ընդհանուր գույքի նկատմամբ իրավունքում մասնակիցներից յուրաքանչյուրի բաժինը նախապես որոշելուց հետո:
2. Ընդհանուր գույքը բաժանելիս և դրանից բաժին առանձնացնելիս համատեղ սեփականության մասնակիցների բաժինները համարվում են հավասար, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ մասնակիցների համաձայնությամբ: ...

«քաղաքացիական օրենսգիրք, հոդ. 198, 199

## **Իրավիճակի նկարագրություն**

Ամուսնալուծությունից հետո դատարանի վճռով քաղաքացի Զարուիի Լսոնյանի խնամքին հանձնվեցին Երկու անչափահաս Երեխաները: Նոյն վճռով Երեխաների հորը՝ Սարիբեկ Համբարյանին, չտրամադրվեց Երեխաների հետ տեսակցության իրավունք:

Հայցադիմումով հայրը դիմում է դատարան՝ պահանջելով վերականգնել իր իրավունքները՝ տրամադրել Երեխաների հետ տեսակցության ժամանակացուցք:

## **Հարցեր**

1. Արդարացի՛ է արդյոք դատարանի վճիռը Սարիբեկ Համբարյանի նկատմամբ:
2. Ո՞ր դեպքում դատարանը կարող է սահմանափակել Երեխաների հետ տեսակցության իրավունքը:
3. Ինչպե՞ս կարող է Ս. Համբարյանը վերականգնել իր իրավունքները:

## **Օգտակար հղումներ**

- ❖ «ՀՀ ընտանեկան օրենսգիրք» ընդունված 2004 թվականի նոյեմբերի 9-ին (գլուխ 1-14)

<http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2124&lang=arm>

- ❖ «ՀՀ քաղաքացիական օրենսգիրք» (գլուխ 20)

<http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1556>

## Գլուխ 10

### Քրեական գործով վարույթը, ձերբակալումը, կալանավորումը, բերման ենթարկելը

Անձնական խուզարկությունը, բնակարանի խուզարկությունը, կասկածյալի և  
մեղադրյալի իրավունքները

#### 1. Քրեական գործի հարուցման առիթները և հիմքերը

Քրեական գործ կարող է հարուցվել օրենքով նախատեսված առիթների և հիմքերի



առկայության դեպքում, երբ բացակայում են քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները:

Ըստ << քրեական դատավարության օրենսգրքի 176 հոդվածի՝ քրեական գործ հարուցելու առիթներն են՝

1. Հանցագործությունների մասին

ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին

2. Հանցագործության մասին լրատվության միջոցների հաղորդումները

3. Հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս:

Քրեական գործ հարուցելու առավել հաճախակի հանդիպող առիթներից է ֆիզիկական անձանց հաղորդումները (քր. դատ. օր. հոդվ. 176, կետ 1): Քրեական գործի հարուցման առիթ կարող է լինել ոչ թե ցանկացած, այլ միայն հանցագործության մասին արված հաղորդումը, որը պետք է տեղեկություններ բովանդակի այն արարքի մասին, որն ըստ քրեական օրենքի հանցագործություն է:

Հանցագործության մասին ֆիզիկական անձանց հաղորդումները կարող են լինել գրավոր կամ բանավոր:

Եթե լրացել է դիմողի 16 տարին, նա նախազգուշացվում է ակնհայտ սուտ մատնության համար պատասխանատվության մասին, ինչը հաստատում է իր ստորագրությամբ (քր.դատ.օր.հոդվ. 177, մաս 1,2,3):

Օրենքով սահմանված կարգը, համաձայն որի ֆիզիկական անձը ստորագրում է իր հաղորդումը և նախազգուշացվում սուտ մատնության համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին, կարևոր երաշխիք է հավաստի տվյալների

ստացման համար, որոնց հիման վրա պետք է լուծվի քրեական գործ հարուցելու հարցը:

Հանցագործության մասին ահազանգը, հեռախոսազանգը կամ կապի այլ միջոցներով հաղորդումը, նույնիսկ այն դեպքում, եթե տվյալ անձը հայտնում է իր տվյալները, քրեական գործ հարուցելու առիթ չեն:

Այդպիսի հաղորդումները պետք է գրանցվեն ոստիկանության մարմինների հերթապահ մասում և անմիջապես ստուգվեն տվյալ մարմնի լիազորության շրջանակներում: Փաստերը հաստատվելու դեպքում որպես քրեական գործի հարուցման առիթ հանդիսանում է հետաքննության մարմնի կողմից հանցագործության հատկանիշների հայտնաբերումը:

Քրեական գործ հարուցելու առիթ չի կարող ծառայել անանուն հաղորդումը:

Այդպիսիք կարող են լինել չստորագրված կամ կեղծ ստորագրությամբ կամ մտացածին անձի անունից գրված նամակը, հայտարարությունը կամ հանցագործության մասին այլ անանուն հաղորդումը (քր. դատ. օր. հոդվ. 177, մաս 7):

Իհարկե, հանցագործության մասին անանուն հաղորդումը քրեական գործ հարուցելու առիթ չէ, սակայն այն՝ որպես հանցագործության մասին ահազանգ, պետք է ստուգվի հետաքննության մարմնի կողմից օպերատիվ հետախուզական ճանապարհով:

Հետաքննության մարմին, քննիչին կամ դատախազին մեղայականով ներկայանալը՝ անձի կամովին ներկայանալն ու իր կողմից կատարված հանցագործության մասին հայտնելն է:

Հանցագործության մասին անձի հաղորդումը կարող է ճանաչվել մեղայականով ներկայանալ, եթե տվյալ հանցագործությունն իրավապահպան մարմիններին հայտնի չի եղել կամ հայտնի է եղել, բայց չի բացահայտվել, այսինքն՝ քննությանը պարզ չի եղել հանցագործություն կատարած անձը:

Մեղայականով ներկայանալը << գործող քրեական օրենսդրությամբ դիտվում է որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք: Եթե հանցագործություն կատարած անձն իր մեղավորության մասին հայտարարում է քննության ընթացքում, այսինքն՝ իր նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուց հետո, ապա այն դատարանի կողմից չի կարող գնահատվել որպես մեղայականով ներկայանալ:

Քրեական գործի հարուցման առանձին առիթ է նախապատրաստվող, կատարվող կամ կատարված հանցագործության մասին իրավաբանական անձանց հաղորդումները:

Հանցագործության մասին հաղորդումներ կարող են ներկայանել ոչ միայն պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները, այլև մասնավոր

ձեռնարկությունները և կազմակերպությունները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գործող արտասահմանյան իրավաբանական անձինք (օրինակ՝ դեսպանատները, հյուպատոսությունները, տուրիստական և մարզական կազմակերպությունները և այլն):

Քրեական գործի հարուցման առանձին առիթ են հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները (քր. դատ. օր. հոդվ. 176, կետ 2):

Լրատվության միջոցների հաղորդումներ են հանդիսանում կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների մասին հաղորդումները մամուլում, ռադիոյով, հեռուատատեսությամբ, ինչպես նաև լրատվության միջոցներին հասցեագրված և չիրապարակված հաղորդակցություններում (քր. դատ. օր., հոդվ. 179, մաս 1):

Հանցագործության մասին հաղորդումը հրապարակած լրատվության միջոցը պետք է գրանցված լինի օրենսդրությամբ սահմանված կարգով: Եթե նույնիսկ հանցագործության մասին տեղեկությունները հրապարակվել են զանգվածային լրատվության միջոցներում, այլ ոչ թե ուղարկվել են հետաքրնության մարմին, քննիչին կամ դատախազին, այնուամենայնիվ վերջիններս պարտավոր են դրանք քննարկել և ստուգել:

Քրեական գործի հարուցման դրամածված առիթներից է հեղաքրնության մարմնի, քննիչի, դադախազի, դադարանի, դադավորի կողմից հանցագործության մասին դվյալների, հանցագործության նյութական հեղքերի և հեղևանքների հայդնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս (քր. դատ. օր., հոդվ. 176, կետ 3):

Հեղաքրնության մարմինը և քննիչը հանցագործության մասին տեղեկություններ կարող են հայտնաբերել իրենց վարույթում եղած քրեական գործի քննության ընթացքում: Ինչ վերաբերում է հետաքրնության մարմնին, ապա այն հանցագործության հատկանիշներ կարող է հայտնաբերել նաև օպերատիվ հետախուզական միջոցառումներ իրականացնելիս և վարչական գործունեության ընթացքում (օրինակ՝ հասարակական կարգի պահպանությունն ապահովելիս, ճանապարհային երթևեկության անվտանգությունը պահպանելիս և այլն):

Քրեական գործ հարուցելու հիմքեր ասելով՝ հասկանում ենք օրենքով սահմանված առիթներում դեղ գրած այն դվյալները, որոնք վկայում են հանցագործության հարկանիշների առկայության մասին:

## **Քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները**

Հետքնության մարմնի, քննիչի կամ դատախազի կողմից քրեական գործի հարուցումը մերժելով՝ դադարեցվում է ոչ միայն քրեական դատավարության տվյալ փուլը, այլև քրեական դատավարությունն ամբողջությամբ:

Քրեական գործի հարուցման առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին (քր. դատ. օր., հոդվ. 185, մաս 1):

Եթե օրենքով նախատեսված 10 օրվա ընթացքում հնարավոր չէ հավաքել բավարար տվյալներ հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշների առկայության մասին, ապա քրեական գործի հարուցումը պետք է մերժվի:

Համաձայն << քրեական դատավարության օրենսգրքի 35 հոդվածի 1-ին մասի՝ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործով վարույթը ենթակա է կարճման, եթե առկա են օրենքով նախատեսված ներքոհիշյալ հիմքերից որևէ մեկը.

1. **Բացակայում է հանցագործության դեպքը:** Այդպիսի իրավիճակ կարող է ստեղծվել, եթե դեպքը, որի մասին հաղորդում է ստացվել, ընդհանրապես տեղի չի ունեցել:
2. **Արարքի մեջ հանցակազմ չկա:** Այս հանգամանքը կարող է առկա լինել այն դեպքում, եթե արարքը (գործողությունը կամ անգործությունը) չի բովանդակում հանցակազմի որևէ տարր: Այդպիսի վիճակ առաջանում է այն դեպքում, եթե արարքը գնահատվում է որպես վարչական իրավախսատում, քաղաքացիական խախտում, կարգապահական զանցանք կամ պատահար:
3. **Վնաս պակասառած արարքը քրեական օրենքով համարվում է օրինաչափ:** Չնայած արարքն արտաքին հատկանիշներով նման է հանցագործության, բայց քրեական օրենքն այն համարում է օրինաչափ (օրինակ՝ անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում կատարված սպանությունը):
4. **Օրենքով նախադեսված դեպքերում բացակայում է դիմողի բողոքը:** << քրեական դատավարության օրենսգրքի 183 հոդվածով սահմանված են այն հանցագործությունները, որոնք կարող են հարուցվել միայն տուժողի բողոքի հիման վրա: Նշված դեպքերում արարքի գնահատումը կախված է անձի վերաբերմունքից, որը հանցագործությունից ֆիզիկական կամ բարոյական

վնաս է կրել: Այդպիսի բողոքի բացակայությունը արգելք է քրեական գործի հարուցման համար:

5. *Օրենքով նախարեսված դեպքերում փուժողը հաշտվել է կասկածյալի կամ մեղադրյալի հետ (քր. դադ.օր.հոդվ. 35, մաս. 1, կետ 5):* Մասնավոր հետապնդման գործորեն քրեական գործ հարուցվում է միայն տուժողի բողոքի հիման վրա, իսկ կասկածյալի կամ մեղադրյալի հետ նրա հաշտվելու դեպքում այն ենթակա է կարճման;
6. *Անցել են վաղեմության ժամկետները:* Քրեական օրենսդրությամբ նախատեսված են քրեական պատասխանատվության ենթարկելու տարբեր ժամկետներ, որոնց անցնելու դեպքում քրեական գործ չի կարող հարուցվել, եթե վաղեմության ընթացքը չի կասեցվել կամ ընդհատվել:  
Վաղեմության ընթացքը կասեցվում է, եթե հանցագործություն կատարած անձը թաքնվում է քննությունից կամ դատից:
7. *Անձի նկատմամբ կա նոյն մեղադրանքով օրինական ուժի մեջ մտած դադարքիո կամ դադարանի այլ որոշում, որը հասկարում է քրեական հեղապնդման անհնարինությունը:*  
Ոչ ոք չի կարող նոյն արարքի համար կրկին դատապարտվել: Այն դեպքում, եթե նոյն անձի վերաբերյալ նոյն դեպքի առիթով կա օրինական ուժի մեջ մտած դատավճիռ (մեղադրական կամ արդարացման), նոյն հանցագործության փաստով քրեական գործ չի կարող հարուցվել:
8. *Անձն արարքը կարարելու պահին չի հասել քրեական պատաժանապեսվության ենթարկելու՝ օրենքով նախարեսված դարիքին:*

Քրեական պատասխանատվության ենթակա են այն անձինք, որոնց 16 տարին լրացել է նախքան հանցագործություն կատարելը: Որոշ հանցագործությունների համար քրեական պատասխանատվության ենթակա են նաև 14-16 տարեկան դարձած անձինք (օրինակ՝ սպանության, առողջությանը քայլքայող դիտավորյալ մարմնական վնասվածքներ հասցնելու, բռնաբարության, ավազակության և այլ հանցագործությունների համար):

## 2. Խուզարկություն. տեսակները, կատարելու հիմքերը և կարգը

Խուզարկությունն իրենից ներկայացնում է գործի համար նշանակություն ունեցող առարկաների ու փաստաթղթերի որոնման (գտնելու) և վերցնելու գործողություն: Քննիչը խուզարկություն է կատարում, եթե բավարար հիմքեր ունի ենթադրելու, որ որևէ շենքում կամ այլ տեղ կամ որևէ անձի մոտ գտնվում են հանցագործության գործիքներ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաներ, ու արժեքներ,

ինչպես նաև այլ առարկաներ ու փաստաթղթեր, որոնք կարող են նշանակություն ունենալ գործի համար: Խուզարկության կատարման նպատակն է հայտնաբերել և վերցնել նշված առարկաներն ու փաստաթղթերը: Սակայն խուզարկություն կարող է կատարվել նաև հետախուզվող անձանց, ինչպես նաև դիակները հայտնաբերելու համար (քր. դատ. օր. հոդվ. 225, մաս 2):

Ըստ խուզարկության օբյեկտի՝ քրեական դատավարության օրենսգիրքը տարբերում է

- շենքի կամ այլ տեղի խուզարկություն,
- բնակարանի խուզարկություն,
- անձնական խուզարկություն:

Շենքի կամ այլ տեղի խուզարկությունը կատարվում է միայն քննիչի՝ խուզարկություն կատարելու մասին որոշման հիման վրա: Անձնական խուզարկությունը կարող է կատարվել նաև առանց այդ մասին որոշում կայացնելու: Բնակարանի խուզարկությունը կատարվում է միայն դատարանի որոշմամբ:

Համաձայն << քրեական դատավարության օրենսգրքի 6 հոդվածի 46-րդ կետի՝ <<բնակարան>> հասկացությունը ենթադրում է շենք կամ շինություն, որը մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվում է որոշակի անձի կամ անձանց բնակության համար, այդ թվում՝ սեփական կամ վարձակալած բնակարանը, այգետնակը, հյուրանոցային համարը, նավախցիկը, գնացքի ճամփորդախցիկը, համապատասխանաբար՝ նրանց անմիջական հարող ծածկապատշգամբները, սանդղավանդակները, վերնասրահները, պատշգամբները, ընդհանուր օգտագործման տարածքը, ինչպես նաև դրանց այլ բաղկացուցիչ մասերը, որոնք օգտագործվում են հագուստը, գույքը պահելու, ինչպես նաև որոշակի անձի կամ անձանց այլ պահանջմունքները բավարարելու համար, բնակելի շինության նկուղը և ձեղնահարկը: <<Բնակարան>> հասկացությունն ընդգրկում է նաև մասնավոր ավտոմեքենան, գետային կամ ծովային նավը, ինչպես նաև ծառայողական անձնական աշխատասենյակը և ավտոմեքենան, արվեստանոցը:

Քանի որ խուզարկությունը, ըստ << քրեական դատավարության օրենսգրքի 57 հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի, համարվում է անհետաձգելի գործողություն, ապա այն կարող է կատարվել նաև հետաքննության մարմնի կողմից, սակայն միայն քրեական գործ հարուցելուց հետո: Հետևաբար խուզարկության կատարման ընդհանուր պայմաններն են ինչպես քրեական գործի հարուցման փաստը, այնպես էլ գործով ձեռք բերված ապացուցներով հաստատվող բավարար հիմքերը, քննիչի (հետաքննության մարմնի), իսկ բնակարանի խուզարկության դեպքում՝ նաև դատարանի որոշման առկայությունը:

Քանի որ խուզարկությունը էականորեն սահմանափակում է անձի, նրա գույքի և բնակարանի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքը, ուստի քրեադատավարական օրենքը կարգավորում է նաև խուզարկության կատարման դատավարական կարգը, խուզարկության արձանագրությանը ներկայացվող պահանջները (քր. դատ. օր., հոդվածներ 227-231):

Համաձայն այդ կարգի՝ քննիչը իրավունք ունի մուտք գործել բնակելի կամ այլ շինություն՝ խուզարկություն կատարելու մասին որոշման հիման վրա:

Խուզարկություն կատարելիս պետք է ապահովվի այն անձի կամ նրա ընտանիքի չափահաս անդամի ներկայությունը, ում շենքում կամ կամ բնակարանում կատարվում է խուզարկությունը: Նրանց ներկայությունն անհնարին լինելու դեպքում իրավիրվում է բնակարանային շահագործման կազմակերպության կամ տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչը:

Անձինք, որոնց մոտ կատարվում է խուզարկություն, ինչպես նաև մասնագետը, ներկայացուցիչները և պաշտպանը իրավունք ունեն ներկա գտնվելու քննիչի բոլոր գործողություններին, անել հայտարարություններ, որոնք պետք է մտցվեն արձանագրության մեջ:

Խուզարկության արդյունավետությունն ապահովելու, ինչ- որ առարկաներ թաքցնելը կամ դուրս հանելը կանխելու համար օրենքը քննիչին իրավունք է տվել խուզարկության վայրում գտնվող անձանց արգելել հեռանալու այդտեղից, ինչպես նաև հաղորդակցություն ունենալու միմյանց և այլ անձանց հետ՝ մինչև քննչական գործողության ավարտը (քր. դատ. օր., հոդվ. 228, մաս 5):

Անձնական խուզարկությունը՝ որպես խուզարկության առանձին տեսակ, անձի հագուստի մեջ, իրերում կամ մարմնի վրա գտնվող առարկաները և փաստաթղթերը որոնելուն և վերցնելուն ուղղված գործողությունն է: Անձնական խուզարկության իրականացման իրավական հիմքերի հիմնահարցը << քրեական դատավարության օրենսգրքում հստակ սահմանված չէ: Օրենսգրքի 11 հոդվածի 6-րդ մասի, 225 հոդվածի, ինչպես նաև 229 հոդվածի համեմատական վերլուծությունը թույլ տալիս փաստելու անձնական խուզարկության երեք տարատեսակների գոյության մասին.

- անձնական խուզարկություն, որ կատարվում է քննիչի առանձին որոշման հիման վրա, երբ առկա են օրենքով սահմանված բավարար հիմքերը (քր. դատ. օր. հոդվ. 225, մաս 1),
- անձնական խուզարկություն, որ կատարվում է շինությունում խուզարկություն կատարելիս, այնտեղ գտնվող անձանց նկատմամբ, առանց առանձին որոշման կայացման (քր. դատ. օր., հոդվ. 229, մաս 1),

- անձնական խուզարկություն, առանց այդ մասին որոշում կայացնելու, օրենքով սահմանված հատուկ հիմքերի առկայության դեպքում (քր. դատ. օր., հոդվ. 229, մաս 2):

Խուզարկության արձանագրությունը քննիչը կազմում է քննչական գործողությունը ավարտելիս: Դրանում պետք է նշվեն՝ քննչական գործողության կատարման տեղը, ժամանակը, հանգամանքները, արդյոք կամովին են հանձնվել որոնվող առարկաները և անձինք, խուզարկություն կատարող անձի անունը, ազգանունը, պաշտոնը, ընթերականների անունները, ազգանունները և հասցեները, ինչպես նաև քննչական գործողության այլ մասնակիցների անունները, ազգանունները, պաշտոնները և դատավարական կարգավիճակը:

Եթե քննչական գործողությունները կատարելիս փորձեր են եղել ոչնչացնելու կամ թաքցնելու հայտնաբերված առարկաները կամ փաստաթղթերը, ապա այդ մասին նշվում է արձանագրության մեջ:

Խուզարկության արձանագրության պատճենը ստորագրությամբ հանձնվում է այն անձին, ում մոտ կատարվում է քննչական գործողությունը, կամ նրա ընտանիքի չափահաս անդամներին, իսկ նրանց բացակայության դեպքում՝ այն բնակարանային շահագործման կազմակերպության կամ տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցչին, որի տարածքում կատարվել է քննչական գործողությունը:

## Օգտակար հղումներ

- ✚ «ՀՀ քրեական օրենսգիրք» ընդունված 2003 թվականի ապրիլի 18-ին  
<http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1349>
- ✚ «ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք» ընդունված 1998 թվականի հուլիսի 1-ին <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1450>

## Գլուխ 11

### Ի՞նչ է կոռուպցիան

**1.Կոռուպցիան** (corruption) լատիներեն բառ է, որը նշանակում է այլասերում, քայլայում, կաշառում, փշացում բարքերի, սովորույթների վատացում, մարդկային լավագույն հատկանիշների արժեզրկում:

Հասկացությունը կարող է ունենալ ֆիզիկական իմաստ, ինչպես «որևէ բանի քայլայում կամ փշացում, հատկապես մասնատման կամ տարրերի քայլայման ճանապարհով, որն ուղեկցվում է փտումով...», կամ բարոյական իմաստ, ինչպես «փշացում կամ բարոյական անկում... հանրային պարտականությունների կատարման ամբողջականության խեղաթյուրում՝ կաշառառության կամ լավ վերաբերմունքի միջոցով...» :

Կոռուպցիայի սահմանումները կամ շատ նեղ են, կամ շատ լայն: Կոռուպցիան, իրոք, ունի պատճանների ու հետևանքների լայն շրջանակ, ուստի և պահանջում է բազմակողմանի մոտեցում:



Ըստ Օքսֆորդի ընդարձակ բառարանի՝ կոռուպցիա նշանակում է «պետական պարտականությունների կատարման ժամանակ կաշոքի և հովանավորչության միջոցով ամբողջականության ազնվության խեղաթյուրում և քայլայում»:

Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրում կոռուպցիան սահմանվում է այսպես՝ «անձնական կամ այլ շահադիտական նպատակով տարբեր ձևերով արտահայտված (գործողությամբ կամ անգործությամբ) ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահում»:

Կոռուպցիան սոցիալական երևույթ է, դրա ցայտուն դրսևորումն այն է, երբ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման գործառույթներով օժտված պաշտոնյաներն իրենց պաշտոնեական դիրքը և հնարավորություններն օգտագործում են շահադիտական նպատակներով՝ առաջնորդվելով անձնական կամ խմբային շահերով: Կոռուպցիան հանցագործություն է, որով պաշտոնատար անձն ի պաշտոնե ստացած իրավունքներն օգտագործում է անձնական հարստացման նպատակով, դա հասարակական իշխանության չարաշահումն է, որը վնասում է անհատի, հասարակության, պետության շահերին: Կոռուպցիան հատուկ է բոլոր հասարակարգերին:

Կոռուպցիան համալիր՝ սոցիալական, քաղաքական, տնտեսական, իրավական, բարոյական հիմնախնդիր է, ուստի դրա լուծման մոտեցումները նոյնպես պետք է համալիր լինեն:

Կոռուպցիան սկիզբ է առել վաղ ժամանակներից և շարունակվում է մինչ օրս: Նրա պատմական արմատները հանգում են բարեհաճության հասնելու համար նվերներ տալու սովորությանը: Թանկարժեք նվերն առանձնացնում էր տվյալ մարդուն մյուսների միջից և նպաստում այն բանին, որպեսզի նրա խնդրանքը կատարվի: Ուստի նախնադարյան հասարակություններում քրմերին կամ առաջնորդներին վճարելը՝ սեփական խնդիրը լուծելու համար աջակցություն ստանալու նպատակով, համարվել է համընդիանուր նորմ:

Կաշառակերությունը պատժելի արարք է համարվել Հին աշխարհում: Դեռևս Ք.ա. 18-րդ դարում Հին Բաբելոնում, Համուրապիի օրենքներով զինվորականների համար մահապատիժ էր սահմանված կաշառակերության համար:

Հին Կտակարանի Մովսես մարգարեի օրենքները նախատեսում են դատավորների կողմից կաշառք առնելու անթույլատրելիության դեպքեր, որտեղ դատավորներին պարտավորեցվում է «իրավունքը չծոել, աչառություն չանել, նվերներ չառնել, որովհետև նվերները կուրացնում են աչքաբացներին և շուտ են տախս արդարի գործը»:

Կաշառակեր դատավորների նկատմամբ առանձնապես անողոք են եղել պարսիկները: Պարսկաստանում մահապատիժ է ենթարկվել կաշառառու դատավորը: Վերջինիս մաշկահան են արել և այդ մաշկով մաշկապատել նույն դատավորի աթոռը, որպեսզի այլս ոչ մի նոր դատավոր չհամարձակվեր նման արարք կատարել:

Հին Հռոմի օրենքներում՝ 12 տախտակներից 9-րդը մահապատիժ էր նախատեսում այն դատավորի կամ միջնորդի համար, որոնք մերկացվել էին քննվող գործով դրամական միջոցներ վերցնելու մեջ:

Ըստ միջնադարյան հայ իրավունքի նշանավոր ներկայացուցիչներ Միսիթար Գոշի և Սմբատ Գունդստաբլի դատաստանագրքերի՝ նյութական կամ այլ շահագրգությամբ կողմնապահություն դրսնորած դատավորը գրկվում էր պաշտոնից:

## 2. Կոռուպցիայի դրսնորումներն ու մակարդակները

Կոռուպցիոն դրսնորումներ են այն գործողությունները, որոնք արդարության խախտումով «վաճառում են» պետական, քաղաքական և այլ որոշումները: Նման որոշումների համար կարելի է ամենատարբեր ձևերով փոխհատուցել, այսինքն, կան

կոռուպցիայի բազմաթիվ դրսնորումներ, ինչպես նաև տարբեր երկրներում որպես կոռուպցիա տարբեր հանցագործություններն են որակվում:

ՀՀ գլխավոր դատախազի 2008 թ. նոյեմբերի 19-ի թիվ 82 հրամանով լրամշակվել է կոռուպցիոն հանցագործությունների ցանկը: Ըստ այդմ՝ կոռուպցիոն հանցագործություններ են համարվում ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հետևյալ արարքները.

1. Յուրացնելը կամ վատնելը,
2. Յուրացնելը կամ վատնելը, որը կատարվել է պաշտոնական դիրքն օգտագործելով,
3. Գույքային վնաս պատճառելը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով,
4. Օրինական ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելը,
5. Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելը (փողերի լվացում),
6. Ապօրինի հակամրցակցային գործունեությունը,
7. Առևտրային կաշառքը,
8. Արիեստավարժ մարզամրցումների և հանդիսադիր առևտրային մրցույթների մասնակիցներին ու կազմակերպիչներին կաշառելը,
9. Հարկերը, սուլքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը,
10. Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելը,
11. Մաքսանենգությունը,
12. Պաշտոնական լիազորությունները չարաշահելը,
13. Պաշտոնական լիազորություններն անցնելը,
14. Ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը,
15. Կաշառք ստանալը,
16. Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալը,
17. Իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական նպատակով օգտագործելը,
18. Կաշառք տալը,
19. Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալը,

20. Կաշառքի միջնորդությունը,
21. Պաշտոնական կեղծիքը,
22. Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը, ինչպես նաև շենքերի և շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու, կանխարգելելու ուղղությամբ օրենքով սահմանված կարգով միջոցներ չձեռնարկելը,
23. Արդարադատության իրականացմանը և քննությանը խոչընդոտելը,
24. Ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը,
25. Դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից ցուցմունք տալուն հարկադրելը,
26. Ապօրինի ձերբակալելը կամ կալանավորելը,
27. Ապացուցները կեղծելը,
28. Քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելը,
29. Ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը,
30. Դատական ակտ չկատարելը,
31. Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը:

Փորձենք տալ առավել ընդհանուր և հաճախ հանդիպող կոռուպցիոն դրսնորումների մեկնաբանություններն ըստ << քրեական օրենսգրքի՝

**Կաշառք ստանալը** - պաշտոնատար անձի կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով որևէ ձևով կաշառք ստանալ՝ կաշառք տվողի օգտին կամ նրա կողմից ներկայացրած անձի օգտին, պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության և թողտվության համար:

**Կաշառք տալը** - պաշտոնատար անձին անձամբ կամ միջնորդի միջոցով դրամի, գույքի, գույքի նկատմամբ իրավունքի արժեթղթերի կամ այլ գույքային օգուտի ձևով կաշառք տալը, իր կամ իր ներկայացրած անձի օգտին պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության և թողտվության համար:

Որպես կաշառք է համարվում նվազագույն աշխատավարձի հնգապատիկը գերազանցող գումարը:

**Կաշառքի միջնորդությունը** - կաշառքի միջնորդությունը կաշառք տվողի և կաշառք ստացողի միջև կաշառքի շուրջ համաձայնության գալուն կամ արդեն կայացած համաձայնության իրականացմանը նպաստելը:

**Յուրացում և հափշտակություն** - պաշտոնատար անձի կողմից իր դիրքը չարաշահելու միջոցով կատարված հափշտակությունը և յուրացումը:

**Շորթում** - պաշտոնատար անձը պահանջում է անձից կաշառք տալ իրեն՝ հակառակ դեպքում սպառնալով ուժնահարել նրա իրավունքները կամ օրենքով պաշտպանվող շահերը, կամ էլ, թեև ուղղակիորեն չի պահանջում կաշառք տալ, բայց անձին այնպիսի պայմանների մեջ է դնում, որ վերջինս հարկադրված կաշառք է տալիս իր իրավունքներին և պաշտպանվող շահերին սպառնացող հնարավոր վտանգը կանխելու համար: Սպառնալիքի տակ գումարի կամ այլ արժեքների նկատմամբ իրավունքի հանձնում պաշտոնատար անձին՝ որոշակի գործողության կամ անգործության համար, վերջինիս դեպքում հաճախ դրսնորվում է տուժողի վերաբերյալ որոշակի տեղեկությունների բացահայտումից հրաժարում:

### **Նեպոտիզմ** - հովանավորչություն

Հովանավորչությունը ազգակիցների կամ այլ ծանոթների շահերի պաշտպանությունն է, որը կարող է դրսնորվել անհարկի խրախուսմամբ, պաշտոնի բարձրացմամբ:

**Կլիենտիզմ** - հովանավորի և այլ անձի կամ անձանց (կլիենտի) փոխահավետ պարտավորությունների և կապերի վրա հիմնված հարաբերությունների համակարգ:

**Թողտվություն** - ծառայության գծով թողտվությունը դրսնորվում է նրանում, որ պաշտոնատար անձը միջոցներ չի ձեռնարկում կաշառք տվողի կամ նրա կողմից ներկայացրած անձի թերացումները, խախտումները, ապօրինությունները կամ հանցագործությունները կասեցնելու, խափանելու, բացահայտելու ուղղությամբ:

**Պաշտոնական լիազորությունները չարաշահելը** - պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը շահադիտական, անձնական այլ շահագրգուվածությունից կամ խմբային շահերից ենելով, որն էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին կամ օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը):

**Պաշտոնական կեղծիք** - պաշտոնական անձի կողմից շահադիտական նպատակով կամ անձնական այլ դրդումներով կամ խմբային շահերից ենելով

պաշտոնական փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ կամ գրառումներ մտցնելը, կեղծում, քաղվածք կամ այլ թվական գրառումներ կամ փոփոխություններ կատարելը, ինչպես նաև կեղծ փաստաթղթեր կազմելը կամ հանձնելը:

Առանձնացվում են կոռուպցիայի այլ տարատեսակներ ևս, ինչպես, օրինակ, քաղաքական կոռուպցիան: Վերջինիս դրսևորումներից է լոբբինգի անթույլատրելի մեխանիզմների կիրառմամբ նպաստավոր որոշումների կայացումը, ընտրությունների և ընտրարշավների մասին օրենսդրության խախտումները՝ ներառյալ ընտրաշավների անօրինական ֆինանսավորումը, այդ թվում՝ անօրինական նվիրատվությունները և ներդրումները:

**Լոբբինգ** - գործընթաց, երբ իրականացվում է տեղեկությունների փոխանակում, և խմբի, կազմակերպության կամ նրա մի մասի կարծիքը փոխանցվում է հանրային պաշտոնյաներին (ընտրված կամ նշանակված)՝ ցանկալի որոշում ընդունելու համար ազդեցություն գործելու նպատակով: Որպես կանոն՝ լոբբիստական կազմակերպություններն աշխատում են անհատ քաղաքական գործիչների և պաշտոնատար անձանց հետ: Եվ այդ աշխատանքի ընթացքում ազդեցության առավել գործուն միջոցներից մեկը ֆինանսների տրամադրումն է: Լոբբիստական կազմակերպությունները փողը տրամադրում են հիմնականում նախընտրական քարոզարշավների իրականացման և քաղաքական տեղեկատվության հավաքման ու վերլուծության համար: Օրենսդրութեն թույլատրված միջոցների կողքին՝ լոբբիստական կազմակերպությունները հաճախ կիրառում են հանցավոր միջոցներ, օրինակ, շանտաժ, կաշառք, կեղծ և վարկաբեկող տվյալների տարածում այս կամ այն անձի վերաբերյալ:

Կոռուպցիան, որպես սոցիալական և իրավական երևոյթ, դիտարկվում է երկու մակարդակներում՝ ստորին (վարչական) և վերին (Էլիտար): Չնայած նրանց տարբերություններին՝ նրանք կապված են և մեկը մյուսին լրացնում են: Ներքների կոռուպցիան ընկած է մարդկանց ամենօրյա պահանջմունքների բավարարման հիմքում, այն բնորոշ է ստորին և միջին օլակների պաշտոնատար անձանց, որոնք ամենօրյա շփումների մեջ են գտնվում քաղաքացիների հետ :

Մեծ վտանգ է ներկայացնում Էլիտար կոռուպցիան: Սա հանուն անձնական շահի բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից պետական որոշումներ կայացնելիս իրենց վստահված իշխանության չարաշահումն է: Էլիտար կոռուպցիան աչքի է ընկնում իրականացնող սուբյեկտների բարձր

սոցիալական կարգավիճակով, հսկայական բարոյական և նյութական վնասով, իրադարձությունների քողարկվածությամբ և իշխանությունների հովանավորչությամբ: Այս ամենն արվում է ծայրահեռ գաղտնիության պայմաններում, որտեղ պայքարի պրոֆեսիոնալների մուտքն արգելված է, իսկ ոչ պրոֆեսիոնալը չի կարող երևություն հայտնաբերել: Էլիտար կոռուպցիան շատ ճկուն է: Եթե ներքների կոռուպցիան ազդում է ժողովրդի նյութական վիճակի վրա, ապա Էլիտար կոռուպցիան խլում է հսկայածավալ պետական և տնտեսական միջոցներ: Կոռումպացված էլիտան խելացի է, կրթված, հարուստ և իշխող: Նրա հիմնական խնդիրը թաքնված մնալն է: Դրա համար էլ էլիտար կոռուպցիային ավելի դժվար է բնորոշում տալ, քան ներքների կոռուպցիային: Եվ եթե նույնիսկ Էլիտար կոռուպցիայում կատարվում են մերկացման դեպքեր, ապա՝ միայն ինչոր մեկից ազատվելու համար:

Կոռուպցիոն երևությունների հետ մենք առնչվում ենք հասարակական կյանքի տարբեր՝ տնտեսական (հարկային, մաքսային, գյուղատնտեսության, բնապահպանության, կրթության, առողջապահության և այլն), սոցիալական, քաղաքական և մշակութային ոլորտներում:

### **3. Կոռուպցիայի պատճառներն ու հետևանքները**

Կոռուպցիայի հիմնական պատճառը մարդկային եսասիրությունն է և ազահությունը, և մենք չենք կարող կոռուպցիան համարել վարքի բացառիկ կամ հիվանդագին ծև, քանի որ մեզանից յուրաքանչյուրն էլ հակված է հոգալու իր մասին: Կոռումպացված վարքագծի գայթակղությունը մեծանում է սպառողական պահանջների աճի հետ, երբ սեփական բարեկեցության ձգտումն ավելի է կարևորվում, քան հասարակության բարեկեցությունը, որը գրեթե մոռացության է մատնվում: Դրա հետևանքով քաղաքական գործիչներն ու քաղաքացիական ծառայողներն անձնական բարեկեցության համար սկսում են չարաշահել սեփական պաշտոնը: Ականատես լինելով այս ամենին՝ Երիտասարդներն ընկալում են քաղաքացիական ծառայությունը որպես հարմարավետ ու գրավիչ ապրելակերպ: Հասարակությունը վրդովվում է կոռուպցիոն սկանդալներից, սակայն նրանց ավելի վրդովվեցնում է ոչ թե կոռուպցիայի բուն փաստը, այլ այն, որ ինչ-որ մեկն ավելի մեծ պատառ է ձեռք գցել:

Կոռուպցիայի մակարդակը կարող է կապված լինել որոշակի հասարակության մշակույթի, մտածելակերպի և ավանդույթների հետ: Օրինակ՝ կոռուպցիան որպես չարիք ավելի հեշտությամբ է ընկալվում այն հասարակությունների կողմից, որոնցում հստակ տարանջատում կա հանրային և

անձնական արժեքների միջև: Այն հասարակություններում, որտեղ կոռուպցիան մեծ տարածում ունի, շատ ավելի դժվար է փոխել կյանքի ու մտածողության սովորությունները: Կոռուպցիան ավելի հեշտությամբ է արմատավորվում կրթության և հասարակական գիտակցության ցածր մակարդակ ունեցող երկրներում:

Կան կոռուպցիային նպաստող մի շարք գործոններ՝ թույլ տնտեսություն, գործազրկություն, պետական բյուջեի վատ տնօրինում, հզոր պետությունների ու կորպորացիաների միջամտություն, գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների տարանջատման ոչ լիարժեքություն, ԶԼՄ-ների պասիվ կամ ընտրողական մասնակցությունը հասարակական կամ քաղաքական կյանքին, պետական կառավարման գործառությունների պատշաճ վերահսկողության թուլություն և այլն:

Քաղաքացիական ծառայողներին կարող են բարոյալթել ցածր աշխատավարձը, աշխատանքի որակի հետ կապ չունեցող պաշտոնի բարձրացումը, կազմակերպության անհասկանալի նպատակը, վերադասների ու ստորադասների միջև հաստատված «կլիենտիզմի» հարաբերությունները: Նման հարաբերությունների հաստատման պատճառներն են՝ ղեկավարման ցածր մշակույթը, ղեկավար անձնակազմի ծառայության երկար ժամկետը, թույլ վերահսկումն ու որոշում ընդունելու ընթացակարգերի անկատարությունը:

Կոռուպցիայի ծավալների վրա ազդող մեկ այլ գործոն է իրավական համակարգի անկատարությունը: Կոռուպցիային նպաստում են ոչ հստակ, հակասական և անընդհատ փոփոխվող օրենսդրությունը, ցածր որակավորում ունեցող դատարանները, վկաների պաշտպանության ծրագրերի բացակայությունը և այդ ամենի հետ ուղղակիորեն առնչվող՝ անվստահությունը իրավապահ մարմինների նկատմամբ: Ուստի կոռուպցիայի մակարդակն ավելի ցածր է պետականության, օրինականության ու ժողովրդավարության հին ավանդույթներ ունեցող երկրներում:

Կոռուպցիայի բարձր ինտենսիվությունն արգելք է դառնում, որ ազնիվ մարդիկ ծեռներեցությամբ զբաղվեն, հանգեցնում է բախտախնդիր, շահադիտական կապիտալի գերակշռությանը՝ ի վեհական կապիտալի: Նման իրավիճակը հասել է այնպիսի ճգնաժամային սահմանի, որից այն կողմ անխուսափելի է տնտեսական բարեփոխման ողջ հայեցակարգի փլուզումը: Հայաստանը կորցնում է արտասահմանյան տեխնոլոգիաների, փորձի և ֆինանսական ներդրումների բացարիկ կարևոր աղբյուրը, ինչպես նաև համաշխարհային տնտեսական համակարգի դինամիկ ու առողջ մասում միասնանալու հնարավորությունը: Պետական կոռումացված ապարատը

կորցնում է կառավարելիությունն ու հուսալիությունը, ինչը բացառապես վտանգավոր է տնտեսական վիճակի կտրուկ վատացման դեպքում, երբ բնակչության մեծամասնության գոյատևման նվազագույն պայմանների ապահովումը կապված է պետական կառավարման արդյունավետությունից: Կոռումպացված ապարատը բնակչության լայն խավերի մոտ ներարկել է անվստահություն վաղվա օրվա նկատմամբ, որի պատճառով թուլանում է գործնական կյանքը, ընկնում է հասարակության քաղաքական ու սոցիալական ակտիվությունը, աճում է յուրաքանչյուր անդամի ձգտումն անձնական շահի նկատմամբ: Երկրում տեղի է ունենում մարդկանց զանգվածային աղքատացում, արագ թափով աճում են արտագաղթի ծավալները:

Այսպիսով, ակնհայտ է, որ կոռուպցիայի հետագա տարածումն ու խորացումը լուրջ սպառնալիքներ են ստեղծում պետական անվտանգության համար, իրական են դառնում սոցիալական ցնցումների հավանականությունը և այլն:

Կոռուպցիան բացասաբար է ազդում ցանկացած երկրի տնտեսական և սոցիալական զարգացման վրա:

Կոռուպցիան տնտեսության վրա ունենում է այսպիսի հետևանքներ.

- Խոչընդոտում է պետության մակրոտնտեսական քաղաքականության իրականացումը:
- Հնարավորություն է տալիս հարկերից խուսափել առավել ունկորներին՝ հիմնական բեռը գցելով ավելի աղքատ քաղաքացիների վրա:
- Նվազում է հարկերի մուտքը պետքուցե, և աճում է ստվերային տնտեսությունը:
- Բերում է բյուջետային հատկացումների սահմանափակման, որի արդյունքում քաղաքացիական ծառայողները ցածր աշխատավարձ են ստանում, որն էլ իր հերթին խորացնում է հետագա կոռուպցիոն ռիսկերն ու գործողությունները:
- Նվազում է արտասահմանյան ներդրողների վստահությունը պետության նկատմամբ և նրանց ներդրումը երկրի տնտեսության մեջ:
- Հարկերի կորուստ, երբ հարկային մարմինները յուրացնում են հարկերի մի մասը:
- Արտադրական ներդրումների քացում, տնտեսական աճի դանդաղեցում:
- Զարգացող երկրներին տրամադրվող միջազգային օգնության ոչ նպատակային օգտագործում, որը կտրուկ նվազեցնում է դրա արդյունավետությունը:

- Խանգարում է առողջ մրցակցությանը, որից մեծապես տուժում են փոքր ձեռնարկությունները:

Կոռուպցիայի ազդեցությունը պետական կառավարման վրա ունենում է այսպիսի դրսևություններ.

- Նվազում են պետներդրումները և պետական պատվերով կատարվող աշխատանքների արդյունավետությունը:
- Կոռուպցիան խեղաթյուրում է պետական որոշումների իրական դրդապատճառները: Կոռումպացված քաղաքական գործիչները և ծառայողները հակված են պետական ռեսուրսներն ուղղելու գործունեության այնպիսի ոլորտների վրա, որտեղ հնարավոր չէ իրականացնել խիստ վերահսկողություն և մեծ են կաշառք կորցելու հնարավորությունները:
- Կոռումպացված կառավարությունը թույլ է և իր գործողություններում կաշկանդված, որի արդյունքում նվազում է պետության քաղաքական կայունությունը:
- Առկա է պետական ռեսուրսների ոչ արդյունավետ բաշխում ու ծախսում:
- Արիեստականորեն ստեղծված խոչընդոտների պատճառով տեղի է ունենում ժամանակի և պետական ապարատի գործունեության արդյունավետության կորուստ:
- Արձանագրվում է հասարակական սպասարկման և հանրային ծառայությունների որակի իշեցում:

Ստվերում է մնում ազգային-պետական մտածողությունը և պետական ծառայողների կողմից անհրաժեշտ ուշադրության չեն արժանանում պետության առջև կանգնած կարևոր խնդիրները, քանի որ պետական ծառայողները զբաղված են նեղ անձնական խնդիրների բավարարմամբ՝ մոռանալով աշխատանքային և ծառայողական պարտականությունների մասին:

Ինչ վերաբերում է կոռուպցիայի սոցիալական-քաղաքական բացասական հետևանքներին, ապա այն՝

- Խարխլում է հասարակության գիտակցությունը, առաջացնում դժգոհություն, աճում է սոցիալական լարվածությունը:
- Սպառնում է ժողովրդավարությանը, օրենքներին:
- Թուլացնում է իշխանության նկատմամբ հավատը, և իշեցնում մարդկանց բարոյական գիտակցության մակարդակը:
- Նվազում է քաղաքացիների մասնակցությունը հասարակական գործունեությանը, և հետաքրքրությունը ժողովրդավարական մարմինների աշխատանքի հանդեպ:



- Հանգեցնում է կազմակերպված հանցագործությունների թվի աճին:

Կոռուպցիան կործանարար ազդեցություն է ունենում իրավապահ կառուցների վրա, արդյունքում՝ օրենքի հաստատված նորմերը փոխարինվում են օրենքներով, որոնք օգտագործվում են այն մարդկանց անհատական հետաքրքրությունների օգտին, որոնք ի վիճակի են ազդել պետական ապարատի ներկայացուցիչների վրա և վճարել դրա համար:

#### **4. Իրավահավասարություն և օրենքի գերակայություն.**

##### **Կոռուպցիայի դեմ պայքարի միջոցները**

Վերջին տարիներին աշխարհի շատ պետություններ, միջազգային մարմիններ և ոչ կառավարական կազմակերպություններ լուրջ պայքար են մղում կոռուպցիայի դեմ: Այս հիմնախնդրի լուծման համար լայնածավալ գործողություններ են ձեռնարկում, սակայն արագ լուծումներ չեն լինում. կարող են լինել բնագավառներ, ուր արդյունքները միանգամից են երևում, սակայն ընդհանուր առմամբ պայքարը կոռուպցիայի դեմ երկարատև, ծանր և թերևս, անվերջանակի գործընթաց է:

Ոչ մի երկիր չի կարող հավակնել բարոյական գերակայության, անհրաժեշտ է կոռուպցիայի դեմ պայքարի հստակ ուազմավարություն, համալիր մոտեցում:

Բարոյական կողեքսները օգտակար են, բայց միայն այն դեպքում, եթե այն ստեղծող անձնակազմը հետևում է դրանց: Դրանց մշակմանը պետք է մասնակցի ողջ անձնակազմը, և նախապատրաստման ծրագրերը պետք է իրագործվեն բոլորի կողմից:

Կոռուպցիայի երևույթների կանխարգելման անհրաժեշտ պայման է օրենքի գերակայության վրա հիմնված պետական արդար կառավարման համակարգի ստեղծումը:

Կոռուպցիան հնարավոր չէ հաղթահարել առանձին ոլորտներում բարեփոխումներ իրականացնելով և ստորին օղակներում առանձին պաշտոնյաներ ձերբակալելով:

Այնուամենայնիվ, կոռուպցիայի դեմ պայքարում պատասխանատվություն ենք կրում յուրաքանչյուրս: Ամեն անգամ, երբ

հանդուրժում ենք՝ իմանալով, որ սխալ է, աչք ու ականջ ենք փակում կոռուպցիայի նկատմամբ, ինքներս ենք հարված հասցնում ազատությանը, արդարությանը:

Անհրաժեշտ է կոռուպցիայի դեմ պայքարի հստակ ռազմավարություն և հասարակության հետ կապերի ուղղությամբ արդյունավետ քարոզարշավ, այսինքն, բարեփոխումների գործընթացը պետք է ուղեկցվի հասարակության իրազեկվածության բարձրացմամբ:

«Կառավարության 2003 թ. նոյեմբերի 6-ի որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրում գործադիր իշխանության մարմիններում կոռուպցիայի դեմ պայքարի հարցում առանձնակի կարևորություն է տրվում «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքին: Օրենքն, իրոք, ուղղված է կանխարգելելու կոռուպցիայի այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք են քաղաքացիական ծառայողներին աշխատանքի ընդունելու, նրանց պաշտոնեական առաջխաղացման հարցը լուծելու և աշխատանքից ազատելու ոչ օբյեկտիվ և շահագրգիռ որոշումների ընդունումը:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածին համապատասխան, օրենքի գործողությունը տարածվում է հետևյալ մարմիններում քաղաքացիական պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն գբաղեցնող անձանց վրա:

- «Հախագահի աշխատակազմ,
- «Կառավարության աշխատակազմ,
- «Հանրապետական գործադիր մարմինների աշխատակազմեր,
- «Մարզպետարանների աշխատակազմեր,
- «Օրենքներով ստեղծված մշտապես գործող հանձնաժողովների (ծառայությունների, խորհուրդների, այդ թվում՝ քաղաքացիական ծառայության խորհրդի), բացառությամբ կենտրոնական բանկի, աշխատակազմերում:

«Կառավարությունը վերջին տարիներին մի շարք քայլեր է ձեռնարկել կոռուպցիայի դեմ պայքարում: Մասնավորապես 2003 թ. մշակել և ընդունել է «առաջին հակակոռուպցիոն ռազմավարությունը, որի նպատակն է նվազեցնել կոռուպցիայի մակարդակն այն աստիճանի, որպեսզի այն այլևս արգելք չհանդիսանա երկրի սոցիալական, տնտեսական, ժողովրդավարական զարգացման համար: Իսկ 2009 թ. «Կառավարությունը հաստատել է 2009-2012 թթ. ռազմավարությունը (մանրամասն կարելի է ծանոթանալ Հավելված 2 – ում):

Կոռուպցիայի դեմ պայքարն իր մեջ ներառում է 3 հիմնական ուղղություններ.

1. Հասարակության կողմից կոռուպցիայի և դրա հետևանքների հասարակական վտանգավորության աստիճանի գիտակցման արմատավորումը:

2. Կոռուպցիայի կանխարգելումը:

3. Օրենքի գերակայության ապահովում՝ ուղղված անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը:

Առաջին ուղղությունում կարևորվում է հակակոռուպցիոն ռազմավարության մշակման, հանրակրթության, հակակոռուպցիոն պայքարում քաղաքացիական ինստիտուտների համախմբման և անկախ ԶԼՄ-ների դերը:

Երրորդ ուղղությունում կարևորվում է իշխանությունների քաղաքական կամքի, պետական կառավարման համակարգի կատարելագործման, պետական կառավարմանը հասարակության մասնակցության, հասարակական գործնթացներին պետության միջամտության, պետական պաշտոնյաների կողմից վարչագծի կանոնների պահպանման դերը:

Երրորդ ուղղությունում կարևորվում է ուժեղ ու անկախ դատական իշխանության, օրենսդրական դաշտի հստակեցման և կարգավորման, օրենքների պարտադիր կատարման ապահովման, անձանց իրավունքների պաշտպանության և մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի դերը:

Հակակոռուպցիոն ուղղվածության օրենքների շարքին կարելի է դասել նաև «Հայաստանի Հանրապետությունում ստուգումներ կազմակերպելու և անցկացնելու մասին» <<օրենքը, որով հստակորեն կարգավորվում է ստուգումների կազմակերպման և անցկացման կարգը, կոնկրետացվում է ստուգումներ կատարելու իրավասություն ունեցող մարմինների ցանկը, սահմանափակվում է ստուգումների անցկացման պարբերականությունը, սահմանվում է ստուգող մարմինների գործողությունների բողոքարկման ընթացակարգը:

Գործադիր իշխանության մարմիններում գոյություն ունեցող կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ միջոց կարող է լինել Մարդու իրավունքների պաշտպանի հասատատությունը:

Կոռուպցիայի դեմ պայքարում կարևորվում է տնտեսվարող սուբյեկտների համար մրցակցության հավասար պայմանների ստեղծումն ու ստվերային տնտեսության կրծատումն ու վերացումը: Ստվերային տնտեսության դեմ պայքարում կարևոր դեր կարող է ունենալ «Վերահաշվարկային

համակարգի մասին» << օրենքի ընդունումը, որը կսահմանափակի ֆինանսական կանխիկ գործարքների հնարավորությունները:

Կոռուպցիայի համար պարարտ հող են ստեղծում օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնությունները, հարկային օրենսդրության բարդությունը, անուղղակի մեծ հարկերը, հարկատուների անհրազեկությունը հարկային օրենսդրության և սեփական իրավունքների մասին: Հարկային ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի և ստվերային տնտեսության վերացման հարցում չափազանց կարևոր դեր կարող է ունենալ սոցիալական ապահովագրության քարտերի համակարգի ներդրումը:

Գործադիր իշխանության ամենակոռումպացված օդակներից մեկը, հարկային մարմինների հետ մեկտեղ, շարունակում է մնալ մաքսային համակարգը: Մինչեւ մաքսային համակարգը պետական եկամուտների ապահովման, ներքին շուկայի պաշտպանվածության, ապրանքաշրջանառության կարգավորման, ստվերային տնտեսության դեմ պայքարի կարևորագույն օդակներից է:

Այսպիսով, օրենսդրությունը նախատեսում է մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս անձին իր օրինական շահերը պետական պաշտոնյանների մոտ պաշտպանել ոչ թե նրանց կաշառք տալով կամ մեկ ուրիշ ձևով շահագրգուելով, այլ դատարանի միջոցով: Այս մեխանիզմը գործադիր իշխանության նկատմամբ դատական իշխանության և հասարակության վերահսկողության հնարավորության դասական օրինակ է: Սակայն այս մեխանիզմն առայժմ չի գործում՝ դատական իշխանությունների կախյալ վիճակի և կոռումպացվածության, ինչպես նաև այն պատճառով, որ քաղաքացիները չեն վստահում դատարաններին ավելի շատ, քան նույնիսկ գործադիր իշխանությանը:

Հակակոռուպցիոն ռազմավարության հայեցակարգը ներառում է կոռուպցիայի դեմ պայքարի հետևյալ ուղղությունները.

- տնտեսական քաղաքականության բնագավառում. տնտեսության մեջ ստվերի չափերի կրճատում, բյուջետային միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործում, շուկայական մրցակցության հավասար պայմանների ապահովում, տնտեսական ազատության բարձր մակարդակի ապահովում,

- օրենսդրական դաշտի բարելավման ուղղությամբ. նպատակահարմար է կոռուպցիայի դեմ պայքարի հարաբերությունները կանոնակարգող օրենսդրական համայիր ակտերի ընդունման անհրաժեշտությունը,

- դատաիրավական համակարգում և պետական համակարգի բնագավառներում,

- միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության բնագավառում. նպատակ է դրվել կոռուպցիայի դեմ պայքարն իրականացնել Եվրոպական չափանիշներին համապատասխան, որի համար միջոցներ կձեռնարկվեն՝ միանալու միջազգային կառուցների կողմից ընդունված կոնվենցիաներին, դեկլարացիաներին, գործողությունների պլաններին,

- ժողովրդավարական հաստատությունների ուժեղացման գործում. կոռուպցիայի դեմ պայքարը կուղղվի պետական իշխանության նկատմամբ վստահության բարձրացմանը, ժողովրդավարական ինստիտուտների և քաղաքացիական հասարակության անցմանն ուղղված բարեփոխումների նկատմամբ հավատի մեծացմանը, հասարակության ներգրավմանն այս գործընթացներին, ՀԿ-ների և հասարակական-քաղաքական կազմակերպությունների գործունեության կանոնակարգմանը:

Ներկա ժամանակաշրջանում հայ հասարակությունն ապրում է անցումային շրջանին բնորոշ ճգնաժամային իրավիճակում: << - ում իրատապ է դարձել կոռուպցիայի դեմ պայքարի նկատմամբ համակարգված ու լայնածավալ մոտեցումը: Դա պահանջում է մտավոր ու բարոյական մեծ ջանքեր, ստեղծագործական մոտեցումներ, քաղաքացիական արիություն, նաև՝ ոչ ստանդարտ ու կտրուկ միջոցների դիմելու պատրաստակամություն:

Հակակոռուպցիոն քաղաքականության մարտավարությունը պետք է ներառի միջոցառումներ, որոնք ուղղված են պետության ու հասարակության բազմակողմ ու հետևողական ջանքերի իրականացմանը, վերացնելու տարբեր մակարդակներում կոռուպցիան ծնող բարենպաստ պայմանները, պատճառները, բարձրացնելու կոռուպցիոն իրավախախտումների բացահայտման հնարավորությունն ու պատճառված վնասի դիմաց պատժի անխուսափելիությունը, ստեղծելու հասարակության բացասական դիրքորոշում՝ կոռուպցիայի բոլոր դրսևորումների նկատմամբ:

Հաշվի առնելով տվյալ երկրում կոռուպցիայի առկայությանն ու աճին նպաստող պատճառները, հակակոռուպցիոն միջոցառումները կարող են ներառել մի շարք մեթոդներ, օրինակ՝

- պետական ծառայողների աշխատանքի ընդունման և պաշտոնի բարձրացման հստակ չափանիշների և ընթացակարգերի ընդունում,

- հասարակության և պետության համար կարևոր որոշումների ընդունման հստակ (թափանցիկ) ընթացակարգերի մշակում, որոնք հիմնվում են

անկողմնակալության և քաղաքացիների բարեկեցությունն ապահովելու ձգտման վրա,

- քաղաքական և պետական պաշտոնների սահմանազատում, տեղական իշխանության օղակների ծառայողների կուսակցական պատկանելության արգելում,

- առևտրական գործունեության արգելը քաղաքացիական ծառայողների համար,

- կուսակցությունների եկամուտների և ծախսերի թափանցիկության ու օրինականության պահանջ,

- վերահսկողություն քաղաքական գործիչների եկամուտների նկատմամբ, նրանց եկամուտների հայտարարագրում,

- քաղաքական գործիչների ստացած նվերների գրանցում,

- իրավական համակարգը լրացնող վարքականոնի մշակում քաղաքացիական ծառայողների և քաղաքական գործիչների համար,

- օրենսդրության լրամշակում՝ կոռուպցիոն վարքագծի հստակ սահմանումներով,

- քաղաքացիական ծառայողների կողմից ընդունվող որոշումների լիազորում և առավել կարևոր որոշումների կոլեգիալ ընդունման պահանջ,

- հանրային գնումների և պետական ունեցվածքի սեփականաշնորհման ընթացակարգերի բարելավում,

- հիմնարկությունում պատրաստվում են անցկացնել ատեստավորում: Այս պատճառով, հիմնարկի տնօրենը իր մոտ է կանչում աշխատակիցներին և ասում է, որ վերջիններս պետք է իրեն որոշակի գումար տան, որպեսզի չզրկվեն իրենց աշխատատեղերից,

- հիվանդը գնում է բժշկի մոտ, քանի որ ծունկը ցավում է: Հետազոտությունից հետո պարզվում է, որ ծունկը պետք է վիրահատվի, բժիշկը զգուշացնում է նրան, որ պետպատվերի շրջանակներում անվճար վիրահատության սպասում են ևս 70 հիվանդներ: Սակայն հիվանդը չի ցանկանում սպասել իր հերթին և, մեծ գումար վճարելով, վիրահատվում է նույն բժշկի մոտ:

- Հարկայինի աշխատողը մտնում է հացի փուռ և իր ուզած քանակությամբ հաց, այսուր, լավաշ և խմորեղեն է վերցնում, և տիրոջն ակնարկներով հասկացնում է, որ շուտով ստուգումներ են լինելու: Տերն էլ, որպեսզի խուսափի ավելորդ պրոբլեմներից, անվճար տալիս է նրան այդ ապրանքը:

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

### Հավելված 1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

#### Հատվածներ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքից

##### Հոդված 190. Ապօրինի ճանապարհով ստացված եկամուտներն

###### օրինականացնելը (լեզաւացնելը)

1. Ակնհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոցների կամ գույքի հետ ֆինանսական կամ այլ գործարքներ կատարելը, տվյալ նյութական արժեքները ձեռնարկատիրական կամ այլ տնտեսական գործունեություն իրականացնելու համար օգտագործելը, որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել նշված նյութական արժեքների կամ դրանց առնչվող իրավունքների բնույթը, ծագման աղբյուրները, գտնվելու վայրը, տեղաբաշխումը, շարժը կամ իրական պատկանելությունը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ առավելագույնը չորս տարի ժամկետով և տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հիսնապատիկի չափով կամ առանց դրա:

2. Նոյն արարքը, որը կատարվել է՝

1) խոշոր չափերով,

2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

պատժվում է ազատազրկմամբ չորսից ութ տարի ժամկետով գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) առանձնապես խոշոր չափերով,

2) կազմակերպված խմբի կողմից,

3) պաշտոնեական դիրքն օգտագործելով՝

պատժվում է ազատազրկմամբ վեցից տասներկու տարի ժամկետով գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

4. Սույն հոդվածում խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը), իսկ առանձնապես խոշոր չափ՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը):

### **Հոդված 195. Ապօրինի հակամրցակցային գործունեությունը**

1. Ապօրինի մենաշնորհային գներն արհեստական բարձրացնելը կամ իջեցնելը կամ պահպանելը, ինչպես նաև մրցակցությունը սահմանափակելը նախնական համաձայնությամբ կամ համաձայնեցված գործողությունների միջոցով, որն ուղղված է շուկան տարածքային սկզբունքով բաժանելուն, այլ տնտեսվարող սուբյեկտների շուկա մուտք գործելուն խոչընդոտելուն, տնտեսվարող այլ սուբյեկտներին շուկայից դուրս մղելուն, խտրական գներ սահմանելուն կամ պահպանելուն՝ պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ առավելագույնը երկու տարի ժամկետով:
2. Նույն արարքները, որոնք կատարվել են՝
  - 1) բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,
  - 2) ուրիշի գույքը վնասելով կամ ոչնչացնելով կամ ուրիշի գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքով,
  - 3) պաշտոնական դիրքն օգտագործելով,
  - 4) կազմակերպված խմբի կողմից՝ պատժվում են տուգանքով նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ երեքից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

### **Հոդված 199. Առևտրային կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկություն ապօրինի հավաքելը կամ հրապարակելը**

1. Փաստաթղթեր հափշտակելու, առևտրային կամ բանկային գաղտնիք իմացող անձանց, նրանց մերձավորին կաշառելու կամ սպառնալիքի, կապի միջոցներ որսալու, համակարգչային կամ ծրագրային համակարգ կամ ցանց ապօրինի թափանցելու, հատուկ տեխնիկական միջոցներ օգտագործելու ճանապարհով, ինչպես նաև այլ ապօրինի եղանակներով հրապարակելու կամ օգտագործելու նպատակով առևտրային կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ հավաքելը՝ պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ առավելագույնը երեք տարի ժամկետով և տուգանքով նվազագույն աշխատավարձի առավելագույնը հիսնապատիկի չափով կամ առանց դրա:
2. Առևտրային կամ բանկային գաղտնիքն առանց դրա տիրապետողի համաձայնության ապօրինի հրապարակելը կամ օգտագործելն այն անձի կողմից, ում այդ գաղտնիքը հայտնի է մասնագիտական կամ ծառայողական գործունեության հետ

կապված, որը կատարվել է շահադիտական կամ այլ անձնական դրդումներով և խոշոր վնաս է պատճառել առևտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը՝ պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով որոշակի պաշտոններ գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ գրադեցնելու իրավունքից գրկելով առավելագույնը երեք տարի ժամկետով և տուգանքով նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով կամ առանց դրա որոշակի պաշտոններ գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ գրադեցնելու իրավունքից գրկելով առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

## **Հոդված 200. Առևտրային կաշառք**

1. Առևտրային կամ այլ կազմակերպության կառավարչական գործառույթ իրականացնող ծառայողին, միջնորդ դատավորին, առողիտորին կամ փաստաբանին ապօրինաբար դրամ, արժեթղթեր, այլ գույք տալը կամ գույքային բնույթի ծառայություններ մատուցելը այդ անձանց գրաված դիրքի հետ կապված կաշառք տվողի օգտին գործողություններ (անգործություն) կատարելու համար՝ պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ գրադեցնելու իրավունքից գրկելով առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ուղղիչ աշխատանքներով առավելագույնը մեկ տարի ժամկետով:
2. Նոյն արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից՝ պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ առավելագույնը չորս տարի ժամկետով:
3. Առևտրային կամ այլ կազմակերպության կառավարչական գործառույթ իրականացնող ծառայողի, միջնորդ դատավորի, առողիտորի կամ փաստաբանի կողմից դրամ, արժեթղթեր կամ այլ գույք ստանալը իրենց գրաված դիրքի հետ կապված կաշառք տվողի, բացառությամբ իր հաճախորդի, օգտին գործողություններ (անգործություն) կատարելու համար՝ պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ գրադեցնելու իրավունքից գրկելով առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ուղղիչ

աշխատանքներով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ առավելագույնը երեք տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի երրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է շորթմամբ՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ գրադեցնելու իրավունքից գրկելով առավելագույնը հինգ տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

5. Սույն գլուխ հոդվածներում առևտրային կամ այլ կազմակերպության ծառայող է համարվում այն անձը, ով մշտապես, ժամանակավորապես կամ հատուկ լիազորությամբ իրականացնում է կարգադրիչ կամ այլ կառավարչական գործառույթներ առևտրային կազմակերպություններում անկախ սեփականության ձևից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հիմնարկներ չհամարվող ոչ առևտրային կազմակերպություններում:

Սույն հոդվածում նախատեսված հանցագործությունների համար մեղավոր անձինք դատարանի կողմից ազատվում են պատժից, եթե նրանք կամովին հայտնել են կատարված հանցանքի մասին քրեական գործ հարուցելու իրավունք ունեցող մարմնին, իսկ ապօրինի վարձատրություն ստացողները միաժամանակ վերադարձրել են ստացածը կամ հատուցել են դրա արժեքը:

#### **Հոդված 201. Արհեստավարժ մարզամրցումների և հանդիսավոր առևտրային մրցույթների մասնակիցներին ու կազմակերպություններին կաշառելը**

1. Մարզիկներին, մրցավարներին, մարզիչներին, թիմերի ղեկավարներին կամ արհեստավարժ մարզամրցումների մյուս մասնակիցներին ու կազմակերպություններին, ինչպես նաև հանդիսավոր առևտրային մրցույթների կազմակերպիչներին ու մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամներին կաշառելն այդ մրցույթների արդյունքների վրա ազդելու նպատակով՝ պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով վեց ամսից մեկ տարի ժամկետով, կամ կալանքով առավելագույնը երկու ամսի ժամկետով:

2. Նույն արարքները, որոնք կատարվել են մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից՝ պատժվում են ազատազրկմամբ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

3. Մարզիկների, մրցավարների, մարզիչների, թիմերի ղեկավարների կամ արհեստավարժ մարզամրցումների մյուս մասնակիցների կամ ղեկավարների կամ առևտրային մրցումների կազմակերպիչների ու մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամների կողմից ապօրինաբար նյութական արժեքներ ստանալը կամ գույքային բնույթի ծառայություններից օգտվելը, որոնք նրանց ակնհայտ տրվել կամ տրամադրվել են մրցումների կամ մրցույթների արդյունքների վրա ազդելու նպատակով՝ պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ գրադվելու իրավունքից գրկելով առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կալանքով երկուահից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ առավելագույնը երկու տարի ժամկետով:

## **Հոդված 202. Կեղծ փողեր կամ արժեթղթեր պատրաստելը, պահելը կամ իրացնելը**

1. Կեղծ փողեր կամ արժեթղթեր՝ իրացնելու նպատակով պատրաստելը կամ պահելը կամ դրանք իրացնելը՝ պատժվում է ազատազրկմամբ երեքից յոթ տարի ժամկետով՝ գույքի բոնագրավմամբ կամ առանց դրա:
2. Նույն արարքը, որը կատարվել է
  - 1) խոշոր չափերով,
  - 2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ պատժվում է ազատազրկմամբ վեցից տասը տարի ժամկետով՝ գույքի բոնագրավմամբ կամ առանց դրա:
3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է
  - 1) կազմակերպված խմբի կողմից,
  - 2) առանձնապես խոշոր չափերով՝ պատժվում է ազատազրկմամբ ութից տասներկու տարի ժամկետով՝ գույքի բոնագրավմամբ կամ առանց դրա:
4. Սույն հոդվածում խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը), իսկ առանձնապես խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը):

### **Հոդված 203. Կեղծ վճարային փաստաթղթեր պատրաստելը կամ իրացնելը**

1. Վճարային փաստաթղթեր, արժեթղթեր կամ արժույթ կամ արժեթուղթ չհամարվող, սակայն գույքային իրավունքների մասին վկայող, դրանք սահմանող կամ տրամադրող այլ փաստաթղթեր իրացնելու նպատակով պատրաստելը կամ իրացնելը՝

պատժվում է ազատազրկմամբ երկուսից հինգ տարի ժամկետով և տուգանքով նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով:

2. Սույն արարքները, որոնք կատարվել են՝

1) խոշոր չափերով,

2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝ պատժվում են ազատազրկմամբ երեքից վեց տարի ժամկետով գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են՝

1) առանձնապես խոշոր չափերով,

2) կազմակերպված խմբի կողմից՝ պատժվում են ազատազրկմամբ չորսից ինը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

4. Սույն հոդվածում խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկը գերազանցող գումարը, իսկ առանձնապես խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը գերազանցող գումարը:

### **Հոդված 204. Չարաշահումը արժեթղթեր թողարկելիս**

1. Առանց սահմանված կարգի գրանցման արժեթղթեր թողարկելը և դրանք իրապարակային բաշխելը կամ արժեթղթերի գրանցման համար ակնհայտ կեղծ փաստաթղթեր օգտագործելը՝ պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով կամ ուղղիչ աշխատանքներով մեկից երկու տարի ժամկետով:

2. Արժեթղթերի թողարկման հայտարարագրում ակնհայտ ոչ ստույգ տեղեկատվություն մտցնելը, ինչպես նաև ակնհայտ ոչ ստույգ տեղեկատվություն պարունակող թողարկման հայտարարագիրը կամ թողարկման ակնհայտ ոչ ստույգ արդյունքները հաստատելը, եթե այդ արարքները խոշոր վնաս են պատճառել՝ պատժվում են տուգանքով նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրա-

պատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով առավելագույնը մեկ տարի ժամկետով կամ ազատազրկմամբ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածում խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գումարը:

#### **Հոդված 214. Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելը**

1. Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից իրենց կարգադրիչ կամ այլ լիազորություններն այդ կազմակերպության շահերին հակառակ և իր կամ ուրիշ անձանց օգտին օգտագործելու կամ առավելություններ ձեռք բերելու կամ այլ անձանց վնաս պատճառելու նպատակով օգտագործելը, եթե անձանց, կազմակերպությունների կամ պետության իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս է պատճառվել՝ պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով մեկից երկու տարի ժամկետով, կամ կալանքով մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նոյն արարքը, որն առաջացրել է ծանր հետևանքներ՝ պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ առավելագույնը չորս տարի ժամկետով:

#### **Հոդված 215. Մաքսանենգությունը**

1. Մաքսանենգությունը Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների, մշակութային կամ այլ արժեքների տեղափոխումն առանց մաքսային հսկողության կամ դրանից թաքցնելով, կամ մաքսային և այլ փաստաթղթերը խարեւությամբ օգտագործելու միջոցով, եթե դրանք կատարվել են խոշոր չափերով, բացառությամբ սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված ապրանքների կամ արժեքների՝ պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

2. Շմբամիջոցների, հոգեներգործուն, խիստ ներգործող, թունավոր, թունավորող, ռադիոակտիվ կամ պայթուցիկ նյութերի, սպառազինության, պայթուցիկ սարքերի, ռազմամթերքի, հրազենի, բացի ողորկափող որսորդական հրազենից և դրա փամփուշտներից, միջուկային, քիմիական, կենսաբանական կամ զանգվածային

ոչնչացման այլ տեսակի գենքի կամ երկակի նշանակության նյութերի, սարքավորումների կամ տեխնոլոգիաների, որոնք կարող են օգտագործվել նաև զանգվածային ոչնչացման գենք կամ դրա փոխադրման հրթիռային համակարգեր ստեղծելիս կամ օգտագործելիս, ռազմավարական տեսակետից կարևոր հումքային ապրանքների կամ մշակութային արժեքների, որոնց տեղափոխման համար սահմանված են հատուկ կանոններ, մաքսանենգությունը՝ պատժվում է ազատազրկմամբ չորսից ութ տարի ժամկետով գույքի բռնագրավմամբ, կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

- 1) պաշտոնատար անձի կողմից պաշտոնական դիրքն օգտագործելով,
- 2) մաքսային հսկողության որոշակի ձևերից ազատված անձի կողմից կամ մաքսային հսկողության սահմանված ձևերից ազատված առանձին ապրանքների կամ տրանսպորտային միջոցների մաքսային սահմանի վրայով տեղափոխման համար լիազորված անձի կողմից,
- 3) մաքսային հսկողություն իրականացնող անձի նկատմամբ բռնություն գործադրելով՝ պատժվում է ազատազրկմամբ վեցից տասը տարի ժամկետով գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

4. Սույն հոդվածի առաջին, կամ երկրորդ, կամ երրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է կազմակերպված խմբի կողմից՝ պատժվում է ազատազրկմամբ ութից տասներկու տարի ժամկետով գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկից չափով կամ կալանքով երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ առավելագույնը չորս տարի ժամկետով:

### **Հոդված 310. Ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը**

Պաշտոնատար անձի կողմից, օրենքով սահմանված արգելվին հակառակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպություն հիմնադրելը կամ անձամբ կամ վստահված անձի միջոցով այդպիսի կազմակերպության կառավարմանը մասնակցելը, եթե այդ արարքները կապված են այդպիսի կազմակերպությանն արտոնություններ և առավելություններ տրամադրելու կամ այլ ձևով հովանավորելու հետ՝ պատժվում է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով և տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապա-

տիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

### **Հոդված 311. Կաշառք ստանալը**

1. Պաշտոնատար անձի կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով դրամի, գույքի, գույքի նկատմամբ իրավունքի, արժեթղթերի կամ գույքային այլ օգուտի ձևով կաշառք ստանալը, կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ իր պաշտոնեական դիրքն օգտագործելով այդպիսի գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար՝ պատժում է տուգանքով նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին ակնհայտ ապօրինի գործողության կամ անգործության համար՝ պատժում է ազատազրկմամբ երեքից յոթ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

3. Նույն արարքը, որը կատարվել է՝

- 1) շորթմամբ,
- 2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 3) խոշոր չափերով,
- 4) կրկին անգամ՝ պատժում է ազատազրկմամբ՝ չորսից տասը տարի ժամկետով՝ գույքի բոնագրավմամբ կամ առանց դրա:

### **Հավելված 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ**

**ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2009-2012 ԹՁ.**

**ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

**(մեջբերում կրթության ոլորտին առնչվող հատվածից)**

147. Կրթության ոլորտում << Կառավարությունը 2009-2012թթ. նախատեսում է էականորեն բարելավել կրթության որակը և հասանելիությունը բնակչության անապահով խմբերի համար: Այս նպատակին հասնելու նախապայմաններից մեկը

Կրթության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի էական կրճատումն է: Կրթության ոլորտի զարգացման պետական քաղաքականության երկու հիմնական ուղղությունները՝ ոլորտի ֆինանսավորման ծավալների կտրուկ աճի արդյունավետությունը և 12-ամյա հանրակրթության համակարգի գործուն ներդրումը հնարավոր է միայն այս ոլորտում կառավարման արդյունավետության բարձրացման պարագայում:

148. Հատկանշական է, որ բնակչության շրջանում կոռուպցիայի ընկալման մակարդակը մեծապես պայմանավորված է կրթության ոլորտում կոռուպցիայի տարածվածությանը տրված գնահատականով: Այսպես, բնակչության 91.8 տոկոսը կրթության ոլորտը բնորոշվել են որպես այս կամ այն չափով կոռումպացված: Քաղաքացիների նման ընկալումը, ըստ էության, պայմանավորված է նաև կրթության ոլորտի հետ բնակչության հիմնական հատվածի առավել շարունակական և հաճախակի շիռումներով: Կոռուպցիայի տարածվածության ընկալման այս ցուցանիշով կրթության ոլորտը զիջում է միայն ընտրական համակարգին:

149. Կրթության ոլորտում առավել կարևորվում են կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիք և կրթալուսավորչական միջոցների կիրառումը քաղաքացիական հասարակության ներգրավմամբ: Առանձնապես արդիական է կրթության ոլորտում առկա համակարգային կոռուպցիոն ռիսկերի բացահայտումն ու դրանց կրճատումը՝ ընթացակարգային փոփոխությունների ճանապարհով, օրինական ընթացակարգերի օգտավետության խթանումը և կոռուպցիոն երևույթների դեմ հասարակության շրջանում անհանդուժողականության վերաբերմունքի ծնավորումն ու բարոյական պատժի մեխանիզմների կիրառումը:

150. Կրթության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի միջոցներն ուղղված են, մի կողմից կրթության յուրաքանչյուր մակարդակում առկա կոռուպցիոն ռիսկերի կրճատմանը, և միաժամանակ, կրթության մեկ մակարդակից մյուսին անցնելու գործընթացում առկա կոռուպցիոն ռիսկերի բացահայտմանն ու կանխարգելմանը:

151. Կրթության ոլորտում օրինականության ապահովման նկատմամբ պետական վերահսկողության իրականացման գործում Կրթության պետական տեսչության դերակատարման մեծացումն ու կարողությունների զարգացումը պետք է ուղղված լինի ոչ միայն օրենսդրության պահանջներին անհամապատասխանության բացահայտմանը, այլ կոռուպցիայի կանխարգելմանը և տեսչության կայացմանը՝ որպես կրթության ոլորտի զարգացման քաղաքականությունն ուղղորդող մարմնի:

152. Կրթության սուբյեկտների ապակենտրոնացված կառավարման ինստիտուտը դեռևս զարգացման նախնական փուլում է, իսկ կառավարման և վերահսկողության գործառույթներում մասնակցային գործընթացներին պատշաճ դեր չի հատկացվում: Ուսումնական հաստատությունների կանոնադրությունները լիարժեք կերպով չեն

համապատասխանում գործող պրակտիկային: Պատշաճ կերպով թափանցիկ և հրապարակային չէ ուսումնական հաստատությունների կառավարմանն առնչվող տեղեկատվությունը: Գործող ընթացկարգերը կադրերի ընտրության և նշակման հայեցողական որոշումների մեջ հնարավորություններ են ստեղծում, բավարար չափով թափանցիկ չեն, չեն բացառում շահերի բախումը կադրային նշանակումներում և մասնագիտական առաջխաղացման գործում, ուստի չեն երաշխավորում ուսումնական հաստատությունների մանկավարժական որակյալ կադրերի առկայությունը և բարեխղճությունը հանրային ծառայությունների այս հատվածում: ...

154. Մտահոգիչ է նաև կրթության ոլորտում ոչ պաշտոնական վճարների առկայությունը, ինչպես նաև կրթական հաստատությունների կողմից և/կամ միջոցով մատուցվող ծառայությունների կարգավորումը: Մասնավորապես, կրթական հաստատություններում գործնականում երբեմն իրականացվում է կրթական գործընթացի հետ անմիջական կապ չունեցող գործարքներ՝ ի շահ երրորդ կողմի: Հիարժեք կերպով ապահովված չէ ուսումնական հաստատությունների գույքի և նյութական միջոցների շրջանառության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

155. Հանրակրթական դպրոցներում մի շարք կոռուպցիոն ռիսկեր պայմանավորված են անհարգելի բացակայություններով: Վերջինիս արտահայտման ձևերն են արտադասարանական պարապմունքները, աշակերտների ու ուսուցիչների միջև առկա կոնֆլիկտները, ինչպես նաև դպրոցում հայտարարված կամ սպասվող դրամահավաքից խուսափելը: Մտահոգիչ է նաև այսես կոչված, մեռած հոգիների խնդիրը, երբ աշակերտի բացակայության պայմաններում նրա գոյությունը փաստաթղթավորվում է:

156. Այսպիսով, կրթության ոլորտում թափանցիկության, հրապարակայնության, հաշվետվողականության, օրինականության ապահովման և կոռուպցիոն ռիսկերի կրճատման նպատակով անհրաժեշտ է.

- Ապահովել կրթության ոլորտի զարգացման քաղաքականության մեջ կոռուպցիոն ռիսկերի շարունակական բացահայտումն ու կանխարգելումը. ՀՀ կրթության քաղաքականության մշակման գործընթացում իրականացվող վերլուծությունների շարքում կրթության յուրաքանչյուր մակարդակում առկա կոռուպցիայի ընկալման, ռիսկերի բացահայտման, համակարգերի կառավարման թափանցիկության, մասնակցության, և այլ հետազոտություններ ներառելու, ավագ դպրոցի կառավարմանն առնչվող կոռուպցիոն ռիսկերի գնահատումն ու կանխարգելման ուղղված

մոտեցումները ներառելու, բարձրագույն և միջին մասնագիտական կրթության հաստատությունների կառավարման մարմիններում կառավարության ներկայացուցիչների կողմից առանձին հաստատությունում կառուցիոն ռիսկերի կանխարգելման և բացահայտման հարցերը կառավարման մարմնի օրակարգում պարտադիր կերպով ընդգրկման պահանջ և համապատասխան ընթացակարգեր սահմանելու միջոցով.

- Բարձրացնել կրթության ոլորտի կառավարման արդյունավետությունն ու հաշվետվողականությունը. կրթության ոլորտում վերահսկողական գործառույթներ իրականացնող և ուսումնական հաստատություններում ստուգումներ և ուսումնասիրություններ իրականացնող մարմինների լիազորությունների տարանջատումը և գործառույթները հստակեցնելու, այդ մարմինների գործունեությունը համակարգելու և դրանց միջև միջգերատեսչական համագործակցությունն ապահովելու, Կրթության պետական տեսչության նպատակների և խնդիրների իրականացմանը համահունչ օրենսդրական գործիքներ սահմանելու և ընթացակարգեր ներդնելու, կրթության ոլորտի կառավարման համակարգում կոռուպցիայի վերաբերյալ իրազեկման և հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստման ծրագրերի իրականացման միջոցով:
- Բարձրացնել հանրակրթական դպրոցների կառավարման թափանցիկությունը, իրապարակայնությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունը. դպրոցների կառավարման օրենսդրական կարգավորման գործնական պրակտիկան շարունակականորեն վերլուծելու և ամփոփելու, դպրոցների օրինակելի կանոնադրությունը գործող պրակտիկային համադրելու, << հանրակրթության ոլորտում համադրոցական ցանցի ընդլայնման և էլեկտրոնային ուսուցման բարելավման հայեցակարգին համապատասխան կրթության կառավարման տեղեկատվական համակարգ ներդնելու և դրա ընձեռած հնարավորությունների կիրառմամբ թափանցիկ և հետևողական կերպով դպրոցի կառավարմանն առնչվող լիարժեք տեղեկատվությունը, այդ թվում՝ աշակերտի առաջադիմության ցուցանիշները, դպրոցական համայնքին հասանելի դարձնելու հստակ ընթացակարգեր ներդնելու, ծնող-դպրոց գրավոր հարաբերությունների պրակտիկան, այդ թվում՝ թղթային և էլեկտրոնային կապի միջոցներով, ներդնելու, դպրոցի կառավարման և վերահսկողության գործառույթներում ծնողական, մանկավարժական և մեթոդական խորհուրդների գործուն մասնակցությունն ապահովող

ընթացակարգեր ներդնելու, ավագ դպրոցում աշակերտների, աշակերտական խորհուրդների դերը և լիազորությունները օրենսդրորեն ընդլայնելու և համապատասխան ընթացակարգեր ներդնելու, դպրոցներում պարբերական գույքագրման ընթացակարգեր և էլեկտրոնային հաշվապահության պրակտիկա ներդնելու, դպրոցներում անհարգելի բացակայությունների նկատմամբ վերահսկողությունը խստացնելու, դպրոցից դպրոց բարձր դասարաններում սովորող աշակերտների տեղաշարժերի նկատմամբ խիստ վերահսկողություն սահմանելու, դպրոցներում առկա ոչ պաշտոնական վճարումները կանոնակարգելու և ստվերային միջոցներն իրավական դաշտ բերելուն մեխանիզմներ ներդնելու, ծառայությունների դիմաց վճարումները, նվիրատվություններն ու դպրոցին՝ համայնքի ֆինանսական աջակցությունը բացառապես անկախիկ եղանակով իրականացման ընթացակարգեր ներդնելու, յուրաքանչյուր նման գործադրի պարագայում գումարի բնույթն ու հատկացման նպատակը գրավոր արձանագրելու պարտադիր պայման սահմանելու միջոցով.

- Բարձրացնել կրթական հաստատություններում կադրերի ընտրության, նշանակման, պաշտոնեական առաջնադաշտման և աշխատանքային հարաբերությունների կարգավորման թափանցիկությունը, հրապարակայնությունն ու օրինականությունը. մանկավարժական կադրերի ընտրության մրցութային գործընթացը կարգավորելու, կադրերի ընտրության, նշանակման և պաշտոնեական առաջնադաշտման հստակ մեխանիզմներ և ընթացակարգեր ներդնելու, կրթական հաստատությունների աշխատողների համար պաշտոնի նկարագրություն և վարքագծի միասնական կանոններ սահմանելու, հանրային ծառայության այս ոլորտում շահերի բախման հայտարարագրերի կիրառման կարգը սահմանելու, ուսուցչի և դասախոսի անձնական գործը որպես հրապարակային փաստաթուղթ սահմանելու և դրա հրապարակման կարգը ներդնելու, հասարակական կառույցների կողմից կրթական հաստատությունների և մանկավարժների գործունեության գնահատման ինքնակարգավորման ինստիտուտ ներդնելու միջոցով.
- Ապահովել գիտելիքի գնահատման համակարգերի թափանցիկությունն ու օրինականությունը. միջազգային լավագույն փորձի վրա հիմնված գնահատման միասնական, անկախ համակարգը լիարժեք և հետևողական կերպով ներդնելու, գնահատման համակարգի կիրառման նկատմամբ արտաքին վերահսկողություն սահմանելու և ներքին վերահսկողության հետևողական ընթացակարգեր ներդնելու, միասնական գնահատման ու

դպրոցում առկա գնահատականների վերլուծություններ պարբերաբար իրականացնելու, դրանց հիման վրա հանրակրթության քաղաքականության մեջ պարբերաբար ճշգրտումներ կատարելու, միասնական և ավարտական քննությունների ընթացակարգերի թափանցիկությունն ապահովելու, քննությունների ընթացքի նկատմամբ վերահսկողությանը հասարակական կազմակերպությունների լայն ներգրավումը կանոնակարգելու և ընթացակարգեր ներդնելու, թեստային քննությունների ընթացքում հսկիչների լիազորությունները հստակեցնելու և նրանց կողմից քննությունների կանոնները խախտող աշակերտների նկատմամբ կիրառվող պատժամիջոցների չափանիշներն ու ցանկը սահմանելու միջոցով:

### **Մարդու իրավունքները և կոռուպցիան**

Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագրի ընդունումից հետո, անցած վաթսուն տարիների ընթացքում, ստեղծվել են տարբեր մեխանիզմներ, որոնք պարտավորեցնում են պետություններին և անհատներին հաշվետու լինելու մարդու իրավունքների խախտումների համար: Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները նախատեսված են <<Սահմանադրությամբ /2 -րդ գլխում/, ինչպես նաև միջազգային փաստաթղթերով՝ Եվրոպական կոնվենցիա, Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագիր և այլն:

Մարդու (քաղաքացու) իրավունքը նրա վարքագիր թույլատրելի չափն է, որն ապահովվում է պետության կողմից: Ոչ ոք իրավունք չունի բռնություն գործադրել նրա կամքի վրա:

Պետության կողմից անձի իրավունքների ապահովման հիմնական միջոցը պարտավոր կողմի (պետական մարմնի, կազմակերպության, անձի կամ անձանց) վրա համապատասխան պարտականություն դնելն է: Օրինակ, քաղաքացին ունի կրթության իրավունք, որին համապատասխանում է պետության համապատասխան մարմնի, տվյալ դեպքում՝ կրթության և գիտության նախարարության՝ քաղաքացու կրթության իրավունքի իրականացման համար պատշաճ պայմաններ ապահովելու պարտականությունը:

### **Կոռուպցիան որպես մարդու իրավունքները խախտող գործոն**

Մեր նպատակն է ցույց տալ, թե ինչպես կարելի է ճշգրտորեն նկարագրել կապերը կոռուպցիոն գործողությունների և մարդու իրավունքների խախտումների միջև և, թե ինչպես կոռուպցիան կարող է ոտնահարել վերոհիշյալ իրավունքները:

Նախ պետք է նշել, որ կոռուպցիան տեղ է գտնում այնտեղ, որտեղ կան դրան նպաստող շեղումներ և հնարավորություններ, և եթե ի ցուց դրվի, թե կոռուպցիան ինչպես է խախտում մարդու իրավունքները, ապա դա իր ազդեցությունը կունենա հանրային վերաբերմունքի վրա: Եթե մարդիկ լավ են տեղեկացված հանրային և անձնական շահերին կոռուպցիայի հասցրած վնասի մասին, ապա անգամ աննշան կոռուպցիոն դրսուրման դեպքում, նրանք ավելի հակված կլինեն աջակցելու այն կանխելուն ուղղված գործողություններին: Կոռուպցիայի և մարդու իրավունքների միջև յուրահատուկ կապերի տարրորշումը կարող է համոզել հանրությանն ավելի կոշտ դիրքորոշում որդեգրել կոռուպցիայի դեմ պայքարում:

Թեև կոռուպցիան ոտնահարում է բոլորի իրավունքները, այնուամենայնիվ, այն անհամաչափ է ազդում մարդկանց վրա: Կոռուպցիան տարբեր կերպ է ազդում կանանց և տղամարդկանց վրա՝ ուժեղացնելով ու ամրապնդելով գոյություն ունեցող գենդերային անհավասարությունը, այն կարող է անհամամասնորեն ազդել նաև երեխաների և մեծահասակների վրա՝ խախտելով շատ իրավունքներ՝ ներառյալ կյանքի, առողջության և կրթության: Կոռուպցիան խիստ վնասակար ազդեցություն է գործում աղքատության մեջ ապրող մարդկանց կյանքի վրա. բացասաբար ազդելով տնտեսական աճի ու օտարերկրյա ներդրումների վրա՝ այն նվազեցնում է աղքատության մեջ ապրողների եկամուտը, խեղաթյուրում նրանց կենսական պահանջները բավարարելուն ուղղված քաղաքականությունը, ծրագրերն ու ռազմավարությունը:

Այժմ ներկայացնենք, թե երբ և ինչպես կարող են կապակցվել մարդու իրավունքների խախտումները և կոռուպցիոն գործողությունները:

Ե՞րբ կարող է կոռուպցիան խախտել հավասարության և ոչ խտրականության սկզբունքը:

Հավասարության և ոչ խտրականության սկզբունքները մարդու իրավունքների հիմնարար սկզբունքներն են: Մարդու իրավունքների մասին հիմնական համաձայնագրերում ամրագրված է, որ ամեն ոք հավասար է օրենքի առջև և օրենքի հավասար պաշտպանության իրավունք ունի, իսկ երբ որևէ անձնավորություն կաշառում է հանրային պաշտոնյային, նա արտոնյալ կարգավիճակ է ստանում մյուս՝ հավասար իրավունքներ ունեցող անհատների նկատմամբ, ովքեր կաշառք չեն տվել: Առողջապահության ոլորտում կոռուպցիայի հետևանքով հաճախ խախտվում է հավասարության և ոչ խտրականության իրավունքը: Հիվանդներից կաշառք պահանջելով՝ խստորեն սահմանափակվում է նրանց առողջապահության մատչելիության իրավունքը:

Երբ կարող են կոռուպցիոն գործողությունները խախտել արդար դատավարության իրավունքները:

Արդար դատավարության իրավունքը սահմանված է մարդու իրավունքներին վերաբերող մի շարք միջազգային պայմանագրերում: Այն ներառում է ստանդարտներ, որոնք նախատեսում են արդարադատության արդար, արդյունավետ ու գործուն կառավարում, իսկ երբ դատավորին կաշառք է տրվում, որպեսզի վերջինս անտեսի այն վկայությունները, որոնք այլապես կհանգեցնեին հանցավորի դատապարտմանը, կամ երբ ուստիկանության աշխատակցին կաշառք է տրվում քրեական գործին առնչվող վկայությունները կեղծելու համար, ապա նման գործողությունները պարունակում են պատշաճ դատավարության իրավունքի ուղղակի խախտում:

Երբ կարող է կոռուպցիան խախտել առողջության իրավունքը:

Կոռուպցիան առողջապահության ոլորտում կարող է հանգեցնել ուղղակի խտրականության, եթե առողջապահական ծառայություններ մատուցողները և մասնագետները տարբեր կերպ վերաբերվեն հիվանդներին՝ կախված վերջիններիս եկամուտներից կամ բժշկական անձնակազմի հետ անձնական հարաբերություններից: Եթե առողջապահական ծառայության կարիք ունեցող անձից կաշառք են պահանջում, ապա դրանով խախտվում է նրա առողջության իրավունքը, իսկ ովքեր միջոցներ չունեն կաշառք վճարելու՝ հանդիպում են բարդությունների:

Երբ կարող է կոռուպցիան խախտել կրթության իրավունքը:

Կրթության իրավունքն երաշխավորված է միջազգային մի շարք փաստաթղթերով: Պետությունները պարտավոր են բոլորի համար հասանելի և մատչելի դարձնել կրթության տարբեր մակարդակները՝ տարրական, միջնակարգ և բարձրագույն: Կրթական ոլորտում կոռուպցիոն դրսնորումները վնասում են կրթության հասանելիությանը: Զարաշահումների ամենահաճախ հանդիպող ձևերից են՝ կեղծված մրցույթներն ու հայտերը, կեղծիքները քննությունների ընթացքում և այն: Կոռուպցիան կարող է տարբեր ճանապարհներով սահմանափակել կրթության մատչելիությունը: Օրինակ, երբ երեխաներից պահանջում են ապօրինի վճարումներ տարբեր ծառայությունների դիմաց, կամ պահանջում են ծնողներից կաշառք տալ դպրոց ընդունելու, կամ ուսուցիչներին վճարել լրացուցիչ մասնավոր դասերի համար (անցնելով ուսումնական ծրագրով նախատեսված նույն նյութերը, որոնք պետք է դասավանդվեն օրվա ընթացքում), ապա նման դեպքերում կրթության մատչելիությունը հիմնված է ոչ թե մատչելիության, այլ կաշառք տալու ունակության վրա, ինչը հանգեցնում է խտրականության և աննպաստ պայմաններ է ստեղծում

խոցելի խմբերի համար, որովհետև վերջիններս չեն կարող կաշառք տալ: Սա այն ոլորտն է, որտեղ կոռուպցիան ունի հատկապես խորը և քայլայիշ ազդեցություն: Երբ կարող է կոռուպցիան խախտել տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները:

Հատկապես կարևոր է ուշադրություն դարձնել կոռուպցիայի ազդեցությանը տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների վրա: Այս ոլորտում կոռուպցիան չափազանց անհամամասնորեն է ազդում բնակչության խոցելի և չքավոր խմբերի վրա: Առողջապահական և կրթական ծառայությունների ոլորտում լայնորեն տարածված կոռուպցիան հատկապես աղքատ մարդկանց հետ է պահում այդ ծառայություններին դիմելուց, ինչպես նաև իշեցնում է նրանց կյանքի մակարդակն ու նվազեցնում հնարավորությունները:

### **Կոռուպցիան որպես սպառնալիք << ազգային անվտանգությանը**

Մենք պարզեցինք, թե կոռուպցիան ինչպիսի բացասական երևոյթ է առանձին անհատների և հասարակության համար: Պարզեցինք, որ կոռուպցիան նպաստում է աղքատության առաջացմանը, ոտնահարում է մարդու իրավունքները և, ընդհանրապես, հիվանդություն է հասարակության համար, որը քայլայում, փչացնում է տվյալ հասարակության բարոյական և արժեքային համակարգը: Սակայն պետք է նշել, որ կոռուպցիայի զոհ կարող են լինել ոչ միայն առանձին անհատներ, խմբեր, այլ նաև պետությունը: Շատ երկրներում կոռուպցիան դիտարկվում է որպես պետության դեմ ուղղված ծանր հանցագործություն, որը ոչ միայն թուլացնում է պետությունը, այլև ուղղակիրեն շարունակաբար հարվածում է նրան՝ կասեցնելով վերջինիս տնտեսական, քաղաքական և հոգևոր աճը: Այժմ ներկայացնենք, թե կոռուպցիան ինչպես է սպառնում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունը պետության և հասարակության այնպիսի կացությունն է, երբ ապահովված է անձի, հասարակության և պետության անվտանգությունը, երկրի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, սահմանադրական կարգը, տնտեսության բնականոն գարգացումը, հասարակության նյութական և հոգևոր արժեքների, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, շրջակա միջավայրի պաշտպանությունը ներքին ու արտաքին սպառնալիքներից:

Կոռուպցիոն երևոյթները, կաշառակերության դրսևորումները առավել վտանգավոր են պետական կառավարման ոլորտի համար, քանի որ դրանցով պետությանը (պետական բյուջեին) անմիջականորեն ֆինանսական վնաս է հասցվում:

Բյուջետային միջոցների հավաքագրման գործընթացում չարաշահումները իրականացնում են պետքութեի եկամտային մասն ապահովող << պետական եկամուտների կոմիտեի հարկային, մաքսային ծառայությունները և ստուգումների իրավասությամբ օժտված մարմինները:

Բոլորիս հայտնի է, որ հարկային պետական ծառայությունն իրականացնում է հարկահավաքման գործընթացը, որն առաջացնում է մի շարք երևույթներ՝ կապված պետական բյուջե մուտքագրվող գումարների ոչ լիարժեք հավաքագրման հետ:

### **Ի՞նչ է տեղի ունենում:**

Ստուգայցեր կատարելիս հարկային ծառայության աշխատակիցները, տնտեսվարող սուբյեկտի հետ համապատասխան գումարի դիմաց գալիս են փոխահավետ համաձայնության և թաքնում վերջինիս իրական շրջանառությունը, որի արդյունքում պետքութե են գանձվում ոչ իրական գումարներ:

Նման եղանակով նվազում են պետական բյուջե ներմուծվող գումարները, ինչի հետևանքով պետությունը չի կարողանում հոգալ իր քաղաքացիների նվազագույն պահանջները, օրինակ, բարձրացնել կենսաթոշակները:

### **Գյուղատնտեսության ոլորտ**

Նշված ոլորտի աշխատակիցների կոռումպացված գործունեությունը նույնպես կարող է սպառնալ << ազգային անվտանգությանը: Օրինակ, երբ համապատասխան ստուգումներ կատարելիս վերջիններս առանձին արտադրողներից գումար են վերցնում, որպեսզի չարձանագրեն վատորակ ապրանքները, ապա հետագայում այդ ապրանքների օգտագործումը վնաս է հասցնում մարդկանց առողջությանը, առաջացնում տարբեր հիվանդություններ, թունավորումներ:

### **Բնապահպանության ոլորտ**

Բնապահպանության պետական տեսչության աշխատակիցների կոռումպացված գործունեությունը կարող է հանգեցնել նրան, որ վնասակար նյութեր արտանետող կազմակերպությունների գործունեության նկատմամբ ծևական վերահսկողության կամ դրա բացակայության հետևանքով ավելանում են արտանետումները և աղտոտում շրջակա միջավայրը: Կոռուպցիայի հետևանքով ծառահատումների նկատմամբ պատշաճ հսկողության բացակայությունը կարող է հանգեցնել կանաչ գոտու նվազեցմանը:

Զուրը մարդու գոյության կարևորագույն աղբյուր է, և դրա որակի նկատմամբ հսկողությունն ազգային անվտանգության խնդիրներից է: Այս ոլորտում ևս

կոռուպցիան կարող է պատճառ դառնալ խմելու ջրում վնասակար, նույնիսկ թունավոր նյութերի առաջացմանը, իսկ ջրի միջոցով՝ մարդու թունավորմանը և առողջության քայլայմանը:

Կաշառված գանգվածային լրատվության միջոցները կարող են պաշտպանել իրենց կաշառողի շահերը, չիրապարակել նրան վարկաբեկող տեղեկությունները, ընդհանրապես տեղեկություններ չտալ կամ խեղաթյուրել դրանք՝ հօգուտ կաշառատուի:

### **Լրատվությունը խոսքի ազատության իրավունքն ապահովելու միջոց է:**

Լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքն ապահովելու երաշխիքներ.

1. Լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները գործում են ազատորեն՝ իրավահավասարության, օրինականության, խոսքի (արտահայտվելու) ազատության և բազմակարծության սկզբունքների հիման վրա:

Լրագրողն իր մասնագիտական օրինական գործունեության ընթացքում, որպես հասարակական պարտք կատարող անձ, պաշտպանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

«Վարչական իրավախստումների վերաբերյալ օրենսգրքում և «Վրեական օրենսգրքում տեղ են գտել այն դրույթները, որոնք պատասխանատվություն են նախատեսում լրագրողական գործունեությանը խոչընդոտելու համար:

### **Թրաֆիքինգ (մարդկանց շահագործում)**

Մարդկանց շահագործումը (թրաֆիքինգը) համարվում է 21-րդ դարի ստրկություն, այն հաճախ անվանում են նաև «սպիտակ ստրկություն»: Թեպետ ներկայումս ճշգրիտ հաշվարկներ չկան, սակայն կարելի է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը հիմնականում հանդես է գալիս որպես թրաֆիքինգի ծագման երկիր, այսինքն՝ «մատակարարում է» թրաֆիքինգի զոհ դարձող մարդկանց: Հայտնի են կանանց, անչափահասների և տղամարդկանց աշխատանքային և սեռական շահագործման բազմաթիվ դեպքեր:

Մարդկանց շահագործման զոհեր են դառնում մեր այն հայրենակիցները, ովքեր ցանկանում են ամեն գնով խուսափել ցածր կենսապայմաններից, երբեմն անշրջահայացորեն, այդ նպատակով համաձայնում են լքել մեր հայրենիքը, միամտորեն հավատալով եկամուտներն արագ բարձրացնելու իրենց տրված հաճախ



սին խոստումներին: Արդյունքում նրանցից շատերը հայտնվում են ծանր կացության մեջ. անխղճորեն շահագործվում են ֆիզիկապես և բարոյապես, ստիպված են լինում կատարել իրենց ուժերից վեր ծանր, չվարձատրվող աշխատանք, ենթարկվելով արժանապատվության նսեմացման, ծեծի ու սպառնալիքների:

Մարդկանց շահագործում (թրաֆիքինգ) հասկացությունը նշանակում է՝ շահագործման նպատակով իրականացվող մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը ուժի սպառնալիքով կամ դրա կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման, առևանգման, խարդախության, խարեւության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու կամ ուրիշ անձի կողմից վերահսկվող անձի համաձայնությունն ստանալու համար վճարումների կամ շահերի ձևով կաշառելու ճանապարհով:

Ստորև բերվում են մի շարք օրինակներ, որոնցում կա մարդկանց շահագործում, քանի որ առկա են վերոհիշյալ հասկացությունը բնութագրող տարրերը.

- Քաղաքացի Վ.-ն տղամարդկանց մի խումբ էր հավաքագրել ու տեղափոխել ՈԴ շինարարության վրա աշխատելու համար: Այդ խմբի հանդեպ կիրառվել էր հարկադրանք, տղամարդկանց ստիպել էին աշխատել, իսկ վճարվելիք գումարները ձեռք էին բերել Վ.-ն ու իր գործակիցները՝ աշխատողներին տալով միայն սնունդ:
- Քաղաքացի Կ.-ն գտնվում էր X երկրում ապօրինի (նրա մուտքի թույլտվության ժամկետը լրացել էր), սակայն չէր ցանկանում վերադառնալ <<, քանի որ հիվանդ կնոջ վիրահատության համար ցանկանում էր գումար վաստակել: Նա դիմում է իր ծանոթներին՝ խնդրելով իր հետ տվյալ երկիր եկած իր անչափահաս տղային իրենց հետ տանել <<, որպեսզի ինքը հնարավորություն ունենա աշխատանք գտնելու: Ծանոթները, չարաշահելով Կ.-ի խոցելի վիճակը, նրա անչափահաս տղային հանձննեցին «բարեգութ» մի ընտանիքի համարյա որպես ստրուկ աշխատեցնելու համար:
- Քաղաքացի Մ.-ն մարմնավաճառ էր իր հայրենի քաղաքում: Նա համաձայնվում է մեկնել Y երկիր, քանի որ հավաքագրողը խարում է նրան՝ խոստանալով իր «աշխատանքի» համար կրկնակի եկամուտ: Այնինչ, Y երկրում Մ.-ն աշխատում է կրկնակի շատ, սակայն չի վճարվում, քանի որ նրան հասանելիք գումարները վերցնում են խարեւությամբ նրա փաստաթղթերին տեր դարձած միջնորդ-կավատները:

Մարդու կողմից մարդու շահագործումը բավական իին երևոյթ է: Դրա հնագույն տարատեսակը ստրկությունն է: Հին Հունաստանում կամ Հռոմում, օրինակ, ստրուկներին շահագործելն ու որպես ապրանք վաճառելը համարվել է սովորական

գուցեն այն պատճառով, որ ստրուկի և բանող կենդանիների միջև տարբերություն չեն տեսել: Ստրուկները չեն ունեցել անձնական կյանք և ունեցվածք ունենալու իրավունք, ավելին, իրենք են եղել ուրիշի ունեցվածքի մի մասնիկը: Մարդկությունը դարերի ընթացքում իրաժարվել է ստրուկությունից, քանի որ անձնական շահագրգություն չունեցող ստրուկի աշխատանքը աստիճանաբար դարձել է ոչ շահութաբեր՝ տերերին ստիպելով գտնել նրան շահագրգություն եղանակ: Այդ նպատակով աստիճանաբար ազատագրել են ստրուկներին ու, հողը որպես սեփականություն վերջիններիս տալով, նրանց մղել ավելի արդյունավետ աշխատանքի: Հայտնի է նաև, որ իին աշխարհում զինվորներ ունենալու անհրաժեշտությունից ենելով, շատ իշխանավորներ հակված են եղել արգելելու ազատ քաղաքացիներին պարտքերի դիմաց ստրկացնելը. մասնավորապես, նման մի արձանագրություն է պահպանվել Համմուրապիի օրենքների ժողովածուի մեջ:

Ստրուկության երկրորդ շրջափուլը կապվում է ռասայական խտրականության երևույթի հետ, երբ իրենց բարձր համարող սպիտակ ռասայի մարդիկ ստրկացրել են սևամորթ ռասայի ներկայացուցիչներին: Այս փուլը զարգանում է Աֆրիկա և Ամերիկա մայրցամաքների յուրացման դարաշրջանում և գոյատևում մինչև XIX-րդ դարավերջ: Ստրուկության այս տեսակը դատապարտվել է մարդասեր մտածողների կողմից, որոնք պնդել են, որ բոլոր ռասաները պատկանում են միևնույն «բանական մարդ» տեսակին և չեն կարող միմյանց կողմից շահագործվել: Այնուամենայնիվ, այս կամ այն ձևով նման ստրուկությունը գոյատևել է ողջ 19-րդ դարի ընթացքում:

Ցավոք, քաղաքակրթության զարգացման որևէ փուլում չի կարելի խոսել ստրուկությունից զերծ աշխարհի մասին, քանի որ ստրուկության այս կամ այն տարատեսակը միշտ առկա է եղել: Արևելյան երկրներում տարածված է եղել սեռական շահագործումը. հարեմներում պահպող կանանց մեծ մասն, ըստ էության, ստրկացված է եղել:

Այնուամենայնիվ, կա մի սկզբունքային տարբերություն դասական ստրուկության ու մարդու ժամանակակից շահագործման միջև: Եթե դասական ստրուկությունը ժամանակի երկրների իրավունքի համակարգերում այս կամ այն կերպ օրինականացվել է, այդ պատճառով երբեմն այն անվանվում է լեզաւ ստրուկություն, ապա թրաֆիքինգը օրենքից դուրս է ամեն դեպքում, այն անլեզաւ ստրուկություն է: Եթե անցյալի ստրկատերերը բացեիբաց ցուց էին տալիս իրենց ստրուկներին, հապարտանում նրանց քանակով և ինչ-ինչ կարողություններով, ապա նորօրյա «ստրկատերերը» թրաֆիքինգի ապօրինի լինելու պատճառով ամեն գնով ծգտում են թաքցնել նրանց այդպիսին լինելը: Նրանք, որպես կանոն, թրաֆիքինգի զոհերին թաքցնում են հասարակության աչքից, պահում են, օրինակ, նկուղներում,

անտառներում կազմակերպված «աշխատանքային ճամբարներում», կամ Էլ Եթե գոհը, օրինակ, տնային ծառայող է, պարզապես թաքցնում են այն փաստը, որ ծառայողն ըստ էության ստրուկ է, քանի որ չի վարձատրվում աշխատանքի դիմաց, չունի հանգստյան օրեր, ենթարկվում է ծեծի ու սպառնալիքների: Թրաֆիքինգ երևոյթը երբեմն էլ գոյատևում է իշխանության պատասխանատու ներկայացուցիչների աչք փակելու հետևանքով, քանի որ, կաշառվելով մարդկանց շահագործողների կողմից, վերջիններս դադարում են նկատել, թե ինչ է կատարվում, օրինակ, այս կամ այն հյուրանոցում կամ շինարարության վրա, ինչպես նաև սահմանային անցագրային հսկումների ժամանակ կարծես չեն տեսնում ակնհայտ կեղծ փաստաթղթերը, 15-20 տարեկան աղջիկներին 30 տարեկան ներկայացնող անձնագրերը և այլն:

Հայաստանում դասական իմաստով ստրկատիրություն գոյություն չի ունեցել, քանի որ ընտանիքի ծառաները համարվել են ընդոծին (միասին ծնված, ինչպես «ընկեր» նշանակում է ընդ կեր՝ միասին սնվող), որոնց համար տերերը պատասխանատու են զգացել իրենց: Նրանք ընդոծիններին ծեր ու հիվանդ վիճակում նույնպես պահել են, չնետելով փողոց: Ավանդաբար չունենալով ստրկացնելու հոգեբանություն, պատմական հանգամանքների բերումով, հայերն իրենք են իրենց մաշկի վրա զգացել անազատ լինելու բեռք: Հայ ընտանիքներից հարեմներ են տարվել աղջիկներ ու կանայք, իսկ տղաներին դարձրել են ենիշերիներ:

### **Մարդկանց թրաֆիքինգը բաղկացած է երեք հիմնական տարրերից՝**

**գործողություն՝ մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը,**

միջոց՝ ուժի սպառնալիք կամ դրա կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառում, առևանգում, խարդախություն, խաբեություն, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելը կամ ուրիշ անձի կողմից վերահսկվող անձի համաձայնությունն ստանալու համար վճարումների կամ շահերի ձևով կաշառելը,

նպաղակ՝ շահագործում, որը նվազագույնը ներառում է այլ անձանց մարմնավաճառության մեջ ներգրավելը կամ սեռական շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը համանման սովորությները, անազատ վիճակը կամ մարմնի մասեր կորզելը:

Մարդկանց թրաֆիքինգը վերը նշված երեք տարրերի համադրությունն է, այլ ոչ թե դրանցից որևէ մեկը՝ մյուսներից առանձին: Օրինակ, մարդկանց «թաքցնելը» (գործողություն), որը ներառում է «սպառնալիք կամ ուժի գործադրում» (միջոց)՝ «հարկադիր աշխատանքի» համար (նպատակ), այնպիսի վարքագիծ է, որը պետք է որակվի որպես մարդկանց թրաֆիքինգ: Նմանապես, անձանց հավաքագրումը

(գործողություն) խաբեության միջոցով (միջոց)` մարմնավաճառության մղելու համար (նպատակ), նույնպես պետք է դիտվի որպես մարդկանց թրաֆիքինգ:

Հետևաբար, մարդկանց թրաֆիքինգի դեպքում պետք է համատեղ առկա լինի երեք կատեգորիաներից յուրաքանչյուրի տարրերից որևէ մեկը (գործողություն, միջոց, նպատակ): Սակայն երեխաների դեպքում գոյություն ունի մի բացառություն. Արձանագրության 3-րդ հոդվածի «գ» ենթակետով սահմանված հավաքագրումը, տեղափոխումը, փոխանցումը, թաքցնելը կամ ընդունելը պետք է դիտվի որպես մարդկանց թրաֆիքինգ, եթե անգամ այդ գործողությունը չի կատարվել նույն հոդվածի «ա» ենթակետում թվարկված միջոցներից որևէ մեկի օգտագործմամբ:

Արձանագրության 3-րդ և 5-րդ հոդվածներին համապատասխան պետությունները պարտավորվել են օրենսդրական միջոցներ գործադրել քրեականացնելու անդրազգային բնույթ կրող և հանցավոր խմբի մասնակցությամբ կատարված դիտավորյալ այնպիսի հանցագործություններ, որպիսիք հանդիսանում են՝ շահագործման նպատակով իրականացվող մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը՝ ուժի սպառնալիքով կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառմամբ, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու կամ ուրիշ անձի կողմից վերահսկվող անձի համաձայնությունն ստանալու համար վճարումների կամ շահերի ձևով կաշառելու ճանապարհով, ինչպես նաև այդպիսի հանցագործությունների կատարման փորձը, հանցակցությունը և այդպիսի արարքների կատարման նպատակով անձանց կազմակերպելը կամ դեկավարելը:

Արձանագրության շրջանակներում միջապետական համագործակցությունը ծրագրված է իրականացնել ինչպես միջազգային իրավական, այնպես էլ կողմերի ներպետական օրենսդրության սկզբունքներով՝ հանրավտանգ արարքների քրեականացման, դրանց նկատմամբ պատժական համաձայնեցված քաղաքականության իրականացման բնագավառներում՝ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության սկզբունքով, մասնավորապես. կյանքի, ազատության և անձեռնմխելիության, արժանապատվության, անձնական կյանքի, մշտական բնակության վայր վերադարձի, պատճառված վնասի փոխհատուցման, տեղեկատվություն ստանալու, աշխատանքի, կրթության, առողջության պահպանման, բժշկական օգնության և սպասարկման, խախտված իրավունքների վերականգնման, իրավաբանական օգնություն ստանալու բնագավառներում:

Արձանագրությամբ միջապետական համագործակցությունը նախատեսված է իրականացնել նաև հետևյալ բնագավառներում.

- մարդկանց առևտրի զոհերի օգնություն և նրանց պաշտպանություն,

- մարդկանց առևտրի գոհերի հայրենադարձություն,
- մարդկանց առևտրի կանխարգելում,
- տեղեկատվության փոխանակում և կադրերի պատրաստում,
- սահմանային հսկողության միջոցների սահմանում,
- փաստաթղթերի հավաստիության և օրինականության նկատմամբ  
վերահսկողություն:

Արձանագրությամբ պետությունները պարտավորվում են մարդկանց առևտուրը կանխարգելելու միջոցներ ձեռնարկել կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության բնագավառներում ներպետական օրենսդրության կատարելագործման, երկկողմ և բազմակողմ համագործակցության զարգացման ուղղությամբ:

## **ՀՀ քրեական օրենսգիրք**

### **Հոդված 132. Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը**

1. Մարդու թրաֆիքինգը՝ շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև մարդուն շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահել՝ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգման, խարեւության կամ վստահությունը չարաշահելու, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը օգտագործելու կամ նրան վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ ստանալու կամ այդպիսիք խոստանալու միջոցով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ իինգից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա:

#### **2. Նույն արարքը, որը կատարվել է՝**

- 1) Երկու կամ ավելի անձանց նկատմամբ,
- 2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 3) պաշտոնեական դիրքն օգտագործելով,
- 4) կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,
- 5) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,

6) Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելով՝ անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասներեկու տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի

պաշտոններ գբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ գբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է կազմակերպված խմբի կողմից,

2) անզգությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնչորս տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ գբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ գբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

4. Սույն հոդվածով, ինչպես նաև սույն օրենսգրքի 132.2-րդ հոդվածով շահագործում են համարվում այլ անձի՝ պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, առքը կամ վաճառքը, օրգանները կամ հյուսվածքները վերցնելը:

5. Սույն հոդվածով, ինչպես նաև սույն օրենսգրքի 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործություններից տուժած անձն ազատվում է իր կատարած ոչ մեծ կամ միջին ծանրության այն հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունից, որոնցում ներգրավված է եղել իր նկատմամբ իրականացված թրաֆիքինգի կամ շահագործման ընթացքում և այդ արարքները կատարել է հարկադրանքի ներք:

(132-րդ հոդվածը խմբ., լրաց. 09.06.04 <Օ-97-Ն, խմբ. 01.06.06 <Օ-103-Ն, փոփ. 01.06.06 <Օ-119-Ն, փոփ., լրաց. 18.11.09 <Օ-220-Ն, խմբ. 01.03.11 <Օ-69-Ն)

**Հոդված 132<sup>2</sup>. Երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձին հրաժարական**

1. Շահագործման նպատակով երեխային, հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձին հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև այդպիսի անձանց շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ գբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ գբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

- 1) Երկու կամ ավելի անձանց նկատմամբ,
  - 2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
  - 3) պաշտոնեական դիրքը օգտագործելով,
  - 4) բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,
  - 5) առևանգման միջոցով,
  - 6) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,
  - 7) Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելով՝ անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասներկու տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա:
3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը՝
    - 1) կատարվել է կազմակերպված խմբի կողմից,
    - 2) անզգությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ տասներկուսից տասնինգ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա:
- (132<sup>2</sup> հոդվածը լրաց. 01.03.11 <Օ-69-Ն>)**

### **Հոդված 132.3. Շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելը**

1. Շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելը, եթե այդ անձի շահագործման վիճակի մեջ լինելը ակնհայտ է ծառայությունից օգտվողի համար, և եթե հանցագործություն կատարած անձի արարքում բացակայում են սույն օրենսգրքի 132-րդ կամ 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները՝ պատժվում է տուժանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:
2. Նույն արարքը, որը կատարվել է՝
  - 1) ակնհայտ անչափահասի նկատմամբ,
  - 2) հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի նկատմամբ,
  - 3) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,
  - 4) Երկու կամ ավելի անձանց նկատմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա:

3. Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմիններին տուժողի մասին կամովին տեղեկություններ հայտնած անձն ազատվում է սույն հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից, եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում:

(132<sup>3</sup> հոդվածը լրաց. 01.03.11 <Օ-69-Ն>)

«Շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը դրսևորվում է տուժողին տարբեր եղանակներով (բռնությամբ, դրա գործադրման սպառնալիքով, խարեւությամբ և այլն) մարդկանց առևտությունների մեջ ներգրավված անձանց կազմում ընդգրկելով: Օրինակ՝ իբր աշխատանքի նպատակով արտասահման մեկնողների ցուցակում մուտքագրելը, կեղծ աշխատանքային պայմանագրեր կնքելը և այլն:

Փոխադրելը տուժողին շահագործելու նպատակով նրան մի վայրից մեկ այլ վայր տեղափոխելն է: Օրինակ՝ օդանավով կամ ավտոբուսով «ծագման» երկրի «նշանակման» երկիր փոխադրելը:

Հանձնելը դրսևորվում է տուժողին համապատասխան անձանց (ընդունողների) տրամադրության տակ թողնելով: Օրինակ՝ երբ սեռական շահագործման կամ օրգանները վերցնելու նպատակով տուժողին հանձնում են համապատասխան հանցավոր խմբի ներկայացուցչին: Տուժողի հանձնումը կայացած է համարվում այն պահից, երբ նա հայտնվում է ընդունող անձի տրամադրության տակ:

Թաքցնելը տուժողին մեկուսացնելն է, նրա գտնվելու վայրի գաղտնի պահելը: Օրինակ՝ երբ համապատասխան անձանց հանձնելու նպատակով մարդկանց առևտությունների ներգրավվողին թաքցնում են տան նկուղում կամ ավտոտնակում:

Ստանալը դրսևորվում է տուժողին այլ անձանցից ընդունելով, սեփական տրամադրության տակ թողնելով: Օրինակ՝ երբ հարկադիր աշխատանքի ներգրավելու նպատակով հանցավորն ընդունում է տուժողին »:

Մարդկանց թրաֆիքինքի իրականացման եղանակներն են՝ բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը կամ հարկադրանքի այլ ձևերը, առևտանգելը, խարդախությունը, վիճակի խոցելիությունն օգտագործելը, ինչպես նաև տուժողին վերահսկող անձի համաձայնությունը ստանալու համար վճարումներ կամ բարիքներ տալը կամ ստանալը:

«Բռնությունը տուժածի դիմադրությունը հաղթահարելու համար ֆիզիկական ուժ գործադրելն է, ծեծի ենթարկելը, մարմնական վնասվածքներ հասցնելը, մազերից

քաշընելը, կապկապելը և այլն: Ընդ որում բռնաթյունը տվյալ դեպքում կարող է գործադրվել ինչպես տուժողի, այնպես էլ այլ անձանց, օրինակ, նրա մերձավորների նկատմամբ:

Բռնություն գործադրելու սպառնալիքն արտահայտվում է նրանում, որ շահագործման նպատակով մարդուն հավաքագրելու, փոխադրելու, հանձնելու, թաքցնելու կամ այլ անձի նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր ֆիզիկական բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով հանցավորը հաղթահարում է տուժողի դիմադրությունը: Այս առումով անհրաժեշտ է, որ առկա լինի սպառնալիքն անհապաղ իրագործելու իրական վտանգը: Այսինքն՝ հանցակազմի առկայության համար տվյալ դեպքում պահանջվում է, որ սպառնալիքի գործադրմամբ տուժողը դրվի անելանելի վիճակի մեջ:

Հարկադրանքի այլ ձևեր ասելով պետք է հասկանալ տուժողի դիմադրությունը ճնշելուն ուղղված բռնություն կամ դրա գործադրման սպառնալիք չհանդիսացող գործողությունները: Օրինակ՝ տուժողին կամ նրա մերձավորներին արատավորող տեղեկություններ տարածելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը և այլն:

Առևանգումը դրսկորվում է մարդու կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու բնական միկրոսոցիալական միջավայրից դուրս հանելով և մշտական կամ ժամանակավոր բնակության վայրից այլ վայր տեղափոխելով ու այնտեղ պահելով:

Խարեւություն ասելով քննարկվող հանցակազմերի իմաստով պետք է հասկանալ իրականությունը դիտավորյալ խեղաթյուրելը կամ այն գիտակցաբար թաքցնելը, դիմացինին որոշակի փաստերի, հանգամանքների, իրադարձությունների վերաբերյալ ապակողմնորոշելը՝ շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելու, փոխադրելու, հանձնելու, թաքցնելու կամ ստանալու համար: Օրինակ, երբ սեռական շահագործման կամ հարկադիր աշխատանքի ներգրավելու համար հանցավորն ուղեկցում է տուժողին նշանակման վայր՝ թաքցնելով կամ քողարկելով այնտեղ մեկնելու իրական նպատակը, իսկ հասնելով այդ վայրը՝ հրաժարվում է վերադարձնել նրա անձը հաստատող փաստաթղթերը և ստիպում զբաղվել մարմնավաճառությամբ »:

Խարեւությունը թրաֆիքինգով զբաղվողների կողմից հաճախ օգտագործվող միջոցներից են, երբ զոհերին հավատացնում են, որ նրանց սպասվում է գրավիչ աշխատանք, այլ ոչ թե նախապես ծրագրված շահագործում:

Տուժողի վիճակի խոցելիության չարաշահումը ենթադրում է այնպիսի իրավիճակի չարաշահում, երբ անձը չունի որևէ իրական և ընդունելի այլընտրանք,

քան շահագործման ենթարկվելը: Խոցեիությունը կարող է լինել ցանկացած բնույթի՝ ֆիզիկական, հոգեբանական, օգացմոնքային, ընտանելիան, սոցիալական կամ տնտեսական: Վերոհիշյալ իրավիճակներից կարող է լինել զոհի իրավական կարգավիճակի անապահովությունը կամ անօրինականությունը, տնտեսական կախվածությունը կամ թույլ առողջական վիճակը: Այլ կերպ ասած, նման իրավիճակ կարող է լինել ցանկացած դժվարին դրությունը, որում գտնվելով անձը դրդված է լինում համաձայնվել շահագործման ենթարկվելուն: Նման իրավիճակները չարաշահող անձինք կոպիտ կերպով խախտում են մարդու իրավունքները և ոտնահարում մարդու արժանապատվությունն ու անձեռնմխելիությունը:

Մարկանց թրաֆիքինգի իրականացման հաջորդ եղանակը տուժողին վերահսկող անձի համաձայնությունը ստանալու համար վճարումներ կամ բարիքներ տալը կամ ստանալն է: «Տուժողին վերահսկող է համարվում այն անձը, ով որոշակի հարաբերությունների ուժով պարտավոր է հսկողություն իրականացնել նրա նկատմամբ: Այդպիսիք կարող են համարվել տուժողի ծնողները (որդեգրողները), խնամակալը, հոգաբարձուն, մանկապարտեզի դաստիարակը, դպրոցի ուսուցչուին, մարզիկի մարզիչը և այլն»:

Տվյալ դեպքում փաստորեն, վճարումների կամ բարիքների փոխանցման միջոցով նշված անձանց նյութապես շահագրգորում են (կաշառում)՝ նրանց համաձայնությունը ստանալու նպատակով: Օրինակ՝ որոշակի գումար կամ թանկարժեք իր փոխանցելով և այլն: Ընդ որում, տվյալ դեպքում պատասխանատվության են ենթարկվում նշված վճարումները կամ բարիքներն ինչպես տվողները, այնպես էլ ստացողները (տուժողին վերահսկող անձինք):

Մարդկանց թրաֆիքինգի նպատակը պետք է լինի մարդու շահագործումը: <<քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի հինգերորդ մասի համաձայն մարդու շահագործում են համարվում այլ անձի պոռնկության ներգրավելը կամ սեռական շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությանը նմանվող վիճակը, մարդու մարմնի մասերը կամ հյուսվածքները վերցնելը: Ընդ որում, մարդկանց թրաֆիքինգի երևոյթի առկայության համար պարտադիր չէ, որ անձը անպայմանորեն շահագործված լինի: Բավական է, որ անձը շահագործման «նպատակով» ենթարկված լինի քննարկվող հոդվածում նշված գործողություններից որևէ մեկին՝ սահմանված եղանակներից ցանկացածի օգտագործմամբ: <Ետևաբար, մարդկանց թրաֆիքինգն առկա է նախքան զոհի փաստացի շահագործումը:

**Պոռնկությունը** վճարի դիմաց պատահական, արտաամուսնական սեռական այնպիսի հարաբերությունների մեջ մտնելն է, որոնք հիմնված չեն անձնական համակրանքի, զուգընկերոց հանդեպ սեռական հակումների վրա:

Պոռնկության ներգրավելը որպես շահագործում նշանակում է, որ մարմնավաճառին սեռական հարաբերություններ ունենալուն հարկադրելով կամ պարտադրելով՝ երրորդ անձինք որոշակի շահ են ստանում: Ընդ որում, շահը տվյալ դեպքում կարող է լինել նաև ոչ նյութական բնույթի: Օրինակ՝ եթե մարմնավաճառին «մատուցում են որպես նվեր», առանց դրա դիմաց որևէ վարձատրություն ստանալու: Մարմնավաճառության շահագործումն առկա է ոչ միայն այն դեպքում, եթե մարմնավաճառից ամբողջությամբ վերցնում են մատուցած սեռական ծառայությունների դիմաց վճարված գումարը կամ չեն վճարում նրան, այլև այն դեպքում, եթե նա ստանում է այդ գումարի մի մասը, որը որպես կանոն, չնչին է լինում:

**Սեռական այլ շահագործումը** նշանակում է, որ շահ ստանալու նպատակով տուժողին ստիպում են սեռական բնույթ կրող, բայց պոռնկություն չհանդիսացող գործողություններ կատարել: Օրինակ՝ զբաղվել մերկապարով, նկարահանվել էրոտիկ ամսագրերում կամ տեսաֆիլմերում և այլն: Ընդ որում, սեռական շահագործումը հաճախ կարող է զուգորդվել նաև բռնաբարությամբ, սեքսուալ բնույթի բռնի գործողություններով կամ սեքսուալ բնույթի գործողությունների հարկադրելով:

**Մարդկանց շահագործումը նրանց մարմնի մասերը կամ հյուսվածքները վերցնելու (օգտագործելու)** նպատակով նույնպես մեծ վտանգավորություն է ներկայացնում, ընդ որում այդ նպատակով մարդկանց շահագործման դեպքերը, հատկապես զարգացող երկրներում, ավելի լայն տարածման միտում ունեն:

Պաշտոնեական դիրքն օգտագործելն, ըստ էության, վերաբերում է պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական լիազորությունները չարաշահելուն: Պոռնկության կամ սեռական այլ շահագործման, հարկադիր աշխատանքի կամ ծառայությունների, ստրկության կամ ստրկությանը հավասարագոր վիճակին հասցնելու, ինչպես նաև մարդու օրգանները վերցնելու նպատակով հանցավորն օգտագործում է իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ կամ չի կատարում իր ծառայողական պարտականությունները՝ շահադիտական, անձնական այլ շահագրգությունից կամ խմբային շահերից ելնելով: Օրինակ՝ եթե ոստիկանության պաշտոնատար անձը չարաշահում է իր պաշտոնեական լիազորությունները՝ տուժողին անխափան նշանակման վայր փոխադրելու համար »:

Պոռնկության, սեռական շահագործման այլ ձևերի մեջ, հարկադիր աշխատանքի կամ ծառայությունների ներգրավել, ստրկության կամ դրան նմանվող վիճակի մեջ դնել կամ պահել ասելով պետք է հասկանալ տուժողին համապատասխան գործունեությամբ զբաղվելուն կամ այն շարունակելուն հարկադրելը, հակելը կամ դրդելը: Ընդ որում, տվյալ դեպքում անհրաժեշտ է, որ նշված գործողությունները կատարվեն բռնություն գործադրելու կամ դա գործադրելու սպառնալիքի կամ հարկադրանքի այլ ձևերի, առևանգելու, խարդախության, վիճակի խոցելիությունն օգտագործելու, ինչպես նաև տուժողին վերահսկող անձի համաձայնությունը ստանալու համար՝ վճարումներ կամ բարիքներ տալու կամ ստանալու միջոցով:

### **Մարզերի տնտեսական անհավասարությունը**

Տնտեսական ճգնաժամի իրավիճակում մարզերում դժվար է ընտանիքի գոյությունն ապահովող աշխատանք գտնել: Հաճախ զարգացող երկրների տնտեսական վիճակը վատանում է պետական հեղաշրջումների, քաղաքացիական պատերազմների, արտաքին թշնամիների հետ պատերազմների արդյունքում, որոնք տևում են տասնամյակներ: Աղքատությանն ու սովին գումարվում են վախը սեփական կյանքի համար:

Հեռանկարի բացակայությունը, դժվարին պայմաններն ու աղքատությունը բարձրացնում են մարդավաճառության հավանականությունը:

❖ Զոհերը գիտակցաբար համաձայնվում են ստրկական աշխատանքին կամ իրենց օրգանների վաճառքին: Այն դեպքում, երբ ընտրությունը սահմանափակ է, մարդիկ համաձայնվում են վճարվել սոցիալական երաշխավորման բացակայության, առողջական լուրջ վնասների առկայության պայմաններում:

❖ Ինստիտուցիոնալ քառսի պայմաններում աճում է զոհերի հարկադրական հավաքագրումը: Հանցավորության ընդհանուր աճը բերում է մարդկանց առևանգման թվի բարձրացմանը: Նպատակը կարող է լինել հավաքագրվածների սեռական շահագործումը, ստրկական աշխատանքի հարկադրումը, մարմնի մասերի կամ հյուսվածքների վաճառքը բռնի ուժով և այլն:

### **Աղքատությունը կանանց շրջանում**

Կանանց անհամեմատ վատ տնտեսական վիճակը, ի տարբերություն տղամարդկանց, նույնական նպաստում է մարդկանց առևտրի աճին: Աղքատության ֆեմինիզացման հիմքում ընկած է սեռերի անհավասարությունը, իսկ ավելի կոնկրետ՝

կանանց և տղամարդկանց կողմից կատարվող աշխատանքի հստակ սահմանագատումը և նշված աշխատանքների վճարման տարբերությունը: Աղքատությունը նվազեցնում է կանանց ընտրության հնարավորությունը և նրանց ավելի խոցելի դարձնում մարդկանց առևտրի հարցում:

Գերակշռող ավանդական սեռային դերերի առկայության պատճառով տնային գործերի կատարման, երեխաների և ծերերի խնամքի պատասխանատվությունը բաժին է ընկնում կանանց: Հետևաբար, տղամարդմանց որոշում ընդունելու գերակայությունը և աշխատանքի ոլորտում սեռային անհավասարությունը բերում է կանանց աղքատացմանը, որն էլ առաջին հերթին ազդում է երեխաների վրա, որոնք անմիջականորեն կապված են կանանցից: Աղքատության ֆեմինիզացմանը զուգընթաց վատանում են նաև երեխաների կենսապայմանները, ինչն անուղղակիորեն բերում է նրան, որ երեխաներն էլ են հայտնվում մարդկանց վաճառողների հետաքրքրությունների կենտրոնում:

Կանանց կենսամակարդակը և դրանից բխող ընտրության հնարավորությունը ձևավորվում են հետևյալ երկու գործոնների ազդեցությամբ.

1. **Պաշտոնավարման** սեռական խտրականությամբ, այսինքն՝ աշխատանքի այնպիսի բաժանմամբ, որի դեպքում կանայք հիմնականում կատարում են այսպես կոչված կանացի աշխատանք, տղամարդիկ՝ տղամարդու: Կանայք մասնավորապես զբաղվում են անվճար տնային գործերով և երեխաների դաստիարակությամբ, զբաղեցնում ցածր վճարվող պաշտոններ: Օրինակ, կրթության և սոցիալական ապահովության համակարգում, թեթև արդյունաբերության և մշակութային ոլորտներում գերակշռում են կանայք: Տնտեսության, քաղաքականության մեջ, այսինքն՝ այնտեղ, որտեղ լուրջ միջոցներ են ներդրվում և ողջ հասարակությանը վերաբերող որոշումներ ընդունվում, աշխատում են հիմնականում տղամարդիկ: Հասարակության մեջ աշխատանքի բաժանումն ուղղորդվում է ըստ սեռերի կարողությունների և իրավունքների մասին գերակշռող սկզբունքների: Պաշտոնավարող կանանց քանակի սահմանափակումը ցույց է տալիս կանանց թերագնահատված լինելը:

2. Կանանց շրջանում գործազրկությամբ: Ի տարբերություն տղամարդկանց՝ կանայք հաճախ աշխատում են ժամանակավոր պայմանագրերով և երկար ժամանակով անզործ մնում: Գործազրկությունը երիտասարդ կանանց շրջանում ավելի է գերակշռում, քան տղամարդկանց: 18-30 տարեկան գործազրուկ կանայք ամենահաճախ են հավաքագրվում Արևմտյան և Հյուսիսային Եվրոպա՝ որպես լավ վարձատրվող պարուիխներ կամ մատուցողուիխներ:

## **Երիտասարդները՝ որպես մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ռիսկային խումբ**

Մարդկանց թրաֆիքինգի զոհեր հիմնականում դառնում են այն մարդիկ կամ խմբերը, որոնց կենսամակարդակը ցածր է լինում մինչև նրանց մարդկանց առևտրի զոհ դառնալը: Նմանատիպ մարդիկ պատկանում են ռիսկի խմբի: Գենդերային անհավասարությունը, շարունակվող ավանդական արական սեռի դերի գերիշխումը նույնպես նպաստում է մարդկանց առևտրի զարգացմանը: Բացի աղքատությունը և պատկանելությունը իգական սեռին՝ հաջորդ կարևոր ռիսկի գործոն է համարվում երիտասարդությունը:

### **Հասարակությամբ պայմանավորված պատճառներ**

Տարբեր հասարակություններում երիտասարդները մարդկանց առևտրից պաշտպանվում են տարբեր ձևերով: Ռիսկի գործոնները նույնպես տարբեր հասարակություններում տարբեր են: Կարևոր է հասկանալ, որ մարդկանց առևտրի զարգացումը չի որոշվում ստրկության դեմ ուղղված որևէ գործող օրենքով կամ էլ դրա բացակայությամբ: Այս խնդրի զարգացման աստիճանը հիմնականում որոշվում է պետության ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակով և համապատասխան քաղաքականության առկայությամբ:

Ստորև ներկայացվում են մի քանի հասարակական գործոններ, որոնցով պայմանավորված է երիտասարդների շահագործման ռիսկի ավելացումը:

- **Բարձրագույն կրթությունը** դառնում է չափանիշ, որի համար պետք է վճարել: Մի կողմից բարձրագույն կրթությունը հանդիսանում է նախադրյալ, որի շնորհիվ հեշտ է գտնել աշխատանք ըստ մասնագիտության, մյուս կողմից՝ բարձրագույն կրթության պետպատվերը պակասում է վճարովի տեղերի համեմատ: Մեծամասամբ, ֆինանսական վիճակը թույլ չի տալիս, միաժամանակ գոյություն պաշտպանել և վճարել ուսման համար:
- **Գործազրկությունը** երիտասարդների շրջանում: Հայաստանում գործազրկների բավականաչափ տոկոս են կազմում 18-25 տարեկան երիտասարդները, որոնք չեն կարողանում աշխատանք գտնել՝ չնայած իրենց մեծ ցանկությանն ու աշխատասիրությանը: Պատճառներից մեկը նախնական աշխատանքային փորձի առկայության պահանջն է, որը ներկայացվում է գործատուի կողմից:
- **Պաշտոնների սեռական լրարանջարումը** և **խղորականությունը աշխատանքի շուկայում:** Ընդհանուր առմամբ հետազոտությունները ցույց են տվել, որ աշխատող կանանց թիվը անհամեմատ ցածր է աշխատող

տղամարդկանց թվից: Դա բացատրվում է նրանով, որ շատ գործատուներ նախընտրում են աշխատանքի վերցնել տղամարդկանց, այլ ոչ թե կանանց, քանի որ նրանց կարծիքով հηի կանայք և մայրերը չեն կարող անհրաժեշտ չափով նվիրվել աշխատանքին: Ելնելով նրանց գենդերային պատկանելության ավանդական մտածելակերպից, ենթադրվում է, որ եթե երեխան հիվանդանում է, ապա նրա հետ տանը մնում է մայրը և ոչ թե հայրը:

- *Հասարակության մեջ երիտասարդների և անչափահասների անբարոյականացում:* Արևմտյան զարգացած երկրներում հնարավոր է սա ավելի լուրջ խնդիր է, քան այլ երկրներում: Անչափահասները, երիտասարդ կանայք, որպես սեքսուալ օբյեկտներ ցուցադրվում են գովազդներում, ֆիլմերում և երաժշտական տեսահոլովակներում: Անչափահասների այդ տեսքով հանդես գալը զանգվածային լրատվական միջոցներում ի վերջո հանգեցնում է նրան, որ սեռական հարաբերությունները ավելի երիտասարդների հետ համարվում են բնական, իսկ դա էլ իր հերթին նպաստում է երեխաների և բավականին երիտասարդ մարմնավաճառների պահանջարկի աճին և սեքս-բիզնեսի զարգացմանը:
- *Կախվածություն թմրանյութերից, ալկոհոլից, մոլախաղերից:* Երիտասարդ թմրամոլները, ալկոհոլից տառապողները կամ խաղամոլները հեշտությամբ են դառնում մարդկանց առևտությունների և անմիջապես ծուլակն են ընկնում, քանի որ նրանց վրա հեշտ է ազդել:
- *Կիրառվող նորմերի հակասություն՝ ուղղված երիտասարդներին և նրանց իրական հնարավորություններին:* Այս երևույթի հետևանքով հասարակությունը վերածվում է այսպես կոչված «սպառող» հասարակության, և շատ հաճախ զանգվածային լրատվամիջոցներում, գովազդներում և ֆիլմերում գովազդվում է երիտասարդների կյանքի այնպիսի կենսակերպը, որը գերազանցում է ներկայումս նրանց համար ստեղծված միջին հնարավորությունները:
- *Որոշ խմբերի սոցիալական մեկուսացումը:* Ինչպես անօթևան երեխաները, այնպես էլ այն երեխաները, որոնք հեռացել են մանկատներից և փորձում են ինքնուրույն կյանք սկսել, պատկանում են ոիսկի խմբին, քանի որ նրանք չունեն անհրաժեշտ սոցիալական կապեր և աջակցություն: Կարելի է շատ հեշտությամբ շահել նման երեխաների վստահությունը և չարաշահել այն, եթե նրանք չունեն մշտական բնակավայր և գուրկ են ընտանիքի կամ մեծերի օգնությունից:

- Հրացուցիչ դժվարություններ, որոնց հետ բախվում են հեռավոր մարզերում կամ գյուղերում բնակվող երիտասարդները: Մարզերում կամ գյուղերում ապրող երիտասարդների մեծ մասը չունի շահավետ կապեր՝ բարձր վարձատրվող աշխատանք գտնելու համար:
- Ոչ լիարժեք կանխարգելող աշխաղանքներ՝ ուղղված մարդկանց առևտրի դեմ, որոնք անցկացվում են ուսումնական հաստատություններում կամ զանգվածային լրատվամիջոցների օգնությամբ: Երիտասարդները հաճախ միամիտ են և շատ լավատեսորեն տրամադրված: Երիտասարդները չափից դուրս վստահ են իրենց ուժերի վրա, հավատում են, որ կարող են կառավարել իրենց անգամ նոր և անծանոթ իրավիճակում: Պատահում է, որ երիտասարդները բավականաչափ իրազեկված չեն աշխատանքի հետ կապված այն վտանգների մասին, որոնք առկա են օտար երկրում առանց օրինական աշխատանքի թույլտվության կամ առանց աշխատանքային պայմանագրի աշխատելիս:

### **Սխալ պատկերացում թրաֆիքինգի մասին, որի գոհերն են դառնում երիտասարդները**

2002թ. Հայաստանի տարբեր մարզերում անցկացված սոցիալական հետազոտության արդյունքում, որի շրջանակներում հարցում է անցկացվել միջին և ավագ դպրոցում սովորող և բարձր առաջադիմություն ունեցող աղջկների միջև, պարզվեց, որ նրանցից ոմանք չեն բացառում այլ երկրներում աշխատելու տարբերակը: Հարցման մասնակիցների մեծամասնությունը հայտնեց իր տեսակետը, որ լավ տարբերակ է մեկնել այլ երկիր աշխատելու, քանի որ հնարավոր կլինի վաստակել գումար և, բացի այդ, հնարավոր կլինի տիրապետել որևէ օտար լեզվի: Աղջկները, որոնք ավարտում էին միջին դպրոցը, լավագույն տարբերակ էին համարում օտար երկրում աշխատելու հնարավորությունը այն դեպքում, եթե նրանց չէր հաջողվի ուսումը շարունակել համալսարանում: Երիտասարդները ցանկանում են աշխատել օտար երկրում, սակայն նրանց մոտ շատ ցածր է պաշտոնական ընթացակարգի գիտակցման մակարդակը, ինչպես նաև բացակայում է անվտանգության միջոցների կիրառման մասին տեղեկատվությունը:

Սխալ պատկերացումները կապված մարդկանց առևտրի հետ, որոնք տարածված են երիտասարդների շրջանում.

- Մարդկանց առևտուրը չի սպառնում զգո՞ն մարդկանց, ինչպիսին եմ ես և իմ ընկերները:

- Մարդկանց առևտրի զոհերը գյուղական վայրերից են կամ էլ հանդիսանում են այլ ազգի ներկայացուցիչներ:
- Մարդկանց առևտրի զոհերը իրենք են մեղավոր, քանի որ չափազանց միամիտ են:
- Մարդկանց առևտրով զբաղվողներին հեշտ է ճանաչել, քանի որ նրանք ունեն հանցագործի տեսք և իրենց հանցագործի պես էլ պահում են:
- Ծանոթների կողմից արված աշխատանքի առաջարկներին կարելի է հավատալ:
- Տվյալ երկրի լեզուն և սովորույթները կարելի է անհրաժեշտության դեպքում սովորել տեղում, մի քանի շաբաթվա ընթացքում: Սկզբի համար բավարար է դրական տրամադրվածությունը և անգլերենի իմացությունը:
- Աշխատանքի թույլտվություն և աշխատանքային պայմանագիր անհրաժշտ չէ այն դեպքում, եթե դուք պատրաստվում եք շատ կարճ ժամանակով աշխատել օտար երկրում:
- Զարգացած երկրում հեշտ է գումար վաստակել:

## **Քննարկեք ստորև տրված իրավիճակները:**

### **Իրավիճակ 1.**

Ա.-ն 21 տարեկան է: Նա ցանկանում է աշխատել որպես մոդել, բայց չունի աշխատանքային փորձ: Հունվարի 1-ին նա ստորագրեց պայմանագիր Հ ընկերության հետ, որի համաձայն նա պետք է աշխատեր արտասահմանում որպես մոդել: Մի շաբթ կետեր չներառվեցին աշխատանքային պայմանագրում, բայց դրանց շուրջ եղան բանավոր պայմանավորվածություններ Ա.-ի և ընկերության տնօրենի միջև: Դրանք էին՝

1. Նա պետք է օրական 30 րոպե լիներ բեմում, մնացած ժամանակը նա չպետք է աշխատեր, բայց պետք է լիներ ընկերության տրամադրության տակ:
2. Ընկերությունը օրական երեք անգամ պետք է սնունդ հատկացներ Ա.-ին:
3. Ընկերությունը Ա.-ին պետք է ապահովեր կացարանով:

Սահմանն անցնելուց հետո Ա.-ն գումար խնդրեց սնվելու համար, բայց ընկերության աշխատակիցն ասաց, որ նա դեռևս չի աշխատել, որպեսզի իրեն վճարեն: Եթե Ա.-ն հասավ նպատակակետ երկիր, պարզ դարձավ, որ նա պետք է բնակվի փոքրիկ կացարանում, ընկերության երկու այլ աշխատակիցների հետ: Առաջին

աշխատանքային օրվա ներկայացումից հետո Ա.-ին արգելվեց հեռանալ աշխատավայրից և նրան սնունդ չտրվեց: Հաջորդ օրը, երբ Ա.-ն գումար խնդրեց սննդի համար, նրան ասվեց, որ նախորդ օրը լավ չի աշխատել, և չեն կարող իրեն գումար տալ: Ա.-ն ցանկություն հայտնեց հետ վերադառնալ: Երբ վերադարձից հետո նա դիմեց ընկերության տնօրենին, ստացավ նախօրոք խոստացված գումարի 1/3-ը:

## Իրավիճակ 2.

Գ.-ն և Դ.-ն որոշում են մեկնել Իսպանիա գյուղատնտեսության ոլորտում աշխատելու նպատակով: Նրանց որոշման համար հիմք էր ծառայել տեղական կազմակերպություններից մեկի նրանց աշխատանքով ապահովելու մասին խոստումը: Նրանք վճարեցին 2000 ԱՄՆ դրամ այդ գործակալությանը և մեկնեցին Իսպանիա: Նրանց տարան մի բնակարան, որտեղ ոչ հոսանք կար, ոչ ջուր, ոչ էլ էլեկտրաէներգիա: Տղաները ամեն առավոտ ժամը 6-ին գնում էին այդի միջոց հավաքելու և վերադառնում կեսգիշերին: Վաստակած գումարով կարողանում էին գնել միայն որոշ սննդատեսակներ և ջուր: Մի օր տղաները վերադարձան Հայաստան:

## Իրավիճակ 3.

Լ.-ն համալսարանն ավարտելուց հետո ցանկություն ուներ աշխատելու արտասահմանում: Աշխատանքային գործակալությունը նրան առաջարկեց երեխաներին խնամողի աշխատանք մի ընտանիքում, որտեղ կային մինչև 5 տարեկան երեք երեխաներ: Աշխատանքը Փարիզում էր և Լ.-ին համոզեցին, որ ֆրանսերենի չիմացությունը խնդիր չէ, քանի որ ընտանիքի հետ ապրելով շատ արագ կյուրացնի այդ լեզուն: Նա տուրիստական վիզա ստանալուց հետո մեկնեց Փարիզ: Օդանավակայանում նրան դիմավորեց այդ ընտանիքի ենթադրյալ հայրը և ուղեկցեց տուն: Ճանապարհին նա հարցրեց, թե քանի ամսով է մուտքի վիզա ստացել: Տեղեկանալով որ վիզան մեկ ամսվա համար է, ենթադրյալ հայրը վերցրեց Լ.-ի անձնագիրը վիզան վեց ամսով երկարացնելու համար:

Երբ նրանք ժամանեցին տուն, պարզվեց, որ այնտեղ երեխաներ չկան: «Մենք կատակել ենք: Այս տան երեխան ես եմ, և դուք պետք է ինձ խնամեք», - ասում է ենթադրյալ հայրը և հայտնում, որ Լ.-ն պետք է մարմնավաճառությամբ զբաղվի: Նա սպառնում է Լ.-ին չփորձել որևէ տեղ գանգել կամ որևէ մեկին դիմել, քանի որ ինքը սպանել է նման փորձեր ձեռնարկած այլ մարդկանց:

ԲԱԺԻՆ ||  
ԲԱՆԱՎԵՃԻ  
ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

## Գլուխ 1.

### ԲԱՆԱՎԵՃԻ ԷՌԻԹՅՈՒՆԸ

Բանավեճ և ժողովրդավարություն Բանավեճը ժողովրդավարական հասարակության հենայուներից մեկն է: Ավելի քան երկու հազար տարի առաջ, երբ ժողովրդավարությունը դեռ նոր էր սաղմնավորվում Աթենքում, պոլիսի բնակիչները կանոնավոր կերպով հանդիպում էին հրապարակում առկա հարցերը քննարկելու և դրանց հնարավոր լուծումներ տալու համար: Ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիները որոշում էին, թե ինչ քաղաքականություն է հարկավոր որդեգրել, և ինչպիսի քայլեր պետք է պետությունը ձեռնարկի: Նրանք էին որոշում արդյոք Աթենքը կմասնակցի պատերազմին, որքան զորք կտրամադրի և ինչ մարտավարություն կկիրառի: Այդ մարդիկ նաև նախագծում էին բնակիչների կենցաղին և վարքութարքին վերաբերող օրենքներ: Սակայն այդ օրենքները և որոշումները հեշտությամբ չէին ընդունվում. նախքան հաստատվելը դրանք դառնում էին թեժ բանավեճերի առարկա: Աթենքի քաղաքացիներն ու առաջնորդները վիճում էին, թե ինչը կարող է ընդունելի լինել պոլիսի համար և ինչը՝ ոչ: Քննարկումների միջոցով նրանք փորձում էին որոշել, թե որն է ցանկալի արդյունքին հասնելու ամենաճիշտ ճանապարհը:

Ծատ հասարակություններում գործում է օրենքների ընդունման մեկ այլ կաղապար, որտեղ ժողովրդավարական բանավեճը պարզապես անթույլատրելի է և անհնարին: Օրինակ՝ բացարձակ իշխանության դեպքում միապետը կամ բոնակալը միայնակ է որոշում, թե տվյալ ժամանակահատվածում պետության համար ինչն է լավ և ինչը՝ վատ: Պատկերն այլ է ժողովրդավարական հասարակության պայմաններում. այստեղ իշխանությունը պատկանում է ժողովրդին, խրախուսվում է բազմակարծությունը և ստեղծվում են իրավիճակներ, երբ բախվում են քաղաքացիների շահերը: Սովորաբար միևնույն հարցի շուրջ ձևավորվում են տարբեր տեսակետներ և դրանց բախումը հանգեցնում է բանավեճի:

Այսօր, երբ ժողովրդավարության ընթացքը փոխվել և զարգացում է ապրել, բաց բանավեճը, այնուամենայնիվ, շարունակում է մնալ ժողովրդավարության կայացման անհրաժեշտ նախապայմաններից մեկը: Բանավեճն իր տեղն է գտել մարդու

գործունեության գրեթե բոլոր բնագավառներում՝ օրենսդրական, գործադիր և դատահրավական մարմիններում, զանգվածային լրատվության և կրթական համակարգերում և նույնիսկ միջանձնային հարաբերություններում։ Ինչպես հազարամյակներ առաջ, այնպես էլ այսօր մարդիկ փորձում են քաղաքակիրթ բանավեճի միջոցով ուրվագծել իրենց հասարակության զարգացման ուղին։



Բանավեճը ոչ միայն արտահայտվելու, այլև դիմացինին համոզելու միջոց է։ Բանավիճողի հիմնական նպատակն է իր ունկնդիրներին սեփական տեսակետում համոզել։ Ակնկալվում է, որ բանավեճի արդյունքում կողմերը կհասնեն ընդհանուր, փոխշահավետ և ընդունելի որոշման։ Սակայն անկախ բանավեճի արդյունքից, այն միշտ նպաստում է տեսակետների փոխանակմանն ու դիտարկմանը։ Բանավեճի միջոցով կարելի է քննարկել բազմաթիվ խնդիրներ ու թեմաներ։

Գոյություն ունեն թեմաներ ու խնդիրներ, որոնք վիճարկելի են դառնում միայն պատմական որոշակի ժամանակահատվածներում։ Բերենք համապատասխան օրինակ։ Անտիկ Հունաստանում ստրկությունը վիճահարուց չէր. այն միանգամայն ընդունելի էր։ Արիստոտելը ստրկությունը համարում էր ռասսայական կամ սոցիալական գերակշռության բնական հետևանք։ Սակայն դրանից երկու հազար տարի անց Միացյալ Նահանգներում նոյն ստրկության հարցը դարձավ վիճարկելի հիմնախնդիր։ Ստրկության ընդդիմադիրները սկսեցին այն դիտել որպես մարդու ազատության իրավունքի խախտում, մինչդեռ ստրկատերները պնդում էին, որ յուրաքանչյուր անձ ունի մասնավոր սեփականություն ունենալու և այն՝ առանց պետության միջամտության տնօրինելու իրավունք։ Այսօր, անշուշտ, այս հարցն այլևս վիճարկելի չէ, քանի որ ողջ միջազգային հանրությունը ստրկությունը համարում է մարդու ազատության իրավունքի անընդունելի ուժնահարում։ Իսկ այն, որ այսօր մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը դարձել է միջազգային հարաբերությունների անկյունաքարերից մեկը, ևս անդուլ քաղաքական բանավեճի պտուղ է։

## **Տեսակետները և դրանց դիտարկման մակարդակները**

Ժողովրդավարական հասարակությունում քաղաքացիներն ազատ են արտահայտելու իրենց տարակարծիք տեսակետները։ Սակայն այդ տարակարծություններն էապես

տարբերվում են. դրանց մի մասը պահանջում է գործնական լուծումներ, մյուսներն ընդարձակ են և վերացական:

Օրինակ՝ Ենթադրենք, որ որևէ պետության օրենսդրական մարմին փորձում է որոշում ընդունել զինամթերքի վաճառքի վերաբերյալ: Ճիշտ որոշում կայացնելու համար հարկավոր է դիտարկել այս խնդրի վերաբերյալ առկա հակասական տեսակետները և կարողանալ դրանք հարաբերակցել: Մի կողմից զինամթերքը վտանգ է ներկայացնում պետության քաղաքացիների անվտանգության համար: Ուստի օրենսդրական մարմինը պետք է որոշի, թե որքանով է ոհսկային զինամթերքի օգտագործումը: Մյուս կողմից, պետք է հաշվի առնել այն մարդկանց շահերը, որոնք առնչվում են զինամթերքի արտադրությանն ու վաճառքին: Այս երկու ծայրահեղ տեսակետները դիտարկելիս առաջանում են մի շարք միջանկյալ փոխգիշումային կարծիքներ և հարցեր, որոնք այդ ծայրահեղ տեսակետների դիտարկման մակարդակներն են: Օրինակ՝ եթե պետությունը թույլ է տալիս նման զինամթերքի վաճառքը, այն կարող է արդյո՞ք արտադրվել նաև պետության ներսում: Ինչպիսի՞ ազդեցություն կունենա զինամթերքի տեղական արտադրությունը պետության խաղաղավարության վրա: Միաժամանակ, օրենսդիրները պետք է դիտարկեն այդ խնդրի տնտեսական կողմը. զինամթերքի արտադրողները պետությանն են վճարում հսկայական հարկեր:

Այս օրինակը կարելի է շարունակ զարգացնել, սակայն ակնհայտ է այն, որ միևնույն հարցը կարելի է դիտարկել տարբեր տեսանկյուններից: Միայն բոլոր հնարավոր տեսակետների և դրանց մակարդակների դիտարկման ու հանգամանալից քննարկման միջոցով կարելի է ընդունել փոխգիշումային որոշում: Բանավեճի միջոցով կարելի է ի հայտ բերել հիմնախնդրին առնչվող բոլոր հարցերը, տալ դրանց հանգուցալուծումը և, ի վերջո, կայացնել փոխշահավետ որոշում:

Բանավեճ կարող է ծավալվել ինչպես գործնական, այնպես էլ տեսական թեմաների շուրջ: Զինամթերքի վաճառքը գործնական խնդրի օրինակ է, մինչդեռ ստրկության վերաբերյալ թեման շատ ավելի տեսական է: Ստրկությունը քննարկելիս կարելի է նաև բարձրացնել գործնական լուծում պահանջող հարցեր: Օրինակ՝ ի՞նչ ազդեցություն ունեցավ ստրուկների ազատ արձակումը Միացյալ Նահանգների տնտեսության վրա, կամ ստրկական աշխատանքի պահպանման դեպքում ինչպիսի՞ն կլիներ ստրուկների սոցիալական վիճակը: Սակայն, տվյալ պատմական

ժամանակաշրջանում նման գործնական հարցերի բարձրացումը համեմատաբար կարևոր չէր, քանի որ առկա էր շատ ավելի առաջնային հարց՝ որքանով էր ստրկությունը բարոյապես ընդունելի և ճիշտ, այլ ոչ թե որքանով էր այն ծախսատար:

Հիմնականում քաղաքական աշխարհում ընթացող բանավեճերն այս երկու ծայրահեղությունների միջև միջանկյալ դիրք են գրավում. դրանք ո՞չ գործնական են, ո՞չ էլ զուտ վերացական: Մի կողմից, բանավեճն ի հայտ է բերում տեսական դիրքորոշումների հետևում առկա գործնական խնդիրները, մյուս կողմից՝ բացահայտում գործնական հարցերի հիմքում ընկած վերացական գաղափարներն ու տեսությունները:

## Գլուխ 1. Ի՞նչ սովորեցինք

- ❶ Ինչպիսի՞ն է կապը բանավեճի և ժողովրդավարության միջև:
- ❷ Արդյո՞ք տեսական, թե գործնական խնդիրը կարող է հանդիսանալ ուսուցողական բանավեճի թեմա:

## Գլուխ 2.

### ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԲԱՆԱՎԵՃԻ ԱՐՄԱՏԱԵՐԸ



#### Ի՞նչ է ուսուցողական բանավեճը

**Բանավեճը վիճելի հարցի շուրջ դարբեր հիմնավորումների, փաստարկների, պնդումների ու ապացույցների ձևակերպումն ու արդահայփումն է:** Բանավիճելը կարող է օգնել Ձեզ ճիշտ որոշումներ կայացնել: Գոյություն ունեն բանավեճերի տարբեր ձևեր, սակայն դրանց բոլորին միավորում է մտքերի փոխանակումը, բազմակարծությունը և որոշակի եզրահանգումների հասնելը:

Ուսուցողական բանավեճը սովորեցնում է քննարկվող թեմայի շրջանակներում պաշտպանել Ձեր շահերն ու իրավունքները: Բանավեճի ընթացքում հնարավորություն եք ստանում քննարկել և վերլուծել հասարակական նշանակության բարդ խնդիրներ, ներկայացված փաստերի հիման վրա կառուցել հիմնավոր փաստարկներ, ինչպես նաև շեշտակի և տրամաբանական հակափաստարկների միջոցով հերքել հակառակորդ թիմի դիրքորոշումը: Սակայն բանավեճին լավ նախապատրաստվելու և ներկայանալու համար հարկավոր է բավականաչափ ժամանակ և ջանք գործադրել:

**❶ Առաջին՝ հարկ կլինի բանավեճին նախապատրաստվել թիմի բոլոր անդամների հետ միասին՝ ապահովելով ինֆորմացիայի փոխանակումն ու նյութի միասնական վերլուծությունը, քանի որ բանավեճ-մրցույթներին, որպես կանոն, մասնակցում են թիմերով: Հետ միասին՝ ապահովելով ինֆորմացիայի փոխանակումն ու նյութի միասնական վերլուծությունը, քանի որ բանավեճ-մրցույթներին, որպես կանոն, մասնակցում են թիմերով:**

**❷ Երկրորդ՝ բանավեճի ընթացքում գերակշիռ դիրք գրավելու համար հարկավոր է ոչ միայն մանրամասն ուսումնասիրել Ձեր դիրքորոշումը ներկայացնող փաստերն ու տեղեկատվությունը, այլև՝ քաջատեղյակ լինել հակառակորդ թիմի դիրքորոշման առավելություններից ու թերություններից:**

Այս ամենը բավականին ժամանակատար է, բայց փոխարենը թույլ է տալիս Ձեզ զարգացնել մի շարք հմտություններ, ինչպիսիք են վերլուծական և քննադատական մտածողությունը, հոեսորական ձիրքը և այլն: Բանավեճ-մրցույթներին մասնակցելու մեկ ուրիշ առավելությունն այն է, որ Դուք դառնում եք մեկ ընդհանուր նպատակի շուրջ համախմբված թիմի անդամ՝ ակամայից զարգացնելով թիմային ոգին և նպաստելով թիմի հաղթանակին:

Ճիշտ բանավիճելու համար հարկավոր է իմանալ, թե ինչպես կազմել լավ հիմնավորված և բանավեճ հրահրող փաստարկ, ինչպես նաև հակառակորդ թիմի փաստարկների դեմ առաջ քաշել համարժեք հակափաստարկներ:

Բանավիճելու հմտությունն իսկապես կարևորվում է մի շարք պատճառներով:

**❶ Առաջին՝ ծանրակշիռ փաստարկներ բերելու համար անհրաժեշտ է ի մի բերել Ձեր ունեցած փաստերի, տվյալների, տեղեկությունների և ուսումնասիրությունների ամբողջ պաշարը և, այդ ամենը համակարգելով, կառուցել համոզիչ փաստարկներ: Այս գործընթացը չի կարող դրական ազդեցություն չունենալ քննադատական և վերլուծական մտածողության զարգացման վրա: Թիմի դատողությունները չեն կարող կառուցվել զուտ Ձեր սուբյեկտիվ տեսակետի հիման վրա. հարկավոր է առավել խորն ուսումնասիրել տվյալ հարցը և ձևավորել հնարավորինս օբյեկտիվ կարծիք:**

**❷ Երկրորդ՝** բանավեճն օգնում է մարդկանց վրա ազդեցություն գործել. այն սովորեցնում է ձևակերպել ուժեղ և ճշգրիտ փաստարկներ՝ դիմացինին համոզելով Ձեր դիրքորոշման ճշմարտացիության մեջ: Հնարավոր է, որ լավ գաղափարներ և մտքեր ունենաք, սակայն այս հմտության բացակայության դեպքում Ձեզ պարզապես չի հաջողվի համախոհներ ձեռք բերել:

 Բանավեճը նաև կսովորեցնի քննադատորեն գնահատել փաստարկները: Երբեմն թվում է, թե փաստարկը բավականին համոզիչ է, սակայն հրականում այն սխալ է և շփոթեցնող: Բանավեճի միջոցով Դուք կսովորեք տարբերակել ճիշտ և սխալ ձևակերպված փաստարկները, ինչպես նաև պատշաճ կերպով պաշտպանել Ձեր իսկ փաստարկները: Պետք է հիշել, որ քննադատությունը փաստարկների ուղղակի ժխտում չէ. եթե Ձեր անձնական

կարծիքը չի համընկնում տվյալ փաստարկին, սա դեռևս բավարար հիմք չէ փաստարկը սխալ համարելու համար: Քննադատությունը թույլ է տալիս փաստարկը զտել սխալներից՝ դարձնելով այն առավել ուժեղ և համոզիչ:

## Բանավեճի գործառույթները

Ժողովրդավարական հասարակությունում բանավեճը կատարում է մի շարք գործառույթներ:

Բանավեճը մարդկանց օգնում է գնահատել ինչպես անցած ուղին, այնպես էլ ներկայի արժեքները: Հասկանալով անցյալը և ծանոթանալով տարբեր արժեքային համակարգերին՝ աշակերտները կարող են ավելի լավ գնահատել ներկան և ուրվագծել ապագան:

Բանավեճը մարդկանց թույլ է տալիս գնահատել ընդունակության իրավունքը՝ դրվագ ինդրի շուրջ ծավալելով համակողմանի քննարկումներ և առաջարկելով մի շարք լուծումներ: Իսկ քանի որ ոչինչ երբեմն անփոփոխ չի մնում, քննարկման խնդիրները մշտապես շարունակում են ծագել. ինչպես է պետք բաշխել ուսուրաները, ինչպիսի՞ ծրագրեր են հարկավոր երկրի ներքին և արտաքին անվտանգությունը պահպանելու համար և այլն: Բոլոր հարցերի պատասխանները կարող ենք գտնել բանավեճի միջոցով, որը որոշ դեպքերում պաշտպանում է առկա քաղաքականությունը, իսկ մնացած դեպքերում՝ այլընտրանք առաջարկում:

Բանավեճը ծնավորում է այնպիսի հմտություններ, որոնց միջոցով մարդիկ կարող են ծավալել առողջ քննարկում: Այն նպաստում է լավ փաստաբաններ և հոեսորներ նախապատրաստելուն, ինչպես նաև սովորեցնում է համբերությամբ լսել մարդկանց և հանդուրժողական վերաբերմունք ցուցաբերել մյուսների արտահայտած կարծիքների նկատմամբ: Բանավեճն իրենից ներկայացնում է հարգալից միջավայրում մտքերի կառուցողական փոխանակում, որն էլ իր հերթին բերում է ընդհանուր որոշման ընդունման:

Յուրաքանչյուր քաղաքակիրթ բանավեճ ունի հետևյալ **հիմունքները**.

" ◎ Բանավեճը կարծիքների, տեսակետների և դիրքորոշումների փոխանակում է:

" ◎ Բանավեճը հաջողվում է միայն այն դեպքում, երբ մասնակիցները միավորվում են մեկ ընդհանուր նպատակի շուրջ, այն է՝ առավելագույնս պաշտպանել սեփական թիմի դիրքորոշումը և դրա հետ մեկտեղ ձգտել հասնել ընդհանուր հայտարարի:

" ◎ Բանավեճ կարող է հաջողվել միայն այն դեպքում, երբ թիմերն իրար նկատմամբ փոխհարգալից են: Բանավիճողը պետք է հարգալից լինի դիմացինի հանդեպ, անկախ այն բանից, թե նա ինչ տեսակետ է արտահայտում:


" ◎ Բանավեճը պետք է լինի նյութերի հավաքագրման և դրանց միջոցով փաստարկների ձևակերպման արդյունք:

## **Բանավեճի մասնակիցները**

Բանավեճում միշտ առկա է երկու կողմ՝

**Կողմ**

**Դեմ**




«Կողմ» թիմը միշտ պաշտպանում է քննարկվող հարցադրման կամ բանաձևի մեջ արդահայտված դիրքորոշումը, իսկ «դեմ» թիմը՝ ներկայացնում է հակադրվող դիրքորոշում: Օրինակ՝ «Արդյո՞ք պետությունը պետք է օրինականացնի աղանդավորական շարժումների գործունեությունը» հարցադրման դեպքում «կողմ» թիմը պետք է պաշտպանի հետևյալ դիրքորոշումը՝ «Այո՛, պետությունը պետք է օրինականացնի աղանդավորական շարժումների գործունեությունը», իսկ «դեմ» թիմը՝ «Ո՛չ, պետությունը չպետք է օրինականացնի աղանդավորական շարժումների գործունեությունը» ներկայացնող դիրքորոշումը: Նմանապես, «Պետությունը չպետք է

օրինականացնի աղանդավորական շարժումների գործունեությունը» բանաձևի դեպքում «կողմ» թիմը ներկայացնում է «Այո՛, պետությունը չպետք է օրինականացնի աղանդավորական շարժումների գործունեությունը», իսկ «դեմ» թիմը՝ «Ո՛չ, պետությունը պետք է օրինականացնի աղանդավորական շարժումների գործունեությունը» դիրքորոշումը:

Բանավեճ-մրցույթի ընթացքում թիմերն իրենց դիրքորոշումն ապացուցելու համար համապատասխան փաստարկներ են ներկայացնում դատավորին կամ դատավորներին, ովքեր էլ որոշում են բանավեճ-մրցույթի հաղթողին:

Դատավորի որոշումը որևէ կերպ կախված չէ բանավեճի թեմայի նկատմամբ նրա անձնական վերաբերմունքից: Դատավորը պետք է լինի անկողմնակալ և վերջնական որոշում կայացնի՝ ելնելով թիմերի պատրաստվածությունից (օրինակ՝ ինչպես եք վերլուծում քննարկվող թեման, խնդիրը, հարցադրումը կամ բանաձևը, որքանով են ներկայացված փաստարկները համապատասխանում և արդարացնում ձեր դիրքորոշումը, ինչ հակափաստարկներով եք հերքում հակառակորդ թիմի դիրքորոշումը և այլն):



**Ուսուցողական բանավեճը ոչ թե միջանձնային, այլ գուտ գաղափարային հակադրություն է:** Այն, որ հակառակորդ թիմերի մասնակիցները բանավեճի ընթացքում շարունակ հակադրվում են միմյանց, դեռևս չի նշանակում, որ իրական կյանքում ևս նրանց միջև գոյություն ունեն տարածայնություններ կամ թշնամանք: Բանավեճ-մրցույթների ժամանակ հեգնանքն ու վիրավորանքն անթույլատրելի են. դրանց կիրառումը խստապես պատժվում է դատավորների կողմից: Անցկացնելով գիտակից և քաղաքավարի բանավեճ՝ Դուք սովորում եք հասարակական նշանակության խնդիրների վերաբերյալ որոշումներ կայացնել կամ լուծումներ առաջարկել առողջ դատողության, վերլուծության և փաստարկման միջոցով՝ տուրք չտալով անտեղի զգացմունքներին:

Ինչպես արդեն նշվել է, բանավեճի հիմնական նպատակն է սոցիալական և քաղաքական խնդիրների լուծումներ գտնելը և փոխգիշումների հասնելը: Այնուամենայնիվ, բանավեճ-մրցույթների դեպքում հակառակորդ թիմի հետ համաձայնության եզրեր գտնելը չի կարևորվում. թիմերն այստեղ պետք է փորձեն

հիմնավոր փաստարկներ ներկայացնելու միջոցով անզիջում դիրք գրավել, որպեսզի դատավորը համոզվի նրանց դիրքորոշման արդարացիության մեջ և բարձր գնահատականներ շնորհի տվյալ թիմին: Բանավեճ-մրցույթների ընթացակարգային կանոնները յուրաքանչյուր թիմին հավասար և արդար հնարավորություն են տալիս հաղթանակ տանելու բանավեճի ընթացքում:

Ավանդական ուսուցողական բանավեճին մասնակցում է երկու թիմ, որոնցից մեկը պետք է ներկայացնի իր դիրքորոշումը, իսկ մյուսը՝ հակափաստարկներ բերի: Թիմերը պետք է ամեն ճիգ գործադրեն իրենց տեսակետը պաշտպանելու համար: Կողմերի ելույթները պետք է այնպես կառուցված լինեն, որ լավագույնս բացատրեն իրենց դիրքորոշման էությունը և լսարանի ու դատավորների համար այն ավելի համոզիչ դարձնեն:

## «ԿՈՂՄ» ԹԻՄԸ

«Կողմ» թիմին տրվում է առաջինը խոսելու իրավունքը, քանի որ «դեմ» թիմը չի կարող պաշտպանել կամ մերժել քննարկվող խնդիրը, մինչև չիմանա, թե  կոնկրետ ինչ «մեղադրանքներով» և առաջարկներով է հանդես գալիս հակառակորդ թիմը: Նմանապես «կողմ» թիմին է տրվում նաև առաջինը եզրափակիչ ելույթ ունենալու իրավունքը:

## «ԴԵՄ» ԹԻՄԸ

Դեմ հանդես եկող թիմն իր հերթին պետք է.



- կասկածի տակ դնի հակառակորդ թիմի առաջարկած դիրքորոշումը,
- հիմնավոր փաստարկներով հերքի այդ դիրքորոշումը,
- որոշակի պնդումներով և ապացույցներով ներկայացնի իր դիրքորոշումը:

## Բանավեճի կառուցվածքը

Գոյություն ունի ուսուցողական բանավեճի անցկացման երկու տարբերակ:



1 Առաջինը, որն առավել հայտնի է «Օքսֆորդ» կամ «ստանդարտ բանավեճ» անունով, կիրառվում է մի շարք միջազգային մրցաշարերում: Ստանդարտ բանավեճի դեպքում յուրաքանչյուր թիմ ունի երկու կառուցողական և երկու հակահարված ելույթի իրավունք: Այստեղ թիմերն իրավունք չունեն միմյանց հարցեր տալու: Բանավեճի անցկացման այս տարբերակն առավել նպատակահարմար է սկսնակ բանավիճողների համար, քանի որ օգնում է գործնականում կիրառել բանավեճի տարրական հմտությունները՝ նախքան ավելի բարդ վարժությունների անցնելը:


2 Բանավեճի անցկացման երկրորդ տարբերակը խաչաձև հարցաքննությունն է: Այս տարբերակում ևս յուրաքանչյուր թիմ ունի երկու կառուցողական ելույթ, սակայն ի տարբերություն առաջին տարբերակի ելույթներին հաջորդում են հարցաքննություններ, այնուհետև հակահարված ելույթներ:

3 Իրավական իրազեկման դպրոցական ակումբներ (LASC) ծրագրի շրջանակներում կիրառվում է բանավեճի անցկացման երրորդ տարբերակը, որը մշակվել է «Երիտասարդական նվաճումներ» կազմակերպության կողմից: Բանավեճի տևողությունը 40 րոպե է:



«Կողմ» թիմի կառուցողական ելույթ

5 րոպե




10 րոպե



«Դեմ» թիմի կառուցողական ելույթը

5 րոպե



10 րոպե



«Կողմ» թիմի եզրափակման խոսքը

5 րոպե



«Դեմ» թիմի եզրափակման խոսքը

5 րոպե

Յուրաքանչյուր կողմի կառուցողական ելույթին հաջորդում է հարցաքննությունը: Այսինքն, «կողմ» թիմի կառուցողական ելույթից հետո «դեմ» թիմն իր հարցերն է ուղղում «կողմ» թիմին: Հարց ու պատասխանի ընթացքում յուրաքանչյուր թիմ ունի առնվազն 4 հարց տալու իրավունք՝ 30-ական վայրկյան տևողությամբ: Պատասխանների տևողությունը չի կարող գերազանցել 2 րոպեն:

Ձեռնարկի հաջորդ գլուխներում դեռ կքննարկենք, թե ինչպես պետք է պատրաստվեն թիմերը, ինչպիսի կառուցվածք պետք է ունենան կողմերի ելույթները, և ինչ մարտավարություն պետք է որդեգրի կողմերից յուրաքանչյուրը:

## Գլուխ 2. Ի՞նչ սովորեցինք


- ❶ Ինչի՞ն պետք է ուշադրություն դարձնել բանավեճի նախապատրաստվելու և գրագետ բանավիճելու համար:
- ❷ Ո՞րն է բանավիճելու հմտության կարևորությունը:
- ❸ Բերե՛ք բանավեճի հարցադրման որևէ օրինակ և նշե՛ք, թե ինչ կողմնորոշումներ կունենան այդ դեպքում «Կողմ» և «Դեմ» թիմերը:
- ❹ **Նկարագրե՛ք 'Իրավական իրազեկման դպրոցական ակումբներ' ծրագրի բանավեճի կառուցվածքը և տևողությունը:**

## Գլուխ 3.

### ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀԻՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆՆ

#### Վերլուծական հմտությունների անհիրաժեշտությունը

Ինչպես արդեն նշվել է, քաղաքացիները քաղաքակիրթ բանավեճի միջոցով փորձում են ուրվագծել իրենց հասարակության զարգացման ուղին: Յուրաքանչյուր բանավեճի հիմնական նպատակն է քննարկվող խնդրի/թեմայի վերաբերյալ առաջարկել որոշակի լուծումներ կամ վճիռներ: Արդյունավետ բանավեճ իրականացնելու համար նախ անհիրաժեշտ է մանրամասն վերլուծության ենթարկել քննարկվող թեման՝ այն ամբողջությամբ ընկալելու և հստակ դիրքորոշում մշակելու համար: Բանավեճին ըստ արժանվույն նախապատրաստվելու կարևորագույն գրավականներից է խնդրի համակողմանի վերլուծությունը:



Վերլուծությունն ամբողջականի տարաբաժանումն է առանձին բաղադրիչների՝ վերջիններս ավելի մանրամասն ուսումնասիրելու, և համապատասխան եզրահանգումներ կատարելու համար: Գոյություն ունեն նման տարաբաժանման բազմաթիվ ձևեր: Սակայն բանավեճին նախապատրաստվելու համար առավել նպատակահարմար է վերլուծություն կատարել ըստ հետևյալ քայլերի:

- ❶ Վերլուծել և ընտրել բանավեճին համապատասխան թեմա կամ խնդիր (եթե բանավեճի կազմակերպիչը Դուք եք և իրավասու եք առաջարկել բանավեճի թեմաներ),
- ❷ Վերլուծել թեման/խնդիրը ըստ խնդրի սահմանման,
- ❸ Վերլուծել թեման/խնդիրը ըստ խնդրի բնագավառի,
- ❹ Վերլուծել թեման/խնդիրը ըստ լսարանի:

## Բանավեճի թեմայի վերլուծությունը և ընտրությունը

Եթե Դուք բանավեճի կազմակերպիչն եք կամ իրավասու եք առաջարկել բանավեճի թեմա ներ, վերլուծությունը նախ և առաջ պետք է սկսեք բանավեճի թեմայի կամ քննարկվող խնդիր ընտրությունից:



Բանավեճի թեմա կարող է դառնալ ցանկացած վիճարկելի հարցադրում կամ բանաձև, որն ունի արժեքային կամ քաղաքական կարևորություն: Բանավեճի թեման կարելի է ձևակերպել կամ որպես *հարցադրում* (օրինակ՝ «Արդյո՞ք ՄԱԿ-ը պետք է հատուկ քաղաքականություն վարի՝ մարդկանց բռնի վաճառքը կանխարգելելու համար»), կամ որպես *բանաձև* (օրինակ՝ «ՄԱԿ-ը պետք է հատուկ քաղաքականություն վարի՝ մարդկանց բռնի վաճառքը կանխարգելելու համար»): Խորհուրդ չի տրվում որպես բանավեճի քննարկման առարկա ընտրել այնպիսի թեմաներ, որոնք փաստ են արձանագրում. փաստերն ինքնին անվիճարկելի են: Օրինակ՝ անհմաստ կինի բանավեճ անցկացնել այն մասին, թե որն է Հիմալայների ամենաբարձր գագաթը:

## Բանավեճի թեման պետք է համապատասխանի հետևյալ յոթ չափանիշներին:

❶ Բանավեճի թեման պետք է լինի **նշանակալից և կարևոր**: Լուրջ բանավեճեր կազմակերպելիս սովորաբար ընտրում են այնպիսի թեմա կամ խնդիր, որն առնչվում է կամ բանավեճի մասնակիցների ու լսարանի հետաքրքրության ու գործունեության շրջանակներին, կամ էլ պետական ու համաշխարհային նշանակության խնդիրների հետ:

❷ Թեման ձևակերպելիս պետք է խոսափել չափազանց **անորոշ կամ երկիմասպ արդարակայություններ օգտագործելուց**: Եթե բանաձևը կամ հարցադրումը չափազանց անորոշ է, վերջինիս մեկնաբանությունները ևս չափազանց բազմազան կլինեն՝ առաջացնելով անհեթեթ բանավեճ: Օրինակ՝ «1990-ականների սերունդը չափազանց ազատ դաստիարակություն է



ստացել» բանաձևը տարբեր մարդիկ կարող են բոլորովին տարբեր տեսանկյուններից մեկնաբանել՝ չգտնելով քննարկման ընդհանուր կետեր: Որտե՞ղ (ո՞ր երկրներում), ե՞րբ (1990-ականները չափազանց մեծ ժամանակահատված է), ի՞նչ է նշանակում ազատ դաստիարակություն և նման այլ հարցերը բանաձևը դարձնում են չափազանց անորոշ և բացառում որոշակի ու փոխկապակցված «կողմ» և «դեմ» դիրքորոշումներ մշակելու հնարավորությունը:

**❸ Թեման պետք է որոշակի առումով լինի **գործնական**:** Այս առումով խորհուրդ չի տրվում բանավեճի առարկա դարձնել այնպիսի թեմաներ, որոնց հավաստիությունը իհմնված է զուտ սուբյեկտիվ ընկալումների,  հավատքի կամ անձնական փորձի վրա (այսինքն՝ անհնար է տարբերակել ճիշտն ու սխալը): Օրինակ՝ «Արդյո՞ք գոյություն ունի Աստված», «Փողը երջանկություն է» և նման այլ թեմաների շուրջ անհնար է ծավալել կառուցղական բանավեճ, քանի որ դրանք չափազանց վերացական են և կարող են անպտուղ քննարկման առիթ հանդիսանալ: Նմանապես, խորհուրդ չի տրվում բանավեճել խորը մասնագիտական թեմաների շուրջ: **Բանավեճի թեման ընդունելիս պետք է գտնել «ոսկե միջինը» գործնական, դեսական և վերացական թեմաների միջև** (օրինակ՝ «Արդյո՞ք աղանդավորական շարժումների տարածումը և նրանց գործունեության օրինականացումը նպաստում է հասարակության մեջ հանդուժողականության տարածմանը»):

**❹ Թեման պետք է ունենա **լուծման հնարավորություն**:**

Արդյունավետ բանավեճի համար սովորաբար ընտրում են այնպիսի

թեմա, որը գտնվում է պետության դեկավար մարմինների



իրավասության ներքո, քանի որ այդ դեպքում միշտ առկա է տվյալ

խնդրի վերաբերյալ պետական դիրքորոշումը՝ լուծման տարբերակը, ինչպես նաև հասարակական այլ ուժերի կողմից առաջադրված այլընտրանքային տարբերակները:

**❺ Քննարկվող թեման կամ խնդիրը պետք է լինի **արդիական**, որպեսզի բանավեճի մասնակիցներն ու լսարանը պատշաճ հետաքրքրություն ցուցաբերեն բանավեճի նկատմամբ՝ առաջարկելով որոշակի լուծումներ և մեկնաբանություններ:**

**❻ Կայունությունը** ևս հանդիսանում է բանավեճի թեմայի ընտրության չափանիշներից մեկը: Թեմա/խնդիր ընտրելիս պետք է համոզված լինել, որ այն կշարունակի մնալ չլուծված ինչպես բանավեճի նախապատրաստական



փովում, այնպես էլ բուն բանավեճի ընթացքում: Այլապես, եթե քննարկվող խնդիրը ներպետական կամ միջազգային մակարդակով լուծում ստանա մինչև բանավեճի ավարտը, բանավեճի անցկացումը կդառնա անհմաստ:

7 Թեման պետք է **հավասարապես վիճարկելի** լինի բանավեճի «կողմ» և «դեմ» թիմերի համար: Եթե թեման/խնդիրը վիճարկելի չէ, կողմերից մեկն ակնհայտ առավելություն է ձեռք բերում մյուս կողմի նկատմամբ՝ ձախողելով կառուցողական բանավեճը: Խորհուրդ չի տրվում նաև ընտրել այնպիսի թեմաներ, որոնք փաստ են արձանագրում. փաստերն ինքնին անվիճարկելի են: Օրինակ՝ անհմաստ կինի բանավեճ անցկացնել այն մասին, թե որն է Հիմալայների ամենաբարձր գագաթը:



### Բանավեճի թեմայի սահմանման վերլուծությունը

Յուրաքանչյուր բանավեճից առաջ մասնակիցներին տրամադրվում է քննարկվելիք թեմայի կամ խնդրի սահմանումը: Օրինակ՝ «Շենգենյան զոնա - ազատ տեղաշարժի հնարավորություն, թե՛ ապօրինի առևտրի մեխանիզմ». այս թեմայի շուրջ որևէ վերլուծություն և հետազոտություն կատարելուց առաջ հարկավոր է պարզել վերոհիշյալ սահմանման յուրաքանչյուր բառի իմաստը: Այս դեպքում խորհուրդ է տրվում օգտագործել մասնագիտական բառարաններ, հանրագիտարաններ և դասագրքեր, ինչպես նաև ինտերնետային տեղեկատվական կայքեր:

### Բանավեճի թեմայի բնագավառի վերլուծությունը

Բանավեճի նախապատրաստվելիս հարկավոր է պարզել, թե քննարկվող խնդիրը որ բնագավառի կամ ոլորտի հետ է առնչվում: Խնդրի բնագավառը լայն հասկացություն է, որն իր մեջ ներառում է նմանատիա բազմաթիվ խնդիրներ: Օրինակ՝ շրջակա միջավայրի աղտոտվածությունը մի ընդհանուր բնագավառ է, որի բաղկացուցիչ մասն են կազմում օդի, ջրի կամ հողի աղտոտվածության և այլ նմանատիա խնդիրները: Խնդրի բնագավառի բացահայտումը Ձեզ կօգնի ծանոթանալ բանավեճի խնդրի հետ սերտորեն առնչվող այլ խնդիրներին և համակողմանի պատկերացում ստանալ խնդրի առաջացման և զարգացման նախադրյալների վերաբերյալ:

## Նյութի վերլուծությունը և պնդումների կառուցումը

Բանավիճողները պետք է իրենց պնդումները կառուցեն և մշակեն հավաքագրված նյութի վերլուծության միջոցով: Բանավեճի ընթացքում պնդումները հիմնավորում են ձեր դիրքորոշում՝ հող պատրաստելով հետագա քննարկման և բանավեճի համար: Պնդումները ներկայացնելիս անհրաժեշտ է դրանք հիմնավորել որոշակի ապացույցներով կամ բացատրություններով: Հիմնավոր ապացույցներ և բացատրություններ (մեկնաբանություններ, վերլուծություններ) ներկայացնելու դեպքում ձեր պնդումները կարող են լինել անվիճարկելի: Սակայն եթե դրանք լինեն թյուր և ոչ հավաստի, ապա կարող են կասկածի տակ դրվել հակառակորդ թիմի կողմից և հերքվել: Թեժ բանավեճի առարկա կարող են դառնալ հատկապես այն պնդումները, որոնք չափազանց միանշանակ են և առաջադրում են արմատական ընտրություն:

## Գլուխ 3. Ի՞նչ սովորեցինք


- ❶ Որո՞նք են արդյունավետ բանավեճի թեմայի չափանիշները:
- ❷ Գնահատե՞ք ստորև թվարկած թեմաները ըստ այդ չափանիշների, և եթե հարկ է, վերաձևակերպեք՝
  - Սպառողների իրավունքները <<-ում պաշտպանված են:
  - <<-ում հաշմանդամություն ունեցող անձիք գտնվում են պետության հոգածության ներքո:
  - <<-ում պատմամշակութային հուշարձանների պաշտպանությունը պետության գերակա խնդիրներից է:

## Գլուխ 4.

### ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐ

#### Առանցքային արժեք

Բանավեճը ծնվում է այն ժամանակ, երբ չեն համընկնում երկու կողմերի սկզբունքները, արժեքները կամ գաղափարները: Հետևաբար, բանավիճելիս յուրաքանչյուր կողմ հետապնդում է մի նպատակ՝ ապացուցել դիմացինին, որ իր սկզբունքն, արժեքը կամ գաղափարը ճշմարիտ է: Նպատակին հասնելու համար կողմը, հիմնվելով այդ սկզբունքի, արժեքի կամ գաղափարի վրա, կառուցում է իր դիրքորոշումը: Այն սկզբունքը, արժեքը կամ գաղափարը, որի հիման վրա կողմը պաշտպանում է իր դիրքորոշումը, անվանվում է **առանցքային արժեք**:



Առանցքային արժեքներ գոյություն ունեն նաև իրական կյանքում: ԶԷ՞ որ բոլորս էլ մեր կյանքում բազմաթիվ անգամներ հայտնվում ենք իրավիճակներում, երբ ստիպված ենք լինում դժվարին ընտրություն անել կամ պատասխանատու որոշում կայացնել: Նման իրավիճակներում մեր ընտրությունը կամ որոշումը հիմնվում է այն առանցքային արժեքների վրա, որոնցով մենք առաջնորդվում ենք կյանքում:


Բանավեճի նախապատրաստական փուլում՝ նախքան նյութերի հավաքագրումը, յուրաքանչյուր թիմ պետք է մանրամասն վերլուծի բանավեճի թեման, և, քննարկելով առանցքային արժեքի մի շարք տարբերակներ, ընտրի դրանցից ամենաառաջնայինը: Օրինակ՝ եթե բանավեճը հղիության արհեստական ընդհատման մասին է, և Ձեր թիմը դեմ է հղիության արհեստական ընդհատման օրինականացմանը, ապա առանցքային արժեք կարող է լինել հարցի կամ իրավական կողմը (յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք, որն ամրագրվում է որպես միջազգային իրավունքի նորմ), կամ կրոնական կողմը (կյանքն ասրվածային շնորհ է, և մարդն իրավասու չէ այն խլելու): Հնարավոր բոլոր տարբերակներից հարկավոր է ընտրել այն առանցքային արժեքը, որը կօգնի ձեզ մշակել առավել արդյունավետ մարտավարություն, հետևաբար նաև՝ առավել համոզիչ փաստարկներ: Առանցքային արժեքն ընտրելիս թիմի անդամները պետք է պատրաստ լինեն պատճառաբանել և հիմնավորել իրենց ընտրությունը, քանզի եթե հակառակորդ թիմը կասկածի տակ դնի ձեր առանցքային արժեքի հավաստիությունը կամ համապատասխանությունը տվյալ թեմային, դիրքերը չգիշելու համար պետք է ներկայացնեք բավարար հիմնավորումներ:

Առանցքային արժեքները կարող են տարբերվել ըստ բանավեճի թեմայի և բանավիճող կողմերի դիրքորոշման: Օրինակ՝ եթե ձեր դիրքորոշումը հետևյան է՝ «իրավապահ մարմինները իրավունք չունեն խուզարկելու բնակարանները, քանզի նման խուզարկությունը կարող է բացահայտել հասարակական անվտանգության նկատմամբ սպառնալիքներ», առանցքային արժեք ընտրելիս բնակարանի անձեռնմխելիության իրավունքը կգերակայի հասարակական անվտանգության գաղափարի նկատմամբ: Սակայն, եթե խոսում ենք օդանավակայանում ուղևորներին մետաղազնիչով խուզարկելու մասին, հասարակական անվտանգությունը ցանկացած պարագայում կարող է գերակայել այլ առանցքային արժեքների նկատմամբ: Հետևաբար, ցանկացած սկզբունք, արժեք, գաղափար կամ բացարձակ փիլիսոփայական հասկացություն կարող է առանցքային արժեք դառնալ միայն որոշակի համատեքստում:


Կոնստրուկտիվ բանավեճ ապահովելու համար հարկավոր է ընտրել այնպիսի առանցքային արժեք կամ դիրքորոշում, որը համապատասխանում է բանավեճի հարցադրման կամ բանաձևի համատեքստին, այլապես կծախողեք բանավեճը:

Օրինակ՝ թիմերը բանավիճում են պետության՝ միայն պետական լեզվով կրթություն ապահովելու պարտականության մասին:

«Կողմ» թիմի դիրքորոշում



«Դեմ» թիմի դիրքորոշում



Հնարավոր է նաև, որ «դեմ» թիմը ընտրի բոլորովին այլ դիրքորոշում՝ պնդելով, որ դասավանդման լեզուն չի կարող կարևորվել, քանի որ կրթության ոլորտը չպետք է մտնի պետության իրավասության ներքո: Նման դիրքորոշումը, իհարկե, տրամաբանական է, սակայն այն չի համապատասխանում բանավեճի բուն թեմային և ձախողում է կոնստրուկտիվ բանավեճի հնարավորությունները՝ առաջարկելով բոլորովին հակասական, կողմ դիրքորոշման հետ որևէ առնչություն չունեցող տարրերակ:

Առանցքային արժեքն ունի երկու կարևոր առանձնահատկություն: Առաջին՝ առանցքային արժեքը հիմք է ձառայում դիրքորոշման համար, այն ապահովում է ձեր

դիրքորոշման բարոյական կողմը: Երկրորդ՝ հակառակորդ թիմերի դիրքորոշումները միշտ պետք է հակադրվեն, մինչդեռ առանցքային արժեքները կարող են նաև համընկնել: Օրինակ՝ Ղարաբաղյան հիմնահարցի վերաբերյալ բանավեճի դեպքում երկու կողմերն էլ կարող են որպես միասնական առանցքային արժեք ընդունել «խաղաղության անհրաժեշտությունը», սակայն դիրքորոշումները կարող են շեշտակիորեն տարբերվել, քանի որ կտարբերվեն խաղաղության հասնելու վերաբերյալ նրանց մոտեցումները:

#### Գլուխ 4. Ի՞նչ սովորեցինք

- ❶ Ո՞րն է բանավեճի կողմերի կառուցած դիրքորոշման հիմքը:
- ❷ Սահմանե՞ք «առանցքային արժեք» հասկացությունը և թվարկեք նրա բաղկացուցիչ մասերը:
- ❸ Եթե կողմերը բանավիճում են 'Ազգային փոքրամասնությունների շահերը <<-ում պաշտպանված են' թեմայով, ինչպիսի՞ն կարող է լինել «դեմ» թիմի առանցքային արժեքը:
- ❹ Կարո՞ղ են արդյոք հակառակորդ թիմերն ունենալ միևնույն առանցքային արժեքը:


## Գլուխ 5.

### ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՄԵԴԻԱԿԱՆ

#### Դիրքորոշման մշակումը որպես գործընթաց

Ինչպես արդեն նշվել է, ավանդական ուսուցողական բանավեճին մասնակցում է երկու թիմ՝ կողմ և դեմ, որոնցից յուրաքանչյուրը պետք է ներկայացնի քննարկվող թեմայի վերաբերյալ իր դիրքորոշումը։ Դիրքորոշման մշակումը բանավեճի նախապատրաստական փուլի կարևորագույն տարրերից է։ Այն ժամանակատար մի գործընթաց է, որը կարելի է ստորաբաժանել հետևյալ կերպ՝

- ① բանավեճի թեմայի՝ հարցադրման կամ բանաձևի վերլուծություն,
- ② առանցքային արժեքի ընտրություն,
- ③ թեմայի վերաբերյալ նյութերի հավաքագրում և վերլուծություն,
- ④ փաստարկների կառուցում՝ ըստ առանցքային արժեքի և դիրքորոշման (կողմ կամ դեմ),
- ⑤ դիրքորոշման ներկայացում։



Դիրքորոշումը մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք նրբություններ:

- ◎ Կառուցողական ելույթներին պատրաստվել նախապես՝ գրի առնելով բոլոր փաստարկներն ըստ կարևորության: Դա թույլ է տալիս ևս մեկ անգամ ամփոփել ձեր մարտավարությունն ու դիրքորոշումը, և այն ամբողջությամբ ներկայացնել
- ◎ գրավոր ձևով՝ ներառելով թիմի բոլոր անդամների նկատառումները: Սակայն նախապես պատրաստվել չի նշանակում ընթերցել ելույթը:
- ◎ Յուրաքանչյուր հմուտ բանավիճող պետք է կարողանա բանավեճի ընթացքում արագ կողմնորոշվել ու պատշաճ կերպով ներկայացնել իր դիրքորոշումը: Անակնկալ իրավիճակներից խուսափելու համար խորհուրդ է տրվում կանխատեսել, թե ինչպիսի հարցեր կարող է տալ հակառակորդ թիմը: Նախևառաջ, ուսումնասիրեք ձեր դիրքորոշումը հակառակորդի տեսանկյունից և փորձեք հասկանալ, թե ինչ առարկություններ կարող են առաջանալ հակառակորդի մոտ: Անպայման մշակեք հակաֆաստարկներ անգամ ամենաանհավանական առարկությունների համար: Նախապես մշակված հակաֆաստարկների դեպքում ձեր թիմը շատ ավելի համոզիչ և կշռադատված պատասխաններ կներկայացնի:

Հարկավոր է նաև ուսումնասիրել հակառակորդ թիմի դիրքորոշումը՝ կանխատեսելով, թե ինչ առանցքային արժեքի շուրջ է կառուցված լինելու նրանց դիրքորոշումը, և ինչպիսի որոշիչ փաստարկներ են նրանք ներկայացնելու: Այս ամենը հաշվի առնելով՝ նախապես մշակեք նրանց դիրքորոշումը հերքող հարցադրումներ և հակաֆաստարկներ:

- ◎ Հակառակորդի դիրքորոշումն ու առարկությունները կանխատեսելու համար կարող եք ձեր թիմի անդամներից մեկին հանձնարել ստանձնել ձեր հակառակորդի դերը, որը, լսելով ձեր կառուցողական ելույթը, առաջ կքաշի հակաֆաստարկներ և հարցադրումներ:
- ◎ Կառուցողական ելույթներից հետո թիմերին հնարավորություն է տրվում հարցաքննել հակառակորդին: Հարցաքննության ժամանակ հակառակորդից հնարավոր է այնպիսի պատասխաններ կորզել, որոնք կարող եք օգտագործել հօգուտ Ձեր թիմի: Հարցերի միջոցով Դուք կարող եք ծուղակը գցել հակառակորդ թիմին:

- ◎ Դիրքորոշման մշակումը շարունակական գործընթաց է: Նույնիսկ բուն բանավեճի ընթացքում Դուք կարող եք նոր փաստարկներ մշակել ի հաշիվ Ձեր հակառակորդների: Հարկավոր է գրառումներ անել ամբողջ բանավեճի ընթացքում և հավաքագրել հակառակորդի կողմից ներկայացված փաստերն ու պնդումները: Նման գրառումները թույլ կտան ստուգ մեջբերումներ անել և հիմնավորել Ձեր հակափաստարկները եզրափակիչ ելությում:

## Գլուխ 5. Ի՞նչ սովորեցինք

- ❶ Որո՞նք են դիրքորոշման մշակման փուլերը:
- ❷ Ինչպե՞ս կարելի է պատրաստվել հակառակորդ թիմի հարցումներին ու պնդումներին:
- ❸ Ինչո՞ւ է հարկավոր ուսումնասիրել հակառակորդ թիմի դիրքորոշումը:

## Գլուխ 6.

### ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանավեճում չափազանց կարևորվում է նյութերի հավաքագրումը: Ճիշտ գրականության օգտագործումը և փաստարկների առկայությունը



բանավիճողին հնարավորություն են տալիս իր կարծիքն արդյունավետ կերպով ներկայացնել:

Բանավեճում կարևորվում է ոչ միայն հաղթանակը, այլև բանավեճի նախապատրաստական փուլում ինքնազարգացման և ինքնակրթության գործոնը:



### Նյութերի հավաքագրում


Բանավեճ-մրցույթների ժամանակ անհրաժեշտ է հասկանալ, որ չի կարելի հիմնվել միայն փաստերի վրա: Նյութերի հավաքագրման մասին խոսելիս պետք է հիշել, որ բանավեճ-մրցույթը նաև արժեքների բախում է: Բանավիճողը միշտ պետք է հիշի, որ այս գործընթացի նպատակն է ավելի ամրապնդել թեմայի շուրջ իր գիտելիքները և ամուր հիմք ունենալ բանավիճելու համար:

Բանավիճողները նյութերի հավաքագրման գործընթացի ժամանակ կարող են կիրառել տարբեր մեթոդներ և օգտվել տարբեր աղբյուրներից: Տեղեկատվության աղբյուրները կարելի է դասակարգել որպես Գոյություն ունեն գրավոր, անհատական և վիզուալ տեղեկատվության աղբյուրներ:

### Գրավոր աղբյուրներ

Գրավոր աղբյուրների թվին են պատկանում այն բոլոր փաստաթղթերը, գրքերը, հոդվածները, ցանկացած այլ տիպի հրատարակությունները, ուսուցողական ձեռնարկները, որսէ հաստատության ներքին և արտաքին փաստաթղթերը, օրենսդրական տարբեր մակարդակի ակտերը և այլն, որոնք պարունակում են տեղեկություններ քննարկվող թեմաների վերաբերյալ:

Գրավոր աղբյուրներից նյութերի հավաքագրման կարևորագույն մեթոդներից է գրադարանային հետազոտությունը։ Գրադարանային հետազոտություն կարելի է կատարել ինչպես՝



Ներկայումս տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հետ մեկտեղ բավականին արդիական է նյութերի հավաքագրումը ինտերնետի միջոցով։ Համաշխարհային համացանցից կարելի է օգտվել տարբեր տիպի նյութեր ծեռք բերելու համար։ Անհրաժեշտ է ուշադիր լինել համացանցից օգտվելիս, քանի որ ոչ բոլոր տեղեկությունները կարող են լինել հավաստի։ Աշխատե՛ք օգտվել պաշտոնական կայքերից, ինչպիսիք են օրինակ [www.parliament.am](http://www.parliament.am) (ՀՀ ազգային ժողովի կայք), [www.gov.am](http://www.gov.am) (ՀՀ կառավարության կայք), [www.arlis.am](http://www.arlis.am) (ՀՀ իրավական տեղեկատվական համակարգ) և այլն։

## Անհատական աղբյուրներ

Անհատական աղբյուր կարող են հանդիսանալ՝

- մասնագետները,
- քննարկվող խնդրի շահագրգիռ կողմերը,
- տվյալ խնդրի վերաբերյալ որոշում ընդունողները,
- տվյալ բնագավառում հեղինակություն ունեցող անձինք,
- պետական այրեր և պաշտոնյաներ

## **Անհատական աղբյուրներից տեղեկատվություն ստանալու մեթոդները**

Անհատական աղբյուրներից տեղեկատվություն ստանալու հիմնական մեթոդը **հարցումն** է: Հարցումը տալիս է կարևոր և օգտակար տեղեկություն, ինչպես նաև որոշակի որակական և քանակական առումներով հիմնավորում է դիրքորոշումը: Գոյություն ունեն հարցման մի շարք տեսակներ, որոնք հարմար են տարբեր նպատակների համար: Հարցում անցկացնելուց առաջ հարկավոր է պարզել Ձեր վերջնական նպատակը: Հարցումը պլանավորելիս նախ անպայման որոշեք, թե ինչ եք ցանկանում պարզել: Հարցումը կարելի է անցկացնել բանավոր (փողոցային կամ հեռախոսային հարցումներ) կամ գրավոր (հարցաթերթիկների միջոցով, փոստով կամ էլեկտրոնային փոստով ուղարկված նամակների միջոցով):

Հարցման հիմնական տեսակներ են՝

- Հարցազրույց
- Հարցաթերթիկով հարցազրույց
- Անկետավորում՝ հարցատոմսերի օգնությամբ
- Խմբակային ֆոկուս քննարկումներ

Հարցազրույցի ընթացքում սովորաբար տրվում են բաց հարցեր: Հարցազրույցի հարցերը և կառուցվածքը մշակելուց առաջ հարցաքննողը պետք է ունենա հստակ պատկերացում, թե ինչ տեղեկատվություն է նա ակնկալում ձեռք բերել:

## **Հարցազրույցի նախապատրաստություն**

- Ընտրե՛ք չշեղող միջավայր:
- Բացատրե՛ք հարցազրույցի նպատակը:
- Անդրադարձե՛ք գաղտնիության պայմաններին:
- Պարզաբանե՛ք հարցազրույցի կառուցվածքը:
- Նշե՛ք հարցազրույցի մոտավոր տևողությունը:
- Ասացե՛ք, որ անհրաժեշտության դեպքում կարող են կապնվել Ձեզ հետ:
- Հույս մի դրեք Ձեր հիշողության վրա: Թույլտվություն խնդրեք հարցազրույցը ձայնագրելու, կամ որոշ նշումներ անելու համար:

**Հարցաթերթիկով հարցագրույցի ժամանակ** Դուք եք տալիս հարցաթերթիկում նշված հարցերը և ինքներդ լրացնում այն: Այս դեպքում հնարավորություն ունեք տալու լրացուցիչ ուղղորդող հարցեր, որոնք կօգնեն ստանալ Ձեզ հետաքրքրող տեղեկատվությունը:

**Անկետավորման ժամանակ** պատասխանողն ինքն է լրացնում հարցաթերթիկը՝ անկետան, և այնուհետև Ձեզ վերադարձնում: Անկետավորման համար հարցաթերթիկ կազմելիս հիշեք, որ հնարավոր է Դուք պատասխանողի կողքին չլինեք և չկարողանաք պարզաբանել: Դրա համար հարցաթերթիկը պետք է կազմել այնպես, որ հարցերը լինեն միանշանակ, գրված հասկանալի լեզվով: Բացի այդ, Եթե բաժանում եք հարցաթերթիկները և ակնկալում, որ պատասխանողները դրանք կլրացնեն և կվերադարձնեն Ձեզ, ապա ներառեք.

- հարցաթերթիկի լրացման նպատակի համառոտ նկարագրությունը:
- հարցաթերթիկի լրացման կարգի հստակ բացատրությունը:
- ցուցումներ, թե որտեղ պետք է ներկայացվեն լրացված հարցաթերթիկները:

### *Հարցերի փեսակները*

**Հարցերը կարող են լինել փակ, բաց և կիսաբաց:**

Եթե նախօրոք ստուգ գիտեք բոլոր հնարավոր պատասխանները, ապա նպատակահարմար է օգտագործել փակ հարցը:

Օրինակ՝ Որտե՞ղ եք նախընտրում զբոսնել.

ա. Հյուսիսային Պողոտա

բ. Աբովյան փողոց

գ. Ազատության հրապարակ

Եթե մոտավորապես գիտեք պատասխանների տարբերակները, սակայն հնարավոր են նաև չնախատեսված պատասխաններ, ապա կարող եք ծևակերպել կիսաբաց հարց՝ առաջարկելով մի քանի տարբերակ և թողնելով հնարավորություն գրել այլ պատասխան:

Օրինակ՝ Ո՞ր ալիքն եք Դուք սովորաբար դիտում

ա. <1

բ. Շողակաթ

գ. Ռուսաստանի առաջինը

դ. այլ տարբերակ \_\_\_\_\_

Եթե նախապես չեք կարող կանխատեսել պատասխանների տարբերակները, կամ Ձեզ հետաքրքրում է պատասխանողների կարծիքը, կարող եք ձևակերպել բաց հարց, այսինքն տալ հարցը և տեղ թողնել, որպեսզի լրացնողը գրավոր պատասխանի:

Օրինակ՝ Քանի՞ աշակերտ կա ձեր դպրոցում: \_\_\_\_\_

(թվով տրվող պատասխան)

**Ֆոկուս-խումբ** տերմինի հիմքում կրկին ընկած է հարցազրոյցը, որը սակայն անց է կացվում ոչ թե մեկ, այլ մի խումբ մարդկանց հետ: Փորձը ցույց է տալիս, որ ֆոկուս-խումբի մասնակիցները պետք է լինեն ոչ պակաս քան 6 հոգի և ոչ ավելի քան 12 (տես Հավելվածներ):

## Վիզուալ աղբյուրներ

Վիզուալ աղբյուրներից տեղեկատվություն ստանալ կարելի է հետևյալ եղանակներով՝

**Դիտարկում:** Հաճախ երևոյթի կամ իրադարձության մասին տեղեկություններ ստանալու համար հարկավոր է լինում դիտարկել այն և կատարել գրառումներ՝ ընթացքը կամ իրողությունը ֆիքսելու նպատակով: Օրինակ՝ ինչպե՞ս է իրականում ընթանում դատավարությունը կամ արդյո՞ք շենքում ստեղծված են հաշմանդամների կարիքները բավարարող պայմաններ:

**Ֆիզիկական չափումներ:** Որոշակի տվյալներ հնարավոր է ստանալ չափումների և հաշվարկների միջոցով: Օրինակ՝ վերադառնալով քաղաքի աղտոտվածության

թեմային՝ որքան աղբարկու է տեղադրված քաղաքի գլխավոր փողոցում, կամ Էլ ինչ տարածության վրա են դրանք գտնվում:

**Փորձարկում:** Փորձարկման միջոցով տեղեկություններ ստանալու ժամանակ Դուք մտածված ստեղծում եք այն իրավիճակը, որի մասին ցանկանում եք տեղեկություններ ստանալ և, այնուհետև, ֆիքսում փորձարկման արդյունքները:

### Փաստերի կիրառումը

Նյութերի հավաքագրման արդյունքում բանավիճողները պետք է կուտակեն իրենց դիրքորոշումը պաշտպանող բազմաթիվ փաստեր: Եթե բանավիճողներն իրենց դիրքորոշումը չեն հիմնավորում փաստերով, նրանց բանավեճը թերի է, անհիմն և ոչ համոզիչ: Անհրաժեշտ է ներկայացնել միմիայն ամենահամոզիչ և քննարկման առարկային առավել սերտորեն առնչվող փաստերը: Հավաստի, որակյալ, ժամանակակից, կայուն և հանրամատչելի փաստերը ամենահամոզիչն են լինում:.

Փաստերը կիրառելիս չափազանց կարևոր է դրանց խմբագրումն ու ներկայացումը:

### Փաստը պետք է պարունակի՝

- ① թեմայի վերնագիր.
- ② հղում, որտեղ պետք է նշել հեղինակի անունը, հոդվածի, թերթի, ամսագրի կամ գրքի վերնագիրը, տպագրության ամսաթիվն ու վայրը, իսկ ինտերնետային աղբյուրների դեպքում՝ կայքի հասցեն.
- ③ հեղինակի որակավորման, պաշտոնի կամ գործունեության մասին տվյալներ.
- ④ բուն փաստի մեջբերում, որը պետք է լինի ճշգրիտ և բառացի: Եթե մեջբերման որոշակի հատված ցանկանում եք բաց թողնել, արտագրեք ողջ մեջբերումը և ընդգծեք այն հատվածը, որը պատրաստվում եք կարդալ: Այս դեպքում միշտ կարող եք ապացուցել, որ ձեր բացթողումը չի ոտնահարում հեղինակի իրավունքները:

Վերջապես, բանավիճողները պետք է կարողանան գնահատել տվյալ փաստը և հասկանալ, թե բանավեճի որ պահին այն ավելի նպատակահարմար կլինի կիրառել:  
**Հիշե՛ք, որ եզրափակիչ ելույթում չեք կարող նոր փաստ ներկայացնել:**

## Փաստերի օգտագործման էթիկա

Փաստը չպետք է կեղծել, վերափոխել կամ ներկայացնել այնպիսի ձևով, որն անարդարացի կլինի հակառակորդի նկատմամբ:

Փաստերի օգտագործման մեջ կասկած չհարուցելու համար անհրաժեշտ է ծայրահեղ ուշադիր լինել այն ձեռք բերելիս և ներկայացնելիս: Նախընտրելի է օգտագործել հանրամատչելի աղբյուրներից ձեռք բերված փաստեր ոչ միայն հակառակորդի նկատմամբ արդարացի գտնվելու, այլև բանավեճի բարոյական ապահովությունը երաշխավորելու համար:

Փաստարկի ներկայացումը նույնպես շատ կարևոր է: Եթե փաստը կամ դրա մեջբերումը չափազանց երկար է, անշուշտ, բանավեճի ընթացքում հարկավոր չէ այն կարդալ ամբողջությամբ: Բանավիճողները կարող են ընդգծել և օգտագործել փաստի կարևորագույն հատվածները:

Հարկավոր է նաև ուշադիր լինել փաստերի թարգմանության ժամանակ. թարգմանությունը պետք է լինի ճշգրիտ և չաղավաղի նյութի բուն իմաստը:

Հարկավոր է գիտակցել, որ ելնելով բանավեճի բնույթից՝ թիմերը հանդես են գալիս իբրև հակառակորդ, սակայն ամեննաև էլ պարտադիր չէ, որպեսզի թիմի դիրքորոշումը համընկնի անդամների անձնական կարծիքի հետ: Հետևաբար, ձեր հակառակորդը ամեննաև էլ իրական ախոյան չէ կամ էլ վատ մարդ:

## Գլուխ 6. Ի՞նչ սովորեցինք

- ❶ Ի՞նչ տեսակի գիտելիքներ կարող եք ձեռք բերել նյութերը հավաքագրելիս, և ինչու՞մ է կայանում նրանց տարբերությունը:
- ❷ Տեղեկատվության ի՞նչ աղբյուրներ գիտեք:
- ❸ Հարցման ի՞նչ տեսակներ գիտեք: Թվարկե՛ք հարցերի տեսակները և բացատրե՛ք դրանց տարբերությունը: Ըստ ձեզ, որո՞նք են դրանց առավելություններն ու թերությունները:

- ④ Ինչպե՞ս կարելի է տվյալներ հավաքագրել վիզուալ աղբյուրներից: Բերե՛ք այդ մեթոդներն օգտագործելու Ձեր օրինակը:
- ⑤ Ո՞ր չափանիշների օգնությամբ է հնարավոր գնահատել փաստերի արդյունավետությունը:
- ⑥ Ինչպիսի՞ն պետք է լինի փաստի կառուցվածքը:

## Գլուխ 7.

### ՓԱՍՏԱՐԿՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆԵՐ


#### Փաստարկի կառուցում

**Խնդրի պաշտպանությունը ձախողելու ամենահեշտ միջոցն այն կանխավ կեղծ փաստարկներով հիմնավորելն է:**

Ֆրիդրիխ Նիդշտ

Բանավեճին նախապատրաստվելը նման է գործարանում արտադրության գործընթացին. ձեռք է բերվում հումք, պատշաճ մշակվում և նախքան առաքման կետեր ուղարկվելը համապատասխանաբար փաթեթավորվում՝ սպառողին գրավելու համար: Մենք արդեն սովորեցինք բանավեճի թեմայի շուրջ անհրաժեշտ տեղեկատվություն հայթայթել, այն վերլուծել ու համակարգել: Այս շլթայում վերջին օղակն առկա տեղեկատվության հիման վրա համոզիչ ապացույցների, պնդումների և փաստարկների մշակումն է:

Դիրքորոշումը պաշտպանելու համար անհրաժեշտ է ներկայացնել պնդումներ և փաստեր: Պնդումները հիմնավորվում են փաստերի միջոցով, որոնց ամբողջությունը կոչվում է փաստարկ: Հետևաբար, ցանկացած դիրքորոշում ներկայացվում է փաստարկների միջոցով:



Փաստարկման արվեստին լավ տիրապետելու համար անհրաժեշտ է հիշել, որ ցանկացած փաստարկ պետք է հիմնվի փաստերի և պնդումների վրա: **Փաստն** այն տեղեկատվությունն է, որն արտացոլում է օբյեկտիվ իրականությունը և կարող է հայթայթվել ուսումնասիրությունների և տվյալների հավաքագրման ընթացքում: Փաստն ապացուցում է Ձեր պնդումը: Ցանկացած փաստարկ ուժեղ և ծանրակշիռ է միայն այն ժամանակ, երբ հղում է տրվում որևէ փաստի: Այն դեպքում, երբ պնդումը չունի համապատասխան հիմնավորում՝ չի ամրապնդվում որևէ փաստով, այն պարզապես դառնում է **հայտարարություն**: Այս պարագայում Ձեր պնդումը հիմնված է ոչ թե իրական փաստերի, այլ միայն Ձեր կարծիքի վրա: Սակայն հարկավոր է հիշել, որ ամեն ինչ չի սահմանափակվում միայն լավ հիմնավորված պնդում ձևակերպելով: Հակառակորդ թիմը կարող է **հերքման** ենթարկել Ձեր կողմից ներկայացված պնդումը՝ շահարկելով վերջինիս թույլ կողմերը: Եթե հակառակորդ թիմը չի վիճարկում Ձեր փաստարկը, նշանակում է՝ հաջողվել է հիմնավոր փաստերի միջոցով ապացուցել ձեր պնդումը: **Ապացուցն** այն փաստն է, որը ներկայացվում է ի պաշտպան պնդմանը և բավարար հիմք է ծառայում այն ընդունելի դարձնելու համար:

### Հայտարարություն

Երր պնդումը չունի համապատասխան հիմնավորում

### Ապացուց

Որը ներկայացվում է ի պաշտպան պնդմանը

և բավարար հիմք է ծառայում այն ընդունելի դարձնելու համար

Օրինակ՝ եթե փորձում եք դիմացինին համոզել Ձեր դիրքորոշման ճշմարտացիությունը, անպայման պետք է այն հիմնավորեք պնդումներով և փաստերով: Սակայն դա դեռևս բավական չէ դիմացինին համոզելու համար: Անհրաժեշտ է ցույց տալ, թե ինչպես օգտագործեցիք այդ փաստը, որպեսզի անեք Ձեր դիրքորոշումը պաշտպանող եզրակացություններ: Եթե Ձեզ չհաջողվի ցույց տալ փաստի և պնդման միջև եղած կապը, ներկայացված փաստը չի ապացուցի Ձեր

տեսակետը, այլ կդիտարկվի որպես հարցի հետ կապ չունեցող տվյալ կամ հայտարություն:

**Հիմնավորումը** այն մտավոր գործընթացն է, որի ընթացքում հաստատվում է կապ առաջ քաշված պնդման և փաստի միջև, այդ կապի վերլուծության արդյունքում ստացված եզրակացությունը հիմք է ծառայում ամբողջական փաստարկի կառուցման համար:

### **Փաստարկների տեսակներն են՝**


1. ընդհանրացում,
2. համանմանություն (անալոգիա),
3. պատճառ-հետևանքային կապ,
4. նշանային փաստարկ,
5. վիճակագրական տվյալներ,
6. հեղինակություն:

## **ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄ**


Ընդհանրացումը թույլ է տալիս առարկաները դասակարգել մեկ ընդհանուր խմբի մեջ՝ ելնելով նրանց ընդհանուր հատկանիշներից: Եթե եզրակացություն եք անում մի քանի օրինակի հիման վրա, ապա կարելի է ասել, որ Դուք ընդհանրացում եք կատարել:




Պետական կառուցները չեն աշխատում տոն օրերին:



«« առողջապահության նախարարությունը պետական կառուց է:



Քանի որ նախարարությունը պետական կառուց է, իսկ պետական կառուցները չեն աշխատում տոն օրերին, կարելի է եզրակացնել, որ << առողջապահության նախարարությունը տոն օրերին չի աշխատում:



<< առողջապահության նախարարությունը չպետք է աշխատի տոն օրերին:

Մեկ կամ մի քանի օրինակի իման վրա ընդհանրացում կատարելը կոչվում է **դեղուկտիվ ընդհանրացում**.


## ՀԱՄԱՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ (ԱՆԱԼՈԳԻԱ)

Անալոգիան կամ համանմանությունը փաստարկման մի տեսակ է, որը գործում է այն ժամանակ, երբ եզրակացություն է արվում անծանոթ որևէ երևույթի շուրջ՝ իմմնվելով արդեն ծանոթ երևույթի նմանության վրա: << Համանմանությունը, հետևաբար, համեմատության տարատեսակ է:


Օրինակ՝



Մոտ ամիսներին խափանումներ կլինեն Էներգիայի բաշխման համակարգում:



Վերջին մի քանի ամիսների ընթացքում << ատոմակայանը ոչ արդյունավետ է գործել:



Ենթադրաբար Էներգիայի բաշխման համակարգը /որն այս պարագայում անծանոթ է/ նման է ատոմակայանի գործունեությանը /որը ծանոթ է/ աշխատանքի կազմակերպման և իրագործման տեսանկյունից:



## Փաստարկ

Էներգիայի բաշխման համակարգը արդյունավետ չի գործելու:

Եթե համանմանությունը կառուցված է այնպես, որ այն համեմատում է պնդման հետ կապ չունեցող երևոյթներ, ապա փաստարկը թերի է: Նման սխալ հետևողությունը կոչվում է **սուտ համանմանություն**:


## ՊԱՏճԱՌ-ՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԿԱՊ

Ընդունված է կարծել, որ պատճառ-հետևանքային կապի միջոցով կառուցված փաստարկներն առավել հեշտ են ընկալվում: Պատճառ-հետևանքային կապը ենթադրում է, որ երկու իրողություն գտնվում են որոշակի հարաբերության մեջ, որտեղ մեկը պատճառ է հանդիսանում մյուսի համար: Պատճառ-հետևանքային կապը արտացոլվում է հետևյալ կերպ. «Եթե... ապա...»:




## Պնդում

Զմուն ամիսներին էլեկտրաէներգիայի վճարների կտրուկ աճ կգրանցվի:



## Փաստ

Այս տարի գրանցվել է վերջին տասնամյակի ամենացուրտ ձմեռը:



## Հիմնավորում

Քանի որ ձմեռը սաստիկ ցուրտ է, իսկ ցուրտ եղանակին ավելի շատ են միացվում էլեկտրավառարաններ, ուրեմն էլեկտրաէներգիայի օգտագործման ծավալներն ավելի մեծ կլինեն ձմեռվա ամիսների համար:



Եթե ձմեռը ցուրտ է, ապա էլեկտրաէներգիայի վճարներն ավելի մեծ են:

Պատճառ-հետևանքային կապը ենթադրում է հարաբերություն երկու երևոյթի միջև: Ավելին, այդ կապն այնքան ուժեղ է, որ այն կարելի է կանխատեսել: Այսպես օրինակ՝ ի՞նչ կպատահի, եթե բարձրահարկ շենքից ջրով լի շիշ գցենք: Պատասխանն ակնհայտ է և կանխատեսելի, քանի որ շիշը գցելու և դրա ջարդվելու երևոյթների միջև գոյություն ունի ուժեղ կապ:

## ՆՇԱՆԱՅԻՆ ՓԱՍՏԱՐԿ

**Նշանային փաստարկը** ենթադրում է, որ երկու երևոյթների միջև, որոնք միշտ տեղի են ունենում կամ միաժամանակ, կամ հաջորդաբար, գոյություն ունի որոշակի փոխկապակցված, ոչ պատճառային կապ: Քննարկենք հետևյալ օրինակը. Վաղ աշուն է: Դուք քայլում եք անտառով և տեսնում եք, թե ինչպես են սկյուտիկները վազվզում այս ու այն կողմ և ընկոյզ հավաքում: Դրանցից շատերի մորթին հաստացել է: Դուք նաև նկատում եք, որ թռչուններից շատերը չվել են հարավ: Հետևաբար, եզրակացնում եք, որ ձմեռը մոտենում է: Փաստորեն, կարելի է ասել, որ կանխատեսում եք անում՝ ելնելով բնության նշաններից:

Ինչպես արդեն նկատեցիք, այստեղ երևոյթների միջև կապը պատճառական չէ: Այն փաստը, որ թռչունները չվում են հարավ, և սկյուտիկները ընկոյզ են հավաքում, պատճառ չի հանդիսանում ձմեռվա վաղ գալուն: Այդ բոլորն էլ ձմեռվա նշաններ են կամ ազդանշաններ և թույլ են տալիս կանխատեսել, որ շուտով ձմեռ է գալու:

## **ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ՝ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ**


Փաստարկման այս եղանակը շատ մոտ է ընդհանրացմանը: Պարզապես կոնկրետ օրինակ կամ օրինակներ մեջբերելու փոխարեն կարելի է համապատասխան թվեր գետեղել և ուժեղացնել փաստարկը:



Արեգակնային էներգիան չի լուծի էներգիայի ճգնաժամի խնդիրը:



Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արեգակնային էներգիան հարմար է օգտագործել միայն որոշ աշխարհագրական տեղանքներում և միայն այն ժամանակ, երբ այն լրացնում է սովորական ջեռուցման համակարգը և օգտագործվում է ջրի ջեռուցման համար:



Քանի որ ցանկացած գիտական ուսումնասիրության արդյունքներ համարվում են ճշգրիտ և գիտականորեն ստուգված, դրանք թույլ են տալիս հիմնավորված եզրակացություններ անել:



Վերոհիշյալ գիտական ուսումնասիրությունների տվյալների հիման վրա պարզ է դառնում, որ արեգակնային էներգիան իսկապես չի լուծի էներգիայի ճգնաժամի խնդիրը:


## **ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆ՝ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ ԱՂԲՅՈՒՐԻ ՎԱՏԱՀԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ**

Բանավեճի ընթացքում կարելի է կիրառել փաստարկման մեկ այլ եղանակ, որի հիմքում ընկած է որևէ հեղինակության կամ հայտնի մարդու կարծիք կամ պնդում:


Օրինակ՝




Հայ-թուրքական սահմանի բացումը ձեռնտու է Ռուսաստանին:



Հեղինակավոր ամերիկահայ քաղաքագետ Ռիչարդ Կիրակոսյանը օգոստոսի 13-ին տրված իր հարցազրույցում կարծիք հայտնեց, որ Հայաստանի տնտեսությունը դեկավարում է Ռուսաստանը: Սա ավելի շատ ռուս-թուրքական հարաբերություններ են, քան հայ-թուրքական:



Քաղաքագետը ուսումնասիրել է հարեւան երկրի վարած քաղաքականությունը եւ տնտեսական շահերը:



Հիմնվելով հայտնի քաղաքագետի կատարած հայտարարության վրա՝ Ռուսաստանը իր աջակցությունը կցուցաբերի ռուս-թուրքական սահմանի բացման հարցում:

## Գլուխ 7. Ի՞նչ սովորեցինք

- ① Ո՞րն է փաստի և փաստարկի տարբերությունը:
- ② Ո՞րն է պնդման և հայտարարության տարբերությունը:
- ③ Կարող եք արդյո՞ք օրինակի միջոցով սահմանել ընդհանրացման փաստարկը:  
Փաստարկների ի՞նչ այլ տեսակներ կարող եք նշել:

## Գլուխ 8.

### ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ավանդական ուսուցողական բանավեճում գոյություն ունի երկու թիմ. մեկը ներկայացնում է «կողմ», իսկ մյուաը՝ «դեմ» դիրքորոշման շահերը:

**Կառուցողական խոսքի** միջոցով «կողմ» թիմը բանավեճի ընթացքում առաջին անգամ պետք է ներկայացնի քննարկվող թեմայի՝ բանաձևի կամ հարցադրման վերաբերյալ իր դիրքորոշումը և պետք է այն հիմնավորի հավաստի ու համոզիչ փաստարկներով: Մյուս կողմից, «դեմ» թիմն իր կառուցողական ելույթում պետք է պատրաստի «կողմ» թիմի դիրքորոշմանը դեմ տեսակետ՝ ներկայացնելով իր առարկություններն ու հակասությունները՝ դրանք հիմնավորելով որոշակի փաստարկներով:

### Նախապատրաստում



Սովորաբար մրցույթների ընթացքում նախքան ելույթ ունենալը յուրաքանչյուր թիմի որոշակի ժամանակահատված է տրվում՝ ելույթներին նախապատրաստվելու համար: LASC ծրագրի բանավեճի ֆորմատի համաձայն կիառվում է 8 րոպեի օրենքը՝ այսինքն երեք փուլերից առաջ կարող եք վերցնել նախապատրաստվելու ժամանակ, սակայն այնքան, որ կարողանաք ճիշտ սպառել այն: Բանավեճի ընթացքում ժամանակը պահելու և հաշվելու պարտականությունը ստանձնում է մեկ անձնավորություն, որը թիմերին պարբերաբար տեղեկացնում է՝ որքան ժամանակ նրանք ունեն նախապատրաստվելու համար:

## Խոսնակի պարտականությունները

Կառուցողական ելույթի ժամանակ «կողմ» թիմի խոսնակները ներկայացնում, զարգացնում և հիմնավորում են իրենց դիրքորոշումը, իսկ «դեմ» թիմի խոսնակները սրա հետ մեկտեղ հնարավորություն ունեն նաև քննադատել հակառակորդ թիմի դիրքորոշումը: Ի տարբերություն կառուցողական ելույթի՝ հակահարված ելույթն ամբողջովին նպատակառողված է հակառակորդ թիմի դիրքորոշման «քննադատությանը»:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել բանավեճի ընթացքում ելույթների հաջորդականությանը: Բանավեճը միշտ բացվում է «կողմ» թիմի ելույթով, որը պետք է պաշտպանի քննարկման ներկայացված բանաձևը կամ հարցադրումը: «Կողմ» թիմի կառուցողական ելույթին հաջորդում է «դեմ» թիմի հարցաքննությունը, «դեմ» թիմի կառուցողական ելույթին էլ՝ համապատասխանաբար «կողմ» թիմի հարցաքննությունը:

Հարցաքննության ժամանակ մեծապես կարևորվում է խոսնակի դերը. նա պետք է այնպես ձևակերպի հարցը, որ կարողանա բացահայտել հակառակորդ թիմի դիրքորոշման թույլ կողմերը և լրացնիչ տեղեկություններ կորզի՝ հետագայում շահարկելու նպատակով: Հարցին պատասխանող խոսնակն իր հերթին պետք է ըմբռնի տրվող հարցի էռությունն ու նպատակը և փորձի այնպիսի պատասխան տալ, որը ոչ միայն կպաշտպանի, այլև կամրապնդի նրա դիրքերը: Հարցին պատասխանողը պետք է ամեն դեպքում ինքնավստահ խոսի և անկախ նրանից, որքանով է հարցը խոցելի և դիպուկ, կարողանա պատշաճ կերպով հաղթահարի արգելը:



Եզրափակման խոսքը թիմերին հնարավորություն է տալիս ներկայացնելու իրենց վերջին ելույթը: Թիմերը պետք է ի մի բերեն իրենց դիրքորոշումը և վերջին անգամ փորձեն իրենց կողմը գրավել լսարանին և դատավորներին: Ընդհանուր առմամբ եզրափակման խոսքը կառուցվում է նախորդ ելույթների և հարցաքննության արդյունքների կամ նույնիսկ թերացումների վրա: Այլ կերպ ասած, եթե թիմերից որևէ մեկը հարցաքննության ժամանակ հարցերին պատասխանելիս որոշակի սխալներ է թույլ տվել, եզրափակման խոսքը կարելի է ծառայեցնել այդ սխալներն ուղղելու համար:

## **Ընդհանուր նկատառումներ ներկայացման վերաբերյալ**

Հաջող ելույթ ունենալու համար հարկավոր է հաշվի առնել հետևյալ նախապայմանները.



- ◎ պլանավորում,
  - ◎ գրառումների անհրաժեշտությունը,
  - ◎ պնդումների համարակալում,
  - ◎ ելույթի կառուցվածք,
- ◎ ներկայացում:

### **Պլանավորում**

«Կողմ» և «դեմ» թղթապանակներ. Բանավեճի ընթացքում միայն առաջին կառուցողական ելույթի համար է հարկավոր ամբողջապես նախապատրաստվել:



Մնացած բոլոր ելույթները, չնայած կարող են պարունակել նախօրոք պատրաստված նյութ, այնուամենայնիվ պետք է արտացոլեն բանավեճի ընթացքը: Հակառակ դեպքում բանավեճը կվերածվի ճարտասանության մրցույթի՝ բացառելով տեսակետների փոխանակումը: Այն ոչ միայն ձանձրալի կլինի, այլ նաև կկորցնի իր ուսուցողական արժեքը:

Թիմերից յուրաքանչյուրը պետք է նախապես պատրաստի նյութերի թղթապանակ, որտեղ կընդգրկվեն իրենց դիրքորոշումը պաշտպանող փաստեր, տվյալներ և դրանց հիման վրա կառուցված պնդումներ ու փաստարկներ:



### **ԳՐԱՌՈՒՍԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ**

Բանավեճի ընթացքում Ձեր թիմի հաջողությունն ապահովելու համար կարևոր է ունենալ լսելու ունակություն, վերլուծել հակառակորդի

փաստարկներն ու հակափաստարկները, համակարգել առկա նյութերը, անմիջապես վերլուծել և մշակել Ձեր պատասխանը և սահուն կերպով ներկայացնել սեփական դիրքորոշումը: Այս ամենը լավագույնս իրականացնելու համար հարկավոր է բանավեճի ընթացքում գրառումներ անել: Եթե Ձեր տրամադրության տակ չունենաք հակառակորդ թիմի կողմից ներկայացված փաստարկները, հետագայում շատ դժվար կլինի ջախջախիչ հակափաստարկներ առաջ քաշել:

## ՊՆԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐԱԿԱՄՈՒՄ

Նպատակահարմար է առանձնացնել Ձեր պնդումները՝ դրանք համարկալելով առաջին խև կառուցողական ելույթի ժամանակ: Պնդումները համարակալեք ըստ կարևորության, քանի որ ժամանակի սղության պատճառով որոշ մասը կարոք եք բաց թողնել:

## ԵԼՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Բանավեճ-մրցույթի ընթացքում չափազանց կարևորվում է Ձեր ելույթի կառուցվածքը: Դուք պետք է համակարգեք ոչ միայն Ձեր պնդումներն ու փաստարկները, այլև՝ Ձեր ելույթը: Այն պետք է ունենա որոշակի կառուցվածք՝ ներածություն, հիմնական մաս և եզրափակում: Սկսնակ բանավիճողները թյուրիմացաբար կարծում են, որ բարդ տեքստերի միջոցով հակառակորդին շփոթեցնելը նրանց կօգնի հաղթանակել: Իրականում, նման մարտավարությունն առաջին հերթին շփոթեցնում է դատավորներին: Առավել նպաստավոր դիրքում կհայտնվեք, եթե Ձեր ելույթը կանոնավոր և շաղկապված ներկայացնեք:

## ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Բանավեճն իր բնույթով տարբերվում է հոետորական խոսքից և դերասանական խաղից, քանի որ ունի ուսուցողական բնույթ և մասնակիցներից պահանջում է արագ կողմնորոշվելու կարողություն: Սովորաբար փորձառու բանավիճողները կարողանում են հանպատրաստից փաստարկներ կազմել և ներկայացնել՝ համատեղելով արագ խոսելն ու մտածելը: Մի՛ փորձեք կրկնօրինակել նրանց: Միայն բանավեճ-

մրցույթներին մասնակցելով կարելի է հմտանալ խոսքի ճշգրտության և արագության մեջ, ինչպես նաև սովորել տարանջատել առաջնայինը երկրորդականից:

## Բանավեճի լեզուն



Բանավեճի ընթացքում հարկ է լինում հանպատրաստից պատասխանել հակառակորդ թիմի հարցադրումներին և հակափաստարկներին: Այս դեպքում արդեն բանավիճողի համար դժվար է հոետորական տեսանկյունից գերազանց ելույթ ունենալ: Ուստի խորհուրդ է տրվում կիրառել պարզ և հանրամատչելի լեզու: Բանավիճողը պետք է մեծ ուշադրություն դարձնի բանավեճի ընթացքում իր մտքերի կազմակերպմանն ու ներկայացմանը՝ աշխատելով լինել հնարավորինս պարզ և հստակ:

## Հոետորություն

Բանավիճողի հոետորական հմտությունները կարող են էական ազդեցություն ունենալ դատավորի որոշման վրա. որքան ավելի համոզիչ և հստակ արտահայտեք Ձեր մտքերը, այնքան ավելի հեշտ կլինի դատավորի համար լսել և ընկալել Ձեր դիրքորոշումը: Լավ հոետորն այն անձն է, ով կարողանում է ճիշտ օգտագործել իր ձայնը՝ ընտրելով համապատասխան հնչերանգ (ինտոնացիա) ու բարձրություն: Հոետորը պետք է կառավարի իր խոսքի արագությունը և ընթացքում օգտագործի ազդեցիկ ընդմիջումներ՝ իր ելույթն ավելի հնչեղ դարձնելու համար: Լավ հոետորը ձայնի հետ մեկտեղ պետք է նաև ճիշտ օգտագործի իր մարմինն ու մշակի համապատասխան շարժուձևներ: Ներկայացման յուրօրինակ ոճը միշտ էլ ուշադրություն է գրավում և շեշտադրում խոսնակի ուժեղ կողմերը: Սովորաբար բանավիճողը հիմար դրության մեջ է հայտնվում, եթե փորձում է կրկնօրինակել մեկ ուրիշի հոետորական ոճը: Օրինակ՝ Լուչիանո Պավարոտին և Մայքլ Ջեքսոնը հիանալի երգիչներ են, սակայն միանգամայն անընդունելի կլիներ, եթե նրանք փորձեին կրկնօրինակել մեկը մյուսին:

# Ելույթի ներկայացման չափանիշներն են՝

## ԽՈՍՔԻ ՊԱՐՁՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ

Բանավիճողները պետք է պարզ խոսեն, որպեսզի նրանց հասկանան: Սկսնակների համար սա կարող է համարվել ուսկե օրենք. խոսել հստակ, չկմկմալ և բառերը կուլ չտալ: Բանավեճի ընթացքում խոսքի հստակության առաջին թշնամին արագությունն է: Որպես կանոն, բանավիճողներին խորհուրդ է տրվում դանդաղ խոսել. այս պարագայում նրանց փաստարկներն ավելի հասկանալի և տպավորիչ են: Հարկավոր է նաև ժամանակ առ ժամանակ լրել և խորը շունչ քաշել. նման դադարները հանգստանալու և կենտրոնանալու հնարավորություն են ընծեռում: Առավել նախընտրելի է մի պահ լրել՝ մտքերը հավաքելու համար, քան շտապելով բաց թողնել փաստարկների մի մասը կամ սխալ շաղկապել մտքերը:

## ԽՈՍՔԻ ՀՆՁԵՂՈՒԹՅՈՒՆ

Բանավիճողները պետք է հնարավորինս բարձր և լսելի ձայնով խոսեն: Բանավեճ-մրցույթի ժամանակ հակառակորդ թիմը, դատավորները և հանդիսատեսը գտնվում են որոշակի հեռավորության վրա: Այդ իսկ պատճառով սովորական բարձրության ձայնը հնարավոր է լավ չլսվի: Սակայն սա չի նշանակում, որ պետք է բղավել: Փորձառու բանավիճողները ձայնը բարձացնելու կամ իջեցնելու անհրաժեշտությունը կուահում են հանդիսատեսի շարժուձևից: Օրինակ՝ եթե լավ չի լսվում, շատերը դեմքը խոժողով են կամ էլ փորձում առաջ գալ, որպեսզի լավ լսեն:

## ՇԵՇՏԱԴՐՈՒՄ



Բանավիճողները պետք է տարբեր հնարների միջոցով հնարավորինս փորձեն շեշտադրել փաստարկի կարևորությունը: Եթե ողջ ելույթը ներկայացվում է միապաղա, կարևոր ձուվում է երկրորդականի հետ: Որոշ կարևորագույն

նախադասություններից առաջ բանավիճողը կարող է մի պահ լրելիանդիսատեսի մոտ լարվածություն և հետաքրքրություն առաջացնելու նպատակով։ Կարևորագույն կետերը շեշտադրելու համար խոսնակը կարող է նաև որոշ տեղերում դանդաղեցնել խոսքը, ձայնն ավելի բարձրացնել կամ ցածրացնել և հնարավորության դեպքում կրկնել կարևոր բառերն ու արտահայտությունները։

## ՇԱՐԺՈՒՁԵՎ

Առօրյա կյանքում մարդիկ երբեմն խոսելու ընթացքում ժեստեր են օգտագործում. շարժում են ձեռքերը, թափահարում գլուխը, փոխում նստած կամ կանգնած դիրքը։ Սովորաբար այս ամենը չի ենթարկվում գիտակցական վերահսկման։ Օրինակ՝ մենք երբսէ չենք մտածում «Այժմ ես կթափահարեմ ձեռքս, քանի որ բարկացած եմ»։ Ի տարբերություն առօրյա կյանքի՝ բանավեճում ժեստերի օգտագործումը նպատակային է։ Օրինակ՝ խոսելիս բանավիճողները հաճախ մտածում են, թե ինչ անեն իրենց ձեռքերի հետ։ Սակայն, եթե բանավիճողը շատ է կենտրոնանում ժեստերի վրա, նրա ելույթը դառնում է արհեստական և շեղում հանդիսատեսի ուշադրությունը։ Ելույթ ունենալիս բանավիճողը չպետք է խաղա մազերի, գրչի հետ կամ էլ ձեռքերը գրպանը դնի։

Կարևոր է նաև տեսողական կապ պահպանել հակառակորդ թիմի հետ, քանի որ իրենց իրենց պետք է համոզի իր դիրքորոշման ճշմարտացիությունը, սակայն դա չի նշանակում որ բանավիճողը պետք է մոռանա դատավորներին։

## Գլուխ 8. Ի՞նչ սովորեցինք

- ❶ Ինչպե՞ս կարող են գրառումները օգտակար լինել բանավեճի ընթացքում։
- ❷ Արդյո՞ք բանավեճի ընթացքում անհրաժեշտ է անհատական ոճ և ինչպես է այն հնարավոր սովորել կամ ձեռք բերել։

## **Գլուխ 9.**

### **ՀԱԶՈՐ ԲԱՆԱՎԵՃ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏ** **ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ**

**Թիմային աշխատանք**

**Միանալը սկիզբն է, համախմբվելը՝ առաջընթացը, միասին աշխափելը՝  
հաջողությունը:**

**Հենրի Ֆորդ**



Արդյունավետ բանավեճի կարևոր մաս է հանդիսանում լավ թիմային աշխատանքը: Թիմը միմյանց հետ փոխհամագործակցող, որոշ ընդհանուր նպատակի հասնելու համար աշխատող և իրենց որպես խումբ դիտող մարդիկ են: Թիմը խմբի առանձնահատուկ տեսակ է, որի անդամներն ունեն իրար փոխադարձաբար լրացնող հմտություններ և նպատակամղված են որոշակի ընդհանուր՝ միասնական նպատակի, ցուցաբերելով խնդիրների իրագործման նկատմամբ որոշակի ընդհանուր մոտեցումներ:

**Ոչ ոք կատարյալ չէ, սակայն քրտնաջան աշխատանքի շնորհիվ թիմը կարող է այդպիսին լինել:**

Որո՞նք են թիմային աշխատանքի հաջողության գրավականները.

◎ Թիմի կարողությունների ճիշտ գնահապում. հարկավոր է պարզել թիմի անդամների նախասիրությունները, հմտությունները, շնորհները: Փորձեք ավելի լավ ճանաչել միմյանց և հասկանալ, թե ինչպիսին կարող է լինել յուրաքանչյուրի դերը թիմում:

◎ Թիմի անդամների միջև արդյունավետ հաղորդակցության հասպարում. այս պարագայում նախնառաջ հարկավոր է սովորել լսել միմյանց, փոխզիջումների գնալ և ողջունել թիմի անդամների նոր մտահղացումները:

◎ Աշխարանքի ճիշտ պլանավորում և թիմի անդամների միջև պարասիանադպվությունների ճիշտ բաժանում. հարկավոր է մանրամասնորեն մշակել այն քայլերը, որոնք անհրաժեշտ կլինի դրական արդյունքի հասնելու համար:

Թիմի յուրաքանչյուր անդամ ներդնում է իր ունակությունները, գիտելիքները և կարողությունները ընդհանուր նպատակին հասնելու համար: Թիմի մեկ անդամը կարող է առանձնանալ իր վերլուծական հմտություններով, մյուսը՝ տեղեկությունների հայթայթման գործում:

Այս բոլոր դերերը օգնում են թիմին աշխատել արդյունավետ և հասնել ընդհանուր նպատակին: Միևնույն մարդը կարող է մի քանի դեր կատարել թիմում: Թիմային աշխատանքը երկարատև և շարունակական աշխատանք է պահանջում: Այն միավորում է մի շարք անձանց, որոնք աշխատում են միասնաբար և ձգտում են հասնել միևնույն նպատակին: Թիմի անդամները ոչ միայն կիսում են միևնույն նպատակին հասնելու ցանկությունը, այլ նաև միմյանց նկատմամբ վստահությունը և աջակցությունը, ինչպես նաև հարգանքը յուրաքանչյուրի անհատականության նկատմամբ: Վերջապես հիշենք հայտնի ժողովրդական ասացվածքը, «մի խելքը լավ է, երկուսն՝ ավելի»:

## Առաջնորդություն

**Առաջնորդը լավն է, եթե մարդիկ հազիվ են գիտակցում, որ նա գոյություն ունի...**

**Եվ երբ նա կարարում է գործը, նրանք ասում են. «Մենք ինքնուրույն դա արեցինք»:**

*Հառլ Ֆլու*

Մարդիկ, ովքեր կարողանում են այլ մարդկանց ներշնչել, խթանել և տանել իրենց հետևից որոշակի նպատակների հասնելու համար, շրջապատում հանդես են գալիս որպես առաջնորդներ: **Առաջնորդությունը** կազմակերպական որոշակի

նպատակների իրագործմանը ձգտող մարդկանց համախմբելու, վստահություն ներշնչելու և սատարելու կարողությունն է: Առաջնորդությունը գործընթաց է, որի միջոցով մարդը ջանում է գիտակցաբար ներգործել այլ մարդու կամ մարդկանց խմբի վրա՝ այս կամ այն նպատակին հասնելու համար: Ամեն առաջնորդ պարտադիր չէ, որ լինի կառավարիչ: Մինչդեռ կառավարիչն իր աշխատանքում արդյունավետ լինելու համար պարտավոր է լինել առաջնորդ: Կառավարումն ու առաջնորդումը նույն բանը չեն:

### Լավ առաջնորդը՝

- ◎ Առանձնացնում է խմբի կողմից առաջադրված ամենալավ մտքերը, սինթեզում գաղափարները, ինչպես նաև օգնում հայտնաբերել հիմնական խնդիրները:
- ◎ Լրիվ վստահելի է: Լավ առաջնորդն անում է այն, ինչ ասում է, որ կանի:
- ◎ Ստեղծում է միասնություն:
- ◎ Ղեկավարում է ճիշտ քաղաքականություն հաստատելու գործընթացը:
- ◎ Առաջարկներ է անում, սակայն երբեք չի գանգատվում:
- ◎ Օգտագործում է խմբի ճիշտ աշխատանքը:
- ◎ Պատրաստում է այլ առաջնորդներ:
- ◎ Հակառակվում է անկարգությանը:
- ◎ Հաշվետու է մնում խմբին:
- ◎ Ստեղծում է վստահության մթնոլորտ:
- ◎ Ծառայում է որպես լավ օրինակ:

### Հաղորդակցման հմտություն

**«Նա, ով աղմուկով ու հրամաններով է կառուցում իր փաստարկը, ցույց է տալիս՝ ինչքան թույլ է իր հիմնավորումը»:**

Միշել դե Մոնտեն

Հաղորդակցման հմտությունները մարդկանց օգնում են ավելի հստակ արտահայտել իրենց մտքերը, ինչպես նաև հեշտությամբ դուրս գալ բազմատեսակ կոնֆլիկտային իրադրություններից: Հաղորդակցման հմտությունների մեծ մասը ձեռք են բերվում կյանքի ընթացքում: Իսկ ինչպիսի՞ հմտություններ են հարկավոր արդյունավետ հաղորդակցություն հաստատելու համար:

- ❶ Զրույցի ընթացքում հարկավոր է լինել բարեհամբույր և հավասարակշոված:
- ❷ Զրույցը պետք է վարել հանգիստ, խաղաղ միջավայրում:
- ❸ Կարևոր զրույց վարելիս պետք չէ սահմանափակվել ներկայիս իրավիճակով. կարելի է կիրառել անցյալի դասերը և հիշել ապահագ հեռանկարների և հետևանքների մասին:
- ❹ Չի կարելի միայն պարտադրել կարծիքը, պետք է նաև փորձել արտահայտել այն առաջարկության տեսքով և դրա ճշմարտացիությունը ապացուցել համոզիչ փաստերով:
- ❺ Վիճելի հարցեր քննարկելիս հարկավոր է փորձել ըմբռնել մյուսների տեսակետները, ինչպես նաև առաջարկել այլ փոխզիջումային կամ այլընտրանքային տարրերակներ:

## Գլուխ 9. Ի՞նչ սովորեցինք

- ❶ Ի՞նչ է թիմային աշխատանքը և որո՞նք են հաջող թիմային աշխատանքի նախապայմանները:
- ❷ Ինչպիսի՞ն պետք է լինի հմուտ առաջնորդը: Ո՞ր հատկանիշներն են առավել կարևորվում:
- ❸ Որո՞նք են հաղորդակցությանը խանգարող հիմնական գործոնները և ինչպե՞ս կարելի է զարգացնել հաղորդակցության հմտությունները:

## Գլուխ 10.

### «ԿՈՂՄ» ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ



Ինչպես արդեն հայտնի է, յուրաքանչյուր բանավեճ ենթադրում է միևնույն հարցի շուրջ երկու հակառակ դիրքորոշումների քննարկում:

Կողմերից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները և, կախված այն բանից, թե որ թիմում եք գտնվում, հարկավոր է ընտրել դիրքորոշումը ներկայացնելու համապատասխան մարտավարություն:

### Կառուցողական ելույթի հիմնաքարերը



Կախված բանավեճի ֆորմատից՝ թիմերը բանավեճի ընթացքում կարող են հանդես գալ մեկ կամ երկու կառուցողական ելույթով: Կառուցողական ելույթի մեջ մասը պետք է նվիրված լինի թիմերի դիրքորոշման բացահայտմանն ու պարզաբանմանը: Առաջին կառուցողական կամ ներածական ելույթը, ավելին՝ դրա առաջին բովեները, մեծ կարևորություն են ներկայացնում, քանի որ բանավեճի ընթացքում առաջին անգամ թիմի անդամները հակառակորդին, դատավորներին և հանդիսատեսին ներկայացնում են իրենց դիրքորոշումը: Ուստի հարկավոր է նախապես շարադրել առաջին կառուցողական կամ ներածական ելույթը, որպեսզի այն տպավորիչ լինի: «Կողմ» թիմի կառուցողական ելույթը բաղկացած է հետևյալ մասերից:

- ❶ Նախաբան
- ❷ Հասկացությունների սահմանում
- ❸ Դիրքորոշման հիմքում ընկած արժեքները

## ④ Փաստարկում

### ՆԱԽԱԲԱՆ

«Կողմ» թիմի առաջին կառուցողական ելույթը պետք է սկսվի բանավեճի հարցադրման կամ բանաձևի ներկայացմամբ: Թիմը պետք է մեկնաբանի բանաձևի կամ հարցադրման համատեքստը, հանդիսատեսին ներկայացնի քննարկվող թեմայի վերաբերյալ իր ընկալումը, և փորձի նրան «վարակել» իր դիրքորոշմամբ: Այս ամենն անհրաժեշտ է ամփոփել մի քանի նախադասությամբ, քանի որ նախաբանը պետք է կարճ լինի:

### ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿՄԱՆՈՒՄ

Կառուցողական ելույթը պետք է նաև ներառի հարցադրման կամ բանաձևի սահմանման մեկնաբանումը, քանի որ յուրաքանչյուր բառ կարելի է յուրովի մեկնաբանել, որից էլ կախված կլինի բանավեճի հետագա ընթացքը: Այլ կերպ ասած, բանաձևի կամ հարցադրման սահմանումը և վերջինիս մեկնաբանումը ուղղակի ազդեցություն են գործում թիմի դիրքորոշման վրա: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է, որպեսզի թիմը սկզբից ևեր բացատրի տվյալ բանաձևը կամ հարցադրումը և իր ընկալումը: Այսպես օրինակ՝ բանավեճի առարկան հետևյալն է. «<<-ն պետք է թրաֆիքինգը նվազեցնող քաղաքականություն վարի»: Նախ և առաջ հարկավոր է ներկայացնել «թրաֆիքինգ» բառի թարգմանությունը և այդ հասկացության հնարավոր մեկնաբանումները՝ մարդկանց ապօրինի վաճառք, մարդկանց ստրկություն և այլն: Նման նրբերանգների տարանջատումը չափազանց կարևոր որպեսզի լսարանին, դատավորներին և հակառակորդ թիմին պարզ լինի, թե ինչի մասին է բանավեճը, և որ մեկնաբանությանն է նախընտրություն տալիս «կողմ» թիմը:

### ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ԱՐԺԵՔՆԵՐ

Թիմի կառուցողական ելույթի ժամանակ պետք է պարզ դառնա, թե ինչ արժեք կամ սկզբունք է այն փորձում պաշտպանել: Ձեր դիրքորոշման առանցքային արժեքն ընտրելիս և ներկայացնելիս հարկավոր է հաշվի առնել, որ այնպիսի արժեքները,


ինչպիսիք են ժողովրդավարությունը կամ արդարությունը, բավականին լայն հասկացություններ են. անհրաժեշտ է բացել փակագծերը և պարզաբանել, թե թիմը տվյալ բանաձևի կամ հարցադրման լույսի ներքո ինչպես է ընկալում այդ լայն ու վերացական գաղափարները:

Միայն այս ամենից հետո թիմը կարող է անցնել իր դիրքորոշման հիմնավորմանը՝ ներկայացնելով համապատասխան փաստարկներ: Դիրքորոշման հիմնավորումը կազմում է առաջին կառուցողական ելույթի գերակշիռ մասը:

## ՓԱՍՏԱՐԿՈՒՄ

Ինչպես արդեն բազմիցս նշվել է, բոլոր փաստարկները պետք է բխեն այն առանցքային արժեքից կամ սկզբունքից, որը հիմք է ծառայում ողջ դիրքորոշման համար: Փաստարկման գործընթացը հաճախ կախված է այն բանից, թե ինչ մարտավարություն է ընտրել թիմը՝ իր դիրքորոշումը պաշտպանելու համար:

Սովորաբար նախքան բանավեճը թիմը մշակում է մեծ թվով փաստարկներ: Նախքան բանավեճը թիմը պետք է առանձնացնի համեմատաբար թույլ փաստարկներն ուժեղներից և աշխատի իր ելույթում կենտրոնանալ վերջիններիս վրա: Ավելի արդյունավետ կլինի հստակ և մանրամասն բացատրել հինգ փաստարկ, քան մակերեսային ներկայացնել տասը փաստարկ:



## փաստարկ 5

Խոսելով փաստարկների մասրս զարթի է անել հետևյալ նկատառումը. Ելույթների ժամանակ ցանկալի է, որպեսզի թիմերը համարակալեն իրենց փաստարկները: Այդ պարագայում ելույթն ավելի համակարգված կինչի դատավորի, հանդիսատեսի և հակառակորդ թիմի համար:

## Հակափաստարկներից պաշտպանվելու մարտավարություն



Բանավեճում հաջողության հասնելու գրավականներից մեկը հակառակորդ թիմի հնարավոր հակափաստարկների կանխատեսումն է: Քանի որ «կողմ» թիմը, որպես կանոն, առաջինն է հանդես գալիս կառուցողական ելույթով, այն մինչև բուն բանավեճը պետք է մշակի իր մարտավարությունը, իսկ «դեմ» թիմը փորձի կանխատեսել «կողմ» թիմի փաստարկները և համապատասխան հակափաստարկներ բերի՝ հակառակորդի դիրքորոշումը թուլացնելու համար: «Կողմ» թիմն իր հերթին, կանխատեսելով, թե ինչ հնարավոր հակափաստարկներ կարող է բերել հակառակորդ թիմը, պետք է համապատասխան փաստեր և ապացույցներ փնտրի և ներառի դրանք իր ելույթում՝ դրանով իսկ ապահովագրելով իր դիրքորոշումը հակառակորդ թիմի հակափաստարկներից:

## Գլուխ 10. Ի՞նչ սովորեցինք

- ❶ Ինչի՞ վրա է հիմնված «կողմ» թիմի դիրքորոշումը:
- ❷ Ի՞նչ մասերից է կազմված «կողմ» թիմի կառուցողական ելույթը և որքանո՞վ են դրանք կարևոր:
- ❸ Ո՞րն է «կողմ» թիմի կառուցողական ելույթի նպատակը:

## Գլուխ 11.

### «ԴԵՄ» ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ



Նախորդ գլխում մենք քննարկեցինք «կողմ» թիմի մարտավարության առանձնահատկությունները: Այժմ տեսնենք, թե ինչպիսի մարտավարություն պետք է որդեգրի «դեմ» թիմը՝ իր դիրքորոշումն առավելագույնս համոզիչ ներկայացնելու համար:

#### Կառուցողական Ելույթի հիմնաքարերը

«Դեմ» կողմի կառուցողական ելույթը գրեթե չի տարբերվում հակառակորդ թիմի ելույթից: Այստեղ ևս թիմը պետք է փորձի լավագույնս բացահայտել բանաձևի կամ հարցադրման նկատմամբ իր դիրքորոշումը: Սակայն ի տարբերություն «կողմ» թիմի կառուցողական ելույթի՝ «դեմ» թիմն այն ծառայեցնում է երկու նպատակի: Թիմը պետք է ոչ միայն ներկայացնի իր դիրքորոշումը, այլև վեր հանի և վիճարկի «կողմ» թիմի կառուցողական ելույթի թույլ կողմերը: Այսինքն՝ եթե «կողմ» թիմի անդամներին կառուցողական ելույթը հնարավորություն է ընձեռում կենտրոնանալ միայն իրենց դիրքորոշման վրա, «դեմ» թիմի անելիքները մի փոքր այլ են:

«Դեմ» կողմի կառուցողական ելույթի առանձնահատկությունների մասին խոսելիս հարկավոր է հիմնական շեշտը դնել հակաֆաստարկման վրա: Ենելով դրանից՝ նախքան բանավեճը «դեմ» թիմը պետք է մշակի «կողմ» թիմի կառուցողական ելույթը գրոհելու ծրագիր: Սակայն հարկավոր է հիշել, որ չի կարելի ամեն ինչ գրոհի ենթարկել: Չափազանց ծավալուն գրոհը, ինչպես նաև մեկ-երկու փաստարկներից կառչելը դեռևս հակաֆաստարկում չէ: Ընդհանուր առմամբ, անհրաժեշտ է հակաֆաստարկման ենթարկել հակառակորդ թիմի դիրքորոշումը՝ իր հիմնարար պնդումներով հանդերձ: Մի պահ վերիիշենք «կողմ» թիմի կառուցողական ելույթի հիմնաքարերը՝ նախաբան և հասկացությունների սահմանում, դիրքորոշման հիմքում ընկած առանցքային արժեքների բացահայտում և փաստարկում: «Դեմ» կողմը կարող է գրոհել նշված բոլոր մակարդակները: Հաջորդ ենթագլուխներում մենք

կուսումնասիրենք,թե ինչպես պետք է «դեմ» կողմը վիճարկի իր հակառակորդի ելույթը՝ ըստ այս մակարդակների:



## Ահմանումների վիճարկում

Ինչպես արդեն գիտենք նախորդ գլխից բանավեճի թեմայում ներառված հասկացությունների սահմանումը վերապահվում է «կողմ» թիմին: Եթե «դեմ» թիմը համաձայն է կամ լուրջ տարածայնություններ չունի հակառակորդի սահմանման վերաբերյալ, այն պարզապես վիճարկման չի ենթարկում սահմանումը: Հնարավոր է նաև այն տարբերակը, երբ իր կառուցողական ելույթում «կողմ» թիմը բառի կամ հասկացության այնպիսի սահմանում տա, որի հետ չհամաձայնելը պարզապես կթուլացնի «դեմ» կողմի դիրքերը և կվնասի իր դիրքորոշմանը: Եթե «դեմ» թիմի անդամները որոշեն, որ իրենց դիրքորոշումը պաշտպանելիս հակառակորդ կողմի սահմանման հերթելը վճռարար նշանակություն չի կարող ունենալ, թիմը կարող է այն չառարկել և կենտրոնանալ ավելի խորը տարակարծությունների վրա: Սակայն միշտ չէ, որ կարելի է արդարացնել նման մոտեցումը: Եթե «կողմ» թիմի սահմանումները նեղ են և աղավաղված, «դեմ» կողմը պետք է միանշանակ վիճարկի դրանք: «Դեմ» թիմը նաև այն դեպքում պետք է վիճարկման ենթարկի հակառակորդ թիմի սահմանումները, եթե վերջիններս չափազանց ընդգրկուն են և ընդհանուր:

## Առանցքային արժեքի վիճարկում

Գոյություն ունի առանցքային արժեքի կամ սկզբունքի երեք տիպի վիճարկում:

- ❶ «Կողմ» և «դեմ» թիմերը ընդունելու են երկու դարբեր, իրար հակասող առանցքային արժեքներ:
- ❷ Երկու կողմերն էլ միևնույն առանցքային արժեքի կամ սկզբունքի հիման վրա են կառուցել իրենց դիրքորոշումը, բայց և այնպես կարող են դարակարծություններ ունենալ դրա սահմանման և նշանակության շուրջ:

**❸** Երկու կողմերն էլ համաձայն են և՝ առանցքային արժեքի, և՝ դրա նշանակության հետ, սակայն միանգամայն դարակարծիք են այդ արժեքի կիրառման կամ իրագործման ձևերի շուրջ:

## Փաստարկների կամ պնդումների վիճարկում

Փաստարկների կամ պնդումների վիճարկումը հիրավի կարելի է համարել բանավեճի ամենահետաքրքիր մասը:

Նախորդ գլխում նշեցինք, որ «կողմ» թիմը պետք է համարակալի իր պնդումները ըստ ներկայացման հերթականության: <Ետևաբար, «Դեմ» թիմն իր հերթին պետք է պնդումներին հակահարված տա նույն հերթականությամբ: Օրինակ՝ «Դեմ» կողմի ներկայացուցիչը իր ելույթում պետք է նշի. «Մենք կցանկանայինք չհամաձայնել հակառակորդ թիմի երրորդ պնդման հետ, որը վերաբերվում էր ...»:

Գոյություն ունեն պնդումների և փաստարկների վիճարկման տարբեր եղանակներ: «Դեմ» թիմը կարող է վիճարկել դրանց տրամաբանական կառուցվածքը կամ փաստերի անճշտությունը: Այն կարող է նաև որակավորել ներկայացված փաստարկները որպես ծայրահեղական կամ կարծրատիպային: Պնդումները կարելի է վիճարկել նաև՝ ելնելով այն փաստից, որ դրանց միջև բացակայում է տրամաբանական կապը կամ դրանք չեն համապատասխանում միևնույն թիմի կողմից արված այլ հայտարարություններին ու փաստարկներին: «Դեմ» կողմը կարող է նաև վիճարկել «կողմ» թիմի փաստարկների կարևորությունն ու կապը քննարկվող հարցադրման կամ բանաձևի հետ:

## Գլուխ 11. Ի՞նչ սովորեցինք

- ❶** Ո՞րն է «կողմ» և «Դեմ» թիմերի կառուցողական ելույթների տարբերությունը:
- ❷** Առանցքային արժեքի կամ սկզբունքի վիճարկման քանի՞ տեսակ գոյություն ունի:  
Որո՞նք են դրանք:
- ❸** Թվե՛ք պնդումների և փաստերի վիճարկման մի քանի եղանակներ:

## Գլուխ 12.

### ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հարցաքննությունը չպետք է դիտել որպես առանձին տարր: Այն բանավեճի կարևորագույն օղակներից մեկն է: Հարցաքննության միջոցով բացահայտվում են



թիմերի փաստարկման և վերլուծական հմտությունները, ինչպես նաև հանպատրաստից հակահարված հասցնելու կարողությունը: Այն նաև թիմերին հնարավորություն է ընձեռում հարցաքննության ժամանակ ձեռք բերված արդյունքները կիրառել հետագա ելույթներում:

### Հարցաքննության կանոններ

Հարցաքննությունը լիիրավ կարելի է համարել բանավեճի ամենաթեժ պահը, որի ընթացքում անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները՝

- ❶ Հարցատուն հարց տալու ժամանակ պետք է տեսողական կապ պահպանի հակառակորդ թիմի մասնակիցների հետ:
- ❷ Հարցը պետք է լինի հստակ և պարզ ձևակերպված:
- ❸ Եկ հարցատուն, և՛ պատասխանողը պետք է իրենց խոսքով և պահպաժքով քաղաքավարի ու հարգալից վերաբերմունք ցուցաբերեն միմյանց նկատմամբ:

### Հարցերի պատրաստում

Նախքան բանավեճը թիմերը կարող են հարցեր պատրաստել: Սակայն շատ ավելի լավ է, եթե թիմերը, ուշադիր հետևելով հակառակորդի կառուցողական ելույթին և

Ելնելով իր դիտարկումներից ու գրառումներից, կամ վերանայի, կամ վերամշակի նախապես մշակած հարցերը:

Սեփական դիրքորոշումը մշակելիս թիմը նաև պետք է փորձի կանխատեսել, թե հակառակորդը հարցաքննության ժամանակ ինչ հնարավոր հարցեր կարող է ուղղել կամ ինչ հնարավոր կետեր կարող է վիճարկել: Կանխատեսման հետ մեկտեղ հարկավոր է, որպեսզի թիմը մշակի այդ հարցերի պատասխանները:

## Հարցատուի դերը

Հարցատուն պետք է ունենա արագ կողմնորոշվելու ունակություն և տեղում կարողանա դիպուկ հարցերով բացահայտել հակառակորդի դիրքորոշման թույլ կողմերը՝ դրանով իսկ նպաստելով սեփական դիրքորոշման ամրապնդմանը: Յուրաքանչյուր հարցատու պետք է առաջնորդվի հետևյալ սկզբունքներով<sup>#</sup>:



- ❶ Հարցաքննությունը հարկավոր է սկսել այնպիսի հարցով, որը կգրավի հանդիսատեսի և դատավորների ուշադրությունը:
- ❷ Հարցաշարը պետք է կառուցել այնպես, որ բոլոր հարցերը միասին վերցրած ուղղված լինեն մեկ ընդհանուր նպատակի: Այլ կերպ ասած, հարցատուն իր հարցերի միջոցով փորձում է քայլ առ քայլ ստանալ այն պատասխանը, որն իրեն է ձեռնատու: Հարցաքննության վերջին հարցը կարող է ամփոփել տրված հարցերից քաղած պատասխանները:
- ❸ Հարցաշարի սկզբում հարկավոր է այնպիսի հարցեր տալ, որոնց հետ ամենայն հավանակությամբ պատասխանողը կհամաձայնի: Աստիճանաբար կարելի

<sup>#</sup> Հարկ է նշել, որ նշված խորհուրդների մեծամասնությունը վերաբերվում է խաչաձև հարցաքննությանը:

Է նաև այնպիսի հարցեր տալ, որոնց պատասխաններում առավել ցայտուն կերևա  
թիմերի միջև առկա հակասությունը:

- ④ Հարցերը պետք է լինեն պարզ և հստակ ձևակերպված: Հակառակ դեպքում հակառակորդը կարող է իր օգտին ծառայեցնել հարցադրումը:
- ⑤ «Այո՞» կամ «ո՞չ» պատասխան պահանջող հարցերը թույլատրելի են, բայց ոչ ցանկալի: Նման հարցերը չեն բխում ուսուցողական բանավեճի նպատակներից:
- ⑥ Հարցը պետք է տալ հանգիստ և հավասարակշռված կերպով: Դա հնարավորություն կընձեռի հակառակորդի հետ վարել հանգիստ երկխոսություն՝ բացառելով լարվածությունը: Հարձակողական վերաբերմունքը լարված մթնոլորտ կատեղծի, որը կարող է ընթացքում վերափոխվել թշնամանքի:
- ⑦ Հարկավոր է խուսափել այն հարցերից, որոնց պատասխանները հարցատուն ինքը չունի: Այս պարագայում վտանգ կա, որ հակառակորդի պատասխանը կարող է վնասել հարցատուի թիմի դիրքորոշմանը:
- ⑧ Հարկավոր է հիշել, որ հարցաքննության համար տրամադրված ժամանակը պետք է օգտագործվի հարցեր տալու և ոչ թե ելույթ ունենալու կամ տեսակետ արտահայտելու համար:
- ⑨ Հարցաքննությունը հարկավոր է բարձր նոտայի վրա ամփոփել:

## **Պատասխանողի կամ խոսնակի դերը**

Հարցաքննության ժամանակ մեծապես կարևորվում է նաև հակառակորդ թիմի պատասխանողի կամ խոսնակի դերը: Ա Պատասխանողը կամ խոսնակը պետք է



չափազանց լավ իմանա իր թիմի դիրքորոշման թույլ և ուժեղ կողմերը: Անհրաժեշտ է նաև, որ նա կարողանա տեղում արագ կողմնորոշվել, ինչպես նաև ունենա վերլուծական հմտություններ: Ավելին, պատասխանողը պետք է լինի զգո՞ւ հարցերում թաքնված հնարավոր

ներիմաստը ըմբռնելու համար: Հետևյալ խորհուրդները կօգնեն պատասխանողին հաղթահարել հարցաքննության արգելքները:

- ❶ Առաջնահերթ նախապայման է վստահ և պարզ խոսելը: Ցածր ձայնը, ջղաճից շարժումները և ներքև ուղղած հայացքը վկայում են խոսնակի անվստահության մասին:
- ❷ Չի կարելի հարցին հարցով պատասխանել՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հարցը թերի է ձևակերպված, պարունակում է մի քանի ենթահարց, կամ ընդհանրապես դժվարություն է ներկայացնում պատասխանելու տեսանկյունից: Նման դեպքերում պատասխանողը ոչ թե կարող է, այլ պետք է պարզաբանող հարց տա:
- ❸ Պետք չէ չհամաձայնվել հարցատուի հետ միայն չհամաձայնվելու համար: Այսպես օրինակ՝ «Ինձ թվում է կիամաձայնեք, որ գիշերը մութ է» հարցին միանգամայն անհեթեթ կլինի պատասխանել. «Համոզված չեմ: Կախված նրանից, թե ինչ եք հասկանում «մութ» բառի տակ»:
- ❹ Սեփական պատասխանը ճշգրտելը միանգամայն թույլատրելի է, սակայն հարկավոր է դա հակիրճ կերպով անել: Ճշգրտումներ պետք է մտցնել միայն այն ժամանակ, երբ կարծում եք, որ դրանք անհրաժեշտ են ձեր պատասխանը ավելի հասկանալի դարձնելու համար: Ցանկալի է սկզբում տալ ճշգրտումը, ապա նոր պատասխանել հարցին:
- ❺ Պատասխանողը պետք է միշտ գգոն լինի տրվող հարցերի նկատմամբ, քանի որ դրանք ուղղված են թուլացնելու հակառակորդի դիրքորոշումը:
- ❻ Պետք չէ ավելորդ տեղեկատվություններ տալ. յուրաքանչյուր ավելորդ բառ կարող է հետագայում շահարկվել հակառակորդի կողմից:

## Գլուխ 12. Ի՞նչ սովորեցինք

- ❶ Որո՞նք են հարցաքննության տեսակները և ո՞րն է նրանց տարրերությունը: Որո՞նք են, ըստ Ձեզ, նրանց առավելությունները և թերությունները:
- ❷ Որո՞նք են հարցաքննության կանոնները:

## Գլուխ 13.

### ԲԱՆԱՎԵՃԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

#### Դատավորի անկողմնակալությունը



Բանավեճը գնահատելու համար պարտադիր չէ, որ դատավորը հատուկ գիտելիքներ և հմտություններ ունենա: Կարևոր այն է, որ նա ունենա առողջ դատողություն: Լավ դատավորը չպետք է թույլ տա, որ քննարկվող թեմայի վերաբերյալ իր գիտելիքները որևէ կերպ ազդեն գնահատման վրա: Ավելին, լավ դատավորը նաև վերահսկում է իր անձնական հայացքներն ու զգացմունքները: Այլ կերպ ասած, սեփական կարծիքն ու գիտելիքները հարկավոր է թողնել դահլիճի դոների հետևում:

Յանկացած մրցույթ պահանջում է դատավորների անկողմնակալ վերաբերմունքը: Դատավորը չի կարող միջամտել բանավեճին, ընդհատել ելույթ ունեցողներին:

Դատավորը չպետք է համեմատի ներկա բանավիճողներին նախկին թիմերի հետ: Բանավեճը գնահատվում է միայն ներկա համատեքստում: Այլ կերպ ասած, դատավորը չպետք է համեմատություններ անի նախորդ մրցույթների հետ. նրա ուշադրության կենտրոնում պետք է լինեն միայն տվյալ բանավեճի մասնակիցների ելույթները:

#### Գնահատում



Դատավորը պետք է գնահատի թիմերին ըստ ելույթների, հարց ու պատասխանի, իսկ այնուհետև ընդունի վերջնական որոշում՝ ամփոփելով իր դիտարկումներ: Այս որոշումը պետք է ցույց տա, թե բանավեճի ընթացքում որ թիմն է առավել համոզիչ հանդես եկել: Եթե թիմերից ոչ մեկն ակնհայտորեն գերակա չէ

մյուսի նկատմամբ, դատավորը պարտավոր է ըստ արժանվույն գնահատել յուրաքանչյուր թիմի թերացումները և արդարացի որոշում կայացնել:

## Որոշումը մեկնաբանելու կարևորությունը



Նախքան թիմերին գնահատելը դատավորը պետք է ուշադիր լսի ելույթները և արձանագրի դրանց ուժեղ և թույլ կողմերը՝ աշխատելով մնալ հնարավորինս անկողմնակալ: Բազմիցս նշվել է, որ դատավորի որոշման վրա կարող են ազդել մի շարք սուբյեկտիվ գործոններ: Դատավորի անաչառությունն ապահովելու և անձնական կարծիքը սանձահարելու համար բանավեճ-մրցույթների գնահատումը սովորաբար կատարվում է մի քանի դատավորների կողմից:

Յուրաքանչյուր դատավոր պարտավոր է խաղի ավարտին հայտարարել իր որոշումը: Սակայն դատավորի պարտականությունների շրջանակն այսքանով չի սահմանափակվում: Որոշումները դեռևս հարկավոր է հիմնավորել բացատրությամբ: Ակնկալվում է, որ դատավորները կբացահայտեն բանավեճի հիմնական խնդիրը, կնշեն հաղթող թիմին առավել համոզիչ դարձնող փաստարկները, ինչպես նաև պարտվող թիմի թերացումները:

Անաչառ լինելուց և բանաձևի վերաբերյալ սեփական գիտելիքներն ու կարծիքները թաքցնելուց զատ դատավորը պետք է նաև խուսափի բանավիճողների նկատմամբ անձնական վերաբերմունք ծնավորելուց:

## Գործնական պարտականություններ

### ԺԱՄԱՆԱԿԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ



Պարտադիր չէ, որպեսզի դատավորն անձամբ հետևի ժամանակին: Այս պարտականությունը կարող է ստանձնել ժամապահը, որը քաջատեղյակ է բանավեճի ընթացակարգային կանոնների մասին: Ժամապահը հետեւում

Է, որպեսզի թիմերը չանցնեն իրենց հատկացված ժամանակից: Ժամանակը ցուցադրելու համար սովորաբար նախօրոք պատրաստվում են 5, 3, 1, 30, Խ ցուցանակներ, որոնք ժամապահը ցույց է տալիս թիմերին՝ վկայակոչելով այն մասին, թե որքան ժամանակ է մնացել:

Եթե խոսնակը չի հետևում ժամանակին, ապա ժամապահը պետք է ձեռքը բարձր պահի այնքան ժամանակ, մինչև այն նկատվի: Հասկանալի է, որ նշանը նկատելուն պես խոսնակն իր ելույթը նախադասության կեսին չի դադարեցնում: Անկախ այն բանից, ժամանակը լրացել է, թե ոչ, հարկավոր է ավարտել նախադասությունը: Բանավեճի ավարտից հետո ժամապահը դատավորիներին պետք է գրավոր ներկայացնի թիմերի կողմից օգտագործված ժամանակի վերաբերյալ հաշվետվություն:

## Չնթացակարգի կանոններ

Գոյություն չունի բանավեճը գնահատելու հստակ կանոնակարգ: Դատավորի ուղղակի պարտականությունն է գնահատել թիմերի փաստարկները, սակայն որևէ գրավոր փաստաթղթում պաշտոնապես ամրագրված չեն գնահատման մեխանիզմները: Այնուամենայնիվ, գոյություն ունեն ընդհանուր կանոններ, որոնց իմացությունը պարտադիր է դատավորի համար:

### «ԿՈՂՄ» ԹԻՄԻ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵԼՈՒՅԹ

Այս մասում «կողմ» թիմից ակնկալվում է բանաձևի օգտին ներկայացվող հիմնավոր պնդումներ և փաստարկներ: Թիմը կարող է բանավեճի հետագա ընթացքում կրկնել կառուցողական ելույթի առանձին հատվածները կամ մանրամասնել դրանք, սակայն այն չի կարող ներկայացնել նոր առանցքային արժեքներ, պնդումներ կամ սահմանումներ: Ելույթի ընթացքում խոսնակը կարող է օգտվել գրավոր գրառումներից:

### «ԴԵՄ» ԹԻՄԻ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵԼՈՒՅԹ ԵՎ ՀԱԿԱՀԱՐՎԱԾ

«Դեմ» թիմը նույնպես պետք է լիարժեք փաստարկներով և պնդումներով հիմնավորված կառուցողական ելույթ ներկայացնի: Նրա ելույթը պետք է սկսվի կողմ

փաստարկների հերքմամբ: Եթե իր կառուցողական ելույթում «դեմ» թիմը չի հակադրվում կամ հետագայում հակահարված չի տալիս «կողմ» թիմի փաստարկներին, ենթադրվում է, որ «կողմ» թիմն ունի ակնհայտ առավելություն: Կառուցողական ելույթի և հակահարվածի հերթականությունը թողնվում է խոսնակի հայեցողությանը և չպետք է ազդի գնահատման վրա:

## Գրառումներ



Եթե դատավորը բանավեճի ողջ ընթացքում գրառումներ է անում, գնահատելիս նա հեշտությամբ որոշում է ընդունում: Շատ դեպքերում թիմերն ամեն ինչ անում են, որպեսզի դատավորի ուշադրությունը սևեռվի հակառակորդ թիմի կորցրած միավորների վրա: Սակայն դատավորը պետք է հիշի, որ միայն կորցրած միավորներով չի որոշվում հաղթող և պարտվող թիմերի ճակատագիրը. նա պետք է կշռադատի յուրաքանչյուր կորցրած միավորի կարևորությունը:

## «Գնահատման թերթիկների լրացում» <sup>§§</sup>

Որոշ բանավեճերում արգելվում է, որպեսզի դատավորը բանավոր կերպով հաղորդակցվի բանավիճողների հետ: Բոլոր մեկնաբանությունները և դիտողությունները հանձնվում են գնահատման թերթիկին: Սակայն այլ դեպքերում որոշումը կայացնելուց հետո դատավորի և բանավիճողների միջև քննարկումները խրախուսվում են. նման քննարկումներն օգնում են դատավորին մեկնաբանել կայացված որոշումը, իսկ բանավիճողներին և թիմերի ղեկավարներին՝ դասեր քաղել հետագա բանավեճերի համար: Դատավորները պետք է մանրամասնորեն հիմնավորեն և բացատրեն իրենց որոշումը՝ դրանով իսկ նպաստելով բանավեճի ուսուցողական արժեքի ամրապնդմանը: Այդուհանդերձ, բանավոր

<sup>§§</sup> Տես YES ծրագրի շրջանակներում օգտագործված գնահատման թերթիկի օրինակը Հավելվածներ բաժնում:

մեկնաբանությունները կարող են միայն կիրառվել գրառումները բացատրելու համար, և ոչ մի դեպքում չեն կարող փոխարինել վերջիններիս:

### Գլուխ 13. Ի՞նչ սովորեցինք

- ❶ Ինչպե՞ս պետք է դատավորը կազմակերպի բանավեճի արդար ընթացքը:
- ❷ Ինչպե՞ս է պետք ինարավորինս օբյեկտիվ գնահատել բանավիճող թիմերի ելույթները:
- ❸ Ինչո՞ւ են հարկավոր դատավորների կատարած գրառումները և գնահատման թերթիկների լրացումը:

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

- ◎ Գնահատման թերթիկ
- ◎ Հնարավոր հարցադրումներ և բանաձևեր բանավեճի համար
- ◎ Օգտագործված գրականության ցանկ

# ԳԱՆԱԿԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿԻ ՕՐԻՆԱԿ

«Իրավական իրազեկման դպրոցական ակումբներ» ԾՐԱԳԻՐ/LASC

Թեմա

		Կողմ թիմ		Դեմ թիմ	
Ելույթ	Գնահատման չափանիշ	Միավոր (1 - 5)	Մեկնաբանություն	Միավոր (1 - 5)	Մեկնաբանություն
<b>Կառուցողական ելույթ</b>	Նախապատրաստական աշխատանք				
	Օրենսդրական դաշտի վերաբերյալ իրազեկվածություն				
	Փաստերով հիմնավորված				
	Դամողիչ ներկայացում				
<b>Հարցեր</b>	Դստակ ձևակերպված				
	Դետալական և թեմային առնչվող				
<b>Պատասխաններ</b>	Դստակ ձևակերպված				
	Փաստերով հիմնավորված				
<b>Եզրափակիչ ելույթ</b>	Ազդեցիկ և տպավորիչ				
	Դիմումած նախորդ ելույթների վրա				
	Դիրքորոշումն ամփոփող				
<b>Բանավեճի հմտություններ</b>	Թիմային աշխատանք				
	Վերլուծելու ունակություն				
	Ազդեցիկ խոսք և անհատական ոճ				
	Ժամանակի արդյունավետ օգտագործում				
	Գրագետ խոսք				
	Ընթացակարգի կանոնների պահպանում				

## ԲԱՆԱՎԵՃԻ ԹԵՄԱՆԵՐ

- ❖ Երեխայի իրավունքները <<-ում պաշտպանված են:
- ❖ <<-ում ԶԼՄ-ներն ազատ են:
- ❖ Ազգային փոքրամասնությունների շահերը <<-ում պաշտպանված են:
- ❖ Հայաստանի Հանրապետությունում պետք է կիրառվի այլընտրանքային ծառայություն:
- ❖ << տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանները պահպանվում են:
- ❖ Սպառողների իրավունքները <<-ում պաշտպանված են:
- ❖ <<-ում չծխողների իրավունքները պաշտպանված են:
- ❖ Հայկական հեռուստաալիքները գործում են օրենսդրորեն ամրագրված նորմերին համապատասխան:
- ❖ Հեղինակային իրավունքները <<-ում պաշտպանված են:
- ❖ <<-ում հաշմանդամություն ունեցող անձիք գտնվում են պետության հոգածության ներք:
- ❖ Պետք է արգելել Երեխաների որդեգրումն օտարերկրացիների կողմից:
- ❖ <<-ն պետք է ինտեգրվի Եվրամիությանը:
- ❖ Կանայք պետք է ծառայեն << բանակում:
- ❖ <<-ին անհրաժեշտ է ընտանեկան բռնության մասին օրենք:

## **ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

1. Discovering the World Through Debate, William Driscoll, Joseph P. Zompetti, USA, 2003
2. Basic Debate, Leslie Phillips, William S. Hicks, Douglas R. Springer, USA, 1997
3. Տրամաբանության դասընթաց, Գ. Ա. Բրուտյան, Երևան, 1987
4. The Middle School Debater, Josephine Davidson, USA, 1997